

«Հայաստան» հրատարակչություն
Երևան 1966



891.9
Զ-39

Նաիրի Զարյան

# ՍԱՍՆԱ ԴԱՎԻԹ

հայ ժողովրդական
դյուցազնավեպ

Նկարիչ Մ. Սոսոյան

# ՆԱԽԱԲԱՆ

Տարիներ առաջ Մոսկվայի պետական մանկական հրատարակչությունը (ДЕТГИЗ) ինձ առաջարկեց համառոտել և արձակի վերածել «Սասունցի Դավիթ» հայ ազգային վիպերգության համահավաք բնագիրը, որ թարգմանեն ու տպագրեն ռուսերեն ընթերցող պատանիների համար։

Գործի կարևորությունը ես հասկանում էի, բայց ուրիշների չափածոն արձակի վերածելու զուտ տեխնիկական աշխատանքը չէր գրավում ինձ։ Երկար տատանվում էի. ДЕТГИЗ-ի առաջարկն ընդունե՞լ, թե ոչ։

Ի վերջո ես հանգեցի այն մտքին, որ ինձ ոչ մի բան չի խանգարում ուսումնասիրել ամբողջ նյութը և գրել «Սասնա Դավիթը» գեղարվեստական արձակով, ստեղծել մեր ժողովրդական վեպի մի նոր գոյաձև, այսինքն՝ կատարել ստեղծագործական աշխատանք։

Այս միտքը ինձ անմիջապես ոգևորեց։

Մեր վեպը շատ անգամ է դարձել գրական փորձերի նյութ։ Նրա այս կամ այն հատվածները առավել կամ նվազ հաջողությամբ չափածո մշակել են Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սարմենը, Սողոմոն Տարոնցին և մյուսները։ Վեպը լրիվ ծավալով մշակել են արևմտահայ բանաստեղծ Տիգրան Չիթունին և ռուսահայ բանաստեղծ Մկրտիչ Խերանյանը, երկուսն էլ չափածո։ Համահավաք բնագիրը նույնպես «չափածո» է։ Վեպի առանձին հատվածները թատերական երկերի վերածելու փորձեր են կատարել Վաղարշ Վաղարշյանը և ուրիշները։

Բայց մենք չունենք մեր վեպի արձակ մշակման քիչ թե շատ լիակատար մի նմուշ։ Հայտնի են մի քանի գրանցված պատումներ, մի քանի հատվածային կարճ, անարվեստ մշակումներ և համահավաք բնագրի համառոտ վերապատումը Հմայակ Սիրասի կողմից։ Վեպն իր ամբողջության մեջ իր բոլոր չորս ճյուղերով միասին արձակ դեռ չէր գրված։ Եվ պետք է կատարեի առաջին փորձը։

Ահա թե ինչու ես թողի վեպը չափածո մշակելու իմ երկարամյա մտահղացումը և ձեռնարկեցի այն արձակ շարադրելու աշխատանքին։ Ես կարդացի հրապարակում եղած բոլոր պատումներն ու մշակումները, վեպի շուրջը ստեղծված ամբողջ գրականությունը, ժողովրդական պատումներից քաղեցի բազմաթիվ գեղեցիկ հատվածներ, որոնք չէին արտացոլված Համահավաք բնագրի մեջ, Համահավաքի տարբեր ճյուղերում կատարեցի կառուցվածքային փոփոխություններ, ավելորդ կրկնությունները ու երկարաբանությունները կրճատեցի, տեղադրեցի իմ քաղած հատվածների մեծագույն մասը և տեղ-տեղ ինձանից ավելացրի առանձին նախադասություններ ու պարբերություններ՝ հյուսվածքային տրամաբանությունն ավելի կուռ և հերոսների բնավորությունն ավելի ցայտուն, հետևողական դարձնելու նպատակով։

Ես Համահավաք բնագիրն առա իբրև իմ աշխատության համար ելակետ։ Չէի կարող և չէի ցանկանում հիմնովին հեռանալ Համահավաքից։ Իր բոլոր թերություններով հանդերձ Համահավաքը մեծ քայլ էր մեր վեպի զարգացման պատմության մեջ։ Նրա հազարամյակի տոնակատարության առթիվ մեծ հայագետ Մանուկ Աբեղյանը, հայտնի բանասեր Արամ Ղանալանյանը և պրոֆեսոր Գևորգ Աբովը ի մի հավաքեցին վեպի տարբեր պատումները, ստեղծեցին համապարփակ լիակատար մի հյուսվածք ու կազմեցին վեպի ժամանակագրական հաջորդականությունը՝ բաժանելով այն չորս համապատասխան ճյուղերի. «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Դավիթ», «Փոքր Մհեր»։ Վեպի ճյուղային պատկերացումը նրանց քմահաճ հնարանքը չէր։ Այդ պատկերացումը կա վեպի ժողովրդական պատումների մեջ։ Մոկացի Հովանն իր պատումն սկսելուց առաջ ասում է. «Խաղա՛նք ճուղեճուղ, գանք դադրենք վեր Դավթի ճուղին»։ Համահավաք տեքստը վեպի զարգացման ճանապարհի այն կայանն է, որից պետք է անցնել հետագա նոր մակարդակների հասնելու համար։

Ինձ զբաղեցնող հարցերի մեջ ամենից կարևորն էր լեզուն։ Ինչպիսի լեզվով պետք էր գրել «Սասնա Դավիթը»։ Զուտ գրական լեզուն կլիներ կեղծիք։ Համահավաքի լեզուն գավառաբարբառ է, այսօրվա ընթերցողին անսովոր և անմատչելի։ Այդ նկատառումով ես վերցրի մեր ժամանակակից արևելահայ գրական լեզուն և այն «զարդարեցի» վեպի ժողովրդական պատումներից հանած լեզվաոճական ու քերականական առանձին տարրերով, որոնք լեզվին պետք է տան բարբառային տեսք և ճկունություն։ Վեպը գրելիս ես աշխատեցի ստանձնել ժողովրդական մի նոր ասացողի դեր։ Ես աշխատեցի մեր ժողովրդի ազգային պատմելաձևը գտնել։ Ընթերցողը կասի, թե այդ ինչքա՛ն է ինձ հաջողված։

Զբաղեցնում էր ինձ նաև իմ աշխատության վերնագիրն ընտրելու հարցը։ Իր ժողովրդական պատումների և գրական մշակումների մեջ վեպն ստացել է բազմաթիվ տարբեր վերնագրեր. «Սասունցի Դավիթ», «Սասնա Դավիթ», «Սասնա փահլևաններ», «Սասունա թագավորներ», «Սասմա ծռեր», «Սասնա տուն», «Ձոջանց տուն», «Թլոլ Դավիթ», «Դավիթ և Մհեր» և այլն։ Ես ընտրեցի «Սասնա Դավիթ» վերնագիրը պաշտոնական Համահավաքի վերնագրին մոտ լինելու և միաժամանակ նրանից տարբերվելու նպատակով։

***

«Սասնա Դավիթը», իր բոլոր պատումներով միասին վերցրած, մեր ազգային հոգևոր մեծագույն հարստությունն է, որի մեջ արտահայտված են ժողովրդի նվիրա-

կան խոհերն ու երազանքները, մեր դարավոր պայքարը հանուն ազատության, մեր ազգային կենցաղը, մեր բնավորությունը, մեր ուժն ու ոգին։

Այս վեպը գրվել է հազար տարի շարունակ։

Ժողովուրդը բերնեբերան այն պատմել է և հորինել, հարմարեցրել նոր ժամանակներին, հարստացրել նոր դրվագներով ու գաղափարներով, ամեն մի ասացող, ըստ իր շնորհքի ու հասկացողության, մի բան է ավելացրել իր սովորածին, և այսպիսով, «Սասնա Դավիթը» դարձել է ժողովրդական հանճարի մի անգերազանց մարմնացում։

Ասացողները սիրում են իրենց պատմությունն սկսել վեպի հերոսներին ողորմի երգելով.

«Դառնամ, ողորմին տի տամ Ծովինար խանումին...»։

Մենք այսօր չէինք ունենա «Սասնա Դավիթը», կորցրած կլինեինք մեր ազգային հանճարի մեծագույն կոթողը, եթե այդ ասացողները չլինեին։ Ուստի եկեք մենք էլ այստեղ «ողորմի» տանք նրանց, հարգանքով հիշատակենք ժողովրդական այդ հավատարիմ գանձապահների նվիրական անունները. Կոպո Տարոնցի, Դանիել Ղազարյան քյավառցի, Թադևոս Առաքելյան մշեցի, Նախո Քեռի մոկացի, Սարգիս Հակոբյան քյավառցի, Մուրադ Արարանցի, Սախո մոկացի, Հովան մոկացի, Մկրտիչ Հարությունյան շատախցի, Ղազար Հովակիմենց մոկացի, Թումաս Պետրոսյան մոկացի, Վարդան մոկացի, Մուրադ Հովսեփյան այրարատցի, Կանչո ալաշկերտցի, Ավետիս Մարտիրոսյան մոճկանցի, Հարություն Դավթյան մշեցի, Սարգիս Հակոբյան քյավառցի, Թառո Ղազարյան հայոցձորցի, Եղիազար Հակոբյան գյավաշցի, Բարսեղ Սահակյան արաբանցի, Ալո Դավթյան, Դավիթ Գալստյան վանեցի, Զարգար Տեր-Մխիթարյան գավաշցի, Վարդան Մուխսի-Բաղիկյան գավաշցի, Մանուկ Զադոյան, Գրիգոր Եղիազարյան գավաշցի, Շահեն Կումիկյան շատախցի, Գրիգոր Շատախցի, Համբարձում Խապա Գրիգորյան, Հակոբ Նրգեյան քյավառցի, Առաքել Սարուխանյան սասունցի, Մանուկ Թորոսյան ալաշկերտցի, Թամո Դավթյան, Մանուկ Հարությունյան մոկացի, Կարապետ Թամոյան ալաշկերտցի, Աղեգ Ղարիբյան շատախցի, Փառիկ Սպարկերտցի, Ռաշո Մուրադյան ալաշկերտցի, Ալո Զադոյան ալաշկերտցի, Վարդան Վարդանյան ալաշկերտցի, Հովան Զոհրաբյան կաճկոցի, Մկրտիչ Պետրոսյան սարալանջեցի և մի քանի անհայտ ասացողներ։

Ես այստեղ հիշատակեցի մի քանի տասնյակ անուն, որոնց ասածները գրի են առնված ու պահպանված մինչև այսօր։ Բայց հազար տարվա մեջ եղել են քանի՜ հազար ասացողներ, որոնց պատմությունները ոչ ոք չի գրանցել և նրանք ասել են ու մեռել՝ տանելով իրենց հետ ով գիտի ինչպիսի՜ շողշողուն գանձեր։ Եվ մի՞թե մենք այսօր կունենայինք մեր հանճարեղ վեպի այժմյան պատկերը, եթե վերևում հիշատակված ասացողների պատումները չգրանցվեին մեր հմուտ բանասերների կողմից։ Այդ գործը չի եղել հեշտ ու հասարակ. սովորական հողագործի կամ արհեստավորի մեջ գտնել շնորհալի ասացողին, համբերությամբ լսել ու կրկին լսել նրան, գրի առնել նրա «խեքաթը»՝ պահպանելով գավառաբարբառի բնորոշ հատկությունները, քերականությունը, արտասանությունը, ռիթմը։ Վեպի ամեն մի պատումը գրանցելը պահանջում է ինքնուրույն մի պոեմ գրելու չափ լարում ու շնորհք։ Ուստի եկե՛ք այստեղ «ողորմի» տանք նաև մեր անխոնջ և իմաստուն բանահավաքներին, հարգանքով հիշատակենք նաև նրանց անունները։

Գարեգին Սրվանձտյան, Վահան բ. Տեր-Գրիգորյան, Մանուկ Աբեղյան, Խաչիկ

Վ. Դավթյան, Գարեգին արքեպ. Հովսեփյան, Սարգիս Հայկունի, Արտաշես Աբեղյան, Սեննեքերիմ Տեր-Հակոբյան, Տիգրան Չիթունի, Հայրապետ Մուշյան, Հարություն Ավշյան, Հ. Գիլանյան, Երվանդ Լալայան, Արտաշես Բարսեղյան, Խաչատուր Մնացականյան, Կարապետ Մելիք-Օհանջանյան, Արամ Ղանալանյան, Վարդան Բդոյան և ինն անհայտ գրանցող։

°°°

Բանահավաքներից ամեն մեկն իր արժեքավոր ավանդն է մուծել մեր վեպն անհայտությունից հանելու, ամբողջացնելու, հաստատելու համաժողովրդական գործի մեջ։ Բայց կուզենայի այստեղ առանձնացնել երեք անուն.

Գարեգին Սրվանձտյան

Մանուկ Աբեղյան

Կարապետ Մելիք-Օհանջանյան

Սրվանձտյանն առաջինն էր, որ գրանցեց Կրպո Տարոնցու պատումը 1873 թվին և այդպիսով հիմք դրեց վեպը հավաքելու գործին։ Համահավաք տեքստի ռուս թարգմանիչները վեպն անվանում էին ուսումնասիրության մի նոր աշխարհ։ Եթե այդ այդպես է, ապա այդ աշխարհի Կոլումբոսը Սրվանձտյանը եղավ։

Սասնա Դավիթ վեպը հոյակապ տաճարի նման բարձրացավ հազար տարի առաջ, ապա մեր ազգային ողբերգության ցնցումներից փուլ եկավ ու երկար ժամանակ թաղվեց պատմության փլատակների մեջ։ Նրա երևացող բեկորները ժողովուրդը վերցնում էր ու բերնեբերան հանձնում հաջորդ սերունդներին։ Պարզամիտ ասացողները վեպի առանձին բեկորները պատմում էին իբրև նախնիներից մնացած մի նվիրական ավանդ կամ իբրև «Սասնա Դավթի խեքաթ», առանց գիտակցելու այդ «խեքաթի» բուն էությունն ու արժեքը։ Գարեգին Սրվանձտյանն էր այն առաջին գոհարագետը, որ այդ «խեքաթի» պատումներից մեկը վերցրեց և ասաց.

— Սա մեր ազգային Վեպն է։

Մանուկ Աբեղյանը գրանցեց Վեպի լավագույն պատումներից մեկը Նախո Քեռի մոկացու բերանից, ապա տեսականորեն հիմնավորեց մեր ազգային էպոսի ծնունդն ու զարգացումը, հայտնաբերեց պատմական այն ակունքները, որոնցից Վեպն սկիզբ էր առել, գլխավորեց Համահավաք բնագիրը կազմող եռյակը և ինքն անձամբ շարադրեց առաջին ճյուղը՝ «Սանասար և Բաղդասար»։

Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանն իր ամբողջ կյանքը նվիրեց Վեպին։ Իր գրանցումների թվով նա մյուսներից անցավ։ Բանահավաքներից շատերը գրանցել են 1—2 պատում։ Միայն Սարգիս Հայկունին և Սեննեքերիմ Տեր-Հակոբյանն են գրանցել 5-ական պատում։ Մելիք-Օհանջանյանը 8 պատում է գրանցել։ Սակայն դա չի նրա գլխավոր ծառայությունը մեր Վեպն առաջ մղելու ասպարեզում։ Նա Մանուկ Աբեղյանի հետ միասին ի մի հավաքեց բոլոր պատումները, կազմեց ու հրատարակեց «Սասնա ծռեր» երկհատոր գանձարանը. նա ստեղծեց այդ ժողովածուի համար գիտական հարուստ ապարատ։ Հմուտ բազմալեզվությամբ նա ռուսերեն լեզվի թարգմանեց Վեպի տասը լավագույն պատումները, որոնք պետք է հրատարակվեն Մոսկվայում և դառնան Վեպի գիտական պրոպագանդայի լավագույն միջոց։ Եթե «Սասնա Դավիթ»-ը մեր ազգային հանճարի մեծագույն ծնունդն է, ապա Կարապետ Մելիք-Օհանջանյանը մեկն է նրա բոլորանվեր դայակներից։

Պատկերը լրիվ չէր լինի, եթե մենք մոռանայինք ակադեմիկոս Հովսեփ Օրբելիին, որ խորապես հասկացավ «Սասնա Դավթի» համամարդկային արժեքը և դարձավ մեկը նրա ամենահեղինակավոր ջատագովներից։

Առանձնահատուկ արժեք է ներկայացնում ասմունքի վարպետ Սուրեն Քոչարյանի կոմպոզիցիան, որով ականավոր արտիստը տարիներ շարունակ ժողովրդականացնում է մեր ժողովրդի մեծ Վեպը Սովետական Միության բոլոր ծայրերում։

○°○

«Սասնա Դավիթն» ունեցավ երեք ծնունդ։

Առաջին անգամ ծնվեց հազար տարի առաջ, երբ մեր հանճարեղ գուսանները (կամ թերևս մեկ հանճարեղ Անհատ) սկսեցին այն հորինել ու պատմել ժամտան հրապարակում հավաքված ունկնդիրներին։

Երկրորդ անգամ ծնվեց այն ժամանակ, երբ Գարեգին Սրվանձտյանը նրա առաջին պատումն էր գրանցում Տարոնացի Կրպոյի բերանից։

Երրորդ անգամ ծնվեց 1939 թվականին, երբ Սովետական Հայաստանի կառավարությունը պետականորեն, մեծ հանդիսավորությամբ, սովետական բոլոր ժողովուրդների մասնակցությամբ տոնեց Վեպի հազարամյակը՝ ստեղծելով ու հաստատելով նրա առաջին Համահավաք տեքստը։

Վեպի առաջին ծնունդը մենք տոնեցինք։ Երկրորդ ծննդյան հարյուրամյակը լրանում է 1973 թվականին։ Այդ մեծ հարյուրամյակը նույնպես պետք է տոնել արժանի շուքով, այս անգամ աշխարհի բոլոր ժողովուրդների հետ։ Այսօրվանից պետք է նախապատրաստվել այդ համաժողովրդական հոբելյանին։ Դա կլինեն նաև Գարեգին Սրվանձտյանի և ապա «Սասնա Դավիթ» վիպերգության բոլոր ասացողների և գրանցողների հոբելյանը։

«Սասնա Դավիթը» մեր ժողովրդի գեղարվեստական հանճարեղ պատմությունն է, համամարդկային մեծ խոհերով ու երազանքներով լի պատմություն, հավիտյան ուսանելի մեզ և ուրիշների համար։

Ճյուղ առաջին

# ՍԱՆԱՍԱՐ
ԵՎ
# ԲԱՂԴԱՍԱՐ



Ողորմի՛ ասենք մեր Հայոց Գագիկ արքային,
Ու դառնանք չասենք ողորմի գազան խալիֆին,
Ասենք ողորմի՛ կուսամեր լուս Ծովինարին,
Ողորմի՛ ասենք դյուցազուն սեգ Սանասարին,
Ողորմի՛ ասենք իր աղբեր ծուռ Բաղդասարին,
Ողորմի՛ հազար խելքի տեր Քառասուն Ճաղ Ծամին,
Ողորմի՛ հազար խմարուն Քեռի Թորոսին,
Ու հազար, հազա՛ր ողորմի Հայոց պապերուն:



## Մ Ա Ս Ն   Ա Ռ Ա Ջ Ի Ն

### I. ԾՈՎԻՆԱՐ

Բաղդադու խալիֆը զորք հավաքեց, եկավ մեր ազգի վրա կռիվ։

Առավ Բերդ-Կապուտին, շատ ավար ու գերի վերցրեց, շատ կոտորեց ու նվաղեցրեց մեր ազգը։

Հայաստան եղավ խալիֆին հարկատու։

Հայոց Գագիկ թագավորը զուրկ էր արու զավակեն։ Մի աղջիկ ուներ, մի հուրհրեղեն աղջիկ, անունը՝ Ծովինար։

Ժամանակ անցավ, խալիֆը մարդիկ ուղարկեց Հայաստան, որ հարկ առնեին։

Հարկահանները մինչև հասան Բերդ-Կապուտին, մթնեց։ Ամբողջ աշխարհը մութն էր, էդ քաղաքը՝ լույս։

Մի մարդ հանդիպեց, հարցրին.

— Էս ի՞նչ լույս է։ Արևը մտել է, ու լուսնակ չկա։ Էս ի՞նչ լույս է դիպել ձեր քաղքին։

— Մեր թագավորի աղջկա լույսն է,— ասաց էդ մարդը։— Ամեն գիշեր, արեմտանալուց հետո, Ծովինար խանումը ելնում, նստում է պատուհան, իր լույսն է տալիս քաղքին։ Ամեն մարդ էդ լույսի տակ իր գործն է անում։

Հարկահանները պալատի մոտով անցնելիս տեսան Ծովինարին, ուշքները կորցրին, ընկան պալատի առաջ։

Թագավորը մարդ ուղարկեց, էնոնց վեր տարավ։

Ուշքի գալուց հետո հարկահանները սուսուփուս վերադարձան Բաղդադ ու ներկայացան խալիֆին։

— Հարկը բերի՞ք,— հարցրեց խալիֆը։

— Թագավո՛րն ապրած կենա,— ասացին,— ի՛նչ հարկ, ի՛նչ բան. Բերդ-Կապուտինում տեսանք մի աղջիկ, ու մազ մնաց, որ զարմանքեն մեռնեինք։

— Վա՜հ,— ասաց խալիֆը։

— Հա՛պա,— ասացին։— Նստել էր պատուհան, արևին ասում էր. «Դո՛ւրս մի գա, որ ես լուսավորեմ»։ Ամբողջ աշխարհը մութն էր, Բերդ-Կապուտինը՝ լույս։ Էդ աղջկա լույսն էր դիպել քաղաքին։ Դու մեր տերը լինեիր, հավատա՛, երեք ամիս ուշքդ կորցրած գետին կընկնեիր։

— Էդ ո՞ւմ աղջիկն էր,— հարցրեց խալիֆը։

— Գագիկ թագավորի աղջիկն էր,— ասին։

— Իսկ հարկն ինչո՞ւ չբերիք։

— Խալի՛ֆն ասրած կենա,— ասին,— դու ի՞նչ կանես հարկ ու հարստություն։ Դու էարան հող ունես, էարան ոսկի, արծաթ ու գոհարեղեն։ Աշխարհի կեսը քոնն է, էն խաչապաշտ աղջիկն էլ որ առար, հաշվի՛ր, թե տիրել ես ամբողջ աշխարհին։

Էս բանը խալիֆի գլուխը մտավ։

Պատվիրակ ուղարկեց հայոց Գագիկ թագավորին, ասաց.

— Աղջիկդ պիտի տաս ի՛նձ։

Գագիկ թագավորը պատասխանեց.

— Ես խաչապաշտ եմ, դու՝ կռապաշտ։ Ես ինչպե՞ս կարող եմ քեզ տալ իմ աղջիկը։ Չեմ տա։

Խալիֆն ասաց.— Գագի՛կ թագավոր, խաթրով լինի՝ կտաս, կռվով լինի՝ կտաս։ Թե չէ Բերդ-Կապուտին տակն ու վրա կանեմ, քո ազգն ամեն կկոտորեմ, գերի կտանեմ, քո թագն ու թախթը կավերեմ։ Խաթրով չտաս, կռվով կտաս։

Ասաց։— Կռիվ կանեմ, չեմ տա։

Խալիֆն իր զորապետին կանչեց, ասաց.

— Զո՛րք առ, գնա Բերդ-Կապուտին։ Գյավուրն իր աղջիկը տվեց, հո տվեց։ Որ չտվեց, քա՛ր քաղեք, ավա՛զ մաղեք, ժողովե՛ք, բերեք, ինչ որ կա։

Եկան, զորք առան, եկան Հայոց աշխարհի վրա, ասին.

— Գագի՛կ թագավոր, կամ աղջիկդ կտաս, տանենք Բաղդադ, կամ քար քաղենք, ավազ մաղենք, թագավորությունդ կվերացնենք։

Գագիկ թագավորը նայեց, ի՞նչ. երկնուց աստղերուն հաշիվ կա, խալիֆի զորքին հաշիվ չկա։

Կռվեցին։ Երկու կողմեն էլ անհաշիվ զորք սպանվեց։

Գագիկ թագավորը պարտվում էր։

Սովինար էլավ գնաց հոր դիվանը.

— Հայրի՛կ, ի՞նչ ես միտք անում։

Ասաց.— Էս անհաշիվ զորքը եկել է քեզ համար։ Կամ դու պիտի գնաս Բաղդադու խալիֆին, կամ էնիկ մեր ազգը բնաջինջ կանի, մեր երկիրը կավերի, մեր թագավորությունը կվերացնի։

Սովինար իր մեջ միտք արեց. «Ես մեկ հոգի եմ, լավ է ես գնամ կորչեմ, քան մեր Հայաստան բնաջնջվի»...

— Հայրի՛կ, տո՛ւր ինձ էդ կռապաշտին։

Գագիկ թագավորը ժողով կանչեց։ Էուր տվին թագավորի աներոջը, որ Վարդպատրկա եպիսկոպոսն էր, եկավ։ Քեռի Թորոս, տասնյոթ-տասնութ տարեկան էր, եկավ։ Թագավորը կանչեց իր ամբողջ ընտանիքը, խորհուրդ արեց.

— Հայե՛ր, ի՞նչ եք ասում, աղջիկը տանք էն կռապաշտի՞ն, թե՞ կռիվը շարունակենք։ Ի՞նչ խորհուրդ եք տալիս։

Մեկն ասաց.— Էլ ուժ չկա կռվելու։ Աղջիկ է, տանք, թո՛ղ տանի։

Մեկն էլ ասաց.— Չէ, պիտի կռվենք։ Բոլորս էլ կկոտորվենք ու մեր աղջիկը չենք տա կռապաշտին։

Դե, ազգություն էր, պատվի հարց։

Քեռի Թորոս ոտքի էլավ ու թագավորին գլուխ տվեց.

— Թագավո՛րն ասրած կենա, ես գիտեմ, ժողովուրդն ուզում է կռվել մինչ 

վերջին շունչը, որ աղջիկ չտա կռապաշտին։ Բայց իմ կարճ խելքով՝ լավ է մի աղջիկ վերանա, քան մի ազգ։ Արի Ծովինար խանումին տանք. պրծնենք։ Հաշվի՛ր. թե էդ աղջիկն էլ չես ունեցել։

Եպիսկոպոսն էլ համաձայնեց, ասաց.

— Մեկ հոգու համար կորել տանք մի ա՞զգ։ Չէ, ջանը՛մ, էդ մեկ հոգի՛ն թող գնա։

Գագիկ թագավորը ճարահատ համաձայնեց, լուր ճամփեց խալիֆին թե՝ արի, աղջիկս տա՛ր։

Խալիֆն իր պատրաստությունը տեսավ, իր հարսնվորն առավ եկավ Հայաստան։

Ծովինար նորէն ելավ գնաց իր հոր դիվանը։

— Հայրի՛կ, խալիֆին ասա՛, որ ինձ համար շինի ջոկ պալատ, մինչև մեկ տարի չգա ինձ մոտ, իմ փարդան չմտնի։ Դու էլ, հայրի՛կ, դի՛ր ինձ հետ իմ քեռմորը ու մի քահանա, որ առավոտ-իրիկուն ժամ ասի, ես իմ աղոթքն անեմ, մեր օրենքին մնամ։

Գագիկ թագավորը գնաց խալիֆի վրանը և Ծովինարի պայմանները հայտնեց կռապաշտին։

Խալիֆն ասաց.— Հա, ջանը՛մ։ Դու քո աղջիկը տուր ի՛նձ, ես քեզ հետ կհաշտվեմ ու քեզմեն հարկ չեմ ուզի։ Հերիք է, որ ինձ ասեն հայոց փեսա։ Ոչ թե ասենք, չէ թե մեկ տարի, յոթ տարի էլ չերթամ Ծովինարի մոտ, իր փարդան չմտնեմ։ Իր համար իմ սարայի դիմաց մի ջոկ պալատ կշինենք, թո՛ղ նստի էնտեղ։ Հետը քեռմեր կդնես, քահանա կդնես, ձեր գործն է։ Թո՛ղ ձեր աղջիկը մնա իր օրենքին, ես էլ՝ իմ օրենքին։ Չէ՞ որ մենք արաբ ենք, դուք՝ հայ։

Կռապաշտ խալիֆը եկել նստել էր Տեղտիսում։ Գագիկ թագավորի նստավայրը Նորագեղա դաշտն էր։ Գագիկն էնտեղ ուներ ծաղիկներով զուգված ամարանոց ու հոտավետ արոտներ։ Կաթնով Աղբյուրն էնտեղ էր։ Նորագեղա դաշտում վրաններ զարկեցին, յոթ օր, յոթ գիշեր հարսնիք արին։

Ծովինար ասաց.— Հայրի՛կ, վաղը համբարձումն է, հրամա՛ն տուր, իմ տարեկից աղջիկներու հետ երթամ ման գալու։

Թագավորն ասաց.— Գնա, ղըրսա՛նք արա։

Ծովինար իր քեռմոր ու տարեկից աղջիկներու հետ գնաց Կաթնով Աղբյուր։ Ման եկան մինչև իրիկուն։ Աղջիկը տեսավ, չորս կողմ արև-աշխարհ կա, ժողովուրդ կա, ամեն մարդ իր գործին, մեկն՝ իր տավարի ու ոչխարի հետ, մեկն՝ իր ջրի ու ռանչպարության հետ։

— Հեյ-վա՜խ,— ասաց,— էսքան լուս-աստղվոր կա, չգիտեի։

Հասան սարի գլուխ, նստեցին կանաչի վրա, կերուխում արին։ Հեռվում երևաց կապույտ մի ծով։ Իջան ծովափ՝ զբոսնելու։ Իրիկուն տուն դառնալու պահին Ծովինար ասաց.

— Աղջիկնե՛ր, դուք ձեզ համար էստեղ մա՛ն եկեք, ես գնամ, ջուր գտնեմ խմելու։

Առավ իր քեռմորը, ծովափով գնաց։ Բարձրացան մի քարափ ու տեսան, որ ծովը սահման չուներ։ Ծովինարն ու քեռմերը նստեցին քարափի վրա, լաց եղան։ Ման գալուց ու լալուց հոգնել էր Ծովինար։ Ինքն ու քեռմերը շատ էին ծարավել։ Ծովն աղի էր, խմելու ջուր չկար։ Ծովինար ասաց.

— Աստվա՛ծ, աղաչում եմ քեզ, էստեղ մի աղբյո՛ւր արա, մեկ էլ ինձ մեկ լույս ու ճար։

Աստծու հրամանով ծովը ետ գնաց, երևաց մի մեծ քարափ։ Էդ քարափին մի սպիտակ աղբյուր էր բխում։ Ծովինար բուռը դեմ արեց, մի լիքը բուռ խմեց. բուռը մեկ էլ դեմ արեց, կիսատ մնաց, աղբյուրը չորացել էր։ Ծովինար կիսատ բուռն էլ խմեց ու էդ երկու բուռ ջրին հղացավ։

Դա մի սար՝ աղբյուրը անմահական էր եղել։

Լուսուն խալիֆի զորքը Հայոց աշխարհեն քաշվեց, գնաց իր հողը։

Գագիկ Թագավորը իր աղջկա բաժինքը պատրաստեց, ելան, աղջկան տարան հասցրին Բաղդադ։

Խալիֆը յոթ օր, յոթ գիշեր հարսնիք արեց, աղջկա համար մի ջոկ ապարանք շինեց, հաց ու ջուր ուղարկեց էնտեղ, ասաց.

— Քո ուզածն է՞ս էր, էստեղ էլ փակված կմնաս։

Ծովինար խանումը դռներն իր վրա փակեց, մնաց սուգ։

## 2. ՍԱՆԱՍԱՐԻ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԾՈՎԱՅԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Մի ժամանակ անց տեսան, հղի է Ծովինար։

Խալիֆը գիտեր, որ էդ բանն իրմեն չի, իր վազիրին ասաց.

— Ի՞նչ անենք։

— Սպանենք, խալի՛ֆն ապրած կենա։

Խալիֆը դահիճ կանչեց, հրամայեց.

— Վազիրի հետ գնա՛, էդ կնոջ վիզը կտրի՛։

Վազիրը դահճի հետ եկավ Ծովինարի պալատը, որ էնոր վիզը կտրեն։ Ծովինար ասաց.

— Ձեր Թագավորին օրենք չկա՞, դատաստան չկա՞։ Չէ՞ որ երեխով կնոջ վիզը կտրեք, սաել է՝ կսպանեք մի անգամեն երկու մարդ։ Դնա, խալիֆին ասա՛, թո՛ղ համբերի, մինչև ես իմ երեխան բերեմ, տեսնենք ինչ է, էն ժամանակ թո՛ղ իմ վիզը կտրեն։ Եթե հարցնեք,— ասաց,— ես իմ հոր տնեն կույս եմ եկել, կույս եմ մինչև էսօր։ Իմ երեխան Աստծու կամքով ջրեն է գոյացել։

Վազիրն ու դահիճը գնացին խալիֆի դիվանը.

— Թագավո՛րն ապրած կենա, Ծովինար խաթունը էսպես ու էսպես ասաց։

— Լա՛վ,— համաձայնեց խալիֆը,— կհամբերենք։

Ինն ամիս, ինն օր, ինը ժամ, ինը րոպե երբ լրացավ, Ծովինար չոքը զարկեց գետին ու բերեց երկու լաճ. մեկը լրիվ, մյուսը՝ կիսատ։

Մեյրեմեթ բաժանան եկավ, ամենուն կնքեց ի վերա Թոնրան. մեծի անունը Սանասար դրեց, փոքրի անուն՝ Բաղդասար։

Ականջկլոր տարան խալիֆին։

— Աչքդ լո՛ւյս, խալի՛ֆն ապրած կենա։ Մի զույգ լաճ ունեցար։ Ուրիշ երեխաներ տարով են մեծանում, էսոնք ժամով են մեծանում։

Խալիֆը եկավ, տեսավ տղաներուն, աչքերը շլվեցին, վազիրին կանչեց, ասաց.

— Դահի՛ճ առ, գնա, էդ կնոջ վիզը կտրե՛լ տուր։

Ծովինար պատասխանեց.

— Ձեր թագավորին օրենք չկա՞, կանոն չկա՞։ Ծծմոր վիզը կտրեք, ճժերն ո՞վ կպահի։ Խալիֆին ասե՛ք. համբերիր, մեծանան իմ ճժերը, նոր ինձ կսպանես։ Ես ո՞ւր կփախչեմ էստեղեն։

Վազիրը գնաց ու Ծովինարի բողոքը խալիֆին հայտնեց։

— Ի՞նչ խորհուրդ կտաս,— հարցրեց խալիֆը։

Վազիրն ասաց.— Տաս տարի ժամանակ տուր, ճժերը մեծանան, նոր վիզը կտրենք։ Հո չե՞ն փախչի։ Բռնավորի պես թո՛ղ մնան իրենց պալատում։

Անցավ կես տարի։ Ծովինար մարդ ուղարկեց, խալիֆին գանգատվեց.

— Ես հա՞վք եմ, որ ինձ վանդակ ես դրել։ Ես բռնավո՞ր եմ, որ ինձ բանտ ես դրել։ Չես թողնում դուրս գանք, արևի երես տեսնենք։

Խալիֆն ասաց.— Լավ, թո՛ղ դուրս գան ման գան իրենց համար։

Ճժերն օրըստօրե պետացան։ Մեկ տարեկան եղան, հինգ տարեկանի չափ էին երևում։

Անցավ հինգ-վեց տարի, Սանասար ու Բաղդասար դարձա՜ն պետ-պետ փահլևաններ։ Մեծը քահանային կանչեց ու ասաց.

— Տեր-հայր, իմ տղաներուն դա՛ս տուր, կարդացրո՛ւ։

Տերտերը տղաներուն գրել-կարդալ սովորացրեց։

Սանասար ու Բաղդասար Բաղդադա ճժերու հետ մի առավոտ խաղում էին։ Ճժերն էնոնց վրա թափվեցին, ասին.

— Դուք բիճ եք, դուք բիճ եք։

Սանասար մի ապտակ զարկեց վազիրի լաճուն, վիզը ծռեց, ինքն ու աղբերը լալով եկան մոր մոտ.

— Մարե, ասա՛, մեր հերն ո՞վ է։

— Ձեր հերը,— ասաց,— խալիֆն է, որդի՛ք։

Էս խոսքով տղաները հանգստացան։

Վազիրի լաճու վիզը մնացել էր ծուռ։ Վազիրը գնաց խալիֆի մոտ.

— Էս ի՞նչ աստծու պատիժ է. էդ խաչապաշտի ճուտերը մեր ճժերուն ամեն օր հաշմում են։

Խալիֆը Սանասարին ու Բաղդասարին իր մոտ կանչեց, նայեց, էնոնց խոսքն ու զրույցը լսեց, էնոնց աժդահա տեսքեն վախեցավ. տղաներուն իրենց մոր մոտ ուղարկեց ու վեզիրին ասաց.

— Էսոնք որ մեծացան, պիտի կախվին իմ մորուսից։ Էսոնց համար մի բան պիտի անենք։

Սանասար ու Բաղդասար մի առավոտ նորեն քաղքի ճժերու հետ խաղ էին անում։ Ճժերը նորեն վրա տվին.

— Դուք բիճ եք, դուք բիճ եք, բիճ, բիճ, բիճ...

Նորեն լալով տուն եկան, նստվեցին մոր գոգը.

— Կամ մեզ ասա՝ ով է մեր հերը, կամ կերթանք մեզ կթալենք ջուր։

Շատ որ լացին, մոր դժարն եկավ, նաժիշտին ասաց.

— Կապո՛ց առ, գետափ գնանք, որ մի քիչ մեր սրտերը բացվեն։

Գետափին Սանասար կրկնեց.

— Մարե, ասա՛, ո՞վ է մեր հերը, թե չէ ես ինձ գետ կթալեմ։

Ասաց.— Որդի՛, ես մի ժամանակ իմ քեռմոր հետ գնացի ծովափ, շատ էի ծարավել, ծովը բացվեց, մի համեղ ջուր դուրս եկավ, ես էն ջուրը խմեցի մի բուռ լիքը, մի բուռ՝ կիսատ։ Դուք էն ջրի ծնունդն եք։ Դու էն լիքը բուռն ես, ծուռ Բաղդասարն էլ՝ կիսատ բուռը։

Սանասար ասաց.— Մարե՛, մենք մեր էությունն իմացանք։ Դու էլ քո էությունն ասա։

Ասաց.— Որդի՛ք, ես հայոց Գագիկ թագավորի աղջիկն եմ։

Շատ ժամանակ անցավ։

Սանասար ու Բաղդասար տեսան, իրենց մերը օրեցօր հալվում է, ասին.

— Մարե՛, քեզ ի՞նչ է եղել, դու օրեցօր հալվում ես։ Արցունքը չի պակասում քո աչքերեն։ Աստված քեզ բաշխել է մի զույգ փահլևան որդի, դու հայոց թագավորի աղջիկն ես, Բաղդադու թագուհին, ապա ի՞նչն է քեզ պակաս, քո ցավն ի՞նչ է, որ դու հալվում ես օրեցօր։

Ծովինար թագուհին ասաց.

— Հեյ-վա՜խ, որդի՛ք, ես որ չհալվե՞մ, ո՞վ պետք է հալվի։ Էսօր-էգուց խալիֆի դահիճները կգան, իմ ու ձեր երկուսի վիզն էլ կզարկեն։

Սանասար փառ-փառ ծիծաղեց.

— Մարե՛, էդպիսի բա՞ն էլ կա։ Էա՞վ։ Կտեսնենք, մեր վիզը ո՞նց պիտի զարկեն։

Տասը տարին լրացել էր։ Խալիֆը դահիճներ կանչեց, ասաց.

— Գնացե՛ք, էդոնց վզները կտրե՛ք։

Սանասար ու Բաղդասար էն սենյակում քուրսուն նստած խոսում են ու ծիծաղում։ Մերն էստեղ լաց է լինում։ Դահիճները ներս մտան.

— Վե՛ր կացեք, էսօր ձեր վզները պիտի կտրենք։

Ծովինար թագուհին ասաց.

— Բա ձեր ձեռը կերթա՞ իմ ձագերու վզին։

— Մեր ձեռը չերթա,— ասին,— բայց ի՞նչ անենք. թագավորի հրամանն է։

— Կամա՛ց խոսեք, ձագերս կլսեն, կվախենան։ Թո՛ղ մի քիչ էլ անհոգ ծիծաղեն։ Դուք էստեղ նստեք, հանգստացե՛ք։

— Չէ,— ասին,— մեզ իրավունք չկա նստելու։ Վե՛ր կացեք, երթանք դուրս։ Որ էստեղ ձեր վիզը կտրենք, արունը կթափվի պալատի մեջ։

Ծովինար նորից աղաչեց, ասաց.

— Կամա՛ց, խոսեք, ձագերս կվախենան։

Դահճապետը բռռաց.

— Էդ իմ բանը չի։ Շո՛ւտ արեք։

Ձենն ընկավ Սանասարի ականջը։ Դուռը բաց արեց, տեսավ՝ դահիճները մերկ թրերով կանգնած են իր մոր սենյակում։

— Ի՞նչ մարդիկ եք։ Ի՞նչ եք ուզում։

Ծովինար դահիճներուն ծածուկ աղաչեց.

— Իմ ձագերուն չասեք, թե եկել եք, որ էնոնց վիզը կտրեք։ Տնեն դո՛ւրս հանեք, մեկը կանգնի մի կողմ, մեկը՝ մյուս կողմ, էնպես զարկեք, որ չտեսնեն, չվախենան։

— Լավ,— ասին դահիճները։

— Մի խնդրանք էլ ունեմ. առաջ ինձ սպանեք, նո՛ր իմ ձագերուն։

— Լավ, Երթանք։
— Ո՞ւր կերթաք, մարե՛,— հարցրեց Սանասար։
— Դուրս կերթանք ու կդառնանք, լաո՛։
— Մարե՛, էստեղ մի բան կա։ Ինչո՞ւ են քեզ տանում։ Ես չեմ թողնի։
— Որդի՛, ճշմարի՞տն ես ուզում. խալիֆն ուղարկել է, որ իմ վիզը կտրեն։
— Կտրողն ո՞վ է։
— Էս մարդը։
Սանասար մոտեցավ դահճապետին.
— Իմ մոր վիզը կտրողը դո՞ւ ես։
— Խալիֆի հրամանն է,— ասաց,— որ ձեր վիզը կտրեմ։
— Առ քեզ մեր վիզը...
Սանասար դահճապետին մի գոմր տվեց, գլուխը թռավ, մարմինը մնաց կանգուն։ Մյուսները փախան գնացին խալիֆի մոտ.
— Թագավորն ապրած կենա, քո լաճը դահճապետին մի գոմր տվեց, գլուխը թռավ, մարմինը մնաց կանգուն։
Խալիֆը զորք ուղարկեց էնոնց վրա կռիվ։
Սանասար ու Բաղդասար մինչև իրիկուն զորքի կեսը ջարդեցին, եկան տուն։ Մյուս օրը զորք չերևաց։ Խալիֆն իր զորապետին հրամայեց.
— Գնա՛ էդ լակոտներու վրա կռիվ։
Զորապետն ասաց.— Փադիշա՛հ, մենք էդ լակոտներուն չենք զոռի։ Աղնավուր մարդիկ են էդոնք։ Թագավորությունից կփչացնեն։ Լավն էն է, կռիվ չանենք։
Խալիֆան տեսավ՝ ճար չունի, հակեց.
— Հիմա հավատացի, որ անմեղ է Ծովինար։ Էդ աղնավուրները ծովեն են, որ ծովեն։ Իմ որդիներն են էդոնք, Ծովինար իմ թագուհին է։

## 3. ՓԱԽՈՒՍՏ

Տարիներ անցան։ Խալիֆը նորեն զորք հավաքեց, որ կռիվ դար մեր ազգի վրա։ Ծովինար ասաց.
— Խալիֆ, արի՝ դու ինձ լսիր, կռիվ մի՛ գնա։
— Ինչո՞ւ։
— Գիշեր երազ եմ տեսել. մանր աստղերը թափվեցին մեծ աստղի վրա։ Մեծ աստղը ցոլցլաց, էկավ, էկավ, ընկավ մեր դռան առաջ։
— Էհ,— ասաց,— խելո՛ք Ծովինար, քեզ համար քնում ես, ուրիշի համար երազ տեսնում։ Չէ, քանի որ ջահել եմ, պիտի գնամ կռիվ։
— Քո կամքն է։ Կերթաս, դու գիտես, կմնաս, դու գիտես։ Բայց ախար դու պայման ունես իմ հոր հետ։
— Միտքս փոխել եմ,— ասաց խալիֆը։— Պիտի գնամ կռիվ, իմ տաս տարվա հարկս առնեմ։
Եկավ, Բերդ-Կապուտին պաշարեց։
Յոթ տարի կռիվ եղավ։
Ապրանք ու տավար մնացին քաղքի մեջ։ Արտերը կորդացան առանց վարուցանքի։ Քաղքի մեջ ընկավ անասելի թանկություն, մի դողիկ հաց մի ոսկով չէին տալիս։ Շատերը սովից մեռան։ Մարդիկ ասում էին իրար.

— Աստվա՜ծ, կլինի՞, որ մեկ էլ կուշտ փորով հաց ուտենք։

Գագիկ թագավորը շատ հոգս արավ, շատ մտածեց ու ջահել տղաներ հավաքեց իր զորքի համար։ Իրիկուն, երբ մութն ընկավ, նա իր զորքին գաղտնի հրաման տվեց.

— Մինչև ձեն չտամ, չզարկեք։

Գիշերվա մի պահ, երբ ձեն-ձուն հանդարտվել էր, թագավորը ձեն տվեց.

— Զարկե՛ք, աստվա՜ծ մեզ օգնական։

Զարկեցին։ Խալիֆի զորքը շփոթվեց։ Առաջինը դարձավ ետինի, ետինը դարձավ առաջինի վրա։ Քեռի Թորոսի հետ միկտեղ ջահել զինվորները սրով ու թրով իջան թշնամու զորքի մեջ ու սպանեցին, ու կոտորեցին, ու ջարդեցին։ Էնպիսի ջարդ ընկավ, որ արաբներն իրար չէին ճանաչում, զարկում սպանում էին իրար։ Խալիֆը մենակ էր մնացել, տեսավ, որ իր զորքերն իրար են ջարդում ու ջարդը շուտով իրեն կհասնի. հեծավ իր շամա ուղտը, փախավ՝ ճանապարհին կանչելով.

— Կուռքե՛ր, ինձ փրկե՛ք էս նեղ տեղեն, ես իմ Սանասար ու Բաղդասար որդիներուն ձեզ մատաղ կանեմ։

Ծովինար նորեն երազ տեսավ։ Երկու ճրագ ուներ. մտածում էին հանգչելուն, որ պիտի հանգչեին, ու մեկ էլ դառնում նորեն լույս էին տալիս։

Ելավ գիշերով իր մոտ կանչեց երկու տղաներուն, ասաց.

— Խալիֆն ընկել է նեղության մեջ ու ձեզ իր կուռքերուն մատաղ է կանչել։ Ձեր գլխի ճարը տեսե՛ք, որդի՛ք։ Փախեք Հայոց երկի՛ր, ձեր պապի մոտ։ Գիշերը պայծառ աստղը բռնեք նշան, ցերեկը հարցրեք Արևելյան թագավորի երկիրն ու գնացե՛ք։

Սանասար ասաց.— Գնանք, Բաղդասա՛ր։ Կարող էինք զարկել, անդունդ իջեցնել խալիֆին էլ, իր զորքն էլ, բայց օգո՞ւտն ինչ. օտար հողը մեզ հայրենիք չի դառնա։

Ելան առան մեկական նետ-աղեղ, մեկական գուրզ ու թուր, ուտելիք վերցրին, գնացին խալիֆի ախոռը, դուրս քաշեցին երկու հրեղեն ձի, հեծան, եկան, իրենց մոր ձեռք պագեցին, ասին.

— Մնաս բարո՛վ, մարե՛։ Դե, խալիֆը թո՛ղ մեզ մորթե իր կուռքերուն։

Սանասար ու Բաղդասար կանչեցին իրենց աստվածն ու գիշերով ընկան ճանապարհ։ Հայոց աշխարհ, ո՛րտեղ ես, եկանք։

Լուսադեմին Ծովինար ելավ բարձրացավ պալատի տանիքը, որ տեսնի, տղաները քաղքեն հեռացե՞լ են, թե չէ։ Բայց ի՞նչ տեսավ. Խալիֆն էր գալիս, հեծած իր շամա ուղտը, առանց իր զորք ու զորապետի։ Մնացել էր, դառել կույր։ Եկավ, ափալ-թափալ իրեն պալատի դարպասեն ներս թալեց։ Կնիկն ասաց.

— Յա՜, խալի՛ֆ, աստված բարի՛ն տա։ Էս յոթ տարի ձենդ լավ էր գալիս։ Մկա ի՞նչ է եղել. ո՞ւր է քո զորքը, ո՞ւր են քո զորապետները։

Խալիֆը պատասխանեց.

— Ախ, կնի՛կ, դյավուրին քաղքի պարսպեն ներս էի սեղմել, վերջին ժամն էր, որ պիտի անձնատուր լինեին. մին էլ գիշերով երկնուց կրակ թափվեց, հրեղեն սուր ընկավ իմ զորքի մեջ, միրանք իրար կոտորեցին, բրդեցին, ջարդեցին, մազ մնաց, որ ես ընկնեի թշնամու ձեռքը, ուղտս հեծա ու փախա։

Անցավ մի ժամանակ։

Մի օր խալիֆը Ծովինարին ասաց.

— Գիտե՞ս ինչ կա, թագավորի՛ աղջիկ։
— Ի՞նչ կա, թագավո՛ր։
— Իմ կուռքերը մատաղ են ուզում։
Ծովինար ասաց.— Քո տունը չքանդվի, դու չունե՞ս ոչխար, տավար, պարարտ երինջներ, մորթի՛ր, մատա՛ղ արա։
Խալիֆն ասաց.— Ոչ, իմ կուռքերը մարդ են ուզում. ես էն ժամանակ էնոնց համար խոստացա քո տղաներուն, որ կուռքերն ինձ իմ թշնամուց ազատեին։
Գագիկ թագավորի աղջիկն ասաց.
— Տնաքա՛նդ, իմ տղաները քո տղաները չե՞ն, ինչպես գիտես, էնպես՛ արա։ Տա՛ր, մորթի՛ր մեր որդիներուն։ Բայց ո՞ւր է Սանասար, ո՞ւր է Բաղդասար։ Քո կուռքերը ո՞ւր, իմ ձժերը ու՞ր։

Սանասար ու Բաղդասար շատ գնացին, քիչ գնացին, հասան Մուշ, Մուշեղ թագավորի մոտ, յոթն անգամ գլուխ տվին, ութի վրա ձեռ կապած կանգնեցին։
Մուշեղ թագավորն ասաց.
— Ձեզ ի՞նչ է պետք, որդի՛ք։ Ի՞նչ պակասություն ունեք։
Պատասխանեցին.
— Պակասություն չունենք։ Վերևում աստծուն ենք ապավինել, ներքևում՝ քեզ, թագավո՛ր, որ մեզ պահես, պահպանես, աչքդ մեզ հովանի անես. աստված իրարմեն վերջում չամաչեցնի։
Թագավորը հարցրեց.
— Ո՞ւմ տղաներն եք։
— Բաղդադու խալիֆի տղաներն ենք,— պատասխանեցին։
— Որ էդպես է, որդի՛ք, ես չեմ իշխենա ձեզ պահեմ։ Ձեր հայրը զորեղ թագավոր է. կգա մեր առ ու գերին կտանի։ Չէ, չեմ կարնա։ Գնացե՛ք։
Դուրս ելան էդ հողեն ու ճանապարհին միտք էին անում.— Ո՞ւր գնանք։
Գնացին Արզրում, ամիրայի մոտ, գլուխ իջեցրին ու կանգնեցին ամիրայի առաջ։ Երկու աղբերն էլ քո ուզած հաստաբազուկ ահագէն մարդիկ էին։ Ամիրան երկուսին էլ շատ հավանեց, ասաց.
— Ի՞նչ մարդ եք. ո՞ր ազգեն, ո՞ր աշխարհեն։
Սանասար պատասխանեց.
— Բաղդադու խալիֆի տղաներն ենք։
Ամիրան օձիքը թափ տվեց.
— Հայ-հա՜յ, մենք էնոնց մեռելներեն ենք փախնում, ողջերին հանդիպեցինք։ Չէ, ես ձեզ տիրություն անողը չեմ։ Որտեղեն եկաք, էնտեղ էլ գնացե՛ք։
Գնացին։ Ճանապարհին Սանասար ասաց.
— Աղբե՛ր, մենք էդ մարդուց ենք փախնում, ինչո՞ւ ենք էնոր անունն առել մեզ վրա։ Արի՝ էդ շան անունն էլ շտանք, թե չէ մեզ պահող չի լինի։ Էս անգամ թե որ կհարցնեն, ասա՝ բան չունենք, ոչ հեր, ոչ մեր, ոչ տուն, ոչ հայրենիք։
Հասան Մանազկերտու բերդ։ Էնտեղ մի թագավոր կար, անունը Թեաթորոս։ Եկան նրա պալատի առաջ կանգնեցին։ Թագավորի մարդիկ էտոնց հարցրին.
— Ի՞նչ եք ուզում։
Ասացին.— Եկանք, որ թագավորին ծառայենք։

Թագավորն իմացավ, նրանց վերև կանչեց։ Յոթն անգամ գլուխ տվին, ութի վրա ձեռ կապած կանգնեցին թագավորի առջև։ Թեաթորոսն էդ երկու շնկ խորոտ լաճերուն շատ հավանեց, հարցրեց.

— Որդիք, ինչո՞ւ համար եք եկել։

Ասացին.— Վերևում աստծուն ենք ապավինել, ներքևում՝ քեզ, թագավո՛ր, որ մեզ պահես, պահպանես, աչքդ մեզ վրա հովանի անես. աստված իրարմեն վերջում չամաչեցնի։

— Ո՞րտեղացի եք։

— Չգիտենք,— պատասխանեցին։

— Ի՞նչ ունեք, հեր, մեր, ազգ։

— Իսկի բան չունենք,— ասին,— ոչ տուն, ոչ տեղ, ոչ հայրենիք։ Ինչ որ ծնվել ենք մորե, ոչ մեր ենք տեսել, ոչ հեր, մեզ էսպես որբուկ աղա ենք տեսել։

— Իսկ ինչո՞ւ եք ման գալիս։

— Եկել ենք, որ քեզ ծառայենք։

Թագավոր էդ պատասխանն էլ հավանեց, ասաց.

— Տարե՛ք էսոնց, դրե՛ք մաքուր սենյակներու մեջ, հաց ու անկողի՛ն տվեք։ Էսօրուց հետև Սանասար իմ սեղանապետն է, Բաղդասար՝ իմ գինեպետը։

Անցավ մեկ տարի։

Մի անգամ ավազակներն էդ քաղքի նախիրը տարան։ Վազիրը թագավորին ասաց.

— Արի՝ Սանասարին ու Բաղդասարին փորձենք, տեսնենք մեջները հունար կա՞, պիտի կարենա՞ն մեր նախիրն ավազակներեն ետ խլել։

Թագավորն ասաց.— Փորձենք։

Բերեց երեսուն ձիավոր դրեց երկու աղբոր հետ, որ գնային ավազակներու վրա։ Սանասար ասաց.

— Թագավո՛րն ապրած կենա, մենք երեսուն ձիավոր չենք ուզում։ Երկուսովս մենակ հերիք ենք։

Զենքերը կապեցին, ձիերը հեծան, գնացին, հասան ավազակների սարը. զարկեցին, ջարդեցին, նախիրը ետ առան, ողջ մնացած մարդկանց խառնեցին տավարի հետ, բերին քաղաք։

Թագավորը շատ ուրախացավ, շատ սիրեց երկու աղբերներուն։

Մի առավոտ Սանասար ու Բաղդասար գնացին քաղաքամեջ։ Տեսան, որ ջահելները վահանամարտ են խաղում. ձեռները վահան բռնած՝ փայտով զարկում են իրար։

Ասացին.— Մենք էլ գնանք էդոնց հետ խաղանք։

Խաղացին։ Որ մեկին ձեռք էին տալիս, ուշաթափ ընկնում էր գետին։

Թագավորն իմացավ, աղբերներուն կանչեց.

— Տղե՛ք,— ասաց,— էս ի՞նչ եք անում դուք։

— Թագավո՛րն ապրած կենա,— ասին,— մենք խաղում էինք, էդպես եղավ։

— Դուք զորեղ, ազնավուր մարդ եք։ Նրանք ինչպե՞ս կդիմանան ձեր ուժին։ Մի անգամ էլ էդ բանը չանե՛ք։

— Էլ չենք անի։

Թագավորը նրանց արձակեց, կանչեց վազիրին, ասաց.

— Էդոնք մինչև էսօր գիտեին, թե մեր մեջ որձ մարդ կա։ Էսօր իմացան, որ իրենք տղամարդ են, մեր ջահելները՝ կնիկ։

Վազիրը վերցրեց ասաց.

— Թագավոր, էդոնց քաղքեն դուրս արա, թո՛ղ գնան։ Թե չէ մի օր էլ քեզ կվնասեն։

Մի քանի օր անց էնոնց ընկեր տղաներեն մեկը թաքուն ասաց.

— Իմացե՛ք, թագավորը բարկացել է ձեր վրա, ուզում է՝ ձեզ քաղքեն դուրս անի։ Էսոնք շատ վշտացան։ Ջոջ աղբերն ասաց.

— Աղբեր, էստեղ մեզ տուն չի լինի։ Արի՝ երթանք մեզ համար տուն շինենք։

— Դու գիտես, աղբե՛ր,— ասաց Բաղդասար։— Երթա՛նք։

## 4. ՍԱՍՈՒՆ

Առեաթորոս թագավորը սեղան նստեց ու տեսավ. սենյակում ոչ Սանասար կա, ոչ Բաղդասար։ Կանչեց, հարցրեց.

— Ինչո՞ւ եք տխուր, որդի՛ք։ Ի՞նչ է պատահել։

Սանասար ասաց.— Թագավո՛ր, քեզմեն մի բան պիտի խնդրենք։

— Ի՞նչ։

— Մեզ մի տեղ տաս քո թագավորության մեջ, մեզ համար տուն շինենք։

Թագավորը միտք արեց, ասաց.

— Որդի՛, ես անժառանգ եմ, կմեռնեմ, իմ երկիրը ձեզ կմնա, կլինի ձեր տունը։

— Չէ, թագավո՛րն ապրած կենա։ Մեզ մի տե՛ղ տուր։ Թե չէ, ախպորս ձեռը կբռնեմ, կերթամ։

Թագավորի սիրտը չափաց էնոնց վրա.

— Որ էդպես է, որդի՛, գնացե՛ք, մա՛ն եկեք իմ հողի մեջ, որտեղ ձեր սիրտը կուզենա, էնտեղ էլ ձեր տունը շինե՛ք։

Լուսուն աղբերներն ընկան ճանապարհ։ Շատ գնացին, քիչ գնացին, տեսան, դաշտի միջով մի մեծ գետ է անցնում, դիմացի սարեն իջնում է բարակ մի առու, զարկում կտրում է էդ մեծ գետը, դիպչում է մյուս ափին, նոր ետ է դառնում խառնվում գետի հետ։ Աղբերները զարմանքով նայեցին իրար։ Բաղդասար ասաց.

— Յա՜, զարմանալի է։ Բարակ առուն զարկում կտրում է հաստ գետը։ Էսիկ ի՞նչ բնության ջուր է։

Սանասար նայեց, նայեց, նայեց, ասաց.

— Էսիկ աղնավուրի ջուր է։ Ով էսօր ակունքեն խմի, կդառնա էսոր նման զորեղ, մեջքը գետին տվող չի լինի։

— Վա՛հ,— ասաց Բաղդասար։— Մկա դու ի՞նչ խորհուրդ կտաս։

— Հացն ու գինին, տեր կենդանին,— ասաց Սանասար։— Գնանք հասնենք էս բարակ առվի ակունքին, էնտեղ մեր տո՛ւնը շինենք։ Մենք զորեղ, ջուրը զորեղ, էս ջուրը խմողը աղնավուր կդառնա, իր զավակները՝ մի չափ առավել։

— Քո կամքն է, ջո՛ջ աղբեր,— ասաց Բաղդասար։

Մեծ գետն անցան, պզտիկ առուն բռնեցին, բարձրացան, հասան մի զարմանալի աշխարհ։ Սարեր սարերու գլխին, ձորեր ձորերու մեջ, անդունդներ, վիհեր, կապան ու քարափրթա։ Էնտեղ անտառն անտառով էր վերջանում, արջ, վագր ու առյուծ

իրարմեն զարհուր փախնում էին։ Չորս բոլոր շենք ու շենլիկ չկար։ Շատ խորոտ երկիր էր։

Աղբերները գտան առվի ակը, ջուր խմեցին, Սանասար ասաց.

— Անուշ է։ Եկ՝ էստեղ մեզ համար բերդ շինենք։

— Քո կամքն է,— ասաց Բաղդասար։

Նստեցին ջրի ական մոտ, իրենց բերդի տեղը սահմանեցին, հաց կերան. էդ անմահական ջուրն էլի խմեցին, անունը դրին Կաթնաղբյուր ու դարձան եկան Մանազկերտ։

Լուսուն էլի կանգնեցին թագավորի առաջ։

Թևաթրոս հարցրեց.

— Է՜, որդի՛ք, ձեր տան համար տեղ գտա՞ք։

Սանասար պատասխանեց.

— Գտանք, թագավո՛րն ապրած կենա։ Քեզմեն մի բան էլ պիտի խնդրենք։ Երկուսով մենակ էնտեղ նստիլ չի լինի։ Տո՛ւր մեզ մի քանի տուն հարուստ, մի քանի տուն աղքատ, որ գան մեզ հետ, մեր բերդի կողքին տուն շինեն, իրիկունները իրար գանք, զրույց անենք մեր քաղքի մեջ, մեզ համար ապրենք։

Թագավորը աղբերներուն ավեց քառասուն տուն ժողովուրդ։ Տնե՞ր եմ ասել... ամեն մեկն ուներ մի էշ, մի ճախարակ։

Թագավորն առավոտյան մարդիկ ուղարկեց քաղքի մեջ, էդ քառսուն տունը հավաքեց, հետները ավեց քառսուն բեռ ալյուր, քառսուն բեռ պարեն ու պաշարեղեն, ասաց.— Գնացե՛ք։

Աղբերները թագավորին կաց-բարով ասին, քոչերն առած բարձրացած սարերը, հասան մինչև Կաթնաղբյուր, իրենց բերդատեղի մոտ։

Բաղդասար աղբորն ասաց.

— Առաջ մեր բե՞րդը շինենք, թե՞ էս աղքատ-ուղքտի տները։

Սանասար պատասխանեց.

— Առաջ էնոնց տները, նոր մեր բերդը շինենք։ Էս խեղճերը արևի տակ չեն դիմանա։

Սկսեցին շինել։

Սանասար օրը տասը տան տեղ էր փորում, Բաղդասար քար ու փետ էր բերում. տունը շինում էին երկուսով։ Չորս օրվա մեջ պատրաստեցին քառսուն տունը։ Սարի մեծ գերանները կտրատեցին, առանց թփռելու թալեցին ծածկերու վրա, պրծան։

Տղաներն ում տունը շինում էին, նրա տանը հաց էին ուտում։ Ում տանը հաց կերան, նրա տաշտն ու մաղը կախեցին օճորքից։

Երբ քոչերը բոլոր տուն ստացան, աղբերներն սկսեցին իրենց բերդը շինել։ Սանասար պետ-պետ ապառաժներ շալկեց, բերավ, Բաղդասար՝ պետ-պետ գերաններ։ Ապա գնացին քաղաք, վարպետ ու բանվոր կանչեցին։

Վարպետը քարերը տեսավ, ահռեց.

— Սանասա՛ր, էս ո՞նց պիտի շարենք։ Իմ ուժը չի պատի, որ ապառաժներն իրար տամ։

— Հապա ո՞վ իրար կտա։
— Ոչ մի մարդ։
Էն ատեն Սանասար ասաց.
— Դու, վարպե՛տ, լարերը կապի՛ր, տեղերը ցո՛ւյց տուր, ինձ ասա՛, ես ամեն քարն իր տեղը դնեմ։
Էսպես էլ բերդը շարեցին։ Վարպետներու հետ մեկտեղ էին բանում։ Էնքան զորեղ էին, որ քարե սանը քարե սուն զարկեցին, սանը-սուն, սանը-սուն, բարձրացրին։ Մեկ բոլոր տարի էսպես աշխատեցին։ Մեկ տարուց հետո էնոնց բերդը գլուխ էկավ։
Ապա դարձան, շինեցին մի պստիկ ժամ։
Սանասար ասաց.— Լավ. բերդը շինեցինք, պրծանք, անո՞ւնն ինչ դնենք։
Բաղդասար ասաց.— Շինելը երկուսիս վրա, անուն դնելը՝ քեզ վրա։
Ով որ եկավ, բռնեցին ասին.
— Մեր տանը մի անո՛ւն դրեք։
Ոչ մի մարդ մի կարգին անուն չդրեց։
Առավոտյան Սանասար գնաց ման գալու։ Տեսավ, մի սիպտակ-մորուս հալվոր վիցկի էր անում։ Հալվորն էդ աղնավուրին որ տեսավ, ձեռները դող ընկան, չութը կանգնեցրեց։ Սանասար հալվորի թևը բռնեց, ասաց.
— Մի՛ վախենա, պապիկ, արի՛ գնանք մեր տուն։
Տարավ տուն, հաց կերան, գրույց արին. Սանասար ասաց.
— Պապի՛կ, դու գիտե՞ս ինչի համար եմ քեզ բերել։ Էս բերդը մենք նոր շինեցինք, անուն չունի։ Դու աշխարհ տեսած հալվոր մարդ ես, մեր տանը մի խորոտ անուն դիր։
Հալվորն ասաց.— Ձեր հոգուն մեռնեմ, մկա մութն է, լուսուն ելնենք, ես իրիշկեմ ձեր բերդը ու համար անուն մի տամ։
Լուսուն Սանասար հալվորին չալեց, արևելյան դռնեն դուրս տարավ, բերդի բոլոր ման ածեց, իրիկուն էլի նույն դռնով բերեց ներս.
— Ինչ կասես, պապի՛կ։
Հալվորն էլի զարմանքով նայեց բերդի ապառաժ պատերուն, բարձր հարկերուն, կարկառ աշտարակներուն, ասաց.
— Աստված բարի՛ն տա ձեզ, դուք ի՞նչ ուժ ունեք, որ վեր եք հանել էս պետ-պետ ապառաժները, էս սասուն քարերը, քարե սան սուն եք զարկել։ Սա տուն չէ, Սասուն է։
Սանասար ուրախացավ.
— Բավ է, պապի՛կ, էլ ձեն մի՛ հանի. մեր բերդի անունը եղավ Սասուն, մեր տան անունը՝ Սասնա տուն։

## 5. ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼԻՆ ՈՒ ԹՈՒՐ ԿԵԾԱԿԻՆ

Սասուն երբ շինեցին, պրծան, Սանասար դիմեց աղբորը.
— Բաղդասա՛ր, արի՝ գնանք ծով, մի լավ ձի ճարենք մեզ համար։
Ծովածին էին, գիտեին, որ հրեղեն ձի կա։
Ելան, գնացին ծովափ։ Սանասար ասաց.
— Արի՛ քայլենք ծովի վրա, տեսնենք մարդ կխրվի՞ ծովի մեջ։

Բաղդասարը թե՝

— Չէ, ախպե՛ր, հոգին քաղցր է. ես ինձի չեմ թալե ծով։

— Հա՛վ, դու սպասի՛ր էստեղ, ես կերթամ։

Աստծու հրամանքով ծովը ճեղքվեց։

Սանասարի աչքին չոր գետին էր, Բաղդասարի աչքին՝ ջուր։ «Վա՜յ, իմ աղբերը ծովում կորավ»,— բռռաց Բաղդասար, ուշաթափվեց, ընկավ ծովափին։

Սանասար ծովի միջով, ինչ որ ցամաքի վրա, գնաց, գնաց, հասավ խորքը։ Էնտեղ մի պարտեզ կար, մեջը՝ ավազան։ Մի պալատ կար, առջևը շատրվան էր խփում։ Էնտեղ կապած էր ծովաձին, սաղափի թամբը վրան, Թուր Կեծակին թամբին կախած։ Պարտեզի մեջ կար մի ժամ։ Սանասար մտավ ներս, քունը տարավ, ընկավ գետին։ Մայր աստվածածին էնոր երազ եկավ, ձեն տվեց.

«Այ Սանասար, վե՛ր կաց։ Խաչ-պատերազմին էստեղ է, յոթը ծունր աղոթք արա իր առջև, արժանացար, կիջնի քո աջ թևին, քո վրա էլ ոչ մի զարկ չի բանի։ Էստեղ է ծովաձին, անունը՝ Քուռկիկ Ջալալի, թամբած է, սանձը բերնի մեջ, արժանացար. կհեծնես։ Էստեղ մի պահարան կա, բաց կանես, կառնես քեզ համար

Շապիկ — զրահին,
Գոտիկ — զրահին,
Գդակ — զրահին,
Կոշիկ — զրահին,
Վահան — զրահին,
Գուրզ — փահլևանին,
Նիզակ — նետ-աղեղ։

Էդ բոլորը կառնես, էն ավազանում կլողանաս, կպետանաս, յոթն անգամ կզորեղանաս, կերթաս կհասնես քո մուրազին։

Սանասար քնեն վեր թռավ. «Էս ինչ երազ էր»...

Պահարանը բաց արեց ու տեսավ էնտեղ բոլորը, ինչ որ լսել էր երազում։ Դրեց Գդակ-զրահին, տեսավ, յոթ լիտր բամբակ պիտի խցկեր մեջը, որ իր գլխովը գար։ Հագավ Կոշիկ-զրահին. յոթ լիտր բամբակ պիտի ճխտեր մեջը, որ իր ոտքովը գար։ Կապեց Գոտիկ-զրահին. յոթ փաթ եկավ մեջքի բոլոր։

Սանասար դուրս եկավ ժամեն, մտավ ավազան, լողացավ, էն աղբրի ջուրը խմեց ու նորեն քուն մտավ։ Քնի մեջ աստծու հրամանքով պետացավ, զորեղացավ. դարձավ հրեղեն ու վեր կացավ գնաց, որ էն զենքերը հագներ, զենքերը կապեր։

Հագավ Շապիկ-զրահին — մարմնովն էր,
Կապեց Գոտիկ-զրահին — մեջքովն էր,
Դրեց Գդակ-զրահին — գլխովն էր,
Հագավ Կոշիկ-զրահին — ոտքովն էր։

Խաչ-պատերազմին էլ իջավ դաջվեց էնոր աջ թևի վրա, Սանասար մոտեցավ Քուռկիկ Ջալալուն, առավ Թուր Կեծակին ու պիտի հեծներ, Քուռկիկ Ջալալին լեզու առավ, խոսեց.

— Միտքդ ի՞նչ է, Սանասա՛ր։

— Քեզ պիտի հեծնեմ։

— Քեզ կտամ արևին, կվառվես։

— Չրեղեն եմ, կխաղամ քո փորի տակ։

— Քեզ գետնով կտամ, կերթաս անդունդ։

— Հրեղեն եմ, կխաղամ քո մեջքին։

Սանասար հեծավ։ Ձին վեր սուրաց, որ հեծվորին արևին տար, վառեր։ Հեծվորը խաղաց էնոր փորի տակ։ Ձին վար սուրաց, որ հեծվորին գետնովը տար, տաներ անդունդ։ Հեծվորը բարձրացավ ձիու թամբը։ Ձին տրտինգ տվեց, փախավ դես, փախավ դեն, կանգնեց ետի ոտներուն, բերնեն արուն-փրփուր շաղ տվեց ու չկարցավ Սանասարին վար գցել։ Էն ատեն խելոքացավ, հնազանդվեց, ասաց.

— Դու իմ տերը, ես՝ քո ձին։

Սանասար կռացավ, ձիու աչքերը պագեց, քշեց ու դուրս ելավ ծովեն։

Բաղդասար ծովափին պպզած լաց էր լինում։ Տեսավ, գալիս է մի սար սարի վրա նստած։ «Էս ի՞նչ գազան է, ինձ կուտի» — վեր թռավ տղան ու փախավ։ Սանասար ետևեն կանչեց.

— Ես եմ, Բաղդասա՛ր, մի՛ վախենա։

— Վո՜յ,— ասաց Բաղդասար,— էսիկ իմ աղբորը ծովում խեղդել է, ինձ էլ կխեղդի։

Սանասար ձին չափ գցեց, հասավ.

— Այ տղա, ինչո՞ւ ես լալիս։

— Ես չլամ, բա ո՞վ պիտի լա։ Ես էի, էն մեկ աղբերս, գնաց իրեն ծովը քցեց, խեղդվեց։ Ես մնացի էստեղ մենակ։ Ես չլամ, բա ո՞վ պիտի լա։

— Բաղդասա՛ր, մկա քո աղբորը տեսնես, կճանաչե՞ս։

— Բա չե՞մ ճանաչի։

— Ես քո աղբերն եմ։

— Վո՞յ, իմ աղբերն էդքան հսկա չէր։ Ինձմեն մի քիչ էր մեծ։ Իմ աղբերը ո՞րտեղեն գտավ էդ պսպղուն գեստերը, էդ Կեծակի Թուրը, էդ հրեղեն ձին։

Սանասար կռացավ, աղբոր գլուխը պագեց, ասաց.

— Ես քո աղբերն եմ, Բաղդասա՛ր։ Սանասարն եմ։ Դու լաց մի՛ լինի, մի՛ վախենա։ Չէ՞ որ մենք ծովածին ենք։ Էս գեստերն ու զենքերը, էս Քուռկիկ Ջալալին ինձ համար պահած էին ծովի տակ։ Ես գնացի, բերի լուս աշխարհ։ Աչքիր իմ աչքերուն, ճանաչի՛ր ինձ։

Բաղդասար խնդաց, էնիկ էլ իր աղբոր գլուխը պագեց, ասաց.

— Աղբե՛ր, քանի դու երևում էիր, ես նայում էի քո հետքն ու սիրտ առնում։ Երբ դու իմ աչքեն կորար, ես նստեցի, լաց եղա։

Աղբերները նորեն իրար գլուխ պագեցին, ելան, մեկտեղ գնացին տուն։

Անցավ մի ամիս։ Մի օր Սանասար տեսավ, որ աղբոր վրա դեղնություն է իջել. Բաղդասար նոթերը կախել է, հիվանդ է ոնց որ։

— Քեզ ի՞նչ է եղել, աղբե՛ր։

Բաղդասար պատասխանեց.

— Ես գիշերները չեմ քնում։ Էս մի ամիս է, Բաղդադու մեծ կուռքը էծի պատկերով ինձ երազ է գալիս, մինչև լուս մկրկում է վրաս, տրճկում է իմ գլխավերևում, չի թողնում, որ ես քնեմ։ Չէ, ես կերթամ Բաղդադ։ Կամ խալիֆն ինձ մատաղ կանի մեծ կուռքի համար, կամ ես՝ խալիֆին։

Սանասար ասաց.— Աղբե՛ր, չեմ թողնի մենակ երթաս։ Մեկտեղ կերթանք, խալիֆին կսպանենք ու մեր խեղճ մորը գերությենեն կազատենք։

Լուր տարան խալիֆին, թե՝ աչքդ լույս, տղաներդ եկան։

Խալիֆն ուրախացավ, ասաց իր վազիրներուն.

— Դուք էնոնց փախուստն իմ երեսով էիք տալիս։ Տեսա՞ք իմ կուռքերու հունարը. մատաղները քաշել, իրենց ոտքն են բերել։

Մյուս օր երկու աղբերը գնացին խալիֆի մոտ։ Խալիֆը դիվանատան տանիքը ելած, թևերը կանթած, գնում-գալիս էր։ Փախստականներուն տեսավ, բռռաց.

— Շա՛ն լակոտներ, ո՞ւր եք չհանդամվել էսքան տարի։ Չիմացա՞ք, որ ուր էլ փախչեք, մեծ կուռքը ձեզ ետ կբերի։

Սանասար ասաց.

— Հայրի՛կ, մորուսի՛դ մատաղ, ծնվելու օրեն աշխարհը չէինք տեսել։ Գնացինք աշխարհ տեսանք, մոռացանք։ Բայց Արևելք փախանք, չեղավ, Արևմուտք փախանք, չեղավ. չպրծանք մեծ կուռքի զորությենեն։ Էնիկ չէր թողնում, որ գիշերն էլ հանգիստ քնենք։

— Հապա՛,— չարախնդաց խալիֆը։— Դե գնա՛նք, որ ձեզ մատաղ անեմ Բաղդադու մեծ կուռքին։

— Խալիֆն ապրած կենա.— ասացին,— մենք թագավորի տղաներ ենք. անվայել է մեզ գաղտնի զոհել։ Կանչիր՝ ինչքան ժողովուրդ կա, թո՛ղ հավաքվեն կռատան առջև. տեսնեն ու փառք տան կուռքերուն։

Ասաց.— Լա՛վ. էդպես էլ կանեմ։

Սանասար ու Բաղդասար դարձան իրենց մոր մոտ։

Խալիֆը թուղթ գրեց քաղաքներ ու գյուղեր, որ գան զոհաբերության հանդեսին։ Ժողովուրդը լցվեց կռատան առջևի դաշտը։ Ասեղ գցեիր, գետին չէր ընկնի։ Բոլորն ուզում էին տեսնել Սանասարին ու Բաղդասարին։ Շատերը լալիս էին, չարերը՝ չարախնդում։

Սանասար ու Բաղդասար աստիճաններով բարձրացան, մտան կռատուն։ Խալիֆը սուրը ձեռքին կանգնած էր մեծ կուռքի մոտ։ Ասաց.

— Ես կռապաշտ եմ, դուք խաչապաշտ։ Մկա ես ձեր երկուսի վիզն էլ պիտի կտրեմ, տեսնենք ձեր աստվածն ինձ ի՛նչ պիտի անի։

Սանասար կապայի տակ Թուր Կեծակին շոշափեց, ասաց.

— Դու մեր երկուսի վիզն էլ պիտի կտրե՞ս։

— Հա, երկուսիդ էլ պետք է զոհեմ կուռքերուս։

— Հացն ու գինին, տեր կենդանին,— կանչեց մեր Սանասար, Թուր Կեծակին քաշեց ու զարկեց։

Խալիֆի գլուխն ընկավ գետին, մարմինը մնաց ոտքի վրա։

Բաղդասար վերցրեց փոքր կուռքերեն մեկը, զարկեց մեծ կուռքին, ասաց.

— Տեսնենք ձեր կուռքերն ինձ ի՛նչ պիտի անեն։

Մեծ կուռքի գլուխը թռավ, մարմինը մնաց իր տեղը։

Կռատան մեջ հավաքված մարդիկ փախան, ձենը քցեցին քաղաք։ Խալիֆի զորքը կռատունն ամեն կողմեն շրջապատեց։ Սանասար ու Բաղդասար դուրս եկան, մեկը բռնած ուներ Թուր Կեծակին, մյուսը, դուրգի տեղ, մի պղնձե կուռք։ Քուռկիկ Ջալալին հեռվեն իր տիրոջը տեսել էր, ատամներով, սմբակներով, պոչով իր համար

ճանապարհ ճեղքեց ու մոտեցավ, Սանասար հեծավ իր ձին։ Երկու աղբերը երկու անգամ զորքի մեջ գնացին եկան։ Փոշին բարձրացավ արևի երեսը բռնեց։ Խալիֆի զորքը փռված էր գետնի վրա, ինչպես խոտ։ Սանասար ու Բաղդասար դարձան տուն, իրենց մոր ձեռը պագեցին, նռան գինի խմեցին, խնջույք արին։

Ծովինար թագուհու որդիները մի քանի օր հետո ելան, առան իրենց մորն ու բռնեցին Հայաստանի ճամփան։

Բերդ-Կապուտինի մոտերքում սառնորակ մի աղբրի մոտ վրան զարկեցին։

Գագիկ թագավորն ու Քեռի Թորոս համբավն առել էին. ելան եկան իրենց հարազատների առաջ։ Ընկան իրար վզով, իրար պագեցին, լաց եղան ու ծիծաղեցին։ Հետո գնացին քաղաք, թագավորի պալատը, յոթ օր ու յոթ գիշեր ուրախացան։

Յոթ օր երբ անցել էր, Սանասար թագավորին ասաց.

— Պապի՛կ, ես քեզմեն մի բան պիտի խնդրեմ։

— Խնդրի՛ր։

— Մենք մեզ համար մի տեղ տուն ենք շինել. հրաման արա՝ գնանք մեր տուն։

Ասաց.— Որդի՛, ես տղա չունեմ, կմեռնեմ, իմ թագավորությունը ձեզ կմնա, կլինի ձեզ տուն։

Սանասար ու Բաղդասար ասացին.

— Չէ, թագավորն ապրած կենա. եկանք, ձեզ տեսանք, փառք աստծու, ողջ և առողջ եք, իրարմեն կարոտ առանք. մկա թող՝ գնանք մեր տուն։

Պատրաստություն տեսան Սասուն մեկնելու։ Ծովինար որդիներուն խրատեց, ասաց.

— Որդի՛ք, թագավորեն ուզեք Ծովասար, Մարաթկա ջուր, Ճապաղջրի Թաժ ու Քողեն։ Էն որ երդվեց հացն ու գինին, տեր կենդանին, կտա։

Սանասար նորեն գնաց իր պապի դիվանը.

— Քեզնից մի բան էլ խնդրե՞նք։

— Որդի՛, իմ հոգուց բացի, ինչ որ խնդրես, երդվում եմ հացն ու գինին, տեր կենդանին, կտամ։

Գագիկ թագավորն իր թոռներուն տվեց էնոնց ուզած հողերը։ Ծովինար խանումն ու իր տղաները պատրաստ էին ճանապարհ ընկնելու։ Քեռի Թորոս միացավ էնոնց։ Սանասար ընկավ առաջ, և գնացին Սասուն։

Սանասար զորընդեղ մարդ էր. Սև սարի բոլոր մինչև Ծծմակաբերթ, Մշու վերևով մինչև Սեղանասարի գոտուց էն կողմ՝ Ճապաղջուր ու Մուրադ գետի բերան — էդ ամենը առավ իր ձեռքի տակ. երկիրը բերդի անունով Սասուն անվանեց, ինքը դարձավ Սասնա թագավոր։

Սանասարի ձենն աշխարհը բռնեց.

Ձենուն ուժն թև առավ.
Թեն անունեն ում առավ։

Մի օր էլ Սանասար զարկեց գնաց մինչև Անդղաձոր, մինչև Բաթմանա կամուրջ, մինչև Մըսըր։

Ուրիշ երկրներու մարդիկ էլ բոլորը լսելով ասին.

«Աղբե՛ր, մենք ինչի՞ ենք նստել էստեղ, որ ավազակներն ամեն անգամ զարկեն մեր ապրանքը տանեն։ Տո, վալլա՜հ, պիտի գնանք Սասուն, էնտեղ կառավարում են Սանասար ու Բաղդասար, երկու ղոչաղ. արդար փա՜հլևան։ Էնտեղ մարդուց ոչ հարկ են առնում, ոչ էլ նրա ապրանքն են թալանում»։

Էսպես ասելով մարդիկ ուրիշ երկրներեն քիչ-քիչ եկան Սասուն։ Սասուն գնալով ա՜նց, նրա ժողովուրդը շատացավ, Սասուն դարձավ մեծ քաղաք։

## 6. ԴԵՂՁՈՒՆ-ԾԱՄ

*Սանասարի ու Բաղդասարի անունը բարձրացավ, հայտնի եղավ բոլոր երկրներուն, գնաց մինչև Գղնձե քաղաք, հասավ Քաջանց թագավորի աղջկան՝ Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամին։*

*Էդ աղջիկը մի սափոր լիքը ջուր լցրեց, խնձորը դրեց բերնին, մի սափոր դատարկ թողեց, էլի խնձոր դրեց բերնին, Սանասարին թուղթ գրեց.*

*«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամեն շատ բարև Սանասարին։*

*Սանասա՛ր տղա, իմ սիրտը քան էս դատարկ սափորը մաքուր է, իմ գլուխը՝ քան էս լիքը սափորը խելոք։ Լցված եմ աստծու շնորհքով։ Քառսուն տեղեն քառսուն մարդ է եկել ինձ ուզելու, ես ոչ ոքի խոսք չեմ տվել։ Երազում քեզ եմ տեսել ու քեզ եմ հավնել։ Մինչև ե՞րբ ես մնամ քո հուսով։ Արի՝ ինձ առ։ Էս թուղթը առնելուն պես արի՛։ Գլուխդ էդտեղ թացել ես, արի՝ էստե՛ղ կնտրիր»։*

*Գրեց, իր պատկերը դրեց նամակի մեջ, կանչեց երկու աղջիկ, նամակն ու սափորները թևներուն կապեց, ասաց.*

*— Կտանեք Սասուն, երդիկեն կնետեք Սանասարի անկողնուն, կժերն էլ կդնեք ձեր գլխավերևը։*

*Աղջիկները աղավնակերպ թռան եկան Սասուն, իջան Սանասա տան տանիքին, երդիկեն նայեցին, տեսան մի ջահել-ջիվան տղա քնել է, քրտնել, կարմրել, արևին ասում է՝ «Դու ուն գնա, որ ես դուրս գամ»։*

*Աղջիկներն իրար ասացին. «Սա է, որ կա Սանասար»։ Երդիկեն ներս իջան, թուղթը դրեցին անկողնուն, կժերը դրին գլխավերևը ու թռան Գղնձե քաղաք։*

*Բաղդասար լուսուն քնեն վեր ելավ, շորերը հագավ, տեսավ իր տեղաշորի վրա մի թուղթ։ Առավ, բաց արեց, կարդաց.*

*«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամեն շատ բարև Սանասարին։*

*«Սանասա՛ր տղա, իմ սիրտը քան էս դատարկ սափորը մաքուր է, իմ գլուխը՝ քան էս լիքը սափորը խելոք։ Լցված եմ աստծու շնորհքով։ Քառսուն տեղեն քառսուն մարդ է եկել ինձ ուզելու, ես ոչ ոքի խոսք չեմ տվել։ Երազում քեզ եմ տեսել ու քեզ*

իմ հավնել։ Մինչև ե՞րբ ես մնամ քո հուսով։ Արի՝ ինձ առ։ Էս թուղթը առնելուն պես արի՛։ Գլուխդ էդտեղ թացել ես, արի՝ էստեղ՛ կնտրիր։

— Վո՜ւյ,— ասաց Բաղդասար,— իմ ախպերը կնիկ է ուզել առանց ինձ հարցնելո՞ւ։ Պսակվում է առանց ի՞նձ։ Ինձմեն գաղտնի՞ք է պահում։ Ինձ բանի տեղ չի՞ դնում։

Նեղացավ, նստեց անկողնի վրա, դուրս չեկավ սենյակեն։ Մեկ էլ՝ աչքն ընկավ աղջկա պատկերին. քթեն արուն թալեց, ուշաթափվեց, ընկավ անկողնու վրա։ Վերջում ուշքի եկավ, ասաց.

— Վա՜յլա՜հ, ես էնոր սեղանը չեմ նստի, էնոր հացը չեմ ուտի։ Կելնեմ, կհեծնեմ իմ ձին, կերթամ ուրիշ երկիր, կկորչեմ։

Թուղթը ծալեց ու ծոցը դրեց, վիրավորանքը սրտում պահեց, էլ Սանասարին բարև չէր տալիս, էնիկ հարց էր տալիս, էսիկ չէր պատասխանում։ Սանասարն ու մերը սուփրան բաց արին, նստեցին հաց ուտելու։ Բաղդասար չեկավ ու չերևաց։

Մերը ելավ գնաց էնոր սենյակը։

— Բաղդասա՛ր, ինչո՞ւ չեկար հաց ուտելու։ Ի՞նչ է եղել։ Հիվանդ հո չե՞ս։

Բաղդասար ասաց.— Մարե՛, մերս չլինեիր, ուրիշ ով էլ էս դուռը բաց աներ, ներս գար, ես նրան կտոր-կտոր կանեի։

Ասաց.— Ինչո՞ւ։ Ի՞նչ է եղել։

— Ցավ ու կրակ Բաղդասարի պինչն է եղել,— փնչաց Բաղդասար։

Մերն ինչ արավ-չարավ, չկարցավ խոսք դուրս քաշել Բաղդասարի բերնեն։ Սովինար խանում հիշեց, որ ծովափին իր խմած անմահական ջրի առաջին բուռը լիքն էր, էդորմեն գոյացել է Սանասար, երկրորդ բուռը կիսատ էր ու մի քիչ պղտոր։ Երևի էդիկ է պատճառը, որ Բաղդասար դուրս է եկել մի քիչ նվազ ու մի քիչ էլ՝ ծուռ։

Իրիկուն Սանասար դրսեն եկավ, բարև տվեց, Բաղդասար բարևը չառավ։

Սանասար հարցրեց.— Աղբեր, ինչո՞ւ ես նեղացել։

Պատասխանեց.— Կամ ես քեզ պիտի սպանեմ, կամ դու՝ ինձ։

— Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։

— Դու ինքդ լավ գիտես։

— Ես բան չգիտեմ։ Ասա՝ իմանամ։

— Չէ,— կրկնեց Բաղդասար,— դու գիտես, թաքցնում ես ինձմեն։

— Ես քեզմեն թաքուն բան չեմ արել։

— Արել ես,— բռռաց Բաղդասար։— Ես ու դու պիտի կռվենք։ Կամ ես կմնամ կենդանի, կամ՝ դու։

Մերը խնդալով ասաց.— Սանասար, ել՝ աղբորդ առ գնա դաշտ, հետը մի քիչ կռիվ խաղա, սիրտը բացվի։ Տեսնես տղան ինչ է լսել, երա՞զ է տեսել, ինչ է տեսել։

Սանասար ու Բաղդասար գնացին դաշտ, մի չիման տեղ ձիուց իջան, իրար հասան, սկսվեց զոռնկռիվ։ Մինչև կեսօր իրար տրորեցին, գետինը թունդ էր առնում էնոնց ոտքերու տակ։ Կեսօրին մերը մտքում ասաց. «Ի՞նչ եղավ, էսոնք չեն գալիս»։ Վեր կացավ գնաց կռվատեղը, տեսավ իր որդիներու վիճակը, սիրտը թուլացավ, նրանց ու ծնկներին տվեց։ Ինչ որ Սանասարն էր, զարկում էր հանաքով, Բաղդասարը զարկում էր սրտանց։ Մերը բարձր ձայնով կանչեց.

Սարե՛ն եկող քամի.
Լե՛ր հազրու քեռուն.



Թո՛ղ գա ու թող հասնի
Իր փահլևաններուն։

Մհերը մի ժամ էլ սպասեց ու տեսավ, Բաղդասար նվաղել է, մազ է մնում, որ ընկնի։ Ծովինար լաց եղավ, կանչեց.

Ծովե՜ն եկող քամի,
Իմա՛ց արա քեռուն,
Թո՛ղ գա ու բաժանի,
Իր փահլևաններուն։

Սանասար շարունակում էր կատակ անել, Բաղդասար զարկում էր սրտանց։ Սանասար հարցրեց.

— Աղբե՛ր, չլինի՞ դու զարկում ես ինձ ուղորդ սպանելու համար։

— Հա՜,— հևաց Բաղդասար։— Էսօր կամ ես պիտի սպանեմ քեզ, կամ դու պիտի սպանես ինձ։

Սանասար էստեղ բարկացավ, մի ապտակ զարկեց էնոր երեսին։ Բաղդասար ձիուց վար ընկավ, ուշաթափվեց։

— Վա՛խ, աչքերս կուրանան,— Սանասար ձիուց ներքև թռավ։— Վա՛խ, ես իմ աղբորը սպանեցի։

Մեր ու որդի վրա հասան, ձեռքերը մտցրին Բաղդասարի ծոցը, սիրտը մաժեցին, որ ուշքը ետ գա։ Բաղդասարի ծոցեն ընկավ մի թուղթ ու մի պատկեր։ Սանասար թուղթը առավ կարդաց.

«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամեն շատ բարև Սանասարին...»...

Էս թուղթը կարդալուց հետո Սանասար աղբոր սիրտը նորեն մաժեց, աղաչեց, պաղատեց, ուշքի բերեց, ասաց.

— Աղբե՛ր, գլխիդ-արևու՜դ մեռնեմ, էս պատկերի ու էս թղթի համա՞ր էիր թշնամացել ինձ հետ։

Ասաց.— Հա՛, թշնամացել եմ քեզ հետ էնոր համար, որ աշխարհքիս վրա դու անուն ունես, ես չունեմ։ Պղնձե քաղքի Դեղձուն-Ծամը քեզ բարև է ճամփել, ինձ բարև ճամփող չկա։

Սանասար ասաց.— Աղբե՛ր, մեռնե՜մ քո աչքերուն, էս բարևի համա՞ր ես ընկած, ուզում ես քո աղբորն սպանել։ Որ էդպես է, Դեղձուն-Ծամն ինձ պետք չէ։ Գնա՛, բե՛ր քեզ համար։

Բաղդասար ասաց.— Աղբե՛ր, իմ սրտի պարծա՛նք, իմ գլխի թագ ու պսա՛կ աղբեր, ես չգիտեի, որ դու ինձմեն էդքան կորիճ ես, էդքան էլ մեծասիրտ։ Արի՝ հաշտվենք ու էստուց ետև թորա, որ ես քու վրա ձեռք բարձրացնեմ։ Ես քեզ պստիկ աղբեր, դու ինձ՝ մեծ աղբեր։ Ինչ որ ասես, քեզ կլսեմ։ Քեզ իրավունք եմ տալիս. գնա՛, էն աղջիկը բե՛ր քեզ համար։

Սանասար աղբոր գլուխը պագեց, ասաց.

— Աղջիկն ինձ պետք չէ։ Սիրտդ ուզում է, դու գնա՝ նրան ա՛ռ։

— Չէ,— ասաց Բաղդասար,— Դեղձուն-Ծամը քեզ է գրել, երազում քեզ է տեսել, քոնն է։ Էլ մի սպասի՛ր։ Ել, քո պատրաստությունը տե՛ս, քո ձին հեծի՛ր, քո աստվածը կանչի՛ր, գնա՛։

Սանասար ասաց.— Չեմ ուզում, Դեղձուն-Ծամ կախարդ է, մեզ կռվացրեց։

Բաղդասար էլի բարկացավ.

— Քեզ ասում եմ՝ վե՛ր կաց, գնա՛։ Էնիկ լսել է, որ մենք մեծ մարդ ենք, մեզ թուղթ է գրել։ Եթե չգնաս, մեզ համար պակասություն կլինի. կասեն՝ ձեռքներեն չեկավ, մի աղջիկ իրենց համար բերեին։ Գնա, էդ աղջիկը բե՛ր։ Էնոր կախարդանքը մեզ վրա չի բանի։ Մենք ինքներս ենք ծովածին։

Սանասար գնաց մոր մոտ, ասաց.

— Մարե՛, իմ պատրաստությունը տե՛ս. ես պիտի գնամ Քաջանց երկիր, էդ աղջկա հետե։

Մերն ասաց.

— Մի՛ գնա, որդի՛, Բաղդադու գերությենեն հազիվ ենք պրծել։

— Չէ,— ասաց,— պիտի գնամ։ Գլուխս էլ վրա տամ, պիտի գնամ։

Մերը ճանապարհի պաշար պատրաստեց, պրծավ։

Սանասար մոր ձեռքը պագեց, կաց-բարով ասաց, թռավ ձիու թամբը, ձեն տվեց.

— Բաղդասա՛ր, հոգո՛ւդ մեռնեմ, ես գնացի էն աղջկա ետևեն։ Երեք օր հետո որ եկա, եկա, որ չեկա, նեղության մեջ կլինեմ, կգաս ինձ օգնության։

Իրար գնաս-բարով, կաց-բարով ասին, մատնիքն իրար տվին-առան, Սանասար գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, աստված գիտե. Սասնա հողեն ելավ, մտավ Քաջանց հողը։ Տեսավ մի վարար գետ է գալիս, մի փրված անճոռնի մարդ մի ոտքը դրել է գետի էս ափին, մյուսը՝ էն ափին, բերանը տվել է ջրի դեմ, ու գետն ամբողջ դնում է էդոր փորը։ Սանասարին երբ տեսավ, կանչեց.

— Անցո՞րդ աղբեր, աստծու՛ սիրուն, պուտ մը ջուր տա՞ս խմեմ. ծարավեն իմ սիրտը մրկվեց։

Սանասար ապշեց, ասաց.

— Քու տո՛ւնը քանդվի, անկո՛ւշտ մարդ։ Ամբողջ գետը քու փորն է դնում, ծառ, խոտ ու ծաղիկ չորացել են, դու դեռ ինձմեն ջու՞ր ես ուզում։

— Շատ մի՛ խոսի, ջանը՛մ։ Դու մի կաթիլ ջու՛ր տուր ինձ, որ ծարավս կոտրի։

— Ուզո՞ւմ ես ծարավդ կոտրեմ։

— Բա չե՞մ ուզում։

Սանասար Թուր Կեծակին զարկեց, էդ անկուշտ մարդուն մեջտեղեն կիսեց, ասաց.

— Ծարավդ կոտրվեց, էլ չես ծարավի։

Ջրի ճամփան բացվեց, գետը ելավ դաշտի վրա, ծառերը կանաչեցին, խոտերը կանաչեցին, ծաղիկները զվարթացան, ամեն կողմեն ձեն տվին.

— Ուր գնաս, ճամփիդ կանաչ բուսնի, Սանասա՛ր։

Ծառուծաղկին կաց-բարով ասելով, Սանասար ճամփան շարունակեց։

Կարկառ սարի լանջին արածում էր ոչխարի հոտը՝ առաջը կանգնած մի ամդա-հակ։ Դու մի ասի՝ էդիկ Պղնձե քաղքի հովիվն էր, հայտնի փահլևան։ Սանասարին հեռվեն տեսավ, ձեն տվեց.

— Էյ, կանա՛չ-կտրիճ, ո՞ւր կերթաս։

Սանասար պատասխանեց.

— Կերթամ Պղնձե քաղաք։

— Իջի՛ր ձիուց, կաթ կթեմ, կե՛ր, նո՛ր ճանապարհ գնա։

Ասաց.— Ոչ, ես վռազն եմ, պիտի գնամ։

Հովիվը սարի պես կանգնեց էնոր ձիու դեմ.

— Ճար չկա։ Էստեղեն անցնողը կաթ որ չկերավ, հրաման չունի անցնելու։

Սանասար հարահամայալ ձիուց իջավ, նստեց։

Հովիվը մի հակա տաշտ ուներ, մեջը չորս մարդ մեկտեղ կլողանային։ Էդ հակա տաշտը լի կաթ․ հետն էլ հաց բերավ, դրեց հյուրի առաջ.— Կե՛ր։

Մինչև հովիվը մեկ փաթ ման կգար իր ոչխարի չորս բոլոր, Սանասար բոռաց.

— Էյ, հովի՛վ, արի՝ քո տաշտը վերցրու՛։ Շնորհակալ եմ, բարո՛վ մնաս։

Հովիվը եկավ, տեսավ, Սանասար կաթը կերել է, տաշտը կործել։ Հովվի սիրտը դող ընկավ. կռահեց, որ էդիկ Սասնա Սանասարն է, որ կա։

— Գնաս բարո՛վ, Սանասա՛ր։ Մի՛ վախենա, ուր էլ գնաս, մարդ քեզ չի հաղթի։ Էստեղեն անցնողներուն ես միշտ էսպես փորձում եմ, կաթ ուտելու չափով էնոնց ուժը կռահում։ Քառսուն փահլևան էս ճամփով անց են կացել, որ գնան Դեղձուն-Ծամին ուզելու։ Քառսունին էլ էս տաշտով կաթ եմ տվել, էնոնցմեն ոչ մեկն էս տաշտը չի պարպել։ Դեղձուն-Ծամ էնոնց բոլորին էլ հմայել է, դարձրել սիպտակմորուս հալվորներ։ Դու գնա՛, աստվա՛ծ քեզ հետ։ Քո վրա հմայք չի բանի։

Սանասար գնաց հասավ Պղնձե քաղքի մոտ ու տեսավ, քառսուն մարդ, մորուսները ճերմակ ու դեղին, կանգնած են պարսպի տակ։

— Բարև՛, սիպտակմորո՛ւս փահլևաններ։

— Աստծո՛ւ բարին, կանա՛չ-կարմի՛ր։ Կա՛ց մինչև էգուց, ինքդ էլ կդառնաս սիպտակմորուս։

— Ինչո՞ւ։

Մի հալվոր պատասխանեց.

— Մենք էլ քեզ նման ջահել-ջիվան էինք։ Էկանք էս քարսիրտ աղջկան ուզելու, մեզ էս օրին գցեց։

— Ի՞նչպես,— հարցրեց Սանասար։

— Կախարդ է,— ասին։— Մի հավք ունի. էգուց կեսօրին կգա, պարսպի գլխեն կճվա, դու էլ մեր հասակին հալվոր կդառնաս, կմնաս էստեղ կանգնած։

Ծառերը կամաց փսփսացին.

— Սանասա՛ր, դու քո ձին դարձրո՛ւ, քաղքեն մի քիչ հեռացի՛ր, մինչև մութն ընկնի։ Կախարդ հավքը լուսով է գալիս, մթնով չի գա։

Սանասար էդպես էլ արեց։

## 7. ՊՂՆՁԵ ՔԱՂԱՔ

Մթնեց։ Էն առեն Սանասար մոտեցավ քաղքին։ Պարիսպը դուռ չուներ։ Սանասար ձիու սանձը ոլորեց, կանչեց՝ հացն ու գինին, տեր կենդանին, ասպանդակեց, մեկեն թռավ անցավ պղնձե պարիսպը, իջավ քաղքի մեջ։

Շատ ման եկավ, գտավ մի հայի պանդոկ, իջավ էնտեղ։ Պանդոկի տերը մի սիպտակմորուս հալվոր էր։ Սանասար հարցրեց.

— Հերացո՛ւ, էս պանդոկի վարձն ի՞նչ է։

— Ձիուն մեկ արծաթ, մարդուն կես արծաթ։

— Հերացո՛ւ, ես քեզ կտամ ձիուս համար տաս արծաթ, իմ գլխի համար քսան արծաթ։ Իմ ձին լավ կպահես։

Սանասար Քուռկիկ Ջալալին ախոռում կապեց, գնաց փուռ. մի հաց առավ, եկավ պանդոկ, նստեց, իր հալվորի հետ հաց կերավ, ասաց.

— Հերացու՛, քեզ մի հարցմունք անե՞մ.
— Ի՞նչ հարցմունք, որդի՛։
— Էս քաղքի անունն ի՞նչ է։
— Պղնձե քաղաք։
— Էս քաղքի թագավորը մի աղջիկ ունի, ի՞նչ աղջիկ է։
— Որդի՛,— ասաց հալվորը,— դու ի՞նչ գործ ունես էդ աղջկա հետ։ Ինչ ուզում է, թո՛ղ լինի։
— Էնպես, էլի՛, պապի՛կ, հարցնում եմ։
— Որդի՛, մեր թագավորի աղջիկը մարդ է կախարդում։ Քանի՜ աղնավուր տղա եկան էդ աղջկան առնելու, գժվացրեց, քցեց աշխարհե-աշխարհ։ Չլինի՞ դու էլ ես եկել Դեղձուն-Ծամի ետևեն։ Ափսոս ես, լաո՛, թե որ էնոր համար ես եկել, դարձի՛ր՝ գնա քո տո՛ւն, ձե՛ռ քաշիր էդ կախարդեն, մեղք ես։ Դեղձուն-Ծամ շատ մարդու գլուխ է կերել։
Սանասար ասաց.
— Չէ, պապի՛կ, ես աղջկա համար չեմ եկել։ Ինչ գործ ունեմ աղջկա հետ։ Բայց, պապի՛կ, ողորմի՛ քո հոր հոգուն, ասա՛, էդոր հմայքն ի՞նչ է։
Հալվորը մտածեց, մտածեց, ասաց.
— Դեղձուն-Ծամի հմայքը մի մեծ դռհար է, ծովի տակ, վիշապի բերնում։ Գրյանքի մեջ ասված է, որ մի հրեղեն մարդ պիտի գա, մտնի ծովը, դռհարը դուրս հանի վիշապի բերնեն, լուսուն վեր կենա, աղջկան իր սենյակի մեջ մերկ տեսնի, էս ամենն անի տեղ-տեղին, որ Դեղձուն-Ծամի հմայքը վերանա։ Էս բաներն անողը աղջկան կառնի կտանի՜ իր համար։
Սանասարի աչքերը վառվեցին։
— Պապի՛կ, ի՞նչ կլինի, որ աղջկա պալատը ցույց տաս ինձ։
Հալվորը վախեցավ.
— Դու ի՞նչ գործ ունես էդ պալատի հետ, լաո՛։
— Հերացո՛ւ, աստվա՛ծ սիրես, ես օտար երկրեն եկած մարդ եմ. ի՞նչ կլինի, ցույց տաս ինձ, ես էլ տեսնեմ, դառնամ իմ երկիրը, ասեմ՝ աշխարհում էսպես քաղաք էլ կա։
Հալվորը տղային առավ, ելավ տանիք, ձեռը պարզեց հեռուն, ասաց.
— Է՛ն սև պատուհանները տեսնո՞ւմ ես. թագավորի աղջկա պալատն է։ Պատուհաններում մութ վարագույր է քաշած, որ աղջիկը չնայի դուրս, որ դրսից նայողն էլ աղջկան չտեսնի։
— Պապի՛կ, իսկ էն ի՞նչ է, որ վառվում է ճրագի պես։
— Ոսկե խնձոր է, դրված էնոր դարպասի սան գլխին։ Մեկ էլ՝ մի գուրզ, ա՛յ, էն աշտարակի վրա։ Ով էն ոսկե խնձորը ցած բերեց ու դրեց իր ծոցը, ով էն գուրզը աշտարակի գլխեն վար նետեց, ով դռհարը դուրս քաշեց էն վիշապի բերնեն, ով թագավորի հետ կռվեց և էնոր փահլևաններուն հաղթեց, աղջիկը իրենն է։
Սանասար ասաց.
— Օֆ, հերացու՛, ես ի՞նչ եմ, որ էդ բաներուն ձեռ թալեմ։ Հարցմունք էր, քեզ արի։ Կերթամ ուրիշ երկրներ, կասեմ՝ Պղնձե քաղաքն էսպիսի քաղաք էր։ Արի՛, արի՝ գնանք, իմ քունը տանում է։
Իջան պանդոկ, պառկեցին քնելու։

Հալվորը քնեց։ Սանասարի քունը չէր տանում։

Քիչ հետո ելավ գնաց, հեծավ իր ձին, պանդոկեն դուրս եկավ։ Լուսնակ էր, ինչպես ցերեկ։ Սանասար կանչեց.

— Հացն ու գինին, տեր կենդանին, խաչ-պատերազմին, որ իմ աջ թևի՛ն...

Կանչեց, մեյդանում գնաց եկավ, ձին տաքացրեց, ասպանդակից, բարձրացավ սան գլխին հավասար, ոսկե խնձորն առավ, դրեց իր ծոցը։ Հետո ձին թողեց աշտարակի գլուխը, գուրզն առավ, թափահարեց ու նետեց։ Գուրզը կես օրվա ճանապարհ գնաց, ընկավ գետին ու մի գազ մտավ հողի մեջ։ Հետո ձին քշեց, մտավ ծովի տակ, վիշապը գլուխը բարձրացրել էր, Սանասար գուրզով զարկեց վիշապի գլխին, վիշապն ինքն իրեն թափ տվեց, գոհարը բերնեն թռավ, գնաց, ընկավ դաշտի մեջ։

Վիշապ-քամի բարձրացավ, ծովը կատաղեց, ափերեն դուրս եկավ, Պղնձե քաղաքը հեղեղեց։

Սանասար դարձավ իր պանդոկը, կողքի վրա ընկավ, քնեց մինչև առավոտ։

Լուսուն քաղքցիք տեսան, որ Դեղձուն-Ծամի պատուհանները բաց են, աղջկա լուսն ընկել է քաղաք։

Սանասար ելավ տանից, նայեց, աղջիկը երևում է բաց պատուհանեն։ Սանասար աղջկան իր սենյակում միրկ տեսավ։ Հմայքը խափանված էր։ Տղան իջավ, ասաց հալվորին.

— Պապի՛կ, էս գիշեր ծովը բարձրացել էր, մի սև ամպ եկավ Սասնա կողմեն, էդ ամպեն անձրև իջավ, Պղնձե քաղաքը թրջեց։

Լուսուն թագավորի մունետիկները բարձր կանչեցին.

— Հե՜յ, ո՞վ է կախարդական գոհարը վիշապի բերնեն հանել, ո՞վ է թագավորի աղջկա ոսկե խնձորը տարել։ Բռնեք, բերեք, որ գլուխը կտրենք։

Մունետիկներն ընկան քաղաք, շատ փնտրեցին, չգտան էդպիսի մարդ։ Գնացին էդ հալվորի պանդոկը։

— Հերացո՛ւ, էստեղ օտար մարդ չկա՞։

— Էս գիշեր իմ պանդոկ միայն էս տղան է եկել, էն էլ՝ ինչպես եկել, էնպես էլ ընկել-քնել է։— Տղան էնպես էր մտել հալվորի սիրտը, որ հալվորն ասաց.— Ինձ մոտ օտար մարդ չկա։

Սանասար պառկած տեղեն գլուխը բարձրացրեց.

— Աղբե՛ր, ինչո՞ւ օտար մարդ չկա։ Բա ես օտար մարդ չե՞մ։

— Դու սո՛ւս կաց,— հալվորը բարկացավ,— քեզ կտանեն, կսպանեն։

— Ինչո՞ւ պիտի սպանեն։— Տղան մունետիկներուն ասաց.— Ես օտար մարդ եմ, ի՞նչ հարցմունք պիտի անեք։

Մունետիկները տեսան սիրուն, ջահել տղա է, սրտները վրան չոփաց, ասին.

— Այ տղա՛, դու ափսոս ես, դու մի՛ գա թագավորի առաջ։

— Ի՞նչ է եղել, որ չգամ թագավորի առաջ։

— Տղա ջան,— ասին,— թագավորի աղջկա ոսկե խնձորը զարկել տարել են էս գիշեր։ Թագավորեն հրաման կա. ինչ մարդու մոտ խնձորը տեսան,— կտրիճ եղավ, կռիվ արեց, կպրծնի, կտրիճ որ չեղավ,— գլուխը կառնեն։

Սանասարը ոսկե խնձորը ծոցեն հանեց.

— Գնացե՛ք, ասե՛ք թագավորին, ոսկե խնձորը տանողն էստեղ է։

— Ասացին.— Դու թագավորի բռնավորն ես, գնանք։

— Գնացե՛ք, ասեք թագավորին, ես բռնվելու համար չեմ եկել։ Ես եկել եմ կռվելու համար։

Մունետիկները դարձան թագավորի մոտ, ասացին.

— Ոսկե խնձորը տանողը էստեղ է։ Եկել է քեզ հետ կռվելու։

Թագավորն ասաց.— Էնիկ իմ աղջկա համար է եկել։ Թո՛ղ գա, տեսնենք ինչ մարդ է, ես իմ աղջիկը տամ իրեն։

Սանասար ներկայացավ թագավորին։ Թագավորը հարցրեց.

— Դո՞ւ ես ոսկե խնձորը պալատի սան գլխեն բերել ցած։

— Հա, վալլա՛, ես եմ։

— Դե, ինչպես որ ցած ես բերել, էնպես էլ ցերեկով տար դիր սան գլխին, ես տեսնեմ, որ աղջիկս տամ քեզ։ Թե չէ քո վիզը կզարկեմ։

Սանասար հեծավ Քուռկիկ Ջալալին, չափ գցեց մեյդանում, ձին տաքացրեց, ապա թռցրեց հանեց էն սան գլուխը, ոսկե խնձորը տեղը դրեց ու դարձավ թագավորի մոտ։

Թագավորն ասաց.

— Տեսա, բայց էդ քո հունարը չէր, ձիունն էր։ Մեկ էլ՝ ինչպես էն դուրգը աշտարակի գլխեն ցած ես բերել, էնպես էլ նստիր աշտարակի գլուխը, ես տեսնեմ, որ աղջիկս քեզ տամ, թե չէ քո վիզը կզարկեմ։

Սանասար գնաց վերցրեց դուրգը, ոլորեց ու թալեց աշտարակի գլուխ, թափի հետ աշտարակը փուլ եկավ։

Թագավորն ասաց.

— Այ տղա՛, երևում է, որ դու կտրիճ ես, բայց քեզ համար մի փորձություն էլ կա։ Ես ունեմ վաթսուն փահլևան։ Վաթսունին էլ շղթայել, դրել եմ բանտ, որ քաղքին վնաս չտան։ Նրանց կհանեմ դուրս, կռի՛վ արեք։ Վաթսունին էլ հաղթեցիր, աղջիկս կտամ քեզ։

Սանասար հարցրեց.— Թագավո՛ր, դու քո վաթսուն փահլևանին մեկ-մե՞կ, թե մեկտեղ կհանես իմ դեմ։

— Սանասա՛ր, վաթսունին մեկտեղ հանեմ, քո ջոջ բրդուճը ականջդ կթողնեն։ Պիտի կռվես ամեն օր մեկի հետ։

Ասաց.— Թագավորն ապրած կենա. ես էստեղ վաթսուն օր կեցողը չեմ։ Ես երեք օր ժամանակ ունեմ։ Վաթսունին էլ մեկտե՛ղ հանիր, կռվենք։ Աստված կամ ինձ կտա, կամ քո փահլևաններուն։

Թագավորն ասաց.— Հայ-հա՜յ... մեղք ես, տղա՛։ Կա՛ց, վաթսուն օր կռվի՛ր։

Պատասխանեց.— Չէ, թագավո՛ր, ես վաթսուն օր էստեղ մնացողը չեմ։ Դու քո վաթսուն փահլևանին մեկտե՛ղ թող ինձ վրա։

Թագավորն իր վաթսուն փահլևաններուն մեկտեղ դուրս հանեց։ Սանասար հեծավ Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին քաշեց, կանգնեց մեյդանում։

Փահլևանները գոմշի պես մռնչացին, եկան դեպի Սանասար, առան իրար, զարկեցին։

Դեղձուն-Սամ պատուհանում կանգնած մտիկ է անում։

Սանասար մեջերն ընկավ, թրով զարկում է մեկ աջ, մեկ ձախ։ Էնոնք մոտ գա չկարցան։ Մինչև իրիկուն քսան փահլևան սպանեց։

Փահլևանները գիշերն էլ կռիվ արին։ Ասին. «Կմթնի, կզարկենք դրան, կսպանենք։ Մթնով մեզ չի տեսնի»։ Սանասար մինչև առավոտ գլխատեց էլի տասը փահլևան։ Առավոտեն մինչև իրիկուն կռիվը շարունակեցին։ Սանասար տասն էլ սպանեց, մնաց քսան։

Դիակներն ընկան չորս բոլոր։ Արյունը լիճ կապեց էնտեղ, Սանասար մնաց արյան մեջ, թռնվեց։ Փահլևանները նրա չորս բոլոր ման են գալիս, բայց մոտ գալ չեն իշխենում։ Սանասարի թևը կոմել է, չի կարենում լավ զարկել, բայց պաշտպանում է ինքնիրեն։ Կռիվն էնպես էլ մնաց։

Դառնանք Բաղդասարին։

## 8. ԵՂԲԱՅՐԸ ՀԱՍՆՈՒՄ Է ԵՂԲՈՐԸ

Բաղդասարը լուսուն ելավ լվացվելու, տեսավ՝ սևացել է էն մատնիքը, որ փոխանակել էր Սանասարի հետ։

Ասաց.— Հեյ-վա՜խ, մարե՛, աղբերս ընկել է նեղության մեջ։ Շուտ իմ ձին դո՛ւրս բերեք, երթամ աղբորս հասնեմ։

Մերն ասաց.— Համբերի՛ր, որդի՛, մի կտոր հա՛ց կեր, նո՛ր գնա։

Բաղդասար դուրս քաշեց հրեղեն ձին, թամքեց, զուրգն առավ, հեծավ, առտված կանչեց ու քշեց։ Հաց ուտելը մոռացավ։

Գնաց հասավ էն կարկառ սարերուն։ Էն ժամանակ հովիվը դեմը կտրեց, ասաց.

— Ջիավո՛ր, արի՝ նստիր, կա՛թ կեր։

Բաղդասար ասաց.— Յա, սատանա՞ ես դու։ Աղբերս մկա մեռած կլինի, դու ասում ես՝ կաթ կեր։ Ես վաղն եմ։

Հովիվը սարի պես կանգնեց էնոր ձիու դեմ.

— Հնար չկա, էստեղեն անցնողը կաթ որ չկերավ, հրաման չունի անցնելու։

Բաղդասար տեսավ, կռիվ կլինի, նստեց։

Հովիվն իր տաշտով լի կաթը կթեց, հացի հետ մեկտեղ դրեց Բաղդասարի առաջ, ինքը գնաց ոչխարի բոլոր ման գալու։

Յոթը փաթ ման էր եկել, նոր Բաղդասար կաթը կերավ, տաշտը կործեց ու կանչեց.

— Հովի՛վ, արի, քո տաշտը վերցրո՛ւ։ Ես գնացի։

Հովիվը եկավ, ասաց.

— Բաղդասա՛ր, քո աղբերը յոթ քո չափ ուժ ունի։ Չլեմ, չիմանամ, էնոր հակառ կենաս։ Գնա՛. Սանասար քառսուն փահլևան սպանել, մնացել է քսան։ Էն էլ դու կսպանես, կդառնաք ձեր տուն։ Մի՛ վախենաք, աշխարհում չկա մարդ, որ ձեզ՝ երկու աղբորը հաղթի։

Բաղդասար քշեց գնաց Պղնձե քաղքի տակ։ Տեսավ, քառսուն հալվոր կանգնած են պարսպի մոտ, ասաց.

— Բարև՛ ձեզ, կարմրամորուք, սիպտակմորուք, դեղնամորու՛ք մարդիկ։

Էն հալվորը բարևն առավ, ասաց.

— Հեյ-վա՜խ, ջահե՛լ տղա, դո՞ւ էլ եկար, որ ընկնես էն թարսիրտ աղջկա ձեռքը

Բաղդասար հարցրեց.— Հերացո՛ւ, երեկ-մեկել որ ինձ նման ջահել մի մարդ է եկել անցել կամրջեն։ Դուք չե՞ք տեսել։

— Ասաց.— Երեկ չէ մեկել օր մի մարդ կամրջով անցավ։ Զորեղ էր քան դու, թեզմեն էլ շատ կտրիճ։ Էնոր ձին կրակ էր։ Թռավ անցավ քաղաք։ Մինչև էսօր կռվի ձենն առնում էինք։ Էսօր ձեն չկա։ Չգիտենք, ինչպես եղավ, ինչպես չեղավ։

— Վա՜խ, իմ աղբերն է,— ասաց Բաղդասար։— Կռվի ձեն որ չի գալիս, ասել է, թե սպանել են։ Ուխտ եմ անում. Պղնձե քաղաքն ավերեմ, աղբորս վրեժն առնեմ։

Անցավ գնաց։ Ինչ որ դեմն եկավ, ինչ որ շարժվում էր, մարդ կամ անասուն, սպանեց։ Դուրզով զարկեց, պարիսպը ճեղքեց, մտավ քաղաք։ Ձին քշեց աղջկա պատուհանի առաջով անցավ, հարցրեց.

— Աղջի՛, ո՞ր կողմն է կռիվը։

Աղջիկը էնոր ճանաչել էր, ձեռքը պարզեց էն կողմ, ասաց.

— Այ, կռիվն էն կողմն է։

Բաղդասար մոտեցավ կռվի տեղին, տեսավ, Սանասար ու էն քսան փահլևանք կանգնած են դեմ-դեմի։ Սանասար, աչքերն արնով բռնված, հազիվ է իրեն պաշտպանում։

Բաղդասար ձին քշեց, մտավ կռվի մեջ, փահլևաններուն կոտորեց ուրիշ կողմեն ու կանչեց.

— Տո, Սանասա՛ր, աղբե՛ր։

Սանասար ձենն առավ, ասաց. «Փա՛ռք աստծու, օգնականս հասավ, էլ երկյուղ չունեմ»։ Ձեն տվեց.

— Համմե՛, Բաղդասա՛ր, աղբե՛ր, վու՜այ, էդ դո՞ւ ես։

— Հա՛, ես եմ։ Դու էդ կողմեն առաջներք բռնիր, ես էս կողմեն սպանեմ, գամ։

Հասավ Սանասարին, քաշեց հանեց արնի ծովեն, տարավ, երեսները լվաց։ Սանասարի աչքերը բացվեցին, ասաց.

— Ո՞ւր են, քսան փահլևան մնացել էր։

— Ես էնոնց էլ իմ բաժինն արի,— ասաց Բաղդասար։

Վաթսուն փահլևանին հաղթելուց հետո Սանասար ու Բաղդասար գնացին Դեղձուն-Սամի հոր առաջ։

Պղնձե քաղքի թագավորն ասաց.

— Եղավ չորս փորձություն, Սանասա՛ր։ Գոհարն առար վիշապի բերնեն — մեկ, ոսկե խնձորը սան գլխեն փախցրիր, էլի տեղը դրիր — երկու, գուրզը աշտարակեն բերիր ցած, էլի տեղը նետեցիր — երեք, երկուսով հաղթեցիք իմ վաթսուն փահլևանին — չորս։ Մնաց մեկ փորձություն։

— Ի՞նչ փորձություն։

— Պետք է գնաք հիմա էլ՝ Կանաչ քաղաք։

— Կանաչ քաղաքում ի՞նչ կա։

— Վիշապ կա։ Նստել է ջրի գլխին, քաղաքը ծարավեն մեռնում է։ Պետք է գնաք, էդ վիշապին սպանեք, նոր աղջիկս կտամ Սանասարին։

Սանասար ու Բաղդասար ձիերը հեծան։ Է՜հ, Սասնա ծռերուն դու կռվի տե՛ղ ասա։ Կանաչ քաղաք, ո՞ւր ես, գալիս ենք։

Գնացին չոր ոստին դաշտերով։ Իրիկուն մտան քաղաք, դես ընկան, դեն ընկան, վերջը մի պառավի դուռը տփեցին։

— Ո՞վ է,— հարցրեց պառավը ներսեն։

— Օտարական տղերք ենք, մամի՛կ։ Հյուր չե՞ս ուզում։

— Ինչի՞ չէ, որդի, հյուրն աստծունն է։

Դուռը բաց արեց, երկու եղբոր ներս առավ, ասաց.

— Ինքս էլ ղավակ չունեմ։ Դուք ինձի լաճ, ես ձեզի մեր։ Հացն աստծունն է, մեկտեղ կապրենք։

Իրիկնապահին Բաղդասար ասաց.

— Մամի՛կ, ծարավ եմ, պուտ մի ջո՛ւր։

— Վա՜խ, իմ հոգին դուրս գա. ջուրը պրծել է։

— Էդ ի՞նչ խոսք է, մամի՛կ։

— Արևուդ մեռնեմ,— ասաց պառավը,— էս մեր Կանաչ քաղաքը չոր է, անջուր ոստին։ Միայն սարի գլխին կա մի աղբուր, էն էլ վիշապն է բռնել, բերանը դեմ արել, նստել։ Չի թողնում, որ ջուրը հասնի քաղաք։ Ամեն շաբաթ մի աղար աղջիկ պիտի տանք, էդ վիշապն ուտի, որ կարենանք ջուր վերցնել։ Թագավորի տանը կա մի հուր-հրեղեն։ Էգուց էնոր հերթն է։

Բաղդասար ասաց.— Մամի՛կ, բա էս քաղաքում չկա՞ մի մարդ, որ էդ վիշապին սպանի։

— Թառե՜, թառե՜,— ասաց պառավը։— Էնոր սպանե՞լ կլինի։ Քանի՞ հեղ թագավորը զորք է տարել վրան, բան դուրս չի եկել։

Առավան լույսը բացվելուն պես պառավն ասաց.

— Հրեն ձեն-ձենոց է գալիս։ Ես կասեմ՝ աղջիկն են տանում վիշապի համար։

Տղաները դուրս եկան. տեսան որ մի լուսնակ աղջիկ, ոտից-գլուխ սև հագցրած, լաց ու ողբով տանում էին սար։ Կանայք էլ կժերով ետևից գնում էին ջրի։

Երկու աղբերն ընկան ետևները, գնացին։

Հասան սարի գլուխ, որտեղ աղջկան պիտի կապեին։ Բաղդասար ասաց.

— Աղջի՛, մի՛ վախենա։ Դու էստեղ կանգնի՛ր, մենք կերթանք, վիշապի հետ կռվենք։

Աղջիկն էստեղ մտածեց. «Ես թողնեմ, փախնեմ. վիշապն էս երկու ջահելին կուտի, ես կպրծնեմ»։ Կանաչ քաղքի մարդիկ տեսան. վիշապը դեռ չկա, աղջիկն ուզում է փախնի։

Բռնեցին, կապեցին։

Մեկ էլ՝ սարերը գըրգըռոց ընկավ։ Սասնա տղերքը նայեցին, վիշապն էր. բարձր քան մի գոմեշ, երկար քան վեց գոմեշ։

Վիշապն էլ հեռվեն էնոնց էր տեսել. մեկի տեղ երեքն էին եկել իրեն կերակուր։ Ուրախացավ, ատամները կափկափեց, երախը բաց արավ պոչը ոլորելով ու ֆշշալով գալիս էր, որ աղջկան կուլ տա։ Աղջկա կեռիքը փակվել էր, լեզուն կապվել. տաք-տաք արցունքները թափվում էին երեսին։

Սասնա ծռերը հարձակվեցին, Սանասար Թուր Կեծակին զարկեց, վիշապի գլուխը կտրեց, Բաղդասար իր հավլունի թրով պոչը կտրեց, մոտեցան, թրերով կողերը կտրատեցին։ Բաղդասար աղջկան արձակեց, ասաց.

 — Աղջի՛, վե՛ր կաց, գնա տո՛ւն։

Վիշապը սատկել էր, աղբրանց ակունքները բացվել էին, ջուրը վարարեց, եկավ, եկավ, մարդիկ առատ-առատ պաղ ջուր վերցրին։ Ամբողջ քաղաքը ջրով հագեցավ։

Կանաչ քաղքի թագավորը Սասնա կտրիճ փահլևաններուն կանչեց, ասաց.

— Ուզե՛ք ձեր ուզածը։

Բաղդասար ասաց.— Մենք բան չենք ուզում, մեր ազատա՛ծը մեզ տվեք։

— Ձեր ազատածը օրենքով ձերն է, Բաղդասա՛ր։ Ուրիշ ի՞նչ եք ուզում։

Բաղդասար երեք անգամ ասաց.— Մեր ազատածն ենք ուզում։

Թագավորն ուրախացավ.— Ձեր ազատած աղջիկն օրենքով քոնն է, Բաղդասա՛ր տղա։ Արի՝ քեզ պսակեմ։

— Ես մկա իրավունք չունեմ պսակվելու,— ասաց Բաղդասար տղան։— Առաջին հերթը իմ ջոջ աղբորն է։

Աղջիկը նշանեցին Բաղդասարի վրա։

Սասնա ծուռը դարձան եկան Գըզձն քաղաք, որ Դեղձուն-Ծամին զոռով քաշեն տանեն։ Շատ էին բարկացել աղջկա հոր նենգություններեն։ Գըզձն քաղքի թագավորը հիմիկ էլ ասաց.

— Գիտե՞ս ինչ կա, Սանասա՛ր. Դեղձուն-Ծամ խաթուն քաղքեն հեռացել, դղյակում փակվել է, դռները պինդ կողպել։ Թե կարնաս, գնա՝ տա՛ր քեզ համար։

Սանասար ձին քշեց, քաղքեն դուրս ելավ։ Հեռվում երևաց մի բարձր դղյակ։ Սանասար ասաց. «Կա-չկա, Դեղձունի դղյակն է»։ Բռնեց էդ դղյակի ճամփան։

Քշեց բարձրացավ դարպասի մոտ։ Փակ էր, երկաթե ահագին դուռը վրան։

Զրնգ, զրնգ, զրնգ — դուռը թակեց ու կանչեց.

— Դուռը բացե՛ք, թե չէ դուռն ու տանիքը ձեր գլխին փուլ կածեմ։

Դեղձուն սպասուհանեն դուրս նայեց, ոսկի մաշիկները քցեց ոտքը, վազեց առաջ ու դուռը բաց արեց.

— Գլխի՛ս վրա եկար, երեսի՛ս վրա եկար, իմ գլխավո՛ր։

Սանասար ձիուց իջավ, ձեռ թալեցին իրար վիզ, գնացին մտան դղյակը։ Դեղձուն խոսեց.

— Է՜, հոգուդ, արևի՛դ մեռնեմ, Սանասա՛ր, բարո՛վ ես եկել։ Ի՞նչ կա։

Սանասար ասաց.

— Ես եկել եմ, որ քեզ ուզեմ ինձ կնիկ։

Դեղձուն ասաց.— Աչքի՛ս վրա։ Քեզ նման կտրիճ մեկ էլ հո չե՞մ տեսնի։

Դեղձուն խորոտ էր, իր պատկերեն ու Սանասարի տեսած երազեն յոթնապատիկ ավելի խորոտ։

Էստեղ մատանիներն իրար հետ փոխանակեցին։ Դեղձուն-Ծամ ասաց.

— Ախ, Սանասա՛ր, հազա՛ր ափսոս քո ջահելությանը, որ ինձ համար սարուձոր ես գցել։

Սանասար պղտորվեց.

— Ի՞նչ մտքով ես ափսոսում։

Դեղձուն-Ծամ ասաց.— Վախենամ քեզ զարկեն, սպանեն։ Էս երկիրը հմայված է։ Քարերը, ծառերը, թփերը ձեն կտան. «Տարա՛վ, տարա՛վ, Դեղձուն-Ծամին Սանասար տարա՛վ»։ Գիշերով գնանք, որ քաղաքը չակհի, մարդիկ չիմանան։ Քաղաքը որ ակհեց, էլ չեն թողնի, որ դու ինձ տանես։

Սանասար ասաց.— Ես չեմ վախենա։ Ես քեզ պիտի տանեմ ցերեկով։ Երկար խոսելու գլուխ չունեմ. կգա՞ս ցերեկով, թռիր ձիուս գավակը, չե՞ս գա, կդառնամ կերթամ Սասուն։

Դեղձուն ասաց.— Ո՞նչպես չգամ, իմ գլխավո՛ր։ Մի կյանք ունեմ, էն էլ ատրում եմ քո սիրուն։ Սասունեն քեզ կանչեցի բերի, որ հետդ չգա՞մ։

Ասաց ու թռավ ձիու գավակը։ Սանասար քշեց, գնացին։

Ճանապարհին ինչ որ պատահեց, քար, ծառ, գազան, Սանասար բարև տվեց անցավ։ Ձեն չհանեցին։ Չէին մոռացել, որ Սանասար սպանեց էն անկշտում հսկային, ջուրը նրա փորից ազատեց, հանեց հանդերի վրա։

Մեկ էլ՝ վերևում երևաց էն գեշ հավքը։ Սանասար բարև չտվեց։ Հավքը ճվաց. որ Սանասարին դարձներ սպիտակմորուս հալվոր։ Հմայքը Սանասարի վրա չբռնեց։ Հավքը սուրաց երկնքով ու բարձր կանչեց.

— Տարա՛վ, տարա՛վ, Սասնա ծուռ Սանասար Պղնձե քաղքի թագուհուն տարա՛վ։

Կախարդ հավքի ճվոցն ընկավ Պղնձե քաղքի վրա։ Քաղաքը ահեց. մարդիկ իրար ձեն տվին, ձիերը հեծան, ընկան Սանասարի ետևեն։ Ծովու ավազին հաշիվ կար, երկնուց աստղերին հաշիվ կար, գետնի բույսերին հաշիվ համար կար, Պղնձե քաղքի հեծյալին հաշիվ չկար։

Սանասար աղջկան տարավ դրեց մի բարձր սարի գլուխ, մի ապահով տեղ, դարձավ, Թուր Կեծակին քաշեց, ասաց.

«Հացն ու գինին, տեր կենդանին,
Խաչ-պատերազմին, որ իմ աջ թևին»։

Ասաց, ընկավ հեծյալի վրա, բրդեց, կոտորեց. խափր փռեց իր չորս բոլոր։ Մի քիչ հետո նայեց ու տեսավ, դարպասի դեհեն մարդիկ վազում են, որ քաղաք ընկնեն. քաղքի դեհեն փախչում գալիս են դեպի դարպաս։ Դու մի ասա՝ ծուռ Բաղդասարն էլ էն կողմեն է ջարդուփշուր անելով գալիս։

Եկավ, հեռվեն տեսավ, մի սիպտակ ձիավոր, արյան մեջ թաթախված, հեծյալն է կոտորում։ Ասաց. կա-չկա սա իմ աղբորն էլ է սպանել։ Ասաց ու գուրզով զարկեց աղբոր սրտին։ Սանասար ետ գնաց, ընկավ ձիու գավակին ու նորեն էլավ թամքը։ Ծուռը մի գուրզ էլ զարկեց. աղբորը թամքեն հանեց։ Սանասար նորից ուղղվեց իր թամքի մեջ, երգելով ասաց.

«Հացն ու գինին, տեր կենդանին.
Ծափն էր նման սասնա փահլևանին.
Թափն էր նման մեր ծուռ Բաղդասարին»։
Բաղդասար աղբորը ճանաչեց, ասաց.

— Արնոտվել ես, աղբե՛ր, չճանաչեցի։ Որսը բերե՞լ ես, թե՞ դատարկ ես եկել։
Սանասար պատասխանեց.

— Պղնձե թագավորի աղջկան բերել եմ։ Հրեն էն բարձր սարի գլխին։

Առավ Բաղդասարին, տարավ աղջկա մոտ. հեռվեն աղջկան աչքով արեց, որ գա իր աղբոր ձեռքը։ Դեղձուն-Ծամ իսկույն վեր կացավ, եկավ, Բաղդասարի ձեռքը պագեց։ Բաղդասար շատ ուրախացավ. աղջկան շատ հավանեց, ասաց.

— Հարսնի՛կ, դու իմ աղբոր շորերն արունեն լվա, էն զորքի մնացածն էլ՝ ինձ բաժին։

Ասաց, առավ գուրզ ու նիզակ, ընկավ հեծյալի մեջ, բրդեց ու փռեց խսիր։ Պրծան միայն իրենց տանը նստած մարդիկ։ Մի սև լուր տանող էլ չմնաց։

Պղնձե քաղքի թագավորը եկավ կռվի դաշտ, ասաց.

— Էյ, Սասնա՛ ծռեր, աստծո՛ւ սիրուն, բավ է սպանեք իմ հպատակներուն։ Ինչ որ ուզենաք, ես կտամ. աղջիկ եք ուզում, կտամ, թագավորությունս էլ կտամ։

Պատասխանեցին.

— Աղջիկ ենք ուզում, թագավորությունդ քե՛զ մնա։

## 9. ՔԵԶ Է ՎԱՅԵԼ ԴԵՂՁՈՒՆ-ԾԱՄ

Աղջիկն առած էկան էն քառսուն հալվորի մոտ. Սանասար տղան ասաց.

— Դեղձո՛ւն աղջիկ, էս քառսուն մարդը էկել են քեզ համար։ Դու ես էս մարդկանց հմայել. դարձրել էսպես խղճալի հալվոր։ Հիմա կրերես, կարձակես էս մարդկանց. կդարձնես էն հասակին, ինչ հասակով եկած էին էստեղ։

Դեղձուն աղջիկն ասաց.

— Էսոնք էկել են ինձ առնելու, էսոնց որ մրացնեմ, կելնեն ձեզ հետ կռիվ կանեն։ Առեք ինձ, գնացե՛ք։

— Չէ, չի լինի,— պնդեց Սանասար։

Դեղձուն-Ծամ կանչեց իր հավքին։ Հավքն էկավ, նստեց պարսպի վրա, ծվաց, մարդիկ ջահելացան, դարձան էն հասակին, ինչ հասակով էկած էին էնտեղ։

Սանասար ուրախացավ.— Հայ-հա՜յ, լավ է։— Ապա դարձավ փահլևաններուն, ասաց.— Կանաչ-կարմիր աղբերնե՛ր, դուք ամենքդ էս աղջկա համար եք եկել։ Պիտի գնայիք ու կռիվ անեիք ու կռվով առնեիք էս աղջկան։ Մենք, երկու աղբեր, կռվել ենք, հաղթել, նոր էս աղջկան առել բերել ենք էստեղ։ Մեկ դուք նորեն ձեր ուժի տերն եք։ Աղջիկը թո՛ղ մնա մի կողմ, մենք էստեղ իրար հետ կռվենք։ Դուք մեզ հաղթեցիք, աղջիկը թո՛ղ ձեզ մնա, մենք ձեզ հաղթեցինք, աղջիկը թո՛ղ մեզ մնա։

Փահլևանները միաբերան ասացին.

— Հե՛յ Սանասար, հե՛յ Բաղդասար, դուք մեզ ազատեցիք դժար վիճակեն, մեր ջահելությունը մեզ վերադարձրիք, էս հեզ էլնենք ձեզ հետ կռի՞վ անենք։ Էդ հո չի լինի մարդկություն։ Չէ, աղբե՛ր, մենք ձեզ հետ կռիվ անողը չենք։ Թողե՛ք, երթանք ամեն մեկս մեր երկիր։

Սանասար ասաց.

— Այ օտարական աղբերնե՛ր, մեկա դուք հոժար կլինե՞ք, ես էս աղջկան տանեմ, իր հետ կյանք վայելեմ։

Ասացին.— Տե՛ր, իրմեն բարի՛ն տեսնես, բարո՛վ վայելես, շնորհավո՛ր լինի, քեզ վայել է Դեղձուն-Ծամ, Սանասա՛ր։

Քառսուն փահլևանը կաց-բարով արին, բռնեցին ամեն մեկն իր երկրի ճամփան։

Սանասար իր աղբորն ասաց։

— Ուզու՞մ ես, դու առ Դեղձուն-Ծամին։

Բաղդասար պատասխանեց.

— Ի՞նչ ես ասում, աղբե՛ր. Դեղձուն քեզ է թուղթ գրել, քեզ է խոստովանել իր սերը։ Կռիվն էլ դու արիր։ Դեղձուն-Ծամ քոնն է, դու էլ պիտի առնես։ Յա՜, ո՞վ է

լսել, ո՞վ է տեսել աղբերն աղբոր նշանածն առնի։ Չէ, ես իմ նշանածն ունեմ. էն աղջիկը, որ վիշապի բերնեն ազատեցինք։

Սանասար ու Բաղդասար իրար երես պագեցին, ձիերը հեծան, Դեղձուն աղջկա հետ մեկտեղ ընկան ճանապարհ՝ դեպի Սասուն։

Շատ գնացին, թե քիչ, մեկ էլ՝ կապույտ մի ձիավոր էն կողմեն երևաց, կանչեց.

— Էյ, քոսոտնե՛ր, էդ հուրի-փերին ինձ կսազի. ու՞ր եք տանում։

Սանասար ասաց.— Աղբե՛ր, դու էս ձիու գլուխը բռնի, ես գնամ տեսնեմ, ինչ է ասում։

Բաղդասար բարկացավ.— Ցա՞, հա դու՞ պիտի կռիվ գնաս, էս անգամ էլ ես կերթամ։

Սանասար ծիծաղեց.— Դո՛ւ գնա, էլ ի՞նչ ես նեղանում։

Բաղդասար ձին քշեց գնաց անծանոթի առաջ։ Մի խոսք էնորմեն, մի խոսք էսորմեն, իջան, հասան իրար։ Բաղդասար առավ գետին զարկեց անծանոթին։ Սա իսկույն օձիքն արձակեց, իր ծծերը դուրս հանեց, ասաց.

— Բաղդասա՛ր, ես քո նշանած Լուսնթագն եմ։ Էն աղջիկն էլ, որ քո աղբերն է տանում, իմ քույրն է, Դեղձուն-Ծամ։ Էնոր ցավեն ես յոթ տարի փախել, ընկել էի սար ու ձոր, ինչպես ավազակ։ Վերջում գնացի Կանաչ քաղաք. էնոր թագավորի մոտ։ Քուրս հմայք էր անում, թշվառացնում ջահել մարդկանց. էդ էր իմ ցավը։ Երբ լսեցի, որ դուք Դեղձուն-Ծամի հմայքը խափանել եք. էնոր տանում եք Սանասարի համար, ես էլ, քո նշանածը, հրես եկա քեզ համար։

Ձիավորները հեծան, քշեցին դեպի տուն։

Ճանապարհին մի ջահել սասնեցի պատահեց, ուղարկեցին առաջ, որ Ծովինար խանումին ականջլույս տանի, թե գալիս են Սանասար ու Բաղդասար, բերում են Գղնձե քաղքի Քառասուն-Ճուղ-Ծամ Դեղձունին և էնոր քույրը՝ Լուսնթագ աղջկան։

Ծովինար բերել տվեց քառասուն ձեռ փող ու թմբուկ, քառասուն զուռնան իրենց բամբիռներով, կանչեց քառասուն քահանա, հրավիրեց բոլոր սասնեցոց՝ հարսնիք անելու։

Դեղձուն-Ծամին պսակեցին Սանասարի հետ։

Լուսնթագ աղջկան պսակեցին Բաղդասարի հետ։

Քառասուն օր, քառասուն գիշեր հարսնիք արին, քեֆ ու խնջույք արին, ուրախացան։

Ժամանակ անցավ։

Մի օր ծուռ Բաղդասար բարկավ, ելավ իր կնոջն առավ, գնաց Իրան-Թուրան։ Էնտեղ երկու տղա ունեցավ, մեկի անունը դրեց Կալե Կալան, մյուսի անունը՝ Զալ։ Զալեն ելավ Ռուստամ։ Էն Ռուստամ-Զալ, որ, ասում են, Բաղդասարի ցեղեն է։

Դեղձուն-Ծամ Սանասարին պարգևեց երեք տղա. Վերգո, Օհան, Մհեր։

Վերգոն խելքի բանի պետք չէր ու շատ էլ վախկոտ էր. էդոր համար անունը դրին Ցռան Վերգո։

Օհան դուրս եկավ շատ իմաստուն, շատ կարդացվոր, էնքան քաղցր ու գիլ ձեն ուներ, որ բոռալիս ձենը հասնում էր քառասուն օրվա ճանապարհ։ Յոթը գոմշու

կաշի էր փաթթում իրեն, որ բոռալիս փորը չպատռվեր։ Անունը դրին Ձենով Օհան։

Մհերը երկուսն էլ շնորհքով էր ու զորընդեղ։

Սանասարի մահվան օրը եկավ, կանչեց որդիներուն, ասաց.

— Որդի՛ք, ես իմ չափն առա, կմեռնեմ։ Ձեզ հերական ավանդ եմ թողնում. Սասուն պայծառ կպահեք, մեր մորը հնազանդ կլինեք, Քուռկիկ Ջալալուն կխնամեք, ինչպես աչքի լույս։ Ձեր թշնամու հետ նենգություն չանեք, էնոր հետ կռվեք, ինչպես վայել է Սասնա կտրիճներուն։

Սանասար մեռավ։

Ծովինար խանումն ու մյուսներն էլ մեռան։

Եկավ Մհերի ժամանակը։

Ճյուղ երկրորդ

# ՄՀԵՐ ՄԵԾ



Ողորմի՛ տանենք Սասնա պեր Առյուծ Մհերին,
Ու դառնանք չտանենք ողորմի Մըսրա Մելիքին.
Ու նորեն տանենք ողորմի՛ Սասնա Դեղձունին,
Ասենք, թե չտանենք ողորմի Իսմիլ խաթունին.
Ողորմի՛ տանենք Մեծամեր լուս Արմաղանին.
Էսպես էլ տանենք ողորմի՛ Ձենով Օհանին.
Ու նորեն տանենք ողորմի՛ Քեռի Թորոսին,
Ու նորեն հազար ողորմի հայոց նախնիքին:



# Մ Ա Ս Ն   Ա Ռ Ա Ջ Ի Ն

## 1. ՔՈՌԹԱԿԸ ՇԱԼԱԿԻՆ

*Երբ Սանասար մեռավ, Բաղդադու խալիֆն էլ էն զորությունը չուներ։ Առաջ էր եկել մեկ ուրիշ զորեղ թագավոր։ Նստում էր Մըսրա քաղքի մեջ։ Անունն էլ՝ Մըսրա Մելիք։*

*Էնքան անճոռնի մի հսկա էր, էնքան սեւ ու պարարտ, որ կոպերը կախված էին երեսի վրա։ Իր կոպերն երկաթե կեռով ետ էր քաշում, կապում էր ճակտին, որ աչքը բացվեր, կարենար ճանապարհ տեսնել։*

*Էս Մըսրա Մելիք հենց որ Սանասարի մահն իմացավ, զորք հավաքեց, եկավ Սասնա տան վրա կռիվ։*

*Հեյ գիդի Սասո՜ւն. մնացել էր անտեր, անպաշտպան։*

*Չկար Սանասար հսկան, ծուռ Բաղդասար երկրին հեռացել էր, Դեղձուն-Ծամ կնիկ էր, երեք պստիկ տղայի մեր, կախարդելու շնորհքն էլ վաղուց մոռացած։ Քեռի Թորոս մենակ էր մնացել։ Ո՞վ պիտի վերցներ Սասնա տան գուրզը, բռներ Թուր Կեծակին։ Վերգոն ձեռ զարկեց, որ հոր գուրզը վերցներ, չկարցավ շարժել, ճզվեց ու հիվանդացավ։ Օհան պստիկ էր, Մհեր՝ ավելի պստիկ. թաքցրին, որ Մըսրա Մելիք չտեսներ։ Քուռկիկ Ջալալին տարան կապեցին մի մութ ախոռի մեջ, երդիկն ու դուռը շարեցին։*

*Սասուն մնացել էր անտեր, անպաշտպան։*

*Մըսրա Մելիք առանց կռվի մտավ Սասուն։ Հարկ դրեց մեր Սասնա տան վրա, պահանջեց.*

*— Սասնեցի՛ք, ձեզմեն կուզեմ տարեկան —*  
*Քառասուն կոտ ոսկի, ակունք պատվական,*  
*Քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան,*  
*Քառասուն էլ՝ երկար, որ ինձ ուղտ բառնան,*  
*Քառասուն կույս աղջիկ սիրուն արմական,*  
*Քառասուն որձ նժույգ մի ռանգ, մի հասակ,*  
*Քառասուն խամ երինջ մի ռանգ, մի հասակ,*  
*Քառասուն եզ՝ լծկան, քառասուն կով՝ կըթան։*

Մըսրա Մելիք էս հարկերը դրեց մեր Սասնա տան վրա, իր զորքն առավ, դարձավ, գնաց Մըսըր։

Հայաստան առաջ արաբ խալիֆին էր հարկատու, հիմա դարձավ Մըսրա Մելիքին հարկատու։

Ժամանակ անցավ։

Քեռի Թորոս մի օր Սասնա ջոջերուն կանչեց, ասաց.— Սասնա տան կառավարողը պետք է լինի Սանասարի ցեղեն։ Ի՞նչ կասեն Սանասարի որդիք։

Ձենով Օհան ասաց.— Վերգո՛, մեր ջոջ ախպերը դու ես, դու պետք է Սասուն կառավարես։

Վերգոն ասաց.— Ես չեմ կարնա։ Ճողված եմ։

— Բա ո՞վ կառավարի,— հարցրեց Քեռի Թորոս։— Օհան ու Մհեր պստիկ են։

Շատ խոսեցին, շատ խորհուրդ արին, վերջը Քեռի Թորոս ասաց.

— Թո՛ղ Դեղձուն-Ծամ կառավարի, մինչև ճժերը հասնեն։

Դեղձուն-Ծամ դուրս քաշեց Քուռկիկ Ջալալին, վրան դրեց Թամբ-Սադաֆին, բերանը՝ Սանձ-Պողպատին, հագավ Սանասարի զենքերը, ձեռքն առավ Թուր Կեծակին, վահանը կապեց ետև, հեծավ, քշեց գնաց՝ իր Սասնա սարերը ման գալու, իր թագավորությանն աչք ածելու։

Ամբողջ քաղաքը դուրս էր եկել, որ մտիկ տա Սասնա թագուհուն, քանի որ Դեղձուն-Ծամ Սանասարի մահեն հետո արև չէր տեսել, չէր երևացել մարդկանց։

Ժողովրդին բարև տվեց, իր ձին ասպանդակեց, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, հասավ Աղբանց Կաթնաղբրին, որմեն, մի ժամանակ, ջուր էին խմել Սանասար ու Բաղդասար։

Էնտեղ Դեղձուն-Ծամ ձիուց իջավ, ձիու բերնեն սանձը հանեց, թողեց, որ ձին արածա։ Ինքը նստեց Աղբանց աղբրի վրա, հաց կերավ, ջուր խմեց, Քուռկիկ Ջալալուն էլ խմացրեց, պառկեց կանաչ խոտերու մեջ, քնեց։ Ինքն էլ, Քուռկիկն էլ Սանասարեն հետո շատ նիհարել էին, դառել ոսկոր ու կաշի։ Դեղձուն-Ծամ քնեն երբ արթնացավ, տեսավ, ինքն էլ, ձին էլ պարարտացել են, լցվել, պետացել։ Շատ զարմացավ։ Ձին քշեց եկավ տուն, տնեցոց պատմեց էդ հրաշքը։

— Շատ մի՛ զարմանա,— ասաց Քեռի Թորոս։— Չէ՞ որ Սանասար ու Բաղդասար իրենց աղնավուրի զորությունն էդ աղբրեն էին առել։ Էդ աղբրի մասին բան կա Սասնա գրյանքում։

Մհեր եղավ յոթ տարեկան։ Հասակը եղավ յոթ չենք։ Մերը նրան դրեց վարժատուն։ Շուտով Մհեր ամեն բան սովորեց, լցվեց ամեն շնորհքով։

Մի օր էլ մորն ասաց.

— Մարե՛, հերիք չեղա՞վ, ես մնամ էսպես անճար։ Հրամա՛ն տուր, ձի հեծնեմ, գնամ, սար ու ձոր ման գամ, որս անեմ, մարդամեջ մտնեմ, դառնամ խելական տղամարդ։

Մերն ասաց.— Որդի , դու դեռ պստիկ ես, էդ բաները դժվար են քեզ համար։ Մի առ ժամանակ համբերի՛ր, որ մի քիչ մեծնաս, նո՛ր քո ուզածն արա։

Մհեր ասաց.— Ոչ, մարե՛, չկա մեր տանն խելական տղամարդ։ Կարող է, դեերը

գան, մեզ վնասեն։ Լավ է, որ հիմակվնեն ես վարժվեմ, պատրաստվեմ թշնամու դեմ կանգնելու համար։

Դեղձուն-Ծամ տեսավ, չի կարնա զոռել իր լաճուն, համաձայնեց, ասաց.— Գնա՛։

Մհեր նետ-աղեղն առած գնում էր որս անելու։ Ոտքով էր գնում-գալիս, ձի, բան չուներ։

Մի օր էնքան վազեց աղվեսներու ետևեն, էնքան լարեց, որ շունչը հատավ ու բան էլ չորսաց։ Իրիկվան դադրած, հերսոտված եկավ տուն ու նետ-աղեղը թալեց գետին։

Քեռի Թորոս հարցրեց.— Լաո , ինչի՞ ես հերսոտել։

— Է, քեռի ,— ասաց,— անտեր մնան էդ գազանները. փախնում են, ետևներեն վազելով հոգիս դուրս է գալիս։

Մհեր մարմնով ծանրացել էր, դժվար էր վազում, ոտքերը խրվում էին հողի մեջ։

Քեռին ասաց.

— Տո, իմկնի՛ Սասնա ծուռ, սասնեցիք բոլորը պետք է ծո՞ւռ լինեն։ Մարդ էլ ոտով կվազի որսի ետևե՞ն։

— Բա ի՞նչ անեմ, քեռի՛։

Ասաց.— Դու Բիթլիսու քաղքի մեջ մի քեռի էլ ունես, անունը Գորկիկ իշխան։ Քառսուն ձիու տեր է։ Գնա էդ քեռուց մի լավ ձի վերցրու, հոգին դուրս չի գա , ձի՛ վերցրու, հեծի՛ր, գնա՝ որս արա։

Մհեր ասաց.

— Ցա՞, քեզմէն զատ ես ուրիշ քեռի՞ ունեմ։ Տնաշե՛ն, խսկի չես էլ ասում։

Լուսուն Մհեր մորն ասաց.

— Մարե՛, ինձ երկու պապաճիկ հա՛ց տուր. պիտի գնամ Բիթլիս։

Առավ երկու կորեկ հաց, դրեց գոտին, կոպալն առավ, ընկավ ճանապարհ. Բիթլիս, ո՞րտեղ ես, եկա։

Հասավ թաղի գլուխ։

Ճժերը փողոցում խաղում էին. տեսան, գալիս է մի աժդահակ՝ ուսին մի ծածկի գերան, իրար ասին.— Ցա՜ա... էսպես էլ մա՞րդ կլինի, ծառն ուսին դրած՝ գնում է։

Մհեր մոտեցավ, հարցրեց.

— Այ ճժեր, Գորկիկ իշխանի տունը ո՞րն է։

Ճժերը թափվեցին նրա չորս բոլոր, ասին.

— Արի՝ քեզ տանենք Գորկիկ իշխանի տուն։

Տարան, տեղ հասցրին։

Մհեր կոպալը մի կողմ դրեց, ներս մտավ։ Գորկիկ իշխանը, իր ընկեր իշխաններով մեկտեղ նստած հողան, զրույց էր անում։ Մհեր բարև տվեց։ Գորկիկ իշխանը բարևը չառավ։ Նստած էր բոլորից վերև։ Մհեր ասաց. «Կա-չկա, էդիկ է իմ քեռին»։ Գնաց, բռնեց քեռու թևը, տեղից վեր հանեց ու մի թեթև սեղմեց։ Գորկիկ իշխանն իմացավ, իր թևը յոթ տեղով կոտրեցին։ Զարմացավ, ասաց.

— Ո՞րտեղացի ես, կտրի՛ճ։

Մհեր պատասխանեց.— Քո քրոջ որդին եմ։

— Ո՞ւմ տղան ես։

— Սանասարի։
— Վայ դու բարով եկար, հազար բարով եկար։
Քեռին փափկել էր Մհերի ուժը տեսնելուց հետո։
Մհեր նստեց, որ հանգստանա։ Հաց բերել տվին, հացը կերավ, պրծավ, նոր քեռին հարցրեց.
— Անունդ ի՞նչ է։
— Մհեր։
— Մհեր, լա՛ո, էդ ո՞նց էլավ, էկար ինձ մոտ։
Ասաց.— Քեռի՛, մարմնով էնպես եմ ծանրացել, որս անիլիս չեմ կարնա գազաններու ետևեն հասնել, փախնում են, ձեռնես պրծնում։ Եկել եմ, որ ինձ մի ձի տաս, տանեմ, հեծնեմ։
Գորկիկ իշխանն ասաց.
— Լա՛ո, մեկ ձին ի՞նչ է, տասը քեզ մատաղ։
Առավոտյան, հացը որ կերան պրծան, քեռին ասաց.
— Վե՛ր կաց, գնա ախո՛ռ, քառասուն ձի կա հոն կապած, քառասունից որ մեկը հավնես, տար քեզ համար՝ հեծի՛ր։

Մհեր գնաց ախոռ։ Քառասուն ձի էր կապած, քսանը մեկ շարքի, քսանը մեկ շարքի։
Որու մեջքին ձեռը դրեց, փորն իջավ դիպավ գետնին։ Քառասունն էլ փորձեց ու մտքում ասաց. «Վա՛յ, ես էգոնց... ինձ համար պետքական ձի չկա, որու մեջքին ձեռ եմ տալիս, փորն իջնում, դիպնում է գետնին։ Էսոնց ես տանեմ ի՞նչ անեմ։ Էսոնք իմ տակը չեն դիմանա»։
Դուրս պիտի գար ախոռեն, մեկ էլ տեսավ, երկու տարեկան փրչոտ մի քուռակ ախոռի մեջ արձակ ման է գալիս։ Մհեր ասաց. «Էն որ էստեղ ինձ պետքական ձի չկա, կեցի՛ր մի գոմբ զարկեմ, էս քուռակն էլ սատկի, նոր դուրս գամ, գնամ»։ Գոմբը դիպավ քուռակի մեջքին, քուռակը թռավ, տասը ձի հաշմեց, քացով դիպավ թրքնոցի քարին, քարը կրակ տվեց։
Մհեր ասաց. «Վալլա՛, ինձ վերցնող որ կա, էս քուռակն է, չկա, էս քուռակն է։ Այսար ես իմ ուժը գիտեմ. գոմբը որ զարկեցի, քուռակը պիտի սատկեր։ Գորկիկ իշխանն էս քուռակը տվեց, կտանեմ, չտվեց, կթողնեմ, կերթամ»։
Մհեր ելավ եկավ հոդան, նստեց ու գլուխը կախեց։
Գորկիկ իշխանը թե՝ Մհեր, քեզ համար ձի չոկեցի՞ր։
Ասաց.— Քեռի՛, քո ձիերը քեզ բումբարաք։ Ձեռս չի՛ գնում, քո ձիերեն մեկն էլ պակսեցնեմ։ Տո՛ւր ինձ էն փրչոտ քուռակը, որ էնտեղ արձակ վազվզում է։
Քեռին ասաց.— Մհեր, լաո՛, ամոթ է աշխար. ես Գորկիկ իշխանը լինեմ ու տամ քրոջս որդուն մի ծոտոտ քուռա՞կ։ Մարդիկ պիտի ասեն՝ Մհեր եկավ, Գորկիկ իշխանի ձեռը չգնաց, որ խորոտ մի ձի տար։
— Քեռի՛, իմն էն քուռակն է, կտա՞ս, կտանեմ, չես տա, կթողնեմ, կերթամ Սասուն։
— Դու գիտես, լա՛ո, տանում ես, էդ քուռա՛կը տար։
Մհեր քուռակն ախոռից հանեց, մի պարան ուզեց, բերին, քուռա՛կի չորս ոտը կապեց իրար, իր կռպալը մտցրեց ոտներու մեջ, քուռակն իր շալակը թալեց, ասաց. 

— Մնաս բարո՛վ, քեռի՛, աստված քո տունը շե՛ն պահի։

Ու ճանապարհ ընկավ։

Բիթլիսու ճժերը Մհերի ետևից ընկած՝ «Հու-քուչ» արին, ծաղրեցին, թե՝ մարդն է ձին շալակած գնում։

Մհեր խսկի տերն էլ չեղավ։

Եկավ, հասավ Սասուն։

Քեռի Թորոս տեսավ, Մհերն է գալիս՝ մի քնձռոտ քուռակ շալակին, ասաց.

— Լա՛ո, հենց էդ քուռա՞կը բերիր։ Գորկիկ իշխանը չէ՞ր կարնա տալ քեզ խորոտ մի ձի։

Մհեր ասաց.— Քեռի Թորոս, դու ճիշտ չիր ասում. Գորկիկ իշխանը քառսուն ձի ուներ։ էդ անտերներեն որ մեկի մեջքին ձեռս դրի, փորը տվեց գետին։ Մեջները պետքական ձի չկար էս քուռակեն զատ։

— էդ ի՞նչ քուռակ է։

— Հայ-հա՜յ, Քեռի Թորոս, դու չգիտես։ Մի գոմբ զարկեցի մեջքին, թռավ, տասը ձի հաշմեց, քացով դիպավ Թրքնոցի քարին, քարը կրակ տվեց։

Քեռի Թորոս ասաց.— Օ՜օ՜, լա՛ո, էդ հասարակ ձիու քուռակ չէ։ Քուռկիկ Ջալալու զարմեն է երևում։ Տո՛ւր ես պահեմ, երեք տարի հետո նոր կհեծնես։

Երեք տարի հետո Մհեր եղավ ձիավոր, Սասուն ոտի տակ առավ։ Ձին հեծնում գնում էր սարերը, այծյամ ու գազան էր սպանում, բերում բաժանում սասնեցոց վրա։

Յոթ տարի Սասուն որսով պահեց։

## 2. ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ

Մհեր հազիվ տասնհինգ տարեկան էր, Սասուն հացի թանկություն ընկավ։ Ժողովուրդը մեռնում էր սովից։

Ժողովուրդը եկավ, բռնեց Մհերի դուռը.

— Մհե՛ր, աստծո՛ւ սիրուն, մեռնում ենք սովից, մեզ մի ճա՛ր արա, վերև աստված, ներքև՝ դու։

Մհեր ասաց.— Ես չգիտեմ, ինչ անեմ։ Խոսեմ Քեռի Թորոսի հետ, տեսնենք ինչ կասի, տեսնենք թանկությունն ինչո՞ւց է։

Կանչեց Քեռի Թորոսին, ասաց.

— Քեռի, հացի թանկություն է Սասնա մեջ։

— Ինչ անեմ, որդի՛, իմ ամբարի հացը սպրծավ։ Թե հաց լինի, էլի ձեր ամբարներում կլինի։

— Մեր հացն էլ է սպրծել. ժողովուրդը մեռնում է սովեն։ Քեռի՛, ինչո՞ւ է հացը սպրծել. կարկո՞տն է զարկել, խորշա՞կն է քաշել, թե՞ երաշտն է մրկել։

Քեռի Թորոս ասաց.— էդպես չէ, Մհե՛ր։ Սասուն վար ու ցանք չունի։ Մենք էծ, էշ ու ջորի ենք պահում։ Մեր հացը գալիս է Շամեն ու Հալաբեն։

— Ինչո՞ւ մկա չի գալիս։

— Մկա մարդակեր մի առյուծ է եկել մեր սարերը, կտրել է ճամփան։ Երեք տարի է, ինչ որ Շամ ու Հալաբ գնացող չկա։ Վախենում են առյուծեն։ Մարդկանց

*քնում, պատառոտում էր։ Էդ է պատճառը, որ մեր աշխարհը հացի թանկություն է ընկել։*

*— Քեռի Թորոս, առյուծն ի՞նչ է։*

*— Գազան է. ասում են՝ գազանների թագավոր։*

*— Մարդկանց հեռվի՞ն է ուտում, թե՞ մոտենաս, նոր կուտի։*

*— Չէ, մոտենաս, նոր կուտի։*

*— Հացն ու գինին, տեր կենդանին, ես լուսուն կերթամ էդ առյուծի վրա կռվի։*

*— Մհե՛ր, չգնա՛ս, քեզ կբռնի, կպատառի։*

*— Տո, վալլա՛, պիտի գնամ։*

*Լուսուն, ինչքան ձի հեծնող կար, հեծան ու Մհերի հետ մեկտեղ գնացին առյուծի վրա։*

*Առյուծն էն կողմեն երևաց։ Պոչը գետին խփելով, թոզ ու դուման անելով գալիս էր։ Եկավ կանգնեց Մհերի և էնոր զորքի դիմաց, էնպես էր մռնչում, որ սար ու ձոր դմբդմբում էին։*

*— Հացն ու գինին, տեր կենդանին,— ասաց Մհեր.— Ով առյուծին զարկի թրով կամ գուրզով, ես առյուծին կթողնեմ, էնոր կսպանեմ։ Ես,— ասաց,— մոր բերած եմ։ Առյուծն էլ է մոր բերած։ Առյուծը զենք ու զրահ չունի, ես էլ իմ զենքն ու զրահը կթալեմ գետին, առյուծի հետ կբռնեմ գոտեկռիվ։*

*Զենքն ու զրահը թալեց գետին, թևերը քշտեց, կանչեց հացն ու գինին, հասավ կպավ առյուծի հետ, մեկ ձեռքով բռնեց էնոր վերի ծնոտը, մեկ ձեռքով բռնեց վարի ծնոտը, առյուծին մեջտեղեն ճղեց ու թալեց։ Առյուծի մի կտորն ընկավ ճամփի էս կողմը, մի կտորը՝ ճամփի էն կողմը։*

*Համբավ տարան Դեղձուն-Ծամին, թե աչքդ լո՛ւս, քո Մհեր էն ահռելի առյուծին սպանեց։*

*Մհերի անունը դրին Առյուծաձև Մհեր։*

*Դարձան եկան Սասուն։*

*Սասնեցիք հավաքվեցին, եկան Մհերի դռան առաջ, ասացին.— Առյուծաձև՛ Մհեր, մկա դու ես մեր թագավորը, Սասուն կառավարի՛ր։*

*Դեղձուն-Ծամ որդու երեսը պագեց, հանեց Սասնա տան զենքերն ու գեստերը, տվեց Մհերին, ասաց.— Սասնա տան կռվանը դու ես, էլ ո՞ւմ համար խնայեմ։*

*Մհեր առավ, հագավ իր հոր գեստերն ու զենքերը։*

*Հագավ Կապեն-Կապիճին,*
*Հագավ Կոշիկ-Պողպատին,*
*Կապեց Գոտիկ-Արծաթին,*
*Բերավ Քուռկիկ Ջալալին,*
*Դրեց վրան Թամք-Սադաֆին,*
*Դրեց բերնին Սանձն-Ոսկին,*
*Իր ձեռն առավ Թուր-Կեծակին,*
*Ու խաչ-պատերազմին*
*Իջավ իր աջ ուսին։*

*Մհեր էնպես հագավ, կապեց, հեծավ, գնաց ման գալու Սասնա սարերը, իր թագավորության աչք ածելու։*

Թշնամիները կորագլուխ հեռացան Սասնա սարերեն։
Հիմա Սասնի երկրին կար տեր ու պաշտպան։

### 3. ԱՐՄԱՂԱՆ

Մհեր, Սասնա տեր ու պաշտպանը, կնիկ չուներ։

Մի օր Քեռի Թորոս ու մեկել իշխանները եկան Դեղձուն-Ծամի դիվանը, ասին.

— Դեղձո՛ւն խանում, Սանասարի որդին մեծացել է, պիտի կարգենք։

Դեղձուն-Ծամ ասաց.— Հա, ես էլ էդ մտքին եմ։ Քաղքեն լինի, գեղեն լինի, մի լավ աղջիկ ճարեք Մհերիս համար։

Խորհուրդ արին.— Ո՞ւմ աղջիկն է Մհերին արժան։

Քեռի Թորոս ասաց.— Ելեք, երթանք Մանազկերտ։ Թևաթորոս թագավորը մի լավ աղջիկ ունի, անունը՝ Արմաղան։ Էդ աղջիկն ուզենք Մհերին։

Ուղնկանները, Քեռի Թորոսն ու Ձենով Օհանը, մի խումբ կտրիճներ առան, ձիերը հեծան ու գնացին Մանազկերտու բերդ, կանգնեցին թագավորի դռան առաջ, հարցրին.

— Թևաթորոս թագավորը տա՞նն է։

Պատասխանեցին.— Թևաթորոս գնացել է Վան։

Ակռատգա՜ քշեցին գնացին Վան, հարցրին.

— Թևաթորոս թագավորն էստե՞ղ է։

Պատասխանեցին.— Չէ, բերդի հիմքը թալեց, ակռատը կերավ, գնաց Արզրում։

Գնացին, մինչև ճաշ հասան Արզրում, հարցրին.

— Թևաթորոս թագավորն էստե՞ղ է։

Պատասխանեցին.— Չէ, բերդի հիմքը թալեց, ճաշը կերավ, գնաց Կարս։

Գնացին Կարս, հարցրին.

— Թևաթորոս էստե՞ղ է։

Ասին.— Բերդի հիմքը թալեց, հրամեցը կերավ, գնաց Մանազկերտ։

Նորեն բռնեցին Մանազկերտու ճամփան։

Համբավը հասավ Թևաթորոսին, թե Քեռի Թորոս, Ձենով Օհան իրենց կտրիճներու հետ մեկտեղ քեզ հյուր են գալիս։

Թևաթորոս թագավորը մարդ ուղարկեց էնոնց առաջ, բերեց, իշխաններու տեղը չոկ սարքեց, կտրիճներու տեղը՝ չոկ։

Հացը կերան պրծան, հարցրեց.

— Է՛, Քեռի՛ Թորոս, Աղնա՛նց Օհան, բարո՛վ եք եկել։ Ի՞նչ գործ է պատահել, որ եկել եք։

Քեռի Թորոս ասաց.— Թագավո՛րն ապրած կենա, քո օջախն ենք եկել, որ քեզ հետ խնամություն անենք։

— Ի՞նչ խնամություն։

— Քո աղջիկ Արմաղան պետք է տաս մեր Մհերին։

— Մհե՞ր։ Լսել եմ։ Ո՞ւմ տղան է։

— Սանասարի տղան է, Աղնանց Օհանի աղբերը։

— Քեռի Թորոս, երբ որ դուք իմ դուռն եք եկել, պատիվը զոռն ուժեղ է. աղ-

չկա ձեզ մատաղ կանեի, բայց էս եղավ յոթ տարի, Սպիտակ դևը փախցրել է իմ աղջըկան։ Թո՛ղ Մհեր Արմաղանին գերությունեն ազատի, իրեն հալա՛լ։

Էսոնք թող էստեղ զրույց անեն, մենք համբավ տանք Սպիտակ դևին։

Սպիտակ դևը Խլաթի թագավորն էր։

Երբ լսեց, որ Սասնա Մհերի անունն օրեցօր բարձրանում է աշխարհքում, ասաց. «Մի օր չէ, մի օր էդ Սասնա ծուռն ինձ վնաս կտա, Խլաթը կառնի»։ Ելավ մի թուղթ գրեց, տվեց Քամի փահլևանին, ասաց.

— Տա՛ր Սասնա բերդ։

Քամին թուղթն առավ, ընկավ ճամփա։

Մհեր էդ օր բարձրացել էր սար, որսի։ Փահլևան Քամին հանդիպեց էնոր, ասաց.

— Բարո՛վ տեսանք, Մհե՛ր. մկա դու էնքան ես մեծացել, որ սարը որսի՞ ես գալիս։ Իմացած լինես, որ Սպիտակ դև քեզ կռիվ է կանչում։

Թուղթը հանձնեց Մհերին։ Էնտեղ գրած էր.

«Մհե՛ր, դու պիտի գաս ինձ հետ կռիվ, թե չէ Սասուն կավերեմ, քո ժողովուրդը կտանեմ գերություն»։

Մհեր թուղթը կարդաց, ասաց.

— Լա՛վ, գնա Սպիտակ դևին ասա՛, թո՛ղ պատրաստ կենա, հրես գալիս եմ։

Փահլևան Քամին ասաց.— Մհե՛ր, մի խնդիր ունեմ. դու ինձ խո՛սք տուր, որ կկատարես։

— Իմ տված խոսքը խոսք է,— ասաց Մհերը,— թե դուք դև եք, մենք էլ Սասնա կորիճ ֆերիզ ենք։ Մեր բնությունում սուտ ասել չկա։ Ասա՛, ի՞նչ է ուզածդ։

—Սպիտակ դևը մեր հոգին հանեց։ Արի՝ էնոր սպանի՛ր, մեզ էնոր շնչեն ազատի՛ր։

— Խոսք եմ տալիս, կգամ,— ասաց Մհեր։

Դարձավ եկավ տուն, մոր ձեռքը պագեց.

— Մարե՛, Սպիտակ դևն ինձ գիր է ճամփել, կանչել է կռիվ։ Ինձ օրհնությո՛ւն տուր, որ գնամ։

Դեղձուն-Ծամ ասաց.— Մարե՛ն մեռնի քեզ, դու դեռ ջահել ես, ո՞նց կարնաս կռվել Սպիտակ դևի հետ։ Էնիկ աշխարհի բոլոր թագավորներեն զորեղ է։ Իր վրա թուր չի բանի։ Դու մի քիչ համբերի՛ր, մինչև մեծանաս, նո՛ր կերթաս կռիվ։

Մհեր ասաց.— Մարե՛, համբերելն աղեկ բան է, բայց ես խոսք տվի փահլևան Քամուն, պիտի գնամ։

Հագավ իր հոր զգեստներն ու զենքերը, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց։

Գնաց հասավ Սպիտակ դևի յայլաները, մի բարձր սարի գլուխ։ Գարուն էր, սարը լեցուն ծաղկունքով, ավելուկով ու պես-պես անուշ խոտերով։ Էդ օրերուն Սպիտակ դևը եկել էր յայլան։

Մհերը ծարավել էր, ընկել սար ու ձոր, որ աղբուր գտնի։ Երկու դև-աժդահակ մի աղբրի վրա գոմշու տիկը ջրով լցրել, կանգնել էին էնտեղ։ Մհերը բարև տվեց.

— Կթողնե՞ք աղբրեն պուտ մի ջուր խմեմ։

— Չէ,— ասին,— էս աղբուրը Սպիտակ դևի աղբուրն է, հրաման չկա, որ ուրիշ մարդ էս աղբրեն խմի։

Մհեր ասաց.— Ախպերտի՛ք, պուտ մի ջո՛ւր տվեք խմեմ։ Ճամփորդ մարդ եմ։ 

— Չէ,— ասին,— Սպիտակ դևը մեզ էստեղ պահապան է դրել ու երդվեցրել, որ եթե օտար մարդ էս աղբրեն խմի, տիրոջն իմաց տանք։

Մհերի համբերությունը հատավ, զարկեց պահապաններեն մեկին, սպանեց, մեկն էլ վիրավոր փախավ։

Մհեր կուշտ մի ջուր խմեց ու դևի արյան հետքերով գնաց հասավ ահագին մի քարայրի մոտ։ Քարայրեն բոց էր թափում դուրս։ Քարայրի դռանը ծառին կապած Հուր-Հրեղեն մի աղջիկ դևի արունն էր լվանում։ Մհեր հասավ դևին բռնեց, կապեց ու դրեց քարի տակ, ապա էդ Հուր-Հրեղեն աղջկա կապերն արձակեց։

Աղջիկը տեսավ, իր ազատարարը մի խորոտ փահլևան տղա է, սիրտը վրան ճխաց.

— Ախ, կտրի՛ճ տղա, հավքն իր թևով, օձն իր պորտով չեն իշխենում էս քարայրին մոտենալ։ Ի՞նչպես դու սիրտ արիր, եկար էստեղ։

Մհեր հարցրեց.— Իսկ ի՞նչդ ինչու ես եկել էս կարկառ սարերը։

Աղջիկը խորունկ ախ քաշեց.

— Ախ, մի՛ հարցնի։ Էս յոթ տարի է, տանջվում եմ Սպիտակ դևի ձեռքին։ Էս անիրավը եկավ մեր Մանազկերտու վրա կռիվ։ Ես իմ պարտեզում զբոսնում էի. մեկեն վրա հասավ, ինձ առնելն ու փախնելը մեկ արավ։ Բերեց էստեղ, ուզեց ինձ կին առնի։ Բայց աստված ինձ ուժ տվեց, ես դևին անձնատուր չեղա։ Ես կույս եմ մինչև էսօր։ Երազ եմ տեսել։ Երազի մեջ ինձ ասին, շատը գնաց, քիչը մնաց. Մհեր անունով մի կտրիճ կգա, Սպիտակ դևին կսպանի, ինձ գերությենեն կազատի։

— Ո՞ւր է Սպիտակ դևը,— հարցրեց Մհեր։

— Քնել է։ Ինն օր է անցել։ Էսօր կզարթնի։

Մհեր գնաց անտառ, մի վիթխարի կաղնու տակ սպասեց, մինչև Սպիտակ դևն արթնանա։ Մհերի բնությքում չկար զարկել քնած մարդուն։

Սպիտակ դևը քնից ելավ, կուշտ կերավ, խմեց, քեֆը քոքեց ու սարսափելի ծարավեց։ Աչքը ջրի ճամփին էր։ Ջուր բերող դևերը չէին գալիս։ Սպիտակ դևը մտածեց. «Կա-չկա, դրանք հանդիպել են մի զորավոր մարդու»։

Փնչալով տեղից ելավ, հեծավ Քամու ձին, քշեց աղբրի կողմը։ Մեկ էլ տեսավ ահագին կաղնու տակ նստած է սարի պես մի մարդ, կողքին էլ արածում է հրեղեն ձին։ Սպիտակ դևը բռռաց.

— Էյ, հողածի՛ն, հավքն իր թևով, օձն իր պորտով չեն իշխենում իմ սարերին մոտենալ։ Դու ի՞նչ սրտով ես իմ սահմանն անցել։

Մհեր պատասխանեց.— Կանչել էիր Մհերին կռիվ։ Մհեր ես եմ։ Դե պատրա՛ստ կաց, կռվենք։

Սպիտակ դևն էդ անունը որ լսեց, ահից ոտն ու ձեռը թուլացան, ասաց.

— Վա՜յ դու քարո՛վ եկար, Մհե՛ր, հազա՛ր բարով։ Վե՛ր կաց գնանք իմ վրան, կերուխում անենք մինչև լուս. աստված կամ ինձ կտա, կամ քեզ։

— Չէ,— ասաց Մհեր,— մեր պապերը մեզ էնպես են խրատել, որ թշնամու դեմ ելնելու պես պիտի կռվենք։

Առյուծաձև Մհերն ու Սպիտակ դևը ձիերը հեծան ու քշեցին իրար վրա։ Երկու օր ու երկու գիշեր ձիերով կռվեցին։ Գետինը տզզում էր էնոնց ոտքի տակ։ Սար ու ձոր դմբդմբում էին։ Ձեռիզները ձիերից իջան ու բռնեցին գոտեկռիվ։ Մհեր երբ ձեռը

թալում էր դևին, ձեռք խրվում էր էնոր մարմնի մեջ. մարմինն ասես խմորից էր։ Մի օր էլ գոտեկռիվ արին։ Օրվա վերջում Մհեր Սպիտակ դևին սպանեց, Արմաղանին ձիու գավակին առավ ու սլացավ Սասուն։

Մհեր տուն հասավ էն ատեն, երբ Քեռի Թորոս ու Ձենով Օհան Մանազկերտից նոր էին դարձել։

Շատ ուրախացան։ Համբավը տարան Թևաթորոս թագավորին, թե Մհեր քո աղջկան Սպիտակ դևի գերությենեն ազատեց։

Թևաթորոսն ու իր իշխանները ձիերը հեծան, քառատրոփ եկան Սասուն, էն լուս-լուսեղեն Արմաղանին պսակեցին Առյուծ-Մհերի հետ, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք արին, եղնիկի միս կերան, նռան գինի խմեցին, հարբեցին, ուրախացան։

## 4. ԿՌԻՎ ՄԸՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

Մըսրա Մելիք Մհերի համբավը լսել էր ու կատաղել։

Չէ՞ որ Սասուն հարկատու էր Մելիքին։

Մհեր անտեղյակ էր էդ բանին ու Մըսրա Մելիքին հարկ չէր ուղարկում։

Մըսրա Մելիք հրաման տվեց.

— Գնացեք Սասո՛ւն, ասե՛ք Մհերին, թո՛ղ պատրաստ կենա. ես ու Մհեր պիտի կռվենք։

Մըսրա Մելիքի մարդիկ եկան Սասուն, ասացին.

— Մհեր, Մըսրա թագավորը քեզանից կռիվ է ուզում։

Մհեր պատասխանեց.

— Կռի՞վ է ուզում։ Թո՛ղ գա, տեսնենք, մենք էնոր ինչ ենք պարտք։

Ձենով Օհան լալեն ասաց.

— Մհե՛ր, հեծի՛ր, գնա Մըսըր, Մըսրա Մելիքի հետ խաթրո՛վ խոսիր, խնդրի՛ր, աղաչա՛նք արա, որ մեր հարկը մի քիչ պակասեցնի։ Մեր հարկը շատ է, էդքանը տալու կարողություն չունենք։

Մհեր ասաց.— Հայ-հա՜յ, աստված քո տո՛ւնը շավրի, Օհա՛ն, ես չգիտեի, դուք էլ չէիք ասում, թե մենք Մըսրա Մելիքին հարկ պիտի տանք։

Մհեր հագավ, կապեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց մինչև Մըսրա սահման։

Մըսրա Մելիք նստած էր դաշտում, իր վրանի առաջ։ Հեռվից տեսավ, որ գալիս է մի ձիավոր, մի ահագին ամրոց ամրոցի վրա նստած, գալիս է։

Եկավ, մոտեցավ, Մըսրա Մելիքին բարև տվեց։

Մըսրա Մելիք ահու բարեն առնել չկարեցավ։ Մտքում ասաց. «Աշխարհում էսպես մա՞րդ էլ կա»։ Մըսրա Մելիք վախը սրտում պահած՝ հրամայեց.

— Բռնեցե՛ք ձիու գլուխը։

Ծառաները ձիու գլուխը բռնեցին, Մհեր իջավ ու մեկ էլ բարև տվեց։ Մըսրա Մելիք էս հեղ բարեն առավ.

— Կտրի՛ճ, ո՞րտեղացի ես։

— Սասունցի եմ, Սանասարի տղան։

— Ա՜, — ասաց Մըսրա Մելիք, — դո՞ւք եք, որ նստում եք իմ հողի մեջ։ Մհեր դո՞ւ ես։

Մհեր քարկացավ ու մտքում ասաց. «Էս անաստուծը չի ասում «Սասնա հող», ասում է «իմ հող»։ Մհեր քարկացավ, բայց հանգիստ պատասխանեց.

— Մհեր ես եմ։

Մըսրա Մելիք ասաց.— Ինչո՞ւ իմ հարկը չեք տալիս։ Նստել եք իմ հողի մեջ, իմ հարկը չեք տալիս։

Մհեր ասաց.— Մսրա՛ Մելիք, մենք չենք նստել քո հողի մեջ, մենք նստել ենք մեր հողի մեջ, մեր Սասնա տանը։

Մսրա Մելիք ասաց.— Հայ-հա՜յ, Սասուն որ կա, իմ հողն է։

Մհեր ասաց.— Հայ-հա՜յ, Սասուն քո հողը չէ, իմ հողն է Սասուն։

Մըսրա Մելիք ասաց.— Էկար, որ ինձ հետ կռվե՞ս։

— Դու կանչեցիր, եկա։

— Է, զոռքո՞վ կռվենք, թե ես ու դու զարկենք իրար։

— Զոռքն ի՞նչ մեղք ունի, — պատասխանեց Մհեր։ — Կռվենք ես ու դու։

— Լուսուն իրար զարկե՞նք։

— Զարկենք, — ասաց Մհեր, — որուն տա տերը, խնդա իր մերը։

Լուսուն Մհեր ու Մըսրա Մելիք ելան, առան իրար։ Առաջ գուրզերով զարկեցին։ Ամեն մեկի մկունդը կշռում էր երեք հարյուր փութ։ Արևելքում էնոնց կռվի ձենը լսող մարդիկ ասում էին. «Էս ի՞նչ ամպեր են գրգռում»։ Արևմուտքի լսողներն ասում էին. «Երկրաշարժ է, սարեր են փուլ գալիս»։

Մհեր ու Մըսրա Մելիք տեսան, որ գուրզերով իրար հաղթել չեն կարենում, գուրզերը թալեցին գետին, կպան գոտեկռիվ։ Հողը հերկվում էր էնոնց ոտներու տակ, ասես յոթ գութան մեկտեղ դաշտը վարում էին։

Էն ինչ Մհերն էր, իր ուժին էր ապավինել, էն ինչ Մըսրա Մելիքն էր՝ իր նենգության։ Տեսավ, Մհերը չի հաղթվում, իր ուժն էլ թուլանում է, ասաց.

— Հայ-հա՜յ, Սասնա՛ Մհեր, իմ խելքով, — ասաց, — աշխարհի մեջ ինձմեն ուժեղ փահլևան չկար։ Բայց ես ու դու իրար հաղթել չկարեցանք։ Արի՝ պայման կապենք։ Ես քո Սասնա հարկը բաշխեմ քեզ։ Էլ Սասուն ինձ հարկատու չէ։ Սասուն քեզ, Մըսրը՝ ինձ։ Գնա՛, նստիր Սասու՛ն, կե՛ր, խմե՛ր, վայելե՛ր։ Հոժա՞ր ես։

— Հոժար եմ, — ասաց Մհեր։

Մըսրա Մելիք ասաց.— Մի պայման էլ կապենք. ես կռվեմ, դու ինձ օգնության գաս, դու կռվես, ես քեզ օգնության գամ։ Ես մեռնեմ, իմ թագուհին ու տղերը հանձնեմ քեզ, դու մեռնես, քո թագուհին ու տղերը հանձնես ինձ։ Որ մարդիկ չասեն, թե մնացին որբ։ Հոժա՞ր ես։

— Հոժար եմ, — ասաց Մհեր։

Էս պայմանները կապեցին, ամեն մեկն իր մատը կտրեց, արյուններն իրար խառնեցին, աղբերացան։ Մըսրա Մելիք Մհերին կանչեց իր պալատ, յոթ օր, յոթ գիշեր նրան թագավորական խնջույք տվեց։

Մհեր վերադարձավ Սասուն։

Զենով Օհան կանգնած էր բերդի դռան մոտ։ Իրար բարև տվին, իրար երես պագեցին, Զենով Օհան հարցրեց.

— Մհե՛ր, մեր հարկը պակասեցրի՞ր։

— Ինչ ես ասում, Օհա՛ն,— ծիծաղեց Մհերը։— Ինչ հարկ, ի՛նչ բան։ Մըսրա Մելիք լավ մարդ էր, մեր հարկը բոլոր ինձ բաշխեց, ասաց. «Մըսրա հողերը ինձ, Սասնա հողերը՝ քեզ»։ Մենք Մըսրա Մելիքի հետ աղբերության ուխտ արինք։

Օհան շատ ուրախացավ ու նորեն Մհերի երեսը պագեց։

Մհեր դարձավ Սասնա տան թագավոր։ Շատ բարեկարգեց ու զորացրեց երկիրը։ Քառասուն տարի Սասուն էնպես պահեց, որ ոչ մի դև ու թշնամի չէր իշխենում ծուռ նայել մեր աշխարհին։ Հավքը չէր իշխենա անցնել Սասնա երկնքով, օձը չէր իշխենա սողալ Սասնա հողերով։

Ժամանակ անցավ. մեռավ Մըսրա Մելիք։

Էնիկ ժառանգ չուներ։

Մըսրա Մելիքի թագուհին, Իսմիլ խաթուն, ջահել ու խորոտ մի կնիկ էր, ասաց. «Ինձ հարկավոր է զորեղ մի մարդ, որ իմ երկրին տիրություն անի, մեր էս հաստակող իշխաններուն ճզմի, խաղացնի։ Ջելնե՞նք մի թուղթ ուղարկենք Սասնա Մհերին, որ ինձ հյուր գա, ինձ հետ փարդան մտնի, ես ունենամ Սասնա ցեղեն մի կտրիճ լաճ։ Մըսրա Մելիքն էր ասում. «Իսմիլ, եթե Սասնա Մհերի և իր ձիու սերմը չվերցնենք, Մհերի ցեղը մեր ցեղին մեծ վնաս կտա, մեր ցեղը բնաջինջ կանի»։

Իսմիլ խաթուն նստավ գրեց մի բարովաթուղթ, հանեց իր գոտիկ-լաչակը, կանչեց երկու փահլևան, ասաց.

— Տարեք Սասո՛ւն, տվե՛ք Մհերի ձեռքը, ասեք. Իսմիլ խաթունը քեզ կանչում է իր մոտ:

Մըսրա փահլևանները եկան Սասուն, գոտիկ-լաչակն ու բարովագիրը տվին Մհերի ձեռքը, ասին.

— Իսմիլ խաթունը քեզ կանչում է իր մոտ:

Մհեր Իսմիլ խաթունի գոտիկ-լաչակն առավ ու բարովագիրը կարդաց։ Իսմիլ խաթունը գրել էր.

«Մհե՛ր, գոտիկ-լաչակս ուղարկում եմ քեզ։ Արի՛ ինձ ա՛ռ. Սասուն քո ձեռքն է, Մըսրա երկի՛րն էլ առ քո ձեռը։ Դու Մըսրա Մելիքի հետ ուխտ ես արել, որ նրա կնիկ-տղերը պահես։ Եթե չգաս, կնիկ ես ինձմեն առավել, լաչակս ա՛ռ, կապիր գլխի՛դ»։

Մհեր էս բարովագիրը կարդաց, պատասխանեց.

— Հե՛յ, կտրիճ փահլևաններ, նստե՛ք, հա՛ց կերեք, ապա բարեւ տարեք Մըսրը՝ Իսմիլ խաթունի՛ն, ասեք, ուխտս ուխտ է մնացել. քառասուն օր հետո կգամ իր մոտ, կտեսնենք ուզածն ինչ է։

Մհեր Մըսրա փահլևաններուն ճանապարհ դրեց, ապա գնաց Արմաղանի սենյակը, ասաց.

— Կնիկ, Իսմիլ խաթունը թուղթ է ճամփել, ինձ կանչել է Մըսըր։

Արմաղան ասաց.

— Մհե՛ր, մի՛ գնա։ Իսմիլ խաթուն խաբում է քեզ։ Նա քո խորոտությանը չի կարոտ, քո ուժն ու քաջությունն է ուզում։ Գիտե քո զորությունը, կանչել է քեզ, որ քեզմեն լաճ ունենա, Մըսրա ճրագը վառ պահե, Սասնա ճրագը մարի։ Մի՛ գնա, մարդ, Մըսրա խաթունի համար ինձ մի՛ թողնի։

Մհեր ասաց.

— Կնի՛կ, ես Մըսրա Մելիքի հետ ուխտ եմ արել. ճար չկա, պիտի գնամ։

Արմաղան ասաց.— Մի՛ գնա։

Մհեր ասաց.— Պիտի գնամ։

Ասաց.— Մի՛ գնա։

Ասաց.— Պիտի գնամ։

— Մհե՛ր, իմ զոռը քեզ վրա չի բանի։ Կանչի՛ր Սասնա տան իշխաններուն, թո՛ղ նրանք ասեն, գնա՞ս, թե՛ չգնաս։

Մհեր կանչեց իշխաններուն, կանչեց եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, կանչեց ազգ ու բարեկամ, կանգնեց, ասաց.

— Մըսրա թագուհին թուղթ է ճամփել իմ ետևեն, կանչում է իր մոտ, ասում է. «Սասուն քո ձեռն է, Մըսրա երկի՛րն էլ առ քո ձեռքը»։ Ես Մըսրա Մելիքի հետ ուխտ եմ արել, որ նրա կնիկ-տղեքը պահեմ։ Ճար չկա, պիտի գնամ։ Դուք ի՞նչ կասեք։

Ձենով Օհան ասաց.

— Մհե՛ր, ինչո՞ւ ես գնում։ Մըսրա խաթունը խորամանկ է, մեր Սասնա թշնամին։ Խաբում է քեզ։ Մի՛ գնա։ Դու ժառանգ չունես, կաց քո տանը, միգուցե աստված քեզ մի լաճ պարգևի, քեզ փոխարինող Սասնա կռվան։

Իշխաններն ու հոգևոր հայրերը ասին.

— Թագավո՛րն ազատ կենա, թե որ դու գնում ես, մենք իշխանություն չունենք ասելու՝ մի՛ գնա։ Դու զորեղ, իմաստուն մարդ ես, գնում ես, գնա՛։ Մեր փափագըն է, չէ թե միայն Մըսրը, ուրիշ հողեր էլ առնես մեր ձեռքի տակ։ Ուրիշ թագավորներ կռվով են երկիր առնում, Մըսրը սիրով են քեզ տալիս։ Ինչո՞ւ չերթաս ու չառնես։ Գնա՛։

Արմաղան ասաց.

— Մհե՛ր, մի՛ գնա, Իսմիլ խաթուն կռապաշտ է, դու՝ խաչապաշտ։ Մեղք մի՛ գործիր, մի՛ գնա։

Մհեր բարկացավ, ասաց.

— Գլուխը մեռնի էն մարդու, որ իրեն ուղարկված կնկա գոտիկը չի վերցնի։ Ես կարիճ փահլևանի խոսք եմ տվել, պիտի գնամ։

Արմաղան ասաց.

— Մհե՛ր, ես քո վրա զոռ չունեմ։ Կնիկ եմ, բերանս կապած։ Գնա՛, Քեզ չեմ անիծի։ Բայց իմացա՛ծ եղիր, ես ուխտ եմ անում, եթե գնաս, իմ հերն ու իմ ախպերն ես. քառսուն տարի դու իմ բարձին չես մոտենա։

Երեսունինն օր լմնցավ, մնաց մեկ օր։

Մհեր ելավ, պատրաստություն տեսավ Մըսըր գնալու։

Արմաղան ի՞նչ արեց։ Բերավ սև ճոթ քաշեց իր մարդու անարին, իր սևը ներս արավ, սիպտակը դուրս արավ, Մհերին գնաս բարով ասաց։

Մհեր հեծավ Քուռկիկ Ջալալին։

Ձենով Օհան վազեց, կախ ընկավ ձիու վզեն, լաց եղավ, աղաչեց.

— Մհե՛ր, մի՛ գնա, Մհե՛ր, մի գնա՛, Սասնա տան ճրագը մի՛ մարիր։ Էն անառակ Մըսրա խաթունը խաբել է քեզ։

Մհերի ճարը կտրավ, գուրզը թափահարեց Օհանի վրա։ Գուրզի քամուց Օհանն

ընկավ, ուշաթափվեց։ Մհեր չիմացավ ինչ աներ. ձիուց իջավ, Օհանի սիրտը մաժեց, ասաց.

— Օհա՛ն, իմ մե՜ծ աղբեր, վե՛ր կաց, մի՛ սրտմտիր։ Ես իմ աստծու առաջ ուխտ եմ արել. եթե չգնամ, ուխտազանց կլինեմ, կմեռնեմ։

Օհանը ելավ կանգնեց, ասաց.

— Ախ, Մհե՛ր, Մհե՛ր, գնա՛։ Ուր էլ գնաս, ճամփաներդ քո առջև կանաչեն, թշնամիներդ հեռու մնան, բարեկամներդ՝ մոտիկ։

## 5. ԻՍՄԻԼ ԽԱԹՈՒՆ

Մհեր հեծավ, առավ իր հետ Բաթմանա Բուղան ու Զարքահար Քամին, քշեց Մըսրա քաղաք։

Ճանապարհին Արմաղանի ու Ջենով Օհանի խոսքերը միտն ընկան, սիրտը երկտակվեց։

Լուսուն ճամփա ելավ, իրիկուն տեղ հասավ։

Մըսրա խաթունը ճանապարհին մինչև մեկ ժամվա երթ խալիչա էր փռել, երկու կողմեն մոմակալներ դրել, ինքը աչքերը դեղել էր, հյուսքերը ոլորել, նստել էր պատուհան, Մհերին էր սպասում։ Ուզում էր էդ պերճանքներով Մհերին կապի։

Տեսավ, հեռվեն մի ձիավոր է գալիս, ետևեն՝ ուրիշ երկու ձիավոր։ Ասես ամպոց էր նստած ամպոցի վրա։ Ձին փոթորկվելով գալիս էր։ Իսմիլ խաթուն ասաց. «Կա-չկա, Սասնա Մհերն է գալիս»։

Մհեր եկավ, կանգնեց պատուհանի տակ, ասաց.

— Իսմի՛լ խաթուն, ուզածդ ի՞նչ է։

Իսմիլ խաթուն ասաց.

— Այ Մհե՛ր, հյուրը էդպե՞ս կխոսի։ Ձիուցդ իջի՛ր, արի վե՛ր, նոր քեզ ամեն բան կպատմեմ։

— Չէ,— ասաց Մհեր,— հիմա պիտի պատմես։ Ուխտ եմ արել, իմ ոտը չեմ հանի ասպանդակից, մինչև չիմանամ, թե քո ուզածն ինչ է։

Իսմիլ խաթուն ասաց.

— Ղորդ են ասել, թե սասնեցիք հաստակող են։ Տնաշե՛ն, ձեր երկիրը հո չի՞ քանդվի, հո Սասնա տան կրակը չի՞ մարել, դու էնտեղեն հո չեկա՞ր, որ կրակ տանես։ Իջի՛ր քո ձիուց, արի վերև՛, հանգստացի՛ր, հա՛ց կեր, նոր կդառնաս քո Սասուն։

— Չէ, ջանը՛մ,— ասաց Մհեր,— էդ խոսքերդ ամեն տո՛ւր քամուն։ Ասա տեսնենք՝ ուզածդ ինչ է։

Իսմիլ խաթուն տեսավ, Մհեր ուզում է ետ գնա, իր ծառաներուն բոռաց.

— Ձեր տո՛ւնը քանդվի, շո՛ւտ արեք, մենք չունե՞նք յոթ տարվա գինի, Մհեր ետ կերթա, շո՛ւտ արեք, բերե՛ք։

Ծառաները մի մեծ կժով յոթ տարվա գինի բերին, Մհեր ձիու վրա խմեց, գլուխը պտույտ եկավ։ Էն առեն Իսմիլ խաթուն հրաման տվեց.

— Բռնե՛ք Մհերի ձին։

Ծառաները ձիու սանձը բռնեցին, Մհեր ձիուց իջավ։

Իսմիլ խաթունն էլ պատուհանեն իջավ, Մհերին տարավ իր պալատը, բարի գալուստ ասաց։

Մհեր հարբած էր, հարցրեց.

— Ինչո՞ւ ես ինձ կանչել։

Պատասխանեց.— Մհե՛ր, քեզ կանչել եմ, որ իմ երկիրը խաղաղեցնես։ Յոթ իշխան իմ դեմ ապստամբ են։ Մըսրա տերությունը գնում է ձեռից։ Էդոր համար եմ քեզ կանչել։

Մհեր ասաց.— Լա՛վ, թո՛ղ հաց բերեն ուտեմ։ Կլուսանա, էդ իշխաններուն կանչեք, ես գիտեմ, իրենք։

Իսմիլ խաթուն ուրախացավ, ժպտաց.

— Մհե՛ր, ես քեզ իմ գոտիկ-լաչակն եմ ուղարկել։ Կանչել եմ, որ գաս «ինձ մոտ»։ Էդոր համար եմ քեզ կանչել։

— Էդ մեկը չեղած բան է,— ասաց Մհեր։— Ինչպես կարելի է, որ ես գամ «քեզ մոտ»։ Ինքդ անօրեն ես, ես՝ քրիստոնյա։

Իսմիլ խաթուն ժպտաց.

— Մհե՛ր, ես քեզ վաղուց եմ սիրել, էն օրվանեն, երբ դու Մըսրա Մելիքի հետ կռվեցիր։ Դու պիտի գաս «ինձ մոտ». խաթրով լինի, պիտի գաս, ուժով լինի, պիտի գաս։ Ես քեզ եմ սպասում էսքան տարի։ Դու պիտի լինես ինձ մարդ, իմ թագավորությունը ձեռդ առնես, կանգնես իմ թշնամիներու դեմ։

Իսմիլ խաթուն քաղցր խոսքով, փաղաքշանքով ու յոթ տարվա գինով արբեցրեց Մհերին, տարավ «իր մոտ»։ Իսմիլ խաթուն հասավ իր նպատակին։ Հետո Մհերին թողեց քնած, ելավ իր մշակներուն կանչեց, ասաց.

— Քուռկիկ Ջալալին քաշե՛ք մեր մատակներու վրա։ Շո՛ւտ արեք։

Մըսրա խաթունը Մհերեն մնաց երկուսով։

Մըսրա մատակները Քուռկիկ Ջալալուց քուռակ բռնեցին։

Լուսուն Մըսրա յոթ ապստամբ իշխանները եկան Մհերի մոտ, կանգնեցին դիվանի առաջ։

Մհեր խոժոռ նայեց, ասաց.

— Է, եկե՞լ եք, իշխաննե՛ր։

Իշխանները խոնարհ գլուխ տվին։

Մհեր ասաց.

— Իշխաննե՛ր, գիտե՞ք ես ով եմ, ինչ մարդ եմ։

Իշխանները պատասխանեցին.

— Դու Սասնա Առյուծ-Մհերն ես։ Վերևում աստված գիտենք, ներքևում՝ քեզ։

Մհեր ասաց.— Մկա ճանաչո՞ւմ եք Իսմիլ խաթունին։

Ասացին.— Քո հրամանն է, կճանաչենք։

Մըսրա յոթ ապստամբ իշխանները գլուխ իջեցրին Մհերի և Իսմիլ խաթունի առաջ, ետ-ետ գնացին ու դուրս եկան դիվանից։

Առավան Մհեր պետք է դառնար Սասուն, բայց Իսմիլ թագուհին չթողեց, որ նրա գինովությունն անցներ։

Ինն ամիս, ինն օր, ինը ժամ որ լրացավ, Իսմիլ խաթուն բերեց մի տղա։ Հոր հիշատակին անունը դրին Մըսրա Մելիք։

Իսմիլ խաթունը յոթ տարի Մհերին պահեց գինով։ Սիրուց ու գինուց արբեցած Մհեր մոռացել էր Արմաղանին, մոռացել էր Սասուն, մոռացել էր ազգ ու բարեկամ։

*Մի օր Մհեր դրսեն գալիս էր տուն, լսեց Իսմիլ խաթունի ձենն ու դռների մեջ կանգ առավ։ Մըսրա խաթունն իր տղային ծնկներու վրա թոցնում էր ու երգում.*

*Մեռնե՛մ քեզի, Մըսրա Մելի՛ք,*
*Մըսրա հրաշք, Մըսրա հերի՛կ,*
*Մըսրա աշխրը վառ պահե,*
*Հայոց աշխրը մար պահե։*

*Մհեր էդ խոսքերը լսելով, դառնացավ, սրտի մեջ ասաց. «Հայ-հա՜յ, եկա էս երկիրը, Մըսրա ճրագը վառեցի, Սասնա ճրագը հանգցրի»։ Մհեր մոտավ Իսմիլ խաթունի սենյակը, ասաց.*

*— Իսմիլ, էդ ի՞նչ խրատ է, որ տալիս ես էդոր։ Ջվեն դեռ դուրս չի եկել և դու իրեն չարության դա՞ս ես տալիս։ Հորդոր ես երգում, որ մեծանա, հայու ճրագը հանգցընի՞։ Ի՞նչ ես ծիծաղում։*

*Իսմիլ խաթունն ասաց.*

*— Լավ եմ անում, ծիծաղում եմ։ Ուրախ եմ տղուս համար։ Կմեծանա, ամբողջ աշխարհը կզավթի։*

*Մհեր ասաց.*

*— Է՜, դու ինձմեն մի տղա ունեցար, որ Սասնա ճրագը հանգցնե՞ս, որ իմ ազգը փչացնես, քոնը զորացնե՞ս։ Էդպես է, հա՞։ Թորա թե ես հիմի քեզ մոտ կենամ, թորա թե ես մնամ Մըսրա երկրի մեջ։ Կդառնամ, կերթամ Սասուն։*

*Մըսրա Մելիքի կնիկն ասաց.*

*— Մհեր, ես ուզում էի, որ ինձ քեզմեն մի տղա ծնվեր։ Ես ուզում էի, որ Մըսըր ունենար մի զորեղ ժառանգ։ Որ Մըսրա ճրագը վառ մնար։ Էդոր համար ես քեզ կանչեցի։ Էդոր համար ես յոթ տարի գինով տիրում էի քեզ։ Ես իմ նպատակին հասա։ Մկա կերթաս, դու գիտես, կմնաս, դու գիտես։*

*Էս խոսքերու վրա Մհերի գինովությունն անցավ, Մհեր իր սրտի մեջ ասաց. «Ախ, եկել եմ յոթ տարի մնացել էս օտար երկրի մեջ։ Ինչ պատասխան տամ Արմաղանին, Օհանին։ Տեսա՞ր, ինչպես էնոնց խոսքը եղավ։ Կնիկս ասաց՝ մի՛ գնա, ես չլսեցի»... Մհեր էստեղ ինքն իրմեն խռովեց, ասաց. «Իմ ոտը կոտրվե՜ր, ես Մըսըր չգայի։ Ես յոթ տարի օտարի սրտը կանաչ պահեցի, իմ սրտը չորացավ։ Վայ, դու էս ի՞նչ արիր, Մհեր. հայի ճրագը հանգցրիր, Մըսրա ճրագը վառեցիր»։*

*Մհեր սուսուփուս դուրս եկավ Մըսրա քաղքեն ու գլխիկոր դարձավ դեպի Սասուն։*

## 6. ԾՆՎՈՒՄ Է ԴԱՎԻԹ

*Ականջկլա տարան Արմաղանին.*

*— Աչքդ լո՛ւս, թագուհի՛, Մհեր եկավ։*

*Արմաղան հրամայեց, որ դարպասները հողեն, դռները փակեն, ինքն էլ սևեր հագավ, նստեց։*

*Մհեր եկավ, տեսավ իր տան դռները փակ, դարպասները հողած, Արմաղան չէր երևում։ Մհեր շատ վշտացավ, գուրզով դուռը թակեց, ասաց.*



— Էս ի՞նչ է, իմ տան դռները փակված են իմ դեմ, չեն թողնում, որ ես մտնեմ իմ տուն։ Պատճառն ինչ է։

Արմաղանը պատուհանից գլուխը դուրս հանեց, ասաց.

— Էն է պատճառը, որ դու իմ մարդը չես, Մհե՛ր։ Քանի որ դու ինձ անպատիվ թողիր, գնացիր Մսրա խաթունի մոտ, էլ ինձ մոտ մի՛ գա։

Մհեր զղջումի աղերսանքով կանչեց.— Արմաղա՛ն, դուռը բա՛ց։

Արմաղան ասաց.— Ոչ, Մհե՛ր։ Ես երդում եմ կերել։ Քառասուն տարի դու չես գա ինձ մոտ։ Դու իմ հերն ես, իմ աղբերն ես։ Դու գնացիր, Մսրա օջախը շենացրիր, Սասնա օջախը քանդեցիր։ Դու քո մեղքը պիտի քաշես. քառասուն տարի քառասունք պիտի պահես, նոր քեզ հրաման կլինի, որ գաս ինձ մոտ։

Մհեր մնացել էր շվար։

— Արմաղա՛ն, քառասուն տարին որ անցավ, ուշ կլինի։ Իսմիլ խաթունի տղան կմեծանա, կավերի մեր Սասունը։

Մհեր ձիուց իջավ. նստեց իր դարպասների առաջ, ինչքան համոզեց, բան չեղավ, Արմաղան մնաց անդրդվելի։

Համբավը տարան Ձենով Օհանին.

— Աչքդ լո՛ւս, Մհեր եկել է Մըսըրեն։

Ձենով Օհան ափալ-թափալ եկավ, ասաց.

— Արմաղա՛ն, Սասնա տան աղջի՛կ հարսիկ, քոռ Մհեր եկել է Մըսըրեն։ Վե՛ր կաց. հանի՛ր էդ սև լաթերը, դուռը բա՛ց արա, նե՛րս առ գլխավորիդ։

Արմաղան ասաց.

— Օհա՛ն, իմ պատվակա՛ն աղբեր։ Տեսնում եմ, եկել է Մհեր էն անառակեն խաբված։ Ոսկին տարել է, ժանգն է ետ բերել... Բայց ես ուխտ ունեմ, ուխտս խախտել չեմ կարող. աստված կպատժի։

Ձենով Օհան ասաց.

— Հա՛րս, մի՛ երկմտիր։ Ես կհավաքեմ, կբերեմ մի քանի վարդապետ, քահանա, մի քանի իշխան մարդիկ։ Թո՛ղ քեզ արձակում տան քո երդումեն։

Մի քանի վարդապետ և իշխան մարդիկ եկան, հավաքվեցին Արմաղանի մոտ, ասացին.

— Օրհնվա՛ծ, քո երդումը դու զա՛նց արա, վնաս չունի։ Հողածին էր, մարդ էր ու խաբվեց։ Հաշվե՛նք, թե Մհեր գնացել յար է բռնել, փոշմանել է ու դարձել քեզ մոտ։

— Քանի՞ տարով ես երդում կերել։

— Քառասուն տարով,— պատասխանեց Արմաղան։

Մի հալվոր վարդապետ ասաց.

— Այ տնաշեն, օրենքն է ի ձեռն վարդապետաց։ Մենք երդումից արձակում կտանք. թո՛ղ տիրոջ կամքով

Քառասուն տարին լինի քառասուն ամի՛ս,
Քառասուն ամիս լինի քառասուն շաբա՛թ,
Քառասուն շաբաթ՝ քառասուն օ՛ր,
Քառասուն օրն էլ՝ քառասուն ժա՛մ։

Մեջները մի ծուռ տերտեր էլ կար, ասաց.

— Քառասուն ժամն էլ կանենք՝ մկա։

Հալվոր վարդապետը պատասխանից ասաց.

— Թո՛ղ աստված երկուսիդ էլ թողություն տա։ Էսօրվանեն եղեք մարդ ու կի՛ն։ Սիրեցե՛ք իրար, աճեք ու բազմացե՛ք, կորիճ կավան սերունդով լցրե՛ք Սասնա տու-նը։ Ամե՛ն։

Մհեր ասաց.— Արմաղա՛ն, սուրբ հայրերը ճշմարիտ են ասում։ Կթողնե՞ս գամ քեզ մոտ։ Միգուցե աստված մեզ մի զավակ տա, Սասնա տան ճրագը չհանգչի.

Արմաղան ասաց.

— Ախ, ինչ անեմ,— տղամարդը որ կա, գլուխ է, կնիկը որ կա՝ ոտ։ Կնիկը չի կարենա տղամարդու կամքին հակառ կենալ։ Եկ իմ փարդա՛ն. աստված մեզ մի տղա կպարգևի, բայց երդմնակոտոր կլինենք, երկուսս էլ կմեռնենք, տղան կմնա անտեր, խորի վրա։

Մհեր ասաց.

— Թո՛ղ աստված մեզ տա մի սուրբ ժառանգ, որ հակառ կանգնի Մըսրա Մելիքին, թո՛ղ Սասնա տան ճրագը վառ մնա, մենք էլ հանգիստ կմեռնենք։ Աշխարհի օրենքն է. մի օր ծնվում ենք, մի օր մեռնում։ Բայց եթե մեր որդին կենդանի մնա մենք էլ կենդանի կհիշվենք։ Սասնա տան անունը չի կորչի։

Արմաղան ասաց.

— Երդմնակոտոր կլինենք, դու գիտես։

Մհեր ու Արմաղան իրար փարվեցին։

Քառասուն տարին եղավ քառասուն ամիս.
Քառասուն ամիս եղավ քառասուն շաբաթ,
Քառասուն շաբաթ՝ քառասուն օր,
Քառասուն օր՝ քառասուն ժամ։
Քառասուն ժամն էլ՝ մեկ։

Արմաղան Մհերեն մնաց երեխով։

Ուրախացավ Մհեր։ Արունը եփ եկավ։ Քուռկիկ Ջալալին հեծավ, ելավ Սասնա սար։ Շատ վարպետ ու մշակ հավաքեց, Արմաղանի պատվին մի խոշոր խորոտ ան-տառ գցեց էնտեղ, Արմաղանի համար պալատ կանգնեցրեց, անտառը լցրեց ամեն տեսակ անասուններով ու թռչուններով. շուրջը պարիսպ քաշեց, ասաց.

— Էստեղ էսօրվանեն պետք է կոչվի Ծովասար։

Մհեր Ծովասար դարձրեց իր համար թագավորական որսատեղ։

Ծովասարի գլխին շինեց մի հոյակապ վանք, անունը դրեց Մարութա բարձր Աստվածածին։ Վանքի համար կանչեց մարդակենցաղ վարդապետներ, աբեղաներ ու տերտերներ, վանքի մոտ ապարանքներ շինեց կույրերու, կաղերու, հաշմանդամ-ներու համար։ Շատ բարի գործեր կատարեց Մհեր թագավորը։

Երբ էս բոլոր գործերը պրծավ, Մհեր դարձավ իջավ Սասնա քաղաք։

Ինն ամիս, ինն օր ինը ժամ երբ լրացավ, Սասնա թագուհին չոքը զարկեց գե-տին ու բերեց մի արու զավակ։

Անունը դրին Դավիթ։

Ծնվել էր Դավիթ։ Նրա հերն ու մերը երդմնակոտոր էին, իրար ետևեն մեռան։

Դավիթ մնաց որբ։

Սասուն սուգ մտավ։

Դեղձուն-Ծամ սև շորեր հագավ, փակվեց յոթ դռան ետև, ասաց. — Էլ արևի երես չեմ գա, մինչև մեծանա մանուկ Դավիթ, Մհերի տեղը բռնի, Սասնա տան ճրա-գը պահի միշտ վառ։

Ճյուղ երրորդ

# ՍԱՍՆԱ ԴԱՎԻԹ



Ողորմի՛ ասենք, ողորմի՛ մեր մանուկ Դավթին,
Մեր ազգի անսասան բազուկ, մեր Սասնա Դավթին:
Ու դարձյալ ասենք ողորմի՛ Քեռի Թորոսին.
Ու դարձյալ ասենք ողորմի՛ Ձենով Օհանին:
Դառնանք ու չասենք ողորմի Մսրա Մելիքին.
Դառնանք ու չասենք ողորմի Ցռան Վերգոյին:
Ողորմի՛ ասենք, ողորմի՛ Սասնա Պառավին.
Ու դարձյալ ասենք ողորմի՛ Քառասուն Ճուղ Ծամին.
Դառնանք ու չասենք ողորմի Չմշկիկ Սուլթանին.
Ասենք... ասենք ողորմի Իսմիլ խաթունին:
Ողորմի՛, հազա՜ր ողորմի խորոտ Խանդութին,
Ու դարձյալ հազա՜ր ողորմի մեր հայոց Դավթին,
Հայոց քաջագործ հայրերուն,
Հայոց պապերուն:

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

«Խաչաղբյուր ծովեզրով գանք.
Դադրենք մեջ Դավթի ծնունդին»:
Միջարամց Մոկացի Հովան

## 1. ԴԱՎԹԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՄԸՍՐ

Դավիթ մնացել էր որբ։

Քեռի Թորոս ու Դավթի հորեղբայրները խորհուրդ արին։ Ձենով Օհան ասաց.

— Վերցրե՛, դու՛ կպահես մանուկ Դավթին, թե՛ ես պահեմ։

Պատասխանեց.— Ես որդիներ ունեմ, դո՛ւ պահիր։

Ձենով Օհան Դավթին որդեգրեց։ Բայց ո՞նց պահեր։ Սասնա քաղքի բոլոր ծծմերներուն հերթով տուն կանչեց, որ Դավթին կերակրեն։ Դավիթ ոչ մեկի ծիծն չմոտեցավ։ Օհան Սառյա խաթունին ասաց.

— Կնի՛կ, ի՞նչ անենք. էս տղեն անծիծ կմեռնի։

— Վե՛ր կաց.— ասաց կնիկը,— ուղարկիր Մը՛սըր՝ Իսմիլ խաթունի մոտ։ Յոթ տարի Մհերի կնիկն է եղել. Մհերի խաթրին Մհերի լաճուն ծիծ կտա։

Ձենով Օհան քաղքի ջոջերուն ժողովեց, խորհուրդ հարցրեց։ Սասնա ջոջերն ասացին.

— Հա՛, ջանը՛մ. Դավթի համար թե ծծմեր կա, Իսմիլ խաթունն է, չկա՛ Իսմիլ խաթունն է։ Դավթին ուղարկիր Մը՛սըր։

Մհեր երկու զորեղ փահլևաններ ուներ, անունները՝ մեկին Ջարդահար Քամի, մեկին՝ Թաթմանա Բուզա։ Ձենով Օհան կանչեց էդ փահլևաններուն, նրանց գիրկը տվեց մանուկ Դավթի բարուրը, հետն էլ մի թուղթ.

— Կտանեք Մըսըր, կհանձնեք Իսմիլ խանումին։

Քամին ու Բուզան ձիերը հեծան, Դավթի բարուրն առան, ընկան ճամփա։ Բարուրն իրենց գոգն էին առնում փոխեփոխ. քանզի Մհերի ծծկեր տղան ծանր էր, քան մի չափահաս մարդ։

Բարուրը թղթի հետ մեկտեղ հասցրին Մըսըր. հանձնեցին Իսմիլ խաթունի ձեռ։ Իսմիլ խաթունը թուղթն առավ կարդաց։ Ձենով Օհան գրել էր.

«Իսմիլ խաթուն, մեր աղբոր կնիկ, մեր պատվական հա՛րս. Մհեր որ դարձավ եկավ Սասուն, մի լաճ ունեցավ, անունը դրինք Դավիթ։ Մհեր ու իր կնիկը մեռան, տղան մնացել է որբ։ Չի մոտենում Սասնա ծծմերներուն։ Թե որ հարգում ես Մհերի հիշատակը, վերցրո՛ւ մեր մանուկ Դավթին, մինչև մի քիչ կմեծանա, ես առնեմ պահեմ։

Մըսրա խաթունը մտքում ասաց. «Մհեր ինձ լավություն է արել, ես էնոր որդուն պետք է պահեմ։ Էդ լավ է, որ չի մոռենում Սասնա ծծմերներուն։ Իմ ծիծը կուտի, կդառնա իմ տղան, Մելիքիս հետ աղբերություն կանի, մեկտեղ կզոռանան, կիշխեն Մըսրա, Սասնա և աշխարհի վրա։ Դեռ կաթ կա իմ ծծերու մեջ։ Մելիքին ծծես կկտրեմ, յոթ տարեկան է արդեն, Դավթին ծիծ կտամ, կմեծացնեմ, կդառնա իմ տղան։ Է, էնիկ ո՞ր իմ ծիծը կերավ, էլ կերթա՞ Սասուն»։

Մի առ ժամանակ Դավիթ Իսմիլ խաթունի ծիծը կերավ. հետո էլ չէր ուտում։ Իսմիլ խաթունը Դավթի գլուխը մոտեցնում էր էս ծծին, Դավիթը գլուխն էն կողմն էր տանում, մոտեցնում էր էն ծծին, էս կողմն էր բերում։ Իսմիլ խաթուն կանչեց Մըսրա Մելիքին, ասաց.

— Էս տղան երեք օր է, իմ ծծին չի մոտենում։ Սոված է մնացել. ի՞նչ անենք։

Մըսրա Մելիք ասաց.

— Մարե՛, էդ ազգը ծուռ է, համառակող։ Էս տղան մեր գլխին կդառնա ցավ ու կրակ։ Էնիկ հայ է, մենք՝ արաբ։ Դու քո ծիծը մի տա էդ գյավուրին։

— Որդի՛, — ասաց Իսմիլ խաթունը, — տղան անծիծ մնա. կմեռնի, մենք ամոթով կլինենք էնոր տիրոջ առաջ։ Մեջն ենք ընկել, պետք է մի բան անենք։

Վեզիրն ասաց.— Իսմիլ խաթո՛ւն, քո տունը չքանդվի, էնոնց երկիրը հարստություն չունի՞, Սասնա տանը չկա՞ մեղր ու կարագ, չկա՞ն ուրիշ անուշ ուտելիքներ։ Թո՛ղ Բաթմանա Բուղան ու Ջարբահար Քամին գնան Սասուն, մի բեռ մեղր բերեն, մի բեռ կարագ, Սասնա եղն ու մեղրը Սասնան տղան կուտի, կմեծանա։

Ջարբահար Քամին ու Բաթմանա Բուղան գնացին Սասուն։ Ձենով Օհան տվեց մի բեռ մեղր, մի բեռ կարագ. վերցրին բերին Մըսըր. դրին Իսմիլ խաթունի առաջ։

Իսմիլ խաթունը Դավթին պահեց Սասնա մեղր ու կարագով։ Ին որ ուրիշ տղեք տարով էին մեծանում, Դավիթ օրով էր մեծանում։ Իսմիլ խաթունի աչքը քաղցր էր մանուկ Դավթի վրա։ Մըսրա Թագուհին մտքում ասում էր. «Դավիթ կմեծանա, կլինի Մելիքիս թիկունք, մեկտեղ կզավթեն ամբողջ երկիրը, կտիրեն ամբողջ աշխարհին»։

Մանուկ Դավիթ էնքան զորեղ էր, որ իր օրոցքի բինտերը հա կտրում էր։ Իսմիլ խաթունը Դավթի բարուրը բինտի փոխարեն կապեց մի հաստլիկ շղթայով։ Շղթան էլ չդիմացավ Դավթի ուժին, զնգալով կտրվեց. կտորները թռան, դիպան պալատի բարձ պատերուն. պատերը կրակ տվին։ Էս անգամ Իսմիլ խաթունը բերեց կանեփի որվանը, մանեց փուխր պարան, արավ Դավթի բարուրին բինտ. կանեփին փուխր պարանը դիմացավ։ Դավիթը շունչը ներս էր առնում, պարանը ձգվում երկարում էր, շունչը դուրս էր հանում, պարանը կուչ էր գալիս ու կարճանում։

Մհեր գերեզմանումն էր. Դավիթ՝ օրոցքում։
Մըսրա Մելիք զորք հավաքեց եկավ Սասնա տան վրա կռիվ։
Առավ Սասուն, ժողովրդին սրի քաշեց։

Սասուն ավերեց, առավ հարկ ու ավար, անհաշիվ տավար, ոչխար. ձիեր, ոսկի. տարավ Մըսրա երկիր, ժողովրդին գերի վերցրեց, վարեց Մըսրա երկիր։

Մըսրա Մելիք Սասուն դարձրեց իրեն հպատակ ու հարկատու, Ձռան Վերգոյին կարգեց Սասնա կառավարիչ։

Մհեր գերեզմանումն էր. Դավիթ՝ օրոցքում։

## 2. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԻ ՇՈՂՔԸ

Երբ որ Մըսրա Մելիք Սասնա առ ու գիրին բերավ, Դավիթ օրոցքից արդեն իջել էր, դուրս էր գնում, խաղում էր Մըսրա ճժերու հետ։

Մի օր մտավ պալատի պարտեզը. տեսավ նազիր-վազիրներու տղեքն էնտեղ են. պստիկ գալար ճուղերու վրա նստած՝ իջնում են ու բարձրանում։

Դավիթ հարցրեց.— Էդ ի՞նչ եք խաղում։

Ասացին.— Տըրընգողի։

Դավիթ նայեց, նայեց, ասաց.

— Էդ ինչ է որ. հապա տեսե՛ք դուք իմ տըրընգողին։

Ձեռ թալեց, բռնեց բարձր մի ծառ. կռեց մինչև գետին. ճժերուն ասաց.— Հեծե՛ք։

Ճժերը ծառը հեծան, շատ ուրախացան. ճվճվում, ծիծաղում էին.

— Ինչ լավ ձի է՜, ինչ լավ ձի՜ է։

Դավիթ էդ բարդին երկար կռած պահեց, իր ձեռը հոգնեց ու ճժերուն ասաց.

— Հերիք է, ցա՛ծ իջեք, ձեռս հոգնեց։

Ճժերն ասացին.— Լավ ձի ենք հեծել, բեջի ենք անում. ինչո՞ւ իջնենք։ Չենք իջնի։

Դավիթ աղաչեց.— Վա՜յ, ձեռս թուլացավ։ Իջե՛ք։

— Չենք իջնի, չենք իջնի. չենք իջնի։

Դավիթ բարկավ ու բարդու կատարը բաց թողեց։ Ծառը նետի պես արագ բարձրացավ. ճժերուն թալեց էս ու էն կողմ. որու թևր կոտրվեց. որու ոտը կոտրվեց, որն էլ քարին զարկվեց ու մեռավ։

Էս նազիր-վազիրներու որդիք էին։ Էնոնց հերերը եկան Մըսրա Մելիքի դիվանը, շատ բարկ բողոք բարձրացրին, ասացին.

— Թագավո՛ր, էդ Սասնա ծուռ որբին Մըսրեն հեռացրո՛ւ, թե չէ ինքներս կհեռանանք։

Մըսրա Մելիք շատ կատաղեց, մանուկ Դավթին փակեց մի մութ սենյակի մեջ, որ արևի լույս չտեսներ, վրան մի վարժապետ կարգեց, ասաց.— Էս Սասնա ծռին գրել-կարդալ. խելք ու հնազանդությո՛ւն սովորեցրու։— Դավթին հաց-կերակուր տանողներուն էլ պատվիրեց.— Էդոր երբ հաց կտանեք, մսեն ոսկո՛րը հանեք, չըլնի՝ կորիզը։

Մի օր Դավթին հաց-կերակուր տանողը շատ էր նեղացել Դավթի վարժապետեն, մտքում ասաց. «Էս Դավթին միսը ոսկորով կտանեմ, Դավիթը կուտի կհիվանդանա, թագավորը քո վիզը կզարկի»։

Դավիթ հացի հետ միսը քցեց բերանը, ոսկորն ընկավ ատամի տակ։ Հանեց ու տեսավ մի սիպտակ բան էր, նորից գցեց բերանը։ Ատամները ցավեցին ու չկարցավ էդ սիպտակ բանը ծամել։ Դավիթ բարկավ, բերանից ոսկորը հանեց խփեց պատին։ Պատը ծակվեց ու ներս ընկավ արևի շողքը։

Դավիթ զարմացավ.

— Յա՜, էս ո՞վ էր մտավ իմ սենյակը։

Թևերը բշտեց ու սկսեց արևի հետ կռվել, ձեռը թալում էր, որ բռնի, փորով ընկնում էր վրան, որ ճզմի, վեր էր թռչում ու նորից գետին զարկվում, բան դուրս

*չէր գալիս. արևի շողը չէր գնում դուրս։ Դավիթ էնքան չարչարվեց, որ քրտինքը առվակներու պես թափվում էր երեսին։*

*Վարժապետը ներս մտավ, տեսավ Դավիթ ելնում ու զարկվում է գետին։*

*— Դավիթ, ինչո՞ւ ես ելնում ու զարկվում գետին։*

*— Էս ո՞վ է,— ասաց Դավիթ,— իմ սենյակն է մտել, չի գնում։*

*— Դավի՞թ, աչքերդ խփի՛ր։*

*Դավիթ աչքերը խփեց, վարժապետն իր թաշկինակով խցեց պատի ծերպը, արևի շողքն անհետացավ։ Վարժապետն ասաց.— Աչքերդ բա՛ց արա։*

*Դավիթ աչքերը բաց արավ, տեսավ շողքը չկա։*

*— Յաաա՜, էսօր առավոտնե ես չարչարվում եմ, չկարցա դրան դուրս հանել։ Դու ինձանից ուժո՞վ ես, որ դուրս հանեցիր։*

*— Դավի՛թ, մեռնե՛մ քեզի,— ասաց վարժապետը,— էդիկ մարդ հո չէ՞ր, արևի շողքն էր։*

*— Արևի շո՞ղքը... Դրսում արև՞ կա։*

*— Կա, մեռնե՛մ քեզի, արև էլ կա, աստղեր էլ կան, գիշեր էլ կա, ցերեկ էլ։ Դավիթ բոռաց.*

*— Բա որ դրսում արև կա, ինչո՞ւ չեք տանում, որ տեսնեմ. ինչո՞ւ եք ինձ նստացրել էս մութ պատերու մեջ։*

*Ասաց.— Մատա՛ղ, դու համբերի՛ր, ես գնամ, թագավորին ասեմ, տեսնեմ ի՞նչ կասի։*

*Վարժապետը ներկայացավ Մսրա Մելիքին։*

*— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթն ուզում է դուրս գալ, արևի լույս տեսնել։ Մսրա Մելիք հրամայեց.*

*— Գնա դրան դո՛ւրս բեր, արևի տակ մա՛ն ածիր։*

## 3. ԴԱՎԻԹ ԲՌՆՈՒՄ Է ՄԸՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԳՈՒՐԶԸ

*Վարժապետը եկավ, Դավթին առավ տարավ քաղքի մեջ, որ ման ածեր։ Դավիթ հարցնում էր ամեն բան.*

*— Էսիկ ի՞նչ է։ էդիկ ի՞նչ է։ էնիկ ի՞նչ է։*

*Վարժապետը պատասխանում էր.*

*— Էսիկ տավար է, էդիկ էշ է, էնիկ էլ՝ գոմեշ։*

*Էդպես ման գալով քաղքեն դուրս ելան։ Անհաշիվ մարդ էր հավաքվել դաշտի մեջ։ Դավիթ, ասաց.*

*— Վարժապետ, արի՝ գնանք էնտեղ։*

*Վարժապետն ասաց.*

*— Մեռնե՛մ քեզի, Դավի՛թ, էնտեղ բան չկա, գնանք էն կողմը։*

*Դավիթ համառեց.— Չէ, տա՛ր ինձ էնտեղ։*

*— Ախար էնտեղ ի՞նչ կա, որ քեզ տանեմ։*

*— Կտանե՞ս, թե՝ չես տանի։*

*— Չեմ տանի։*

*— Պիտի տանես։*

Վարժապետը սանիկին կամացուկ մի ապտակ զարկեց։ Դավիթ իր ձեռը թալեց վարժապետի ականջը, մազ մնաց պոկեր։ Վարժապետը վախեցավ։

— Լա՛վ, լա՛վ, գնանք էնտեղ։

Դավթին տարավ կանգնեցրեց մեյդանի մեջը։ Էնտեղ Մըսրա Մելիք իր մարդկանց հետ նիզակ էր խաղում։ Նետելու հերթը Մըսրա Մելիքինն էր։ Դավիթ երբ տեսավ, երկնքով մի բան է գալիս, ձեռը թալեց բռնեց, նիզակ էր, ետ նետեց ու Մելիքի գլխով տաս կանգուն էլ անց կացրեց էն կողմ։ Մըսրա Մելիք ասաց.

— Հայ-հա՜յ, էդ ո՞վ էր, իմ նիզակն իմ գլխի վրայով անց կացրեց։ Կախան, Ասլան, գնացեք տեսեք՝ էդ ո՞վ էր։

Փահլևանները գնացին տեսան ու եկան.

— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթն էր։

Մըսրա Մելիք բռռաց.— Բերե՛ք, վիզը կտրեմ։

Վազիր-վեքիլ ընկան Մըսրա Մելիքի ոտը.

— Թագավո՛րն ապրած կենա, երեխա է։ Նա ինչ է, որ դու նրա վիզը կտրես։

Վազիրը մարդ ուղարկեց վարժապետի մոտ. ասաց.

— Քո տա՞նը չքանդվի, տեղ չկա՞ր, որ դու Դավթին էս կողմը բերիր։

Վարժապետն ասաց.— Բա ես իմ կամքո՞վ բերի։ Ականջս պոկում էր, զոռով բերել տվեց։

Ասացին.— Առ գնա՛, առ գնա՛, առ գնա՛ կորեղիր։

Վարժապետը շատ խնդրելով, շատ աղաչելով Դավթին առավ բերավ տուն։

Տանը Դավիթ Իսմիլ խաթունին ասաց.— Մարե՛, Մելիք ամեն առավոտ ո՞ւր է գնում։

— Մարեն մեռնի քեզ, գնում է մեյդան գալու, հոլ են խաղում։

— Բա ինչո՞ւ ինձ էլ չի տանում իր հետ. ես էլ հոլ խաղամ, սիրտս բացվի։ Տանը մենակ նստած եմ, ընկեր չկա, որ հետը խաղամ։ Սիրտս նեղվում է։ Թո՛ղ Մելիքն ինձ էլ տանի դաշտ։

Իսմիլ խաթունն ասաց.— Մորթու՛ն, դու պստիկ ես, ձիերը քեզ կճխլեն։

— Ես կերթամ կկանգնեմ ձիերեն հեռու։

Իսմիլ խաթունն Մըսրա Մելիքին ասաց.

— Մելի՛ք, մատա՛ղ, ի՞նչ կլինի, լուսուն Դավթին տա՛ր քեզ հետ, հոլ խաղա, սովորի։

Մըսրա Մելիք ասաց.— Այ Դավի՛թ, ախար դու պստիկ ես, հոլ խաղալ քո բանը չէ։

Դավիթ համառեց.— Ես պիտի գամ քեզ հետ։

Իսմիլ խաթունն ասաց.— Մելի՛ք, շատ եմ խնդրում, Դավթին տա՛ր քեզ հետ։ Մի տես՝ ոնց է լալիս։

Մըսրա Մելիք ասաց.— Ախար էդ աղջը ծուռ է, հաստակող։ Վախենում եմ էս տղան փորձանք բերի գլխիս։

Մերն ասաց.— Բան չի լինի։ Տար դի՛ր մի բարձր տեղ, թո՛ղ իրեն համար մտիկ անի։ Չի գա ձիերու մոտ, մի՛ վախենա։

Մըսրա Մելիք ասաց.— Որ չտանեմ, շատ մարդ կասի, որբ էր, Մելիք անտեր թողեց։ Լավ, մարե՛, լուսուն Դավթին կտանեմ ինձ հետ։

Լուսուն Մըսրա Մելիք Դավթին տարավ դաշտ։



Կախան ու Ասլան փահլևանները թագավորի հրամանով ծուռ Դավթին տարան

սարի գլուխ. ձեռներն ու ոտները կապեցին, գցին էնտեղ, իրենք էլ նստեցին կողքին պահապան:

Դավիթը մինչև կեսօր նայեց, նայեց, բան չտեսավ, սիրտը նեղվեց ու փահլևաններին ասաց.

— Իմ ձեռն ու ոտն արձակե՛ք:

— Չի լինի,— ասացին փահլևանները:— Թագավորի հրաման է, որ քեզ կապած պահենք, չերթաս ընկնես ձիերու տակ:

Դավիթը բռնկավ, իր կապերը կամացուկ ձգեց կտրտեց: Փահլևանները կախվեցին Դավթից, պահել չկարցան: Դավիթը երկուսին էլ քիթ-բերնի վրա քաշեց մինչև տուն, գնաց մի պուճախ, գլուխը դրեց գետին պառկեց:

— Ինչո՞ւ տուն եկար, Դավի՛թ,— հարցրեց Իսմիլ խաթունը:

Դավիթն ասաց.— Մելիքը իմ ձեռնուոտը կապեց ու գցեց մի բարձր սարի գլխին՝ ինքը դաշտի մեջ հոլ էր խաղում, ես բան չտեսա:

Իրիկվան Իսմիլ խաթունը Մսրա Մելիքին ասաց.

— Ինչո՞ւ Դավթին չտարար հոլի դաշտը, որ բան տեսներ:

Պատասխանեց.— Մարե՛, ինձ էնիկ չի լսում: Հոլը էգոր դիպչի սպանի, մարդին պիտի տանի. Մսրա Մելիքը որբին սպանեց, որ իր հացը չուտեր:

Նստեցին հաց ուտելու. Դավիթը հացին չմոտեցավ:

Իսմիլ խաթուն ասաց.

— Մելի՛ք, մեռնե՛մ քեզի, աղբորս մի՛ նեղացրու: Էգուց կտանես, կդնես մոտիկ մի տեղ, որ Դավիթը բան տեսնի:

Լուսուն Մսրա Մելիքը, իշխաններն ու փահլևանները մեկտեղ դաշտ գնացին, որ գուրզ խաղան: Դավթին տարան նստացրին գուրզի դաշտեն մի արտաչափ հեռու: Մսրա Մելիքը ասաց.

— Դավի՛թ, էս գուրզը տեսնո՞ւմ ես, շատ գեշ բան է, մարդու որ դիպավ, կսպանի: Զգաս, չմտնես խաղի մեջ: Էստեղ կանգնի՛ր, քեզ համար մտի՛կ արա:

Դավիթը խոստացավ.— Լա՛վ, աղբե՛ր, ես ասածդ կանեմ:

Էնտեղ Մսրա Մելիքը իր ընկերներով գուրզ էր թալում, էստեղ Դավիթը խաղում էր իր համար: Թավալվում էր հողի մեջ, հողը վերցնում էր, լցնում իր ոտներուն:

Գուրզ խաղացին մինչև կեսօր:

Դավիթը հեռվեն նայում էր, մինչև գուրզ նետելու հերթը հասավ Մսրա Մելիքին: Բոլորը համարձակեցին եկան, որ տեսնեն, թե Թագավորն ինչպես գուրզ կթալի: Թագավորի գուրզը կշռում էր երեք հարյուր փութ: Մսրա Մելիքը ձախ ձեռով գուրզը թալում էր վեր, աջով բռնում էր: Երբ գուրզը թալում էր հեռու, գետինը ճեղքվում էր էնց որ սելի ակոս: Գուրզը դիպչում էր քարին, կրակ էր հանում:

Դավիթը երբ տեսավ, գուրզը թալելու հերթը հասել է Մսրա Մելիքին, գնաց նստեց աչուքի մեջ, իր ծակծկված բոլորով հող էր չափում — «էս մեկն»: Հողը ցած էր թափում, բոլորը նորեն լցնում, ասում էր.— «էս մեկն»: Չգիտեր ասել «երկուս»: Մսրա Մելիքը բոռաց.

— Էյ, Դավի՛թ, վե՛ր կաց, ես գուրզ պիտի թալեմ:

Երեք անգամ բոռաց, ու Դավիթը իր վրա գրեց, իբր չի լսում: Հող էր չափում — «էս մեկն»:

Մըսրա Մելիք հրամայեց.

— Կախա՛ն, Ասլա՛ն, գնացե՛ք, ձիվը բռնեք, ապուրեն դո՛ւրս թալեք:

Հինգ փահլևան հասան, Դավթի ձիվը բռնեցին, որ դուրս թալեն: Ինչ որ անում են, վեր չի կենում, իր համար հող է չափում — «էս մեկ, էս մեկ»: Փահլևանները ինչքան զոռեցին, չկարցան Դավթին իր տեղեն շարժել, ինչպես որ չես կարնա ծառն արմատով հանել իր հողեն: Փահլևանները շվարած կանգ առան: Մըսրա Մելիք ասաց.

— Գուրզերը թալե՛ք, թո՛ղ դիպչեն էսոր, սպանեն:

Փահլևանները գուրզերը նետեցին: Դավիթ մի ձեռքով գուրզը բռնում, թալում էր երկինք, մեկել ձեռով բռնում, թալում էր երկինք: Մըսրա Մելիք շատ կատաղեց.

— Դե՛ն գնացեք, ես իմ գուրզով զարկեմ: Ես մորս ասի. դրան չեմ տանի հետս. Ես գիտեմ էդ ազգի բնությունը: Սա իմ գլուխս միշտ էլ կցավեցնի: Իմ գլխակերն է սա: Լավ է մեկ զարկեմ ու սպանեմ: Ձեզ դե՛ն տվեք:

Դավիթ էդ խոսքը լսեց, ասաց.

— Մելի՛ք, դու գուրզը թա՛լ, գուրզը թա՛լ. թո՛ղ գա: Զարնեմ ու չիմանամ, որ երկմտես:

— Հող էիր, հո՛ղ դարձիր,— ասաց Մըսրա Մելիք, գուրզը թալեց:

Դավիթ իր ձեռք դեմ տվեց, գուրզը բռնեց, քիչ մի ծանր ու թեթև արավ, ասաց.

— Ափսո՜ս, թեթև է շատ,— ասաց, գուրզը հակառ նետեց, Կախանին, Ասլանին ու հինգ ուրիշ փահլևան տեղնուտեղը սպանեց:

Մարդիկ հավաքվեցին թագավորի մոտ.

— Թագավո՛ր, մենք էստեղ եկանք խաղալու՞, թե մարդ սպանելու համար: Դու գիտեիր, ծուռ է Դավիթ, ինչո՞ւ հետդ բերիր: Հիմա հարցրեք ի՞նչ կանեն:

Մըսրա Մելիք փրփրեց ու թուրը քաշեց.

— Թողե՛ք,— ասաց,— ես էդ շան որդի վիզը պիտի կտրեմ:

Վազիր-վաքիլ ու փահլևանները նրա դեմն առան.

— Թագավո՛րն ապրած կենա, երեխա է, խելքը չի հասնում:

— Որբ է, մեղք է:

— Մարդիկ ի՞նչ կասեն. «Մըսրա Մելիք իր հացի համար որբին սպանեց»:

Մեծ վազիրն ասաց.— Իմ տե՛րն ապրած կենա. Դավիթն անտեր թագավորի որդի է, օրենք չկա, որ նրա վզին թուր բանեցնեն:

Վազիր-վաքիլ և իշխանները չթողին, որ Մըսրա Մելիք էդտեղ Դավթին սպանի:

## 4. ԴԱՎԹԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՈՍԿՈՎ ՈՒ ԿՐԱԿՈՎ

Դավիթ փախավ եկավ տուն, իրեն թալեց մոր գոգը:

Իսմիլ խաթուն վախեցավ, հարցրեց.

— Ի՞նչ է եղել, Դավի՛թ:

— Մարե՛, Մելիք հրեն դալխա է, որ իմ վիզը կտրի:

— Ինչո՞ւ, ի՞նչ ես արել:

Դավիթ պատմեց: Իր պատմությունը նոր էր պրծնում, ներս մտավ Մըսրա Մելիք.

— Ո՞ւր է էն դյավուրը, ես նրա վիզը պիտի կտրեմ.

Մեր ասաց.— Ինչո՞ւ:

— Նա ինձ խայտառակեց աշխարհի առաջ։

— Ի՞նչ է արել։

— Ես գուրզ էի խաղում, նա ձեռք թալեց, բռնեց իմ գուրզը։

Իսմիլ խաթուն ասաց.— Է, ինչ անենք, երեխա է։

— Ինչ երեխա.— Մըսրա Մելիք Դավթի թևը բռնեց բոռաց.— Ինչո՞ւ իմ գուրզը բռնեցիր։

Դավիթ պատասխանեց.

— Լավ արի։ Ես քեզմեն պակաս տղա չեմ։ Ես էլ քեզ հետ գուրզ պիտի խաղամ։

— Լսեցի՞ր, մարե՛,— փրփրեց Մըսրա Մելիք ու թուրը հանեց։— Ես սրան պիտի մորթեմ։

Մերը նետվեց աղբերներու միջև.

— Մելի՛ք, ծուռ հո չե՞ս։ Քեզ ի՞նչ է արել երեխան։

Մըսրա Մելիք բոռաց.— Մարե՛, սա որ էսօր բռնեց իմ գուրզը, էգուց էլ ձեռ կթալի իմ տուն ու տեղին։

Իսմիլ խաթուն ասաց.— Էդպես մի՛ խոսիր, մորթա՛ն։ Դավիթ քո աղբերն է. քո բազկի ուժը, քո մեջքի թուրը։ Դուք մեկ հորից եք ծնվել, մեկ մոր կաթ կերել։ Հավն ինչ հավ է, որտեղ կուտ կերավ, ձուն էնտեղ կածի։ Թա՛ռ, Բա՛ռ, Դավիթ էլ նոր պիտի գնա Սասո՞ւն։ Ո՞ւմ մոտ։ Էստեղ է մեծացել, էստեղ կմնա, կդառնա քեզ աղբեր. մեկտեղ կտիրեք Մըսըրին, Սասունին ու ողջ աշխարհին։

Մըսրա Մելիք մտածեց, ասաց.

— Չէ, մարե՛, քո ասածներուն ես համաձայն չեմ։ Ուրիշ մարդիկ որ իմ գուրզի տակ ընկնեն, կմեռնեն։ Սա բռնեց իմ գուրզը՝ չմեռավ ու թալեց ինձ հակառ։ Չէ, ես դրա վիզը պիտի կտրեմ։

Իսմիլ խաթուն ասաց.— Էդպես չի լինի. կանչի՛ր, թող գան քո վազիր-վաքիլն ու իշխանները, տեսնենք՝ ի՞նչ կասեն։

Մըսրա Մելիք վազիր-վաքիլին ու իշխաններուն կանչեց իր դիվանը, խոսեց.

— Մըսրա իշխաննե՛ր, ի՞նչ կասեք։ Էս խելառ դյավուրը հիմակվընե ձեռ է թալում իմ գուրզին, սպանում է իմ փահլևաններուն։ Հապա ի՞նչ կանի էգուց, երբ որ մեծանա։ Աշխարհը կավերի։

Վազիրն ասաց.

— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթ պստիկ է, խելքը ջուր է, խելքը չի հասնում։

— Չէ,— ասաց Մըսրա Մելիք,— դրա խելքը շատ է, իմ ու քո խելքերեն շատ։ Էդքան պստիկ տեղով ինձ վրա ուժ է բանեցնում, որ մեծացավ, աշխարհը կավերի։ Դա իր արածը լավ է հասկանում։ Ես դրա վիզը պիտի կտրեմ։

Վազիր-վաքիլ Մըսրա Մելիքի ոտն ընկան։

Վազիրն ասաց.— Թագավո՛րն ապրած կենա,— ասաց,— արի՝ մի փորձ անենք. եթե Դավթի խելքը հասավ, նրա վիզն էլ, իմ վիզն էլ կտրիր։

— Ի՞նչ փորձ։

— Բերենք՝ էս կողմը դնենք մի սկուտեղ ոսկի, էն կողմը դնենք մի սկուտեղ կրակ։ Դավթին դնենք ոսկու և կրակի միջև։ Թե ոսկին վերցրեց, խելքը հասնում է, վիզը կտրի՛ր, թե կրակը վերցրեց, խելքը չի հասնում, պետք է խնայես։

Դավթին տարան սեղանի մոտ։ Էս կողմը ոսկին էր, էն կողմը՝ կրակը։ Ասին. 

— Դավի՛թ, վերցրո՛ւ, որ մեկն ուզում ես։

Դավթի աչքերը շաղ եկան, ձեռք թալեց ոսկուն. Աստծու հրամանով հրեշտակը Դավթի ձեռք բռնեց ու տարավ գետի կրակը, մատը կպավ կրակին. էրվեց։ Դավիթ իր կրակաթաթախ մատը տարավ բերանը. լեզուն էլ էրվեց։ Դավիթ կմկմաց. լաց եղավ։ Խմիկ խաթունը տղային գրկեց, ասաց.

— Տեսա՞ր, Մելի՛ք, Դավիթ երեխա է, խելքը չի հասնում, մեղք է էնոր սպանել։ Վեզիր-վեքիլ ասին.

— Դավիթ սղամիկ է, խելքը չի հասնում, մեղք է սպանել։

Մըսրա Մելիք ասաց.— Լա՛վ, ձեզ եմ բաշխում, թո՛ղ ապրի։

Դավթի լեզուն էրվել էր, թլոլ մնաց։ Էդ օրվանից կանչեցին «Թլոլ Դավիթ»։

## 5. ԴԱՎԻԹ ՄԸՍՐԱ ԹՐԻ ՏԱԿՈՎ ՉԱՆՑԱՎ

Դավիթ միառժամանակ պալատում իր համար ապրեց։

Բայց բնությամբ ծուռ էր, անհանգիստ։ Մի օր դուրս եկավ գնաց քաղաք, հասավ Մըսրա Մելիքի զինանոցը։ Դուռը բաց էր. Դավիթ ներս մտավ, տեսավ՝ մի մեծ գուրզ դրված էնտեղ, ասաց.

— Էս ի՞նչ խոշոր խաղալիք է։

Գուրզը ձեռն առավ, թափահարեց ու թալեց գետին։ Անհելի զմփոց ընկավ Մըսրա մեջ։ Քաղքցիք, մարդ, կնիկ, տղա, շատ վախեցան, ասին. երկրաշարժ եղավ։

Մըսրա Մելիք իր քնեն արթնացավ, ասաց.

— Էն իմ գուրզի զմփոցն էր։ Տեսեք, ո՞վ է իմ գուրզը վերցրել, ինչ փորձանք է եկել քաղքի վրա։

Վազիրը կռահեց, որ գուրզը վերցնողը Դավիթն է։ Վազեվազ գնաց, հասավ զինանոց։

Դավիթ էնտեղ մի զմփոց էլ հանեց։ Վազիրը բռնեց.

— Հե՛յ, Դավի՛թ, քո տանը չմնաս. դու ի՞նչ գործ ունես էստեղ։ Շու՛տ արա, փախի՛ր. թե չէ Մըսրա Մելիքը որ էկավ՝ վա՜յ քո արևուն։

Դավիթ փախավ, գնաց։

Մըսրա Մելիք հեծելով եկավ, կանգնեց իր զինանոցի դռանը, հարցրեց.

— Վազի՛ր, էդ ո՞վ էր։

Վազիրը պատասխանեց.— Մըսրա Մելիքն արած կենա, դուռը բաց էր, չիմացա։

Մըսրա Մելիք ասաց.— Հա-չէ, Դավիթն էր։ Դավթեն զատ էլ ո՞վ իմ գուրզը կվերցներ։

Մըսրա թագավորը կատաղած, փրփրած, քաղաքը ման եկավ։ Դավթին փնտրեց, ոչ մի տեղ չտեսավ։ Դարձավ եկավ տուն։ Դավիթ ընկել քնել էր քուրսու քով։

Մըսրա Մելիք աղեղի լարն արձակեց, ուզում էր էդ լարով Դավթին խեղդել։ Մերը վրա հասավ, ձեռք բռնեց.

— Մելի՛ք, էդ ի՞նչ ես անում։

— Էս էն լակոտն է,— ասաց,— պիտի խեղդեմ։ Գնացել է, գուրզիս հետ խաղացել, զմփոց է գցել քաղքի մեջ, ասել են ժամր է։



Խմիկ խանում ձեռքը դուրս հանեց, ասաց.

— Մելի՛ք, թե որ Դավթին դու սպանես, էս ծծերու կաթը, որ կերել ես, քեզ հարա՛մ լինի։

Մըսրա Մելիք մռնչաց.— Մարե՛, իմացի՛ր, օձի ձագ է Դավիթ. ինձ ինչ վնաս որ գա, իրմեն կգա։ Չէ, հերի՛ք եղավ։ Ես էսօր պիտի սպանեմ։

Իսմիլ խաթուն ճարը կտրել էր, ասաց.

— Մելի՛ք, թե որ պիտի սպանես Դավթին, առ տա՛ր, յոթ սարի ետև՛ սպանիր, որ իմ ականջը էնոր ձենը չառնի։ Քաղցր ծիծ եմ տվել Դավթին, սիրտս չի դիմանա։

Մեծ վազիրը ներս մտավ, էդ խոսքերը լսեց, ասաց.

— Թագուհի՛ն արդար կենա, ինչո՞ւ Դավթին սպանենք, արունը վերցնենք մեր վզին։ Ուղարկենք Սասո՛ւն, իր հոր երկիրը։

Իսմիլ խաթուն Դավթին քնեն վեր հանեց, ասաց.

— Դավիթ, կերթա՞ս, քեզ ուղարկենք հորեղբերներուդ քով։

— Յա՞, մարե, ես հորեղբերնե՞ր ունեմ։ Ո՞րտեղ են ապրում։

— Իրենց երկրի մեջ, Սասնա քաղաք են ապրում։ Կերթա՞ս էնոնց մոտ։

— Ինչո՞ւ չեմ գնա։ Էնոնց անունն ի՞նչ է։

— Մեկի անունը Վերգո է, մեկինը՝ Ձենով Օհան։

Դավիթն ասաց.— Մարե՛, քո լեզուն՝ լալկվի, մինչև էսօր ինչո՞ւ չես ասել։ Դե չուշ.— ասաց.— Ինձ ինն օրվա հա՛ց կպատրաստես, կտաս ինը զույգ տրեխ, ինը զույգ էլ գուլպա, առնե՛մ, գնամ Սասուն։

Իսմիլ խաթուն ինն օրվա հաց պատրաստեց, բերեց ինը զույգ տրեխ, ինը զույգ էլ՝ գուլպա, օրհնեց Մհերի որդուն, ասաց.

— Գնա՛, որդի՛ս, գնա քո հոր երկի՛րը, քո հորեղբորանց մոտ։ Աստվա՜ծ քեզ հետ։

Էստեղ Մըսրա Մելիք Թուրը բարձրացրեց, ասաց.

— Հա՞յ-հա՜յ, Դավիթ պիտի գա, Թրիս տակով անցնի, որ թողնեմ գնա իր Սասուն։

Դավիթ պատասխանեց.

— Հայ-հա՜յ, ես գամ քո Թրի տակով անցնե՞մ։

Վազիրն ասաց.— Ինչ կլինի, Դավի՛թ, որ անցնես։ Անցի՛ր, քեզ համար գնա Սասո՛ւն։

— Չէ.— ասաց Դավիթ.— Մըսրա Մելիքն ուզում է, ես իր Թրի տակով անցնեմ, որ երբ էգուց մեծանամ, Թուր չքաշեմ էնոր դեմ — ինքը ինձ վրա Թուր քանեցնի, ես էնոր չզարկեմ։ Հազար Մըսրա Մելիք որ ասեն, ես էդ բանը չեմ անի։ Մորս լաչակի տակով կանցնեմ, Մըսրա Թրի տակով չեմ անցնի։

Մըսրա Մելիք բռռաց.— Դու իմ Թրի տակով չե՞ս անցնի։

Դավիթ պատասխանեց.— Չէ, չեմ անցնի։ Ինչ որ ձեռքեդ գալիս է, արա՛։

Մեծ վազիրը Դավթի թևեն բռնեց, որ անց կացնի Մըսրա Թրի տակով։ Դավիթ աներեր կանգնած էր։ Վազիրը նրա մեջքը բռնեց, հրեց, որ անց կենա Մըսրա Թրի տակով։ Դավիթ նետվեց մի կողմ, չանցավ Թրի տակով, կողքով անցավ, ճկույթը առավ քարին, քարը կրակ տվեց։

Մըսրա Մելիք էս բանը որ տեսավ, շատ վախեցավ, ասաց.

— Սա որ էսքան պստիկ է, էսպես է անում, մեծացավ՝ աշխարհը կավերի։

Իսմիլ խաթուն ու մեծ վազիրը Մելիքի ոտները ընկան, խնդրեցին, երդում կերան, որ Դավիթ անխելահաս ծուռ երեխա է, թո՛ղ գնա իր Սասուն, պրծնենք։

## 6. ԲԱԹՄԱՆԱ ԿԱՄՈՒՐՋԸ

Մըսրա մեջ կային երկու զորեղ փահլևան. Բաթմանա Բուդան ու Չարրահար Քամին։ Մըսրա Մելիք էնոնց կանչեց, ասաց.

— Դավթին կտանեք յոթ սարի էն կողմը. Բաթմանա կամրջի վրա կսպանեք ու կթափեք ջուրը, իր հացի շորը կթաթխեք իր արնի մեջ, կբերեք, որ ես իմ աչքով տեսնեմ։ Մի կտոր էլ Դավթի արունը կբերեք, որ խմեմ, սիրտս հովանա։

Փահլևանները ճամփի պատրաստություն տեսան։

Դավիթ Իսմիլ խաթունի ձեռը պագեց, կաց-բարով ասաց, գնացին։

Շատ գնացին, քիչ գնացին, հինգ-վեց օրվա ճանապարհ անցան։ Բուդան ու Ջարրահարը տեղ էին փնտրում, որ սպանեն Դավթին։ Հարմար տե՞ղ չկար, թե ձեռները չէր գնում...

Դավիթ բանի չէր խառնում իրեն ուղեկցող ծառաներու հետ. խոտորվում էր ճամփուց մեկ դես, մեկ՝ դեն, վազում էր մեկ էնոնց առջևն. մեկ՝ ետևն, ընկնում էր սար ու ձոր, խաղում քարի. թիթի հետ, փախցնում էր հավք ու գազան, գնում էր մինչև մնան, խոյոր. ճամփակորուս...

Փահլևանները ճամփի վրա նստում, հաց էին ուտում, Դավթին չէին տալիս։ Դավիթը բանջար էր քաղում, արմատ էր հանում, լոր ու նապաստակ էր բռնում, ուտում էր։ Չէր նայում փահլևաններու կողմը, էնոնցմեն բան չէր խնդրում։

Էսպես գնացին հասան Բաթմանա կամուրջը։

Բուդան ասաց.— Քամի, ի՞նչ անենք... Դավթին սպանենք, թալենք ջո՞ւրը։

Քամին ասաց.— Բուդա, ինչ անենք... Մըսրա Մելիքի հրամանն է...

Դավիթ հեռու էր, էդ խոսքերը չլսեց։ Փահլևանները նստեցին հաց ուտելու, կանչեցին.

— Դավի՜ի՜ի՜թ, արի՛, շու՛տ արի։

Դավիթ եկավ, մոտեցավ, ասաց.

— Էս հինգ-վեց օր է, գնում ենք, դուք մի անգամ չասացիր. «Դավիթ, անոթի՞ ես, ծարա՞վ ես»։ Էս ո՞նց է, որ էստեղ, էս կամրջի մոտ ինձ հիշեցիր։

Ասին.— Դավիթ, մենք մինչև էսօր Մըսրա հողումն էինք, մկա որ մեր հող-ջուրը հասանք, էդոր համար էլ քեզ կանչեցինք։ Արի՛, Դավիթ, արի՛... արի՝ հա՛ց կեր։

Դավիթ ասաց.— Իսմիլ խաթունն ինն օրվա հաց էր դրել մեզ հետ։ Ինչներդ կերաք, ինձ բան չտվիք։ Էսօր, երբ ես իմ հոր հող-ջուրն եմ ընկել, ասում եք. «Դավիթ, արի՝ հաց կեր»։ Ձեր հացը մկա չեմ ուզում։

Փահլևանները վեր կացան գնացին, Բաթմանա կամուրջի մոտ կանգ առան։ Դավիթ մոտեցավ, հարցրեց.

— Ինչո՞ւ կանգ առաք։

Ասին.— Դավի՛թ, քեզ համար էստեղ կանգ առանք։ Մեզ Մըսրա Մելիք ասել է. «Դավթին կամուրջից էնդե՛ս անց կացրեք, որ չվախենա, ջուրը չընկնի»։

Դավիթ ասաց.— Մըսրըեն մինչև էստեղ եկանք, դուք մի օր չասիք. «Դավիթ պստիկ է, կվախենա»։ Մկա ի՞նչ եղավ, որ կանգ առաք էստեղ։ Քշե՛ք, քշե՛ք, կամուրջն անցե՛ք, ես ձեր ետևեն կգամ։

Փահլևանները առաջ ընկան, իրար կամացուկ ասացին.

— Մենք կանցնենք Դավթի առաջ, մեկս՝ ետև. հենց որ կամրջի կեսին կհասնենք,

Դավթին կոպաններ, թալեր՝ ջուրը տանի։— Դարձան ասին.— Դավի՛թ, մեկս կանչենք քո առաջ, մեկս՝ ետև, որ կամուրջը անցնելուս դու չվախենաս։

Դավիթը համաձայնեց.— Էդպե՛ս թող լինի։— Իր մտքում ասաց. «Ինչու՞ մինչև էսօր հրկուսն էլ իմ առաջն էին, մեկը մեկն անցավ առաջ, մեկն անցավ ետև... Չէ, էսոնց մտքի մեջ մի բան կա»։

Էկան հասան կամրջի կեսը։ Փահլևանները մեկն առջևեն, մեկը ետևեն բռնեցին Դավթի թևերը։ Դավիթը ասաց.— Էդ ի՞նչ եք անում։ Հա՞յ-հա՞յ, բռնել եք ինձ, որ ջու՞րը թալեք։

— Հա, պիտի թալենք.— ասին փահլևանները.— Բաղդադցու հրամանն է, որ քեզ սպանենք ու թալենք ջուրը։

Դավիթը ասաց.— Մսրա Մելիքը ի՞նչ է ուզում ինձնից։ Ես իմ ձեռը չեմ թալե ոչ էնոր երկրին, ոչ էնոր գանձին, ոչ էնոր գահին։ Էնիկ ի՞նչ է ավել ինձ, որ չի կարենում տանել։

Ասին.— Չգիտենք։ Հրամայել է, որ քեզ սպանենք ու թալենք ջուրը։ Թե չէ հրկուսիս վիզն էլ կտրեկի։

Դավիթը ասաց.— Հաստա՞տ ինձ պիտի սպանեք։

— Վալլա՛, պիտի սպանենք։

Դավիթը մի ձեռը թալեց մեկի փողպատը, մի ձեռը թալեց մյուսի փողպատը, բռնեց, իրար զարկեց, կամրջի երկու կողերեն կախեց, ասաց.

— Դուք լավ չգիտեք, ոնց են մարդու ջուր թալում։ Մկա ես ձեզ կթալեմ, կսովրեք։

Փահլևանները սարսափահար բոռացին.

— Դավի՛թ, առա՛ծ սիրուն, մեզ մի՛ թալի ջուրը։ Էն շուն Մսրա Մելիքը զոռով մեզ վզին գրեց, որ քեզ բերենք էստեղ ու սպանենք։ Մենք վախից ենք ձեռ բարձրացրել քեզ վրա։ Մենք չէ՞ որ քո հոր, Առյուծ-Մհերի ծառաներն ենք եղել, քո հոր սուփրի վրա ենք մեծացել։ Երբ քո հերը մեռավ, շուն Մսրա Մելիքը եկավ, մեզ վերցրեց գերի, զոռով դարձրեց իրեն փահլևան։ Մենք մեզ քո բա՛խտն ենք թալե, մեզ մի՛ սպանի։ Երբ դու էդ մարդն ես, էդ հունարի տերը, մենք օր կենդանության քեզ ծառայենք։ Քո հոր հիշատակի համար մեզ խնայի՛ր։

Դավիթը վախեցած փահլևաններուն բարձրացրեց, կամրջի վրա դրեց, ասաց.

— Դե որ էդպես է, գնանք ինձ հետ Սասո՛ւն։

Էստեղ երեքով իրար գլուխ պագեցին ու ճանապարհ ընկան դեպի Սասուն։

## Մ Ա Ս Ն   Ե Ր Կ Ր Ո Ր Դ

### 7. ԴԱՎԹԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

*Դավիթ իր փահլևաններու հետ հասավ Սասնա սահմանը։ Կանգ առավ, նայեց, նայեց, նայեց, ասաց.*

*— Հայ-հա՜յ, սարե՛ր, Սասնա՛ սարեր, էս դո՞ւք եք։*

*Հորթարածները, գառնարածները, նախրորդները, հովիվները իրենց անասունը թողած՝ նայում էին Դավթին։ Իմացան, որ Ջոջանց գերդաստանի տղա է։ Դավիթ էնոնց բարև տվեց, ասաց, որ գնում է Սասուն, իր հայրենիք։ Հովիվներն իրար բոթեցին։*

*— Առյուծ Մհերի տղան որ ասում են, վայ թե էսիկ է, որ կա։*

*Մի ջահել նախրորդ իր տավարը թողեց, որ ընկերը պահի, ինքը վազեց գնաց քաղաք՝ ականջկլա տանելու Ձենով Օհանին։*

*Ձենով Օհան էգ գիշեր երազ էր տեսել։ Երազում Սասնա տան պարիսպը կանգնած էր, Սասնա բերդի ջահը վառվում էր, Սասնա պարտեզը կանաչել էր, Սասնա առվակը երգում էր։*

*Ձենով Օհան քնից արթնացավ, կնկանը ձեն տվեց.*

*— Վե՛ր կաց, ա՛յ Սառյա, լուս է արդեն, վե՛ր կաց, երազ եմ տեսել. կա-չկա, մեր մանուկ Դավիթ եկել է Սասուն։*

*Սառյան պառկած տեղեն ասաց.*

*— Այ հալևոր, ինչո՞ւ չես թողնում, որ հանգիստ քնենք։*

*Ձենով Օհան սրդողեց.— Ախ, կնիկ,— ասաց,— տարին գալիս ես, քո սիրտը չի ցավում Սասնա տան համար։ Վե՛ր կաց, լսի՛ր, ինչ երազ եմ տեսել. Սասնա տան պարիսպը կանգնած էր, Սասնա բերդի ջահը վառվում էր, Սասնա պարտեզը կանաչել էր, Սասնա առվակը երգում էր... Կա-չկա, մեր մանուկ Դավիթ եկել է Սասուն։*

*Ձենով Օհան վեր կացավ, չուխը հագավ։ Էն ատեն ավետաբեր նախրորդը ներս վազեց, ասաց.*

— Բարի լո՛ւս քեզ, Աղնա՛նց Օհան, ականջկլա: Իմացած լինես, որ մի աղնավուր մանուկ է գալիս, Դավիթն է գալիս:

Ձենով Օհանի սիրտը հխաց, ելավ իմաց արեց Քեռի Թորոսին ու Սասնա բոլոր մեծամեծներուն: Բոլոր սասնեցիք իմացան, ելան եկան բերդի մեյդան: Քեռի Թորոս ասաց.

— Հե՜յ, սասնեցի՛ք, աստվածություն մեզ նոր տղա պարգևեց, մեր Սասնա տան հրագը եկավ: Ելեք՝ մեկտեղ երթա՛նք մեր Դավթի առաջ:

Սասնա քաղքցիք ու գեղացիք Աղնանց իշխաններու հետ ելան խմբով գնացին Դավթի առաջ, որ շուտով տեսնեն, թե ինչ տեսակ տղա է Դավիթ: Հասան Սասնա սահմանը, տեսան, երեք անծանոթ մարդ նախրորդների հետ զրույց են անում: Դիմավորողները ձեն ավին.

— Հե՜յ, ո՞րն է Դավիթ, ո՞րն է Դավիթ:

Ձենով Օհան տեսավ, երկու փահլևանի միջև կանգնած է մի աղնավուր տղա, ասաց.

— Քեռի Թորոս, կա-չկա, էսիկ է մեր ծուռ Դավիթ:— Մոտեցավ, հարցրեց.— Այ տղա, դու ո՞րտեղացի ես:

Ասաց.— Ես Սասնա քաղքեն եմ:

— Սասնա քաղքի մեջ ես քեզ չեմ տեսել: Դու Սասնա մեջ մարդ ունե՞ս:

Դավիթ ասաց.— Իմ մերը, Իսմիլ խաթուն, ասում է՝ ես էնտեղ ունեմ երկու հորղբեր:

— Անուններն ի՞նչ է:

— Ձոջի անունը Վերգո է, պստիկի անունը՝ Օհան:

Ձենով Օհան Դավթին ամուր գրկեց, երկու թուշը պագեց, ասաց.

— Վա՜յ, Դավի՛թ, մեռնե՛մ քեզի, էդ դո՞ւ ես: Ես քո հորղբերն եմ, Ձենով Օհան ես եմ:

Դավթի տրեխները կտրտված էին, զուլպաները՝ մաշված, ինքն անոթի էր, վայրի խոտեր ուտելուց՝ մի քիչ էլ ծուռ:

Սասնա քաղքցիք ու գեղականները ձեռ էին տալիս Դավթին, ողջունում էին, բարի գալուստ ասում, իսկ Դավիթ մտածկոտ քայլում էր համփան, գլխի չէր ընկնում, որ էդ բոլոր մարդիկ Սասնա երկրան են, եկել են իր առաջ, իրեն պատիվ են տալիս: Մտածկոտ քայլում էր համփան: Ամաչում էր ասել, որ անոթի է:

Ձենով Օհան կանգ առավ, Դավթի թշերը նորեն պագեց, ասաց.

— Հե՜յ, սասնեցի՛ք, աղբերնե՛ր, քուրե՛ր, ձեր աչքը լո՛ւս, մեր աչքը լո՛ւս, մեր Սասնա տան հրագն է եկել, մեր մորամեկ Դավիթ:

Ձենով Օհան, Քեռի Թորոս ու Սասնա ժողովուրդը Մհերի որդուն տարան բերին քաղաք, իջեցրին էն սենյակը, որտեղ մի ժամանակ առաջ նստում էր Մհեր: Նստեցրին, գինի խմեցին, էղնիկի միս կերան, ուրախություն ու քեֆ արին, Դավթի երեսը պագեցին, էլի պագեցին, էլի պագեցին, ու մեկ-մեկ ելան, կաց-բարով ասին, գնացին:

Մնացին մենակ Դավիթ ու Ձենով Օհան:

— Է, հորղբե՛ր,— ասաց Դավիթ,— ո՞նց ես, ո՞նց էք ապրում:

— Որդի՛,— ասաց Օհան,— փա՛ռք աստծու, իր ողորմությամբ ու քո հոր գերեզմանով ապրուստ ենք անում:

Սասնա քաղքի մեջ կար մի կաղ տերտեր։ Ձենով Օհան Դավթին տարավ էնոր մոտ, ասաց.

— Տերտե՛ր, մեր Դավթին սաղմո՛ս կարդացրու։

— Աչքիս վրա,— ասաց կաղ տերտերը։

Անցավ մի ժամանակ, մի օր Դավիթ ասաց.

— Հոպե՛ր Օհան, էսպես պարապ-սարապ սաղմոս կարդալով ապրել չի լինի։ Դու ջոջ մարդ ես, քաղքի մեջ պատիվ կունենաս, ինձ մի գործ գտիր, աշխատեմ, ապրեմ։

Ձենով Օհան ասաց.— Լաո, դու ի՞նչ գործ ես ուզում։ Մեր գործը ռանչպարություն է։ Ռանչպարություն քո ձեռքեն կգա՞։

— Ինչո՞ւ չի գա։ Կանեմ, կավորեմ։

Ձենով Օհան ելավ գնաց քաղքի մեյդան, էնտեղ կանգնած քաղքի ջոջերուն խնդիրք արեց.

— Մեր Դավթին մի ռանչպարություն տաք, աշխատի, ապրի։

Քաղքի ջոջերն իրար հետ խորհուրդ արին, ասին.

— Դավիթ պստիկ է, թո՛ղ լինի Սասնա գառնարած։

Ձենով Օհան դարձավ եկավ տուն.

— Դավի՛թ, գառնարածություն կանե՞ս։

— Ինչու՞ չեմ անի։ Շատ լավ ես արել, հոպե՛ր, որ տվել ես ինձ գառնարած։

Լուսուն Ձենով Օհան ելավ, չինել տվեց մի զույգ պողպատե կոշիկ, մի պողպատե կոռ, ասաց.

— Լաո՛, էգուց կելնես, քաղքի գառները կտանես մեր Սասնա սար, էնտեղ լավ արոտ կա, կարածացնես, կեսօրին մաղալ կտաս աղբրի մոտ, կսպասես, մինչև քեզ հաց բերեմ։

Լուսուն Դավիթ պողպատե կոշիկները հագավ, պողպատե կոռն առավ, գնաց կանգնեց նախրագնան, կանչեց.

— Հե՜յ, գառնատերե՛ր, հե՜յ, ուլատերե՛ր, ձեր ուլն ու գառը դո՛ւրս հանեք, բերե՛ք, տանեմ Սասնա սար, արածացնեմ։

Քաղքցիք իրենց ուլն ու գառը բերին նախրագնա։

Դավիթ ժողվեց, առաջն արավ, քշեց, որ տանի արոտատեղ։ Մարդիկ երբ տեսան Դավթի կուռն ու կոռը, շատ վախեցան, ասին.

— Օհա՛ն աղբեր, վա՜յ թե Դավիթ պողպատե կոռով զարկի մեր գառներն սպանի։

Ձենով Օհան դարձավ Դավթին.

— Մեռնե՛մ քեզի, Դավի՛թ, հարևաններ են, դուռ ու դրկից են, պողպատե կոռով չզարկես, գառներն սպանես։

— Յա՜, հոպե՛ր, ես հո ծուռ չե՜մ։

Գառներն առաջն արավ, բարձրացավ Սասնա սարի լանջերը, էնտեղ արածացրեց մինչև կեսօր։ Գառները կուշտ կերան։ Դավիթ գառները ժողեց մի քարայրի մեջ, ինքը մտավ մի մեծ քարի շվաք, պառկեց ու քնեց։

Շատ անցավ, քիչ անցավ, Դավիթ քնեն ելավ, տեսավ քարայրը դատարկ է։ Էս կողմ նայեց, գառ չկա, էն կողմ նայեց, ուլ չկա, անհետ կորել են։ Դավիթ կանգնեց քարի գլուխ, բոռաց.

*— Հայ-հա՜յ, սարե՛ր, Սասնա՜ սարեր, ո՞ւր են իմ գառները, ո՞ւր են իմ ուլերը։*

*Դավթի բռռալուց աճռելի մի գըմգըմրոց ընկավ սար ու ձոր։ Աղվեսները, նապաստակները, կզաքիսները, ինչքան որ կային, էս քարի տակեն, էն թփի տակեն դուրս թռան, փախան։ Դավիթ ասաց.*

*— Վո՜ւյ, իմ ուլերը ո՛նց են փախնում։*

*Ասաց ու վազեց ետևներեն, բռնեց բոլորին, որուն քարի տակեն, որուն թփի տակեն. բռնեց, բերեց, խառնեց իր գառներուն։ Դու մի՛ ասի, Դավթի գառները արածելով էլի եկել հավաքվել են քարայրի առաջ։ Դավիթ բոլորին մեկտեղ քշեց քարայր։*

*Ձենով Օհան Դավթին հաց բերեց ու տեսավ պոզպատի կոշիկները կտրտվել են, կոռը մաշվել է.*

*— Մեռնե՛մ քեզի, Դավի՛թ, էս ո՞նց է քո բանը։ Քեզ օրական զույգ մի կոշիկ ու մի կոռ որ տամ կարել, քո վարձը չի հանի։ էլ մեր օգուտն ի՞նչ կմնա։*

*Դավիթ գանգատվեց.— Է, հորեղբա՛յր, էսօր էնքան եմ վազվզել, որ կոշիկ չի մնացել ոտիս։ Էգուց ես էլ գառ չեմ արածացնի։*

*— Ի՞նչ է, Դավի՛թ, գառնարածությունն անուշ բան չէ՞։*

*— Անուշ բան է, հորեղբա՛յր, արևս վկա, անուշ բան է։ Էս կարմիր գառներն ու սև ուլերը շատ հանգիստ են, շատ խելոք։ Էնոնց հետ շատ լավ գլուխ եմ հանում։ Բայց էն խատուտիկները, երկար-պոչերը, ցիցականջները հոգիս կերան. ամբողջ օր փախնում են, կանգ չեն առնում։*

*Ձենով Օհան ասաց.— Այ Դավի՛թ, մենք երկար-պոչ ու ցիցականջ ուլեր ո՞րտեղից ունենք։*

*— Ունենք, հորեղբա՛յր, խատուտիկ, ցիցականջ, թմբլապոչ ուլեր էլ կան, շա՜տ կան։*

*Ձենով Օհան ասաց.— Էդ գառները քարայրից մեկ դո՛ւրս հան, տեսնեմ։*

*Դավիթ մտավ քարայր, կոռը զարկեց էս քարին, էն քարին, բռռաց, ու կզաքիսները, նապաստակները, աղվեսները բոլոր դուրս թռան, փախան։ Դավիթ քարայրից ելավ, ասաց.*

*— Յա՜, հորեղբեր, ինչո՞ւ թողիր, որ իմ ուլերը փախնեին։*

*Ձենով Օհան ասաց.— Լա՛ո, աստված քո տունը չավրի. դրանք ուլեր չեն, գազաններ են, թո՛ղ գնան։*

*Դավիթ բարկավ.— Է, դու իմ ուլերը փախցրիր, տերերն ինձմեն ուլ կուզեն, ես ի՞նչ պատասխան տամ։*

*Դավիթ նորեն ընկավ սար ու ձոր, փախած գազաններու ետև. էնքան լարեց, էնքան չարչարվեց, որ լեզուները դուրս թափեցին, հոգնեցին, զարկվում էին ոնց որ տիկ։ Դավիթ բոլորին էլի հավաքեց բերավ խառնեց իր գառներուն, ասաց.*

*— Էս տերով-տիրամեռները հա փախնում են, չեն թողնում, որ ես հանգըստանամ, բրդուջ մի հաց ուտեմ։*

*Գազանները Դավթի ահից էլ չփախան։*

*Իրիկուն Դավիթ իր ուլն ու գառը քշեց քաղաք. բերեց կանգնեցրեց նախրագնան, ձեն տվեց.*

*Հե՜յ, ուլատերե՛ր, հե՜յ, գառնատերե՛ր,*
*Եկե՛ք, ձեր ուլերն իմ հոգին կերան,*
*Ով որ մեկին ուներ, ես տասն եմ բերել,*
*Ով որ տասն ուներ, արել եմ քսան։*

Քաղքցիք ամեն կողմեն եկան, իրենց գառները ջոկեցին, տարան, հետն էլ, ով ինչքան կարցավ, կուղ, նապաստակ, աղվես։ Նապաստակները մորթեցին կերան, աղվեսներն ու կուղերն էլ բուրդ արին, հագան։

Էն օրվանեն մինչև էսօր սասունցիք սովորեցին, որ նապաստակ ուտեն, ուտեն, կուղն ու աղվեսն էլ բուրդ անեն, հագնեն։

Իրիկուն Ձենով Օհան Սասնա ցեղերուն կանչեց, ասավ.— Էս չեղավ. Դավիթ ուլ ու նապաստակ չի ջոկում. ամբողջ օրը ընկնում է գազաններու ետև. օրական մի զույգ պողպատե կոշիկ է մաշում։ Ձեզ կանչեցի, որ ալաշանք անենք, Դավթին տանք մեկ ուրիշ գործ։

Սասնա ցեղերն ասին.— Հա, ջանը՛մ, աղվես ու նապաստակ չի թողել սարում, մեր սրտը կերեց։

— Հապա ի՞նչ անենք Դավթի հետ։

— Բերե՛ք անենք նախրորդ։

Ձենով Օհան Դավթի համար շինել տվեց էլի մի զույգ պողպատե կոշիկ, էլի մի հաստ պողպատե կոտ։ Դավիթ լուսուն գնաց կանգնեց քաղքի նախրադռան, կանչեց.

— Հե՜յ, կովատերե՛ր, հե՜յ, գոմշատերե՛ր, ձեր տավարը բշեք, բերե՛ք, տանեմ արոտ։ Գառներ ու հորթեր չեմ տանի, պես-պես կովեր ու գոմեշնե՛ր բերեք։

Քաղքցիք տավարը բերին թողին Դավթի առաջ։

Դավիթ էս անգամ նախիրը տարավ Սասնա դաշտ։

Նախիրը թողեց արոտ, ինքը մեկնվեց մի քարի շվաքում՝ քնեց։ Շատ քնեց, քիչ քնեց, արթնացավ, տեսավ նախիրը չկա։ Դու մի ասի՝ տավարն արածելով բարձրացել է սարը, կորել անտառում, ձոր ու կապանի մեջ։ Դավիթ բարկած ընկավ դես ու դեն, փնտրեց իր նախիրը, բարձրացավ մի կարկառ քարի գլխին, գոռաց.

— Հայ-հա՜յ, սարե՛ր, Սասնա՛ սարեր, իմ նախիրն ո՞ւր է։

Դավթի գոռոցից ամպի գրգռյուն ընկավ սար ու ձոր։ Էս անգամ էլ իրենց որջերեն լույս աշխարհ թռան անհաշիվ գել, արջ, վագր ու առյուծ։

— Վա՜յ, ես ձեր տիրոջ հե՛րն անիծեմ, էլի փախան։

Դավիթ ընկավ էդ վայրի գազաններու ետև, էնքան վազեց, էնքան լարեց, մինչև հոգնեցին, լեզուն դուրս թափեցին, կանգ առան։ Դավիթ բռնեց գելին մի բոլեն, արջին մի քարայրեն, վագրին մի սարեն, առյուծին մի ձորեն. բռնեց, բերեց խառնեց իր նախրին։ Նախիրն էլ սարում արոտեն կշտացել, իջել էր դաշտը, ջուր էր խմել ու մաղալ արել գետափին։

Դաշտը լցվել էր գազաններով։ Դրանք Դավթի ահուց իրարու դիպչել չէին իշխենում։ Մեկը որ շարժվեր, Դավիթը բարձրացնում, գետին էր զարկում էնպես, որ խրվում էին հողի մեջ։

Կեսօրին հորղբերը Դավթին հաց բերավ, տեսավ՝ դաշտը լիքն է պես-պես գազաններով. Ձենով Օհան լեղաճաք եղավ, հեռվեն ձեն տվեց.

— Դավի՛թ, էդ ի՞նչ ես արել։

Դավիթ պատասխանեց.— Նախիրը մաղալատեղ եմ բերել, հորղբե՛ր։ Անոթի եմ, հաց բերի՞ր։

Ասաց.— Արի, քո հացն ա՛ռ, ես չեմ գա քո մոտ։


— Ինչո՞ւ, հորղբե՛ր։

— Աստված քո տո՛ւնը շավրի, վագր ու առյուծ բերել, խառնել ես նախրին, հարցնո՞ւմ ես։

Դավիթ գնաց, իր հացն առավ եկավ նախրի մոտ։

Ձենով Օհան դարձավ, ափալ-թափալ հասավ Սասուն, կանչեց.

— Հե՜յ, սասնեցի՛ք, քաղքի դարպասները փակե՛ք, ձեր տան դռները գոցե՛ք. Դավիթ ինչքան գել, արջ, վագր, առյուծ կա, բռնել խառնել է նախրին, իրիկուն կբերի քաղաք։ Ձեր դռները փակե՛ք, ձեր ճարը տեսե՛ք։

Իրիկվան Դավիթ նախիրը քշեց, բերեց կանգնեց նախրագնան, կանչեց.

Հե՜յ կովատերե՛ր, հե՜յ, գոմշատերե՛ր,
Եկե՛ք, չալ կովերն իմ հոգին կերան,
Ով որ մեկն ունի, ես տասն եմ բերել,
Ով որ տասն ունի, արել եմ քսան։

Տեսավ, մեկը չի գալիս, որ իր տավարը տանի տուն։ Դավիթն էլի կանչեց, էլի ձեն ավեց, բոռաց. քաղաքը մունջ էր, դարպասները՝ փակ։ Դավիթ ասաց.

— Եկա՞ք ձեր տավարը տանեք, բարով դար, չեկա՞ք, ջհանդամը։ Դե արի՝ մարդկանց լավություն արա։ Ես էնոնց համար սար ու ձորեն քաշան լավ պետ-պետ կովեր բերեմ, էնոնք դուռը փակեն վրաս, չգան տանեն իրենց նախիրը, որ ես էլ տուն գնամ, քնեմ։

Ասաց. պառկեց նախրագնացի հողերու մեջ, քոլոզը դրեց գլխի տակ ու քնեց մինչև լուս։

Լուսուն արթնացավ, տեսավ, բոլոր գազանները փախել են սար, մնացել են միայն Սասնա կովերն ու գոմեշները։ Դավիթ էլի բոռաց, քաղքցիք ելան, վախվխելով դռները բաց արին, եկան, իրենց կովն ու գոմեշը ջոկեցին, տարան տուն։

Դավիթ ասաց.— Հայ-հա՜յ, ձեր տո՛ւնը շինվի, ժամանակին չեկաք, նախրի պարարտ կովերը փախան, լղարները մնացին։

Ասաց, գնաց իր թոփալ տնատերի տունն, ամբողջ օրը սաղմոս կարդաց, իրիկվան տուն եկավ քնեց, որ լուսուն նախիրն էլի տանի արոտ։

Սասնա ջոջերը եկան Ձենով Օհանի մոտ, ասին.

— Օհա՛ն-աղբեր, էս մեկն էլ չեղավ։ Էս Դավիթ օղորդ որ ծուռ է, արջ ու կով չի կարնա ջոկել իրարուց։ Սա մեզ վագրի ու առյուծի բաժին կանի, մեր կնիկներն ու ճժերը կոտորամորթենի։

Դավիթ լսեց. նեղացավ.

— Ձե՛ր գլո՛ւխն ուտի ձեր նախիրը, էլ ես չեմ լինի ձեզ համար նախրորդ։

Ձենով Օհան ասաց.— Որ էդպես արիր, ես չեմ կարնա քեզ պահեմ։ Ուր կերթաս, գնա՛։

Դավիթ էստեղ շատ մշտացավ, դուրս եկավ քաղքեն, պառկեց մի քարի տակ, միտք արավ, միտք արավ, քնեց։

Լուսուն Քեռի Թորոս եկավ քաղաք, հարցրեց.

— Ո՞ւր է մեր տղան, ու՞ր է Դավիթը։

Քաղքի մեջ ինչքան մարդ կար, Դավթին հայհոյեց, ինչքան կնիկ, Դավթին անիծեց։

Քեռի Թորոս Դավթին փնտրելով քաղքեն ելավ, տեսավ, տղան քնել է մի քարի շվաքում, ոչ գլխի տակ բարձ ունի, ոչ էլ վրան՝ ծածկոց։ Քեռին էնքան պինդ մի քացի տվեց, որ թե չլիներ Դավիթ, ուրիշը լիներ, հավատա, յոթ գազ կերթար գետնի տակ։

Դավիթ արթնացավ, ասաց.

— Յա՜, Քեռի՛ Թորոս, ինչո՞ւ զարկեցիր։

— Բա էգ ի՞նչ ես արել, տո ծո՛ւռ։

— Քեռի՛, վալլա՛, ես մեղավոր չեմ։ էն բրդոտ կովերը շատ էին փախնում, ես էլ տփեցի։ Քաղքցիք բոլկան, նախիրն ինծմեն առան։

Քեռին ասաց.— Տո խե՛, տո Սասնա՛ ծուռ, տո լա՛ո, էն շատ փախողները թո՛ղ փախնեին, գնան սար, քիչ փախնողները դու առա՛ջդ արա, բեր տու՛ն։ Հասկացա՞ր։ Դե վե՛ր կաց, վե՛ր կաց, գնանք. Սասնա ջոջերուն ես աղաչանք եմ արել, որ քեզ էլի նախիր տան, տանես արոտ։

Դավիթ ասաց.— Չէ, քեռի՛, ես էս քաղքի մեջ մնացողը չեմ։ Ինձ ուրիշ քաղա՛ք տար, գնամ էնտեղ։

Քեռի Թորոս Դավթին տարավ իր տուն։

## 8. ՀԱՐԻՍԱՆ, ԱՎԱԶԱԿ ԴԵՎԵՐԸ

Ժամանակ անցավ, ժամանակ եկավ։

Գարուն էր, նոր բացվող գարուն։ Դավիթ ասաց.

— Քեռի՛ Թորոս, գարուն է, վարուցանքի, հոտաղ-մշակի օրեր են։ Մենք էս քաղքում ուտող բերան, լցվել ենք էս տան մեջ, հո դու մեզ պահելու պարտական չե՞ս։ Վե՛ր կաց, մեզ մի գործի վրա՛ դիր, աշխատենք, ապրենք։

Քեռի Թորոս ասաց.— Հայ-հա՜յ, Դավի՛թ, քո արևը չմեռնի, դու՞ ես ինձ համար աշխատող։

Դավիթ վիրավորվեց.— Ինչո՞ւ աշխատող չեմ։

Քեռի Թորոս ծիծաղեց.— Վա՛ղն արի, տո ծու՛ռ, աշխատողի՞ս մտիկ։ Տո դու մեկ տարի բանես, մի կոտ կորեկ վարձ բերես տուն, ես տանեմ ջաղաց, աղամ, քեռակինդ պապանձիկ թխի, դու էլ մի հաց առնես տաս ինձ, ասես՝ ա՛ռ, քեռի, էս իմ աշխատանքն է, առ էս հացը կե՛ր,— էլի՛ չեմ հավատա։

Դավիթ նեղացավ.— Ինչո՞ւ չես հավատա, քեռի՛։ Ով էգպես է, ինձ էլի մի տեղ տար, տո՛ւր նախրորդ։

Քեռի Թորոս գիտեր, Դավիթ խոսքը որ մի անգամ ասաց, կանի։ Վեր կացավ, Դավթին առավ գնաց հարևան Դաշտու Պաղրիալ. տվեց էնտեղ նախրորդ, խրատեց, ասաց.

— Լա՛ո, տավարը լուսուն կտանես մեր Սասնա սարերի եռն, էնտեղ արոտ կա, Սիպտակ մի քար կա, աղբյուր կա։ Տավարը կարածացնես մինչև կեսօր, կբերես էգ աղբրի վրա, ջուր կտաս։ Չընկնես էն շատ փախողներու եռն, հա՞։

Դավիթ ասաց.— Քեռի՛, մեկ ես գիտեմ, շատ փախնողը տավար չէ, գազան է, թո՛ղ փախնի, ես իր տերու հերն անիծեմ։

— Այ, զորանա՜ս,— ասաց Քեռի Թորոս, Դավթի երեսը պագեց ու դարձավ եկավ Սասուն

Լուսուն կանուխ Դավիթ ելավ, Դաշտու Պաղրիկալի նախիրը քշեց ու տարավ Սասնա սարի ետև։

Նախիրը թողեց արոտ, ինքը մտավ անտառ, մի մեծ կոպալ կտրեց իր համար, դրեց ուսին, ելավ ու կանգնեց իր նախրի առաջ։

Էդ օրը նախիրն արածացրեց մինչ ճաշ, ճաշին բերեց աղբուր, ջուր տվեց ու քշեց գեղ։ Դաշտու Պաղրիկալցիք շատ զարմացան, ասին.

— Դավի՛թ, էս օրը կեսօրին նախիրն ինչո՞ւ բերիր։

Ասաց.— Բա ե՞րբ բերեմ։

Ասին.— Իրիկվան, արեմտոցին։

Լուսուն Դավիթ իր նախիրը էլի տարավ սար։ Տեսավ, յոթ նախիր էլ ուրիշ գեղերեն բերին։ Դավիթ գնաց էդ յոթ նախրի տավարը քոմեց, բերեց խառնեց իր նախրին։

Նախրորդները եկան.— Դավի՛թ, էդ նախիրները մերն են, ինչո՞ւ բերիր խառնեցիր քո նախրին։

Դավիթ ասաց.— Յա՜։ Չէ, էդ իմ նախրեն էր երեկ էտեղ մնացել։

Ասին.— Չէ, Դավի՛թ ջան, էդ մեր տավարն է, քո տավարը չի։ Քո նախիրն ուրիշ գեղեն է, մերն՝ ուրիշ գեղերին։

Դավիթ ասաց.— Որ էդպես է, եկե՛ք աղբերանանք։

Աղբերացան։ Նախրորդներն ասին.

— Դավի՛թ, արի քեզ համար մի հով չինենք, դու պառկիր, քնի՛ր։ Քո նախիրը մենք մինչև իրիկուն կպահենք, իրիկվան դեմ կչոկես, կտանես տուն։

Դավիթ ասաց.— Չէ, աղբրտի՛ք, մկա զարուն է, խալխի տավարը լղարել է, անձրև է, ցեխ է, անասունները խրվում են ցեխը, մրսում են։ Ես պետք է միշտ ական մնամ, որ ողնված անասունը ցեխեն հանեմ։

Դավիթ օրական յոթ-ութ անասուն ցեխեն հանում էր, ոտները կապում իրար, անցկացնում իր կոպալի վրա, բերում գեղ։ Կնիկները Դավթին օրհնում էին.

— Շատ ղատես, շատ ուտես, լա՛ո, քիչ ղատես, շատ ուտես։

Նրանք Դավթին շատ լավ պատվում էին, հաց ու հավկիթ էին տալիս, ձվածեղ էին անում, միշտ հոգ էին տանում, որ անոթի չմնա։ Ամբողջ գեղը Դավթին գովում էր.

— Մինչև մկա մեզ էդպես նախրապան չէր եղել։

Դավիթ գեղի նախիրն արածացրեց էնքան լավ, որ մինչև ամառ անասունները գիրացան, պնտացան, կովերն առատ կաթ էին տալիս, եզները ժիր լուծ էին քաշում։

Մի օր Դավիթ իր նախիրը տուն բերելիս տեսավ, Սեղանասարեն ահագին մի ժեռ քար պոկված վար է գլորվում։ Մազ մնաց նախիրը ճխլտեր, գնար գեղի վրա։ Դավիթ վազեց ու ձեռը դեմ տվեց քարին։ Քարը կանգ առավ, անշարժ մնաց։ Դավթի ձեռը դաջվեց քարի վրա։ Մինչև էսօր էլ ասում են «Դավթի քար»։

Եկավ Աստվածածնա կիրակին։

Էդ օր սասնեցիք ուխտ են գնում Աստվածածնա վանք, հարուստ մարդիկ պատարագ են անել տալիս, ցասման հարիսա են պատրաստում, ժամից հետո ուխտավորները գնում են պատարագի տիրոջ մոտ, հարիսա են ուտում։

Էդ Աստվածածնա կիրակի լուսուն Դավիթ իր նախիրը տարավ սար, կուշտ կերցրեց, հետո բերեց Սիպտակ աղբրի վրա։ Յոթ գեղի նախրորդները հավաքված էին

էնտեղ։ Սասունցիք. մեծ ու պուճուր, իշխան ու ռամիկ, խմբով ճանապարհը բռնած, գնում էին գեղի սար։ Դավիթ ասաց.

— Ջանը՛մ, էսոնք առավոտնեն մինչև ճաշ գնում են ու գնում։ Ո՞ւր են գնում։ Էդ կողմերում ի՞նչ կա։

Նախրորդներն ասին.— Յառաման ժամ է.·Դավի՛թ, ուխտ են գնում։ Սըսըռա կա էն սարի։ Աստված բարկացել է, ցասում է թափել։ Կերթան սուրբ Աստվածածին, մատաղ կանեն, հարիսա կեփեն, ցավի ու զուռնա կզարկեն, կպարեն, կուրախանան, հարիսա կուտեն, կիջնեն ցած։

Մի նախրորդ հառաչեց.— Վա՜խ, վա՜խ, մեզ դրել են էս նախրի մոտ, իրենք հարիսա են ուտում։ Մեկն էլ չկա, գնա մեզ հարիսա բերի, մենք էլ մի գդալ հարիսա ուտենք։

Նախրորդներն իրար մոտիկ արին, մեկն էլ հարիսայի չգնաց։ Դավիթ վեր կացավ։

— Դուք իմ նախիրը պահեք, ես գնամ։ Էնքան հարիսա բերեմ, որ ուտեք, պառավեք։ Բայց իմ նախրեն որ մի պոչ պակսեց, յոթից գլուխն էլ կկտրեմ։

Է, նախրորդներն իրենց գլխեն հո ձեռ չէի՞ն քաշել, որ Դավթի նախրեն պոչ պակսեր։

Դավիթ գնաց բարձրացավ ուխտատեղ, հարցուփորձ արավ, թե որտեղ է հարիսան։ Ասին.

— Այ, էնտեղ է։

Դավիթ գնաց էնտեղ, տեսավ յոթկանթանի պղինձը դրած է թոնրի մեջ, մի կնիկ էլ պղնձի մոտ կանգնած՝ խառնում է հարիսան։ Դավիթ խնդրեց.

— Նանե՛, ինձ մի փչուր հարիսա տաս։ Յոթ գեղի նախրորդ հրեն ժողովվել են Սիպտակ աղբրի մոտ, գեղի աղքատը որ կա, նախրորդն է, քո հոր հոգուն մեզ մի փչուր հարիսա տաս, տանենք ուտենք։

Կաղ կնիկն ասաց.— Գնա կորի՛, Սասնա ծռե՛ռ։ Չգիտե՞ս, որ ժամը չի արձակվել։ Կեցիր՝ ժամուց ելնեն, տերտերը գա հարիսան օրհնի, նոր հարիսա կուտենք։

Դավիթ ասաց.— Նանե՛, նախիրս պա՜հ եմ տվել նախրորդներուն, վախում եմ՝ թողնեն, անասուններս գնան ընկնեն ուրիշի արտն ու խոտհարքը. ես վռազ եմ, հարիսա կտաս, տո՛ւր մկա։

Կաղ կնիկն ասաց.— Չեմ տա։ Քանի տերտերը չգա, հարիսան չօրհնի, չեմ տա։ Ժամավորն էլ պիտի գա, իր հարիսան ուտի, նոր ավելցուկը տամ՝ տար քո նախրորդներուն։

Դավիթն ասաց.— Նանե՛, ավելցուկը շատ են տալիս։— Ասաց, բարկացավ, ձեռք թալեց՝ պղինձը թոնրեն հանեց, իր կոպալն անցկացրեց պղնձի կանթերը. շալկեց, ինչքան որ հաց էին թխել, առավ անթեց, յոթ չերեփ էլ վերցրեց, ասաց.

— Էսոնք էլ մեզ գդալ։ Ձեր մատաղն աստված հալա՛լ անի։

Դավիթ լոքերը գցելով գնաց իր սարը։

Կաղ կնիկը հարայ տվեց.— Այ խա՜լխ, ձեր տու՛նն ավրի, Սասնա ծուռ Դավիթ եկավ, հարիսան ու հացերն ամեն առավ, գնաց։

Ուխտավորի մինը աքլորացավ.

— Ելեք՝ զարկե՛նք էդ Սասնա պապաճիկ ուտողին, մեր հարիսան ձեռից խլենք։



Մի հալվոր մարդ ասաց.— Բան չունեք, ջանը՛մ։ Էդիկ Մհերի որդին է, համ

ծուռ, համ ազնավուր, թե որ կարցաք երեսունկանթանի պղինձը երեք հոգով գետնից վերցնել, գնացե՛ք Դավթի վրա կռիվ, թե չէ մի՛ գնաք, ձեզ կզարկի, կհաշմի, կանի խայտառակ, մեղք եք։

Դավիթ եկավ հասավ Սիպտակ աղբյուր, հարիսան ու հացը վար դրեց, կանչեց ընկերներուն.

— Տղե՛ք, եկեք՝ հարիսա՛ կերեք։

Տեսավ. նախրորդներն ահու ցամքած են, ոչ մոտ են գալիս հարիսին, ոչ ուտում։ Դավիթ ասաց.

— Հե՛, հե՛, հե՛, գիտեմ ինչո՞ւ եք նոթերը կախել. ես հացն ու հարիսան բերի, եղն ու աղը մոռցած է՞, միա հարիսան կերե՛ք, իրիկվան տուն կերթանք, աղն ու եղն էլ կուտենք վրան։ Էլ ինչո՞ւ եք նոթերը կախել։

Մի նախրորդ ասաց.— Ինչ հարիսա, Դավի՛թ, ի՛նչ աղ ու եղ. մենք որ նոթերը չկախենք, էլ ո՞վ կախի։ Դու որ գնացիր ուխտատեղ, քառսուն ավազակ դև եկան, նախրեն քառսուն կով քշեցին, տարան։

Դավիթ ասաց.— Ցա՛հ... — հետո մի փոքր միտք արեց, ասաց.— Բան չկա, տղե՛ք, դուք էստեղ կերե՛ք ձեր հարիսան, ես կերթամ էդոնց ետև։ Ո՞ր կողմը տարան։

Նախրորդներն ասին.— Այ, էն սարով գարկեցին անցան վերև։

Դավիթ կոպալն ուսին դրեց, գնաց բարձրացավ սարը, շրջվեց էն կողմը։ Շատ ման եկավ, քիչ ման եկավ, տեսավ քարանձավեն պալլան-պալլան ծուխ է բարձրանում։ Ծուխը բռնեց, գնաց մինչև քարայրի դուռ։ Դևերը քառսուն կովը բերել մորթել էին, լցրել քառսունկանթանի պղինձը, դրել էին օջախի վրա, թըլթըլթալեն եփվում էր։

Դավիթ քառսունկանթ պղինձը վերցրեց ու շուռ տվեց օջախի վրա, քառսուն կովի կաշին ժողվեց լցրեց պղինձը, գնաց մտավ քարայր։ Քառսուն դևն էլ էնտեղ էին. որը գորգի վրա պառկել քնել էր, որը խաղ էր անում իր համար, որը գուրզի գլուխն էր պնդացնում։

Դավիթ ետ-ետ քաշվեց, քարայրեն ելավ դուրս, գնաց մի ահագին ժայռ գրկեց. բերավ դրեց քարայրի դռան դեմ, որ դևերը չփախնեն, ու որոտաձայն բռռաց։ Էնոր բռռոցից ահ ու սարսափ տիրեց ավազակներուն։ Էդոնց մեծն ասաց.

— Վուա՜յ, էդիկ Սասնա Դավիթն էր։ Ելե՛ք, ծառայություն արե՛ք, թե չէ մեզ կսպանի։

Մեկ-մեկ դուրս ելան. Դավիթ մեկ-մեկ վզները ոլորեց ու գեն հոլընդեց։ Քառսունի ականջներն էլ կտրեց, կոխեց մի փոքի մեջ, ինքը մտավ քարայր։ Մի անկյունում լիքը ոսկի էր, մի անկյունում՝ արծաթ, մի անկյունում՝ զուգս ու զոհարեղեն։ Դու մի ասի՝ էն օրվանեն, ինչ Մհեր մահացել էր, էդ ավազակ-դևերը Սասունն ավրել, թալանել, բերել ու լցրել էին էդ քարայրը։ Դավիթ ասաց.

— Հայ-հա՜յ, էսիկ մեր Սասնա թալանն է։

Մի անկյուն էլ մտավ, տեսավ էնտեղ կապած է մի սիրուն քուռակ։ Դավիթ ասաց.— «Էսիկ շատ լավ է»— Կանգնեց նայեց քուռակին, ինքն իր հետ խոսեց.

«Հորեղբե՛ր, ոսկին, արծաթը, հարստությունը քեզ, էս քուռակը՝ ինձ։ Կտաս, տո՛ւր, չես տա, քեզ էլ քառսուն դևի պես կսպանեմ»։

Դավիթ ինքնիրեն հորեղբոր կողմեն պատասխանեց.

«Դավի՛թ ջան, ինչ եմ անում ոսկին, արծաթը, հարստությունը, բոլո՛րն էլ քեզ, թուրա՛կն էլ քեզ»։

Դավիթ ինքնիրեն ասաց.— «Հա՜, շնորհակալ եմ, հրողբե՛րս»։

Երբ իր մաքում ավարը բաժանեց, պրծավ, նախորրդական մաղախը լցրեց ոսկով, բոբայրեն ելավ, կոպալն անցկացրեց պղնձի կանթը, շալկեց, գնաց հարխատեղ, հարխսա կերավ, յոթ գեղի գեղացոց հավաքեց, ասաց.

— Ձեն մի՛ հանեք, ձեզ բան պիտի ասեմ. էս մեծ պղինձը՝ ձեր պատիկ պղնձի տեղ, էս ոսկին առե՛ք, բաժնե՛ք ձեր մեջ ի փոխ ձեր կովերուն, որ դևերը տարան մորթեցին։ Էս էլ՝ ձեր քառասուն կովի կաշին։ Ձեռ չտաք, հա՜, տվե՛ք թող աղքատները հագնեն իմ հոր հոգուն։ Վա՛յ ձեր գլխին,— ասաց,— թե որ աղքեններուս վարձից կտրեք հանց մի կոպեկ. ձեր տունն ու տեղը կանեմ Դավթի ավերած։

Գեղացիք ասին.— Ջանը՛մ, աղքեններուց վարձը կտրող չկա. դու քո փորձանքն առ, հեռացի՛ր։

Դավիթը գնաց նախրատեղ, իր նախիրը ջոկեց, բերավ Դաշտու Պաղրխալ, ասաց.

— Առե՛ք ձեր տավարը, ես մկա ձեզ համար նախրորդություն չեմ անի։

Դավիթ նախիրը տերն արավ, թողեց եկավ Սասուն, գնաց ուղիղ Քեռի Թորոսի մոտ, բարև տվեց, ասաց.

— Քեռի՛ Թորոս, մեր տանը քանի՞ մարդ կա։

Քեռին պատասխանեց.— Քեզ էլ որ մարդ հաշվենք, քեզնով քառասուն մարդ կլինի։

— Քանի՞ ջվալ ունենք։

— Քոնն էլ որ ջվալ հաշվենք, քո ջվալով քառասուն ջվալ կլինի։

Դավիթ ասաց.— Քեռի՛ ջան, մի՛ նեղանա։ Մարդկանց հավաքի՛ր, քառասուն ջվալ առնենք, երթանք ոսկի բերենք։

Քեռին ասաց.— Գնա՛, շանորդի ծու՛ռ։ Հանց մի կոպեկ չբերիր, քառասուն ջվալ ոսկի՞ տի բերես։

Ասաց.— Քեռի՛, էնքան բերեմ, որ դու էլ ուտես, քո յոթ պորտն էլ։ Յա՜, մինչև ե՞րբ ես մնամ նախրորդ։

Քեռի Թորոս ասաց.— Այ տղա՛, հերիք է ծուռ-ծուռ փչես։

Դավիթ ասաց.— Քեռի՛, աղաչանք եմ անում, ելեք երթանք, թե քառասուն ջվալ ոսկի չեղավ, էնտեղ իմ վիզը կտրե՛ք։

Քեռին բարկացավ.— Ճժե՛ր, ելեք երթա՛նք։ Որ սուտ եղավ, ես էս թլոլ ծռին պիտի սպանեմ։

Դավիթ մեջքեն արձակեց իր մաղախը, ոսկին թափեց քեռու առջև։ Քեռի Թորոս ասաց.

— Յա՜... Դավի՛թ, գլխիդ, արևո՛ւդ մեռնեմ, դու սպանե՞լ ես էն ավազակ դևերուն։

Ասաց.— Վալլա՛, սպանել եմ։

Ելան առան քառասուն ջվալ, գնացին։

Դավիթ էգոնց առաջն ընկավ, տարավ հասցրեց մինչև Սեղանա սարի էն կողմը, Քարայրի դուռ։ Տեսան, դևերն ընկած են իրարու մոտ, ուռած, փքված, ամեն մեկը քանց մի Պող Բլուր։

Ցռան Վերգոն իր ջորին ջոկեց քարվանից, փախավ։ Շատերն էլ դևերուն պառկած որ տեսան, իրար հետեն ուզում էին փախնել։ Դավիթ կանչեց.

— Ո՞ւր եք փախնում, տնավերնե՛ր։ Էդոնց ողջերին ես չփախա, դուք էդոնց մեռելների՞ն եք փախնում։ Մի վախենար, բոլորին էլ սպանել եմ։ Թե չեք հավատում, տեսեք էնոնց կտրած ականջները։

Փախնողները ետ եկան, տեսան Դավիթ քառսուն դևի ականջները կտրել, կոլոնել է փոսի մեջ։

Սիրտ առան, ջորիները բշեցին դեպի քարայր։ Դավիթ քարայրի բերնեն էն ահագին ժայռը ետ տարավ, վերցրեց Քեռի Թորոսին, Ձենով Օհանին, Ցռան Վերգոյին, մտավ ներս։ Էնոնք որ տեսան ոսկու կոլոնները, ուրախությունեն ոտները գետնուց կտրվեց։ Հավաքեցին, ինչ որ կար, ոսկի, արծաթ, գոհարեղեն, լցրին չվալները, բեռնեցին ջորիներուն, դարձյալ եկան Սասնա քաղաք։

Էդ ամեն լցրին Սասնա մառանները։

Սասուն լողում էր ոսկու մեջ։

Դավիթ էդ առատ ավարեն իր համար վերցրեց միայն մի բուռակ։

**Մ Ա Ս Ն   Ե Ր Ր Ո Ր Դ**

## 9. ՍԱՍՆԱ ՊԱՌԱՎ. ԵՎ ՍԱՌՅԱ. ԵՎ ԴԱՎԻԹ ՈՐՍՈՐԴ

*Դավիթ ավազակ դևերուն որ կոտորեց, եղավ Սասնա սիրելին։ Ձենով Օհան Դավթին էլի տուն բերեց, էնոր համար գտավ մի լավ բազե, ասաց.*

*— Լա՛օ, Մհերի որդուն վայել չէ, որ նախիր արածացնի, գնա՝ քեզ համար ո՛րս արա։*

*Դավիթ վերցրեց բազեն, հեծավ դևերուց խլած էն քուռակը, ընկավ դաշտերը, կաքավ, լոր ու ճնճղուկ էր բռնում։*

*Սասնա մեջ կար իմաստուն մի Պառավ։ Ասում էին, ջահել ժամանակ Սասնա Մհերի սիրածն էր եղել։ Հիմա էդ Պառավին մնացել էր մի կորեկի արտ։ Կորեկի մեջ կային շատ լոր, կաքավ ու ճնճղուկ։ Պառավը մի օր գնաց իր կորեկին աչք ածի, տեսավ, Դավիթ քուռակը հեծած, բազեն ձեռին, կորեկի մեջ լոր ու ճնճղուկ է բռնում։*

*— Դավի՛թ,— ասաց,— արև՛դ լամ. էդ ի՞նչ ես անում, կորեկս ոտի տակ ես տվել։ Դու իմ արտի ճնճղուկնե՞րով պիտի կշտանաս։ Ճնճղուկի միսն ի՞նչ է։ Որսորդ ես, գնա սարե՛րը, էնտեղ քի՞չ եղնիկ ու վերու ոչխար կա, սպանի՛ր, բեր՝ միսը կե՛ր։*

*Դավիթ ասաց.— Նանե՛, սար որ գնամ, վերու ոչխար ինչո՞վ զարկեմ։ Կարգին նետ աղեղ չկա։*

*Պառավն ասաց.— Բա քո ողորմածիկ հերը նետ-աղեղ չունե՞ր։ Հորդ նետ-աղեղն ա՛ռ, գնա որսի՛։*

*— Իմ հոր նետ-աղեղն ո՞ւմ մոտ է։*

*— Հորեղբորդ կնկա՛նը հարցրու.— ասաց Պառավը։*

*Դավիթ եկավ տուն, հարցրեց.*

*— Հորեղբորկին, իմ ողորմածիկ հոր նետ-աղեղն ո՞ւր է։*

*Սառյան ասաց.— Վալլա՛, ես չգիտեմ, Դավի՛թ։*

*Դավիթ էլի դարձավ Պառավի մոտ.*

*— Նանե՛, իմ հորեղբորկինը չգիտի. ուր է նետ-աղեղը։*

*Պառավն ասաց.— Գիտի. մեռնե՛մ քեզի, գիտի, տեղը չի ասում։ Գնա՝ զոռո՛վ առ քո հոր նետ-աղեղը, Սառյայի՛ն նեղությու՛ն տուր, տեղը կասի։*

*— Ո՞նց նեղություն տամ, նանե՛։*

— Գնա, քարե աղա՛նձ արա, Սառյային ասա՛. «Կամ էս աղանձը կուտես, կամ կասես, ուր է հորս նետ-աղեղը»։

Դավիթ եկավ տուն, քարե աղանձ արավ, Սառյային կանչեց ասաց.— Հրող-բորկին, ձեռդ բաց անե՞ս։

Դավիթ խորամիկ տղա էր ու Սառյայի միտքը ծուռ էր էնոր վրա, ձեռը բաց արեց, որ Դավիթ բռնի։ Դավիթ էնոր ձեռը բռնեց, ասաց.

— Ասա՛, ո՞ւր է իմ հոր նետ-աղեղը։

Սառյան ասաց.— Գլխիդ, արևո՛ւդ մեռնեմ, Դավի՛թ, ես չգիտեմ, հրողբերդ գիտի։

— Չէ,— ասաց Դավիթ,— ինքդ էլ գիտես, ասա։

— Չեմ ասի։

Դավիթ քարե աղանձը լցրեց հրողբոր կնկա ձեռը, փակեց ու սեղմեց.— Ասա՛։ Սառյայի ձեռը համ էրվեց, համ ցավեց.

— Վո՜ւյ, Դավի՛թ, իմ ձեռը բա՛ց թող, կասեմ։

Դավիթ էնոր ձեռը բաց թողեց։ Սառյան ասաց.

— Չեմ ասի։

Դավիթ նորեն էնոր ձեռի մեջ քարե տաք աղանձ լցրեց ու սեղմեց։ Սառյան ճվաց.

— Վո՜ւյ, Դավի՛թ, կասեմ, կասեմ... գնա՛ ցախատուն, էնտեղ հորդ նետ-աղեղը կախած է։ Գնա բե՛ր, թե կարցար լարը կեռն անցկացնել, առ՝ տար, քեզ համար ո՛րս արա, թե չկարցար, թո՛ղ մնա իր տեղը կախած։

Դավիթ գնաց, հոր նետ-աղեղը ցախատնեն բերավ, ձեռը թալեց ու լարն անցկացրեց կեռի վրա, Սառյան զարմացավ, ասաց.

— Մհեր մի ժամ չարչարվում էր, նոր էդ լարը կեռն էր քցում։ Դու հենց որ ձեռ տվիր, լարը կեռն անցավ։ Դու քո հորմեն ուժեղ ես, Դավիթ։ Առ նետ-աղեղը, քեզ հալա՛լ։

Դավիթ ուրախացավ, հոր նետ-աղեղն առավ, գնաց, ամեն օր որս էր անում։

Դավիթ շատ խորոտ փահլևան տղա էր։ Ձենով Օհանի կնիկն էրվում էր նրա համար։ Մի օր չդիմացավ, ասաց.

— Դավի՛թ, պիտի գաս իմ փարդան, ես քեզմեն մի խորոտ փահլևան լաճ բերեմ։

Դավիթ ասաց.— Յա՜։ Չէ, հրողբորկի՛ն։ Դու իմ մերն ես, ես՝ քո որդին։

Սառյան մտածեց. «Ինչ անեմ, բռնեմ գլուխս լվամ, Դավիթ գա ջուր ածի իմ գլխին, մարմինս տեսնի, սիրտը կմեղավորվի, կգա իմ փարդան»։

Ելավ ջուր տաքացրեց, առավ տարավ ցախատուն, Դավթին էլ կանչեց, որ իր գլխուն ջուր ածի։

Դավիթ մի ձեռով ջուր էր ածում, մի ձեռով աչքերը փակել էր, որ հրողբորկնկա մարմինը չտեսնի, սիրտը չմեղավորվի։

Սառյան լողացավ, պրծավ, տեսավ Դավիթ իր աչքերը ամուր փակե՛լ է։ Սառյան կատաղեց, լաց եղավ, մազերը փետտեց, երեսը ճանկռեց, արնոտեց, նստեց իր սենյակում, չուր Ձենով Օհան տուն եկավ, հարցրեց.

— Յա՜, կնի՛կ, էդ ի՞նչ է եղել։

Սառյան ասաց.— Ի՞նչ պիտի լիներ... Ես գիտեի, դու ինձ համար որդի ես բերել, ես չգիտեի, դու ինձ համար էրիկ ես բերել տուն։

— Էդ ի՞նչ ես ասում, կնի՛կ։

— Բա՜, Գլուխ էի լվանում, Դավիթ եկավ, ձեռը թալեց ինձի, քաշքշեց։ Ջոռով փախա, ձեռից պրծա։

Ձենով Օհան ասաց.— Որ էդպես է, իրիկուն դուռը վրան կշինենք, թո՛ղ գնա կորչի։

Իրիկուն Դավիթ եկավ տուն, տեսավ դուռը ներսեն կողպած է, ասաց.

— Հրողբե՛ր, մկա կարնամ քացով զարկեմ, դուռ էլ, քո կնիկն էլ ձեր փակ դռան հետ գնաք անդունդը, բայց ի՞նչ անեմ, հերահո՛տ հրողբեր, թողի խաբած ես։

Դավիթ գնաց Պառավի տուն։

Ձենով Օհան գիշեր մինչև լուս միտք արավ, լուսուն իր կնկան ասաց.

— Կնի՛կ, դու սուտ ասիր, Սասնա ճրագն իմ տնեն հանեցիր։

Դավիթ գիշեր քնեց Պառավի տանը, լուսուն ելավ գնաց որս անելու։

Ճանապարհին տեսավ, աղավնի երամն ընկել է Պառավի արտը, կորեկ է ուտում։ Դավիթ ասաց.— Ի՞նչ անեմ, մի նետով քսան աղավ էլ զարկեմ, մնացածները կթռնեն։

Ձեռը թալեց, մի քարքի քոքահան գուբա քաշեց ու, որ տարավ-բերեց արտի էն գլխեն էն գլուխը, աղավն, կորեկ, մեկտեղ հավաքեց, արավ մի բարդոց։

Պառավը եկավ, տեսավ մի հատ կորեկ էլ չի մնացել արտում, ծնկներին խփեց, ասաց.

— Վո՜յ, գրո՛ղը քեզ տանի, Դավի՛թ, էս ի՞նչ ես բերել իմ գլխուն։

— Նանե՛, բա թողնեի, որ աղավնիները քո կորեկն ուտե՞ն։

— Կարե՛մ քո պատանքը, Դավի՛թ, քո զոռն իմ արտի՞ն ընկավ։ Անտեր կրա՛կը թափվի գլխուդ, անհո՛գի թլոլ, Սասնա՛ ծուռ։ Քո հերը, ողորմածիկ Առյուծ Մհեր որ կար, աղքատի հերն ու մերն էր։ Դու՞ պիտի լինես էն հոր տղան։ Էս ի՞նչ ես արել։ Իմ հույսը էդ փշուր կորեկն էր, դու քարահան տրորեցիր։ Բա էլ ի՞նչ ուտենք ես ու մեկ-միննուճար աղջիկս։

— Նանե՛, ախար...

— Ախար ու զահրումա՛ր քեզ։ Դու որ էդքան զորեղ տղամարդ ես եղել, ինչո՞ւ չես գնում Ծովասար։

— Ծովասարում ի՞նչ կա։

— Ցավս քո սի՛րտը կա։ Բա դու չգիտե՞ս, որ Ծովասար քո ողորմածիկ հոր որսատեղն է։

— Չա՜հ...

— Բա՛, Ձորս բոլոր պարիսպ է քաշած, մեջը, ինչքան ուզես, այծ, գել, կխտար, եղնիկ, վերու ոչխար։ Էդոնք չեն կարնա դուրս գան պարսպի ներսեն։ Մսրա Մելիք եկավ, քո հոր Ծովասար զավթեց։ Մկա հրաման չկա, որ սասնեցիք Ծովասար գնան, որս անեն։ Ինչո՞ւ դու չես գնում, տիրես քո հոր որսատարին։ Իմ կորեկի վրա՞ ես փահլևան կարել։

Դավիթ ասաց.— Նանե՛, մեռնե՛մ քո հոգուն, ախար ես չգիտեի, որտեղ է իմ հոր որսատեղը։

Պառավն ասաց.— Դու մենակ իմ կորեկի տեղը գիտես, վայա՛մ ջիժլուկ Ջրնձ-գուկի փահլևան։ Դո՞ւ պիտի լինես էն հոր որդին։

— Նանե՛, մի՛ անիծիր, ջահել, որբ տղա եմ։ Դու ինձ ասա՛, ո՞րտեղ է իմ հոր Ծովասար։

— Գնա՛, ձեռ թալ հոլոլոր ծի՛քը, թո՛ղ քեզ տանի տեղը ցույց տա։

Դավիթ եկավ ձեռ թալեց հոլոլոր ծիքը.

— Հոլոլոր, ո՞րտեղ է Ծովասար, ո՞րտեղ էր իմ հերը որս անում. ցույց պիտի տաս ինձ։

Ձենով Օհան ասաց.— Լա՛ո, խաբել են քեզ, քո հերը որսատեղ չուներ։

Դավիթ բռռաց.— Ունե՞ր, ես իմացել եմ, սուտ մի՛ ասի։ Դու ինձ պիտի տանես իմ հոր Ծովասար։

Ձենով Օհան ասաց.— Քեզ խրատողի բերանը կոտրվեր։ Ինչ ասեմ, որդի՛, էն օրվանեն ինչ քո հերը, Առյուծ Մհեր, մեռավ, Մըսրա Մելիք եկավ, Ծովասար խլեց, ասաց՝ էսիկ իմ որսատեղն է, գնաց։ Էն օրվանեն մենք չենք իշխենում գնալ Ծովասար։

Դավիթ ասաց.— Հորեղբե՛ր, դու նշա՛նց տուր ինձ մեր Ծովասարի համփան, ես գնամ էնտեղ, Մըսրա Մելիք որ գա, թո՛ղ ինձ սպանի, քեզ հո չի՛ սպանի։

Ձենով Օհան ասաց.— Լա՛ո, էսօր դու համբերիր. վաղը լուսուն քեզ կտանեմ Ծովասար։

Դավիթ համառեց.— Չէ, Ծովասարի տեղը մհա պիտի ասես։ Ձե՞ս ասի, հացն ու գինին, տեր կենդանին, մի զոմր կտամ, վիզդ կծռվի։

Ձենով Օհան ասաց.— Մի՛ հերսոտի, լա՛ո։ Ուզում ես, արի՝ մհա քեզ տանեմ Ծովասար։

Էլան մեկտեղ գնացին քաղաքամեջ։ Քեռի Թորոս, քաղքի մեծերն ու ջահել-ներն էնտեղ զրույց էին անում։ Ձենով Օհան ասաց.

— Կոտրվի՛ էն բերանը, որ Դավթին ասել է, թե Ծովասար կա։ Դավիթ ինձ վրա զոռ է անում, թե գնանք Ծովասար։

Սասնա ջահելներն ասին.— Հորեղբե՛ր Օհան, մե՛զ էլ տարեք Ծովասար։ Էն-տեղ մհա գել, արջ, կխտար, եղնիկ ու վերու ոչխար շատ կլինի։ Տեսնենք Դավիթ ո՞նց պիտի եղնիկ որսա։

Դավիթ հեծավ իր քուռակը, նետ-աղեղն առավ։

Ձենով Օհանի, Քեռի Թորոսի, Սասնա ջահելներու հետ մեկտեղ գնացին, հա-սան Ծովասար։

Սարի չորս բոլոր պարիսպ էր քաշած։ Դավիթ հարցրեց.

— Հորեղբե՛ր, էս ի՞նչ պարիսպ է։

Ասաց.— Լա՛ո, էս պարիսպը քո հերն է քաշել, որ իր որսը սարեն չփախներ։

Դավիթ էս կողմը նայեց, էն կողմը նայեց, ներս մտնելու դուռ չգտավ, մի կաղնի քոքահան արավ, զարկեց, պարիսպը քանդեց։

Բոլորը մեկտեղ ներս մտան, տեսան, չորս կողմը կանաչ անտառ է, զուլալ աղ-բյուր է, լճակ է՝ ափերը շինած մարմարով։ Էնտեղ կային շատ գազաններ՝ արջ, գել, աղվես, շատ կենդանիներ՝ կխտար, եղնիկ, վերու ոչխար։

Սասնա ջահելներն ուզեցին վերու ոչխար սպանել, Դավիթ բռռաց.

— Հայ-հա՜յ, իրավունք չկա սպանել։ Դուք էդտեղ ոչ մեկին ձեռ չտաք։ Իմ հե-րը մեղք է գործել, որ էս աստծու ստեղծածներուն դարձրել է գերի, դրել բանտի մեջ։

*Հորողբերն ասաց.— Մեռնե՛մ քեզի, Դավի՛թ, ինքդ զարկ սպանի՛ր մի վերու ոչխար, մորթենք ուտենք, անոթի ենք։*

*— Չէ, հորողբե՛ր։ էսոնք բանտած գերի են։ Մարդ գերուն կզարկի՞։ Բանտած գազանին Սասնա պառավն էլ կորսա։ Տղամարդն էնիկ է, որ իր որսին նշան կրռնի, կզարկի ազատության մեջ։*

*Դավիթ գոմրով ու քացով տվեց, պարիսպը չորս կողմեն քանդեց, իր կապան հանեց, երկինք նետեց, կանչեց.*

*— Հեյ-հե՜յ, բանտա՛ծ անասուններ, դու՛րս գնացեք, ձեզ համար ազատ ապրեցե՛ք։*

*Բոլոր գազաններն ու կենդանիները դուրս փախան։*

*Դավիթ ընկավ դար ու փոս, նայեց էս քարի տակ, էն ծառի ետև, ինքնիրեն ասաց. «Չլինի՞ թե մի գազան քնած է մնացել, մեղք է»։*

*Ինչքան անասուն որ կար, Դավիթ ազատ արձակեց ու չահելներուն ասաց.*

*— Մկա գնացե՛ք, ով կտրիճ է, թո՛ղ իր համար որս անի։*

*Գնացին։ Ով կտրիճ էր, իր համար որս արավ, ով անշնորհք էր, դատարկ ձեռներով դարձավ տուն։*

*Դավիթ երկու վերու ոչխար զարկեց, բերին լճակի մոտ, մորթեցին։ Դավիթ մտավ ջուրը, լողացավ, դուրս եկավ, կրակ վառեց, ոչխարները խորովեցին, կերան։*

## 10. ԴԱՎԻԹ ՎԵՐԱՇԻՆՈՒՄ Է ԻՐ ՀՈՐ ՏԱՃԱՐԸ

*Իրիկուն Քեռի Թորոս ու Սասնա ջահելները դարձան գնացին քաղաք։ Ձենով Օհան ասաց.*

*— Դավի՛թ, բոլորը տուն գնացին, մենք էլ գնանք։*

*Դավիթ ասաց.— Հորողբե՛ր, իմ հոր ոտները դիպել են էս քարերուն։ Ես գիշեր պիտի մնամ էստեղ։ Ուզո՞ւմ ես, դու գնա՛։*

*Ձենով Օհան ասաց.— Չէ, լա՛ո, որ դու չես գնում, ես էլ չեմ գնա, կմնամ քեզ հետ։*

*Դավիթ ու Ձենով Օհան ելան նստեցին մի կարկառ քարի վրա, աչքեցին աստծու ստեղծած աշխարհը։ Դուրան դաշտը երևում էր Սասնա սարերեն մինչև Դիարբեքիր։ Մութը մի քիչ էլ որ թանձրացավ, տեսան. ինչքան աստղ կա երկնքում, էնքա՛ն կրակ է վառվում դաշտի մեջ։ Դավիթ հարցրեց.*

*— Հորողբե՛ր, էս ի՞նչ կրակներ են։*

*Ձենով Օհան ասաց.— Լա՛ո, գեղրանք են, յայլա են, հովիվ են, հոտաղ են, համփորդ են, իրենց համար կրակ են վառում։*

*Երկուսն էլ պառկեցին, որ քնեն։*

*Ձենով Օհան Դավթի կարան թարուն քաշեց բերեց իր գլխի տակ, որ Դավիթ գիշեր չգլորվեր անդունդ։*

*Հորողբերը քնեց։ Իսկ Դավիթ նայում էր կրակներուն ու մտածում էր։ Կրակները մեկ-մեկ հանգան, մնաց մի կանաչ-կարմիր բոց, որ սարի գլխին հա վառվում էր, հա կանչում։ Դավիթ ասաց. «Տեսնես էդ ի՞նչ կրակ է. տեսնես ո՞վ կա էնտեղ»։ Ուզեց*

վեր կենա, գնա էդ կրակի մոտ, կարպայի փեշը հորեղբոր գլխի տակն էր։ Դավիթ ասաց. «Հորեղբորս թե վեր կացնեմ, կասի՝ Դավիթ վախեցավ»։ Կարպայի փեշը դանակով կտրեց, փեշը մնաց հորեղբոր գլխու տակ, ինքը վեր կացավ, գնաց էն կանաչ-կարմիր լույսի մոտ։ Էնտեղ կար մարմարե մի գերեզման, կանաչ-կարմիր լույսը բխում էր էդ գերեզմանեն ու կամար կապում Ծովասարի գլխին։ Դավիթ մոտեցավ, ձեռ տվեց բոցին, ձեռը չէրվեց, հող թափեց բոցի վրա, բոցը չհանգավ։ Դավիթ ասաց. «Հա-չէ, էսիկ է Մարութա բարձր Աստվածածին, որ ասում են...»

Դավիթ նետ-աղեղով էնտեղ նշան արեց, եկավ իր հորեղբոր մոտ, կանչեց.

— Վե՛ր կաց, հորեղբե՛ր, վե՛ր կաց։

Ձենով Օհան արթնացավ, տեսավ Դավիթ ոտի վրա է։

— Էլի ի՞նչ է եղել, ա ծո՛ւռ։

Դավիթ ասաց.— Հրաշք է եղել, հորեղբե՛ր, մարմարը բացվել է հրեն, մեջեն կանաչ-կարմիր բոց է բխում, լուս կամար է կապել Ծովասարի գլխին։ Դու չե՞ս հավատում, գնա՛նք, տես։

Դավիթ հորեղբորն առավ, բերավ իր հոր գերեզմանի մոտ, հարցրեց.— Էս ի՞նչ է։

Ձենով Օհան լաց եղավ, ասաց.

— Էդիկ հորդ գերեզմանն է, լա՛ո։ Վանքն էլ, որ քարուքանդ է մնա, քու հերն է շինել, անունն էլ դրել է Մարութա բարձր Աստվածածին։ Քո հերը, Առյուծ Մհեր, որ մեռավ, Մըսրա Մելիք եկավ, զարկեց, հիմքից քանդեց քո հոր տաճարը. Սասնա առ ու ավարն առավ, գնաց։

Դավիթ էս բանը որ լսեց, մինչաց ինչ որ ջահել առյուծ, չոքը զարկեց գետին, չոքեչոք մոտեցավ, գերեզմանի քարը պագեց, ապա վեր կացավ, նետ-աղեղով մարմարի բոլոր գիծ քաշեց, եկավ իր հորեղբոր ձեռն էլ պագեց ու լալով ասաց.

— Հերա՜նո՛ս հորեղբեր, հերա՜նո՛ս հորեղբեր,
Հեր չունեմ, դու ինձ հերությո՛ւն արա,
Հերա՜նոս հորեղբե՛ր, հերա՜նո՛ս հորեղբեր,
Տեր չունեմ, դու ինձ տերությո՛ւն արա.
Ուզում եմ ընզմեն հինգ հազար մշակ,
Որ ինձ հող փորեն, քար ու կիր բերեն,
Ուզում եմ ընզմեն հինգ հարուր քարտաշ.
Հինգ հարուր քարտաշ, որ ինձ քար տաշեն,
Ուզում եմ ընզմեն հինգ հարուր վարպետ,
Հինգ հարուր վարպետ, որ ինձ պատ շարեն,
Որ կամար կապեն, գմբեթ կառուցեն։

Ձենով Օհան հարցրեց.— Էդ բոլորն ինչո՞ւ ես ուզում, Դավի՛թ։

Դավիթ ասաց.— Հորեղբե՛ր, ես իմ սրտի մեջ ուխտ արի, որ իմ հոր ավերած վանքը վերաշինեմ։ Էն որ իմ ուխտը չկատարվեց, ինձ հաշվիր մեռա՛ծ։ Վաղը մինչև կեսօր էդ բոլորը, որ ասի, ընզմեն պատրաստ եմ ուզում։ Թո՛ղ գան, մեկել որ մինչև իրիկուն վանքը շինեն, որ էն մեկել օր մեջը պատարագ լինի։

Ձենով Օհան գիտեր, որ Դավթի խոսքը խոսք է, մի անգամ որ ասաց, կանի։

— Դավի՛թ, հիմա գնանք տուն, հանգստանանք, ես վաղը քեզ համար հազար մշակ ու վարպետ կճարեմ։

— Չէ,— ասաց.— հորեղբե՛ր, ես կմնամ հորս գերեզմանի մոտ։ Դու քաղաք

չեմ իջնի Ծովասարին, մինչև իմ հոր տաճարը չշինեմ։ Դու գնա, էդքան մշակ ու վարպետ հավաքի՛ր, բե՛ր էստե՛ղ։

Ձենով Օհան հիշեց իր երազը, որ տեսել էր, պատմել Սասունցին, Սասնա տան պարիսպը կանգնած էր, Սասնի բերդի ջահը վառվում էր, Սասնա պարտեզը կանաչել էր, Սասնա տոխակը երգում էր... Ձենով Օհան հիշեց իր երազը, մտքում ասաց. «Վա՜-չկա, Դավիթը կաղաքի Սասուն Մըսըրա Մելիքին։ Ես Մհերի որդու խորհուրդը պիտի կատարեմ»։

— Մի՛ երկմտիր, լա՛վ ինձ ասում են Ձենով Օհան. իմ ձենը հասնում է քառասուն օրվա ճամփա, ձեն կտամ, քո ուզած մշակներն ու վարպետները կգան, կգան։ Դու մկա գա՛րկ վեց-յոթ հատ վերու եզ, մորթեմ, ընամ քաղաք, սուր նեցրց պատիվ տամ, էն տանն մշակներն ու վարպետներն ամեն կհավաքվեն, կգան։

Դավիթը նետ-աղեղն առավ, զարկեց յոթ վերու եզ. հորթերն էդ եզներն առավ, իջավ քաղաք, բոռաց.

— Հա՜-հո՜յ, սասնեցի՛ք, բոռում եմ, եկե՛ք.
Սասնա ճրագը վառվում է, եկե՛ք.
Եկե՛ք, շինում է Մհերի որդին
Մարութա բարձրիկ մեր Աստվածածին։
Հայ-հո՜յ, իր աստված սիրողը թո՛ղ գա,
Սասնա տան ձենը լսողը թո՛ղ գա.
Թող գա՛ն, կանչում եմ հինգ հազար մշակ,
Որ ինձ հող փորեն, քար ու քար բերեն.
Թող գան, կանչում եմ հինգ հարյուր քարտաշ,
Հինգ հարյուր քարտաշ, որ ինձ քար տաշեն,
Թող գան, կանչում եմ հինգ հարյուր վարպետ,
Հինգ հարյուր վարպետ, որ ինձ պատ շարեն,
Որ կամար կապեն, գմբեթ կատարեն։
Հայ-հո՜յ, իր աստված սիրողը թո՛ղ գա,
Սասնա տան ձենը լսողը թո՛ղ գա...

Ձենով Օհանի կանչը լսեցին մինչև յոթ քաղաք։ Էդ յոթ քաղքի մշակներն ու վարպետներն ամեն կողմեն եկան Սասուն, հավաքվեցին Ձենով Օհանի տունը, հաց կերան, գինի խմեցին, ելան բարձրացան Ծովասար, որ շինեն Մարութա բարձր Աստվածածին։

Գնացին, տեսան Դավիթը ինչ է արել. տաճարի տեղը գծել է, հիմքը փորել է, հիմքում դրել ապառաժ պետ-պետ քարեր։ Վարպետները շատ զարմացան։ Մշակներն ամեն թե միանային, էդ քարերին մեկն էլ տեղեն շարժել չէին կարենա։

Վարպետները եկան կանգնեցին պատի վրա։

Ջոջ քարերը Դավիթն էր բերում, մանր քարերը մշակներն էին բերում, տալիս վարպետներուն։ Ջոջ քարերը Դավիթն էր դնում պատի վրա, մանր քարերը վարպետներն էին խցկում ջոջերու արանքը։ Մշակները շուտ-շուտ շաղախ էին շինում, տալիս վարպետներուն, էնոնք էլ պատերն էին ծեփում, ողորկում։

Վարպետ ու մշակ որ չէին աչքում Դավիթին, որ չէին տեսնում էնոր աշխատույթ ուժն ու եռանդը, դյուզի պատճառն ամաչում էր. իրեն թվում էր տալիս ու բանում իր ուժից յոթ հեղ առավել։

Էդպես բանեցին մինչև իրիկուն. Մարութա բարձր Աստվածածին շինեցին, կանգնեցրին իր տեղում՝ Ծովասարի գլխին։

*Դավիթ ասաց.— Հրողբե՛ր, էդ մշակներու, էդ վարպետներու վարձը կտաս, լա՛վ կտաս, հա՞։ Չլինեմ, չիմանամ, մեկին թողել ես առանց վարձի։*

*Լուսուն Ձենով Օհան գնաց քաղաք, բերեց երեք իշաբեռ ոսկի, մշակներուն տվեց մեկական, վարպետներուն՝ երկուական ոսկի։ Ամենքն էլ ուրախացան, Սասնա տանը գոհանամք ասին, գնացին։*

*Դավիթ ման եկավ տաճարի չորս բոլոր, ներս մտավ, կռացավ խաչը համբուրեց, ասաց.*

*— Լսի՛ր ինձ, հերանո՛ւ հրողբեր,*
*Ինձ պիտի քառսուն լուսարար,*
*Ինձ պիտի քառսուն սարկավագ,*
*Ինձ պիտի քառսուն քահանա,*
*Ինձ պիտի քառսուն վարդապետ,*
*Ինձ պիտի քառսուն եպիսկոպոս,*
*Որ լույս տան, պատարագ անեն։*

*Ձենով Օհան կանչեց, եկան քառսուն լուսարար, քառսուն սարկավագ, քառսուն քահանա, քառսուն վարդապետ, քառսուն եպիսկոպոս, եկան, շաբաթ օրը լույս տվին, պատարագ արին Մարութա բարձր Աստվածածնի տաճարում։*

*Դավիթ ուրախացավ, հոգին փառավորվեց, գնաց Բաթմանա Բուղային ու Չարբահար Քամուն բերեց, կարգեց վանքին պահպան, օրական մի տիկ մեղր, մի տիկ էլ եղ տվեց էնոնց կերակուր, ասաց.*

*— Օտար չարամիտ մարդ որ կգա, դուռը վրան չբանաք, թե որ ուխտավոր կգա, աղքատ անոթի մարդ կգա, դուռը բա՛ց արեք, հա՛ց տվեք ուտեն։*

*Մնացին էգտեղ մինչև լուս։ Լուսուն Դավիթ ու հրողբերը ելան իջան Սասնա քաղաք. որ տեսնեն, թե ի՞նչ է անցել-դարձել քաղքի մեջ։*

*Դավիթ հոր վանքը որ շինեց, իջավ Ծովասարեն, դարձել էր կատարյալ մարդ. էլ պստիկ օրերու չարությունը չէր անում, ձեռներուն չէր տփում, չէր թռնում ջոջերու երես, չէր նեղում խալխին։ Սասնեցիք իրար ասում էին.*

*— Դավիթ էլ էն ծուռ ավարան չի, ոնց որ Սասնա Առյուծ Մհերն է՝ հարութթյուն առած։*

## 11. ԴԱՎԻԹ ՊԱՏԺՈՒՄ Է ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐՈՒՆ

*Համբավը՜ հասավ Մըսրա Մելիքին, թե, չե՞ս ասի, Դավիթ բարձրացել է Ծովասար, քանդել է Մհերի շինած պարիսպները, շինել է քո քանդած Մարութա բարձր Աստվածածին, ասել է. «Ես Մըսրա Մելիքին հարկատու չեմ, Մըսըր Մըսրա Մելիքին, Սասուն՝ Սասնա Դավթինն»։*

*Մըսրա թագավորը էս որ լսեց, կատաղեց, փրփուր հանեց բերանեն, իր մորը նախատեց, ասաց.*

*— Ախ, մարե՛, ես էն շան որդին պետք էր սպանեի, դու չթողիր։ Տեսա՞ր ինչ արեց։*

Իսմիլ խաթունն ասաց.— Բան չկա, մորթու՛ն, դուք աղբեր եք։ Թո՛ղ Մըսրա երկիրը քեզ մնա, Սասնա երկիրը՝ Դավթին։ Էնոր դեմ դու կռիվ մի՛ գնա, դուք աղբեր եք։

Մըսրա Մելիք մեջլիս հավաքեց, կանչեց իր երկրի խելոք մարդկանց, խորհուրդ հարցրեց. ի՞նչ հնարով Սասունն առնի ոտքի տակ, Սասնա Դավթին աշխարհից վերացնի։ Մեջլիսում Կոզբադին անունով մի քաջ փահլևան կար, ելավ ձառ ասաց.

— Թագավո՛րն ապրած կենա,— ասաց,— քո քաջությանը, քո փառքին ու զահին վայել չի լինի, որ ինքդ գնաս գյավուրի վրա կռիվ։ Տո՛ւր ինձ,— ասաց,— հազար փահլևան, ես գնամ Սասուն ու բերեմ՝

Քառասուն բեռ ոսկի, հարկը յոթ տարվան,
Քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան,
Քառասունն էլ երկար, որ քեզ ուղտ բառնան,
Քառասուն կույս աղջիկ բերեմ արմաղան,
Քառասուն ձի բերեմ մի ռանգ, մի հասակ,
Քառասուն խամ երինջ՝ մի ռանգ, մի հասակ,
Քառասուն եզ — լծկան, քառասուն կով — կրթան։

Էս ամենու հետ մեկտեղ,— ասաց,— էն ծուռ Դավթին էլ սպանեմ, գլուխը բերեմ դնեմ քո առաջ։

Մըսրա Մելիք ասաց.— Էդ քիչ է. կքանդես Մարութա բարձր Աստվածածին, կշինես իմ Մոլասարի պարիսպը։

Կոզբադին ասաց.— Իմ տերը կամեցավ, ես Մարութա բարձր Աստվածածին քանդեցի, Մոլասարի պարիսպը շինեցի։

Մըսրա Մելիք ասաց.— Քաջ Կոզբադին, որ էդպես է, քեզ իրավունք եմ տալիս, ա՛ռ, ինչքան պետք է, զորք ու զորական, գնա Սասու՛ն, բե՛ր իմ յոթ տարվա հարկը, հետն էլ ծուռ Դավթի գլուխը, որ տեսնեմ, սիրտս հովանա։ Կտան, կառնես, չեն տա, Սասուն կավերես, հողը կլցնես ձիու տոպրակները, Քարեր Սասնա հողի կանանց կբարձես կբերես Մըսըր։

Կոզբադին ասաց.— Մելիքն ապրած կենա, բաս դու էդ ամենու փոխան ինձ ի՞նչ կտաս։

— Ինչ կուզես։

— Քո վեցտանի ձին։

— Կտամ քեզ իմ վեցտանին ու թագավորության կեսը։

— Ուռ՜ւխխխ...

Կոզբադին շատ ուրախացավ, ելավ զորք հավաքեց, մունետիկ ճամփեց էս ու էն կողմը, որ զովեն իր արշավանքը դեպի Սասուն։

Մըսրա կանայք ճանապարհի վրա պար բռնեցին ու երգեցին.

Ջա՜ն, քաջ Կոզբադին գնում է Սասուն,
Բեռներ կբերի քառասուն ու քառասուն,
Քառասուն բեռ ոսկի, քառասուն բեռ արծաթ,
Որ մենք զարդարենք մեր վիզն ու ճակատ,
Քառասուն կով բերի, քառասունն էլ կրթան,
Գարնանը չինենք համ եզ, համ չորթան։
Ջա՜ն, քա՛ջ Կոզբադին, մինչև անհա՛ղթ մնաս,
Սասնա ծուռ Դավթին անես մահնեման...

Մըսրա կանայք, իրար աչք տալով, ոմն իր էրիկանը, ոմն իր մինուճար որդուն տնեն դուրս էր վռնդում, գլխին շանչում էր, ասում.

— Գլու՛խդ հողեմ, ի՞նչ ես տանը պարապ-սարապ նստել, վե՛ր կաց, կռի՛վ գնա Սասուն, թալա՛ն բեր մեզ համար։

Մի սասնեցի պառավ կար, գերի էր բերված Մըսրա քաղաք։ Էդ պառավը առվի ափին շորեր էր լվանում. Կոզբադնի զորքը որ տեսավ, ետևեն բռռաց.

— Է՜յ, Կոզբադի՛ն, պառաված բերան,
Սասո՞ւն կերթաս, բանդ գել գաղան,
Թա որ քո դեմ ելնի Դավի՞թ,
Էն կփախնես, բանց շուն վազան։

Կոզբադին թուրը քաշեց, որ պառավին սպանի։ Կանայք ճվալով հավաքվեցին, պառավին օղակի մեջ առան, ասին.

— Քո զոռը խեղճ պառավի վրա՞ է գնում։ Զոռ ունես, գնա Դավթի՛ն սպանի։

Կոզբադին ու իր զորապետները, Չարխադին, Բադին, Սուդին, իրենց հազար փահլևաններով ընկան ճանապարհ։

Եկան հասան Սասնա սահմանի մոտ, Լեռա դաշտի մեջ վրաններ զարկեցին, Կոզբադին ջոկեց քառասուն զորեղ փահլևան, քառասուն զորեղ ուղտ, առավ իր զորապետները, մտավ Սասուն, եկավ Ձենով Օհանի մոտ, ասաց.

— Էյ, Սասնա՛ ջոջեր, լսե՛ք, թե ինչ եմ ասում. Մըսրա Մելիք ինձ ուղարկել է, որ տանեմ յոթ տարվա հարկը, մեկ էլ ծուռ Դավթի գլուխը։

Ձենով Օհանի ծնկներն ահից թուլացան, բերեց եզ ու ոչխար մորթեց, էնոնց կերուխում տվեց, ասաց.

— Դուք էստեղ հանգստացե՛ք, ես գնամ հարկը հավաքեմ, համ էլ տեսնեմ ո՞րտեղ է Դավիթ։

— Շո՛ւտ արա,— բռռաց Կոզբադին։

Ձենով Օհան իր աչքն ուրացող հո չէ՞ր, որ Դավթի գլուխը տար Մըսրա Մելիքին, մարեր Սասնա տան ճրագը։ Բայց վախենում էր, որ Դավիթ իմանա Կոզբադնու գալը, մեջ ընկնի, կռիվ անի, Մըսրա Մելիքին կատաղեցնի, նոր փորձանք բերի Սասնա գլխին։ Ձենով Օհան գնաց էն կուզ տերտերի տուն, Դավիթ էնտեղ սաղմոս էր կարդում. Դավթին դուրս կանչեց, խաբեց, ասաց.

— Լա՛ո, էսօր սիրտս վերու ոչխար է ուզում։ Գնա սա՛ր, մի վերու ոչխա՛ր սպանիր, բե՛ր մորթենք, ուտենք։

— Աչքի՛ս վրա, հոպե՛ր։

Դավիթ անտեղյակ էր Սասնա գլխին եկած աղետին. նետ-աղեղն առավ, գնաց որսի։

Ձենով Օհան ու Ցռան Վերգոն ընկան քաղքի մեջ, հավաքեցին քառասուն կույս աղջիկ, քառասուն կարմ կնիկ, քառասուն երկար կնիկ, բերին լցրին մի մեծ մարագ, դուռը կողպեցին։ Ապա հավաքեցին քառասնական ձի, երինջ, եզ ու կով, լցրին ուրիշ երկու մարագ, դուռը կողպեցին։ Ապա դարձան մտան Սասնա մեծ մառանը, որ չափեին քառասուն ուղտաբեռ ոսկի։

Կոզբադին, Չարխադին, Բադին, ու Սուդին ծալպատիկ նստած էին գորգի վրա,

Ձենով Օհան ջվալն էր բռնել, Ցռան Վերգոն կոտով չափում էր Սասնա ոսկին, լցնում էր Մըսրա ջվալները։

Էն ժամանակ Մըսրա զորքն էլ Լերա դաշտէն եկել, խուժել էր քաղաք. տներն էր թալանում, կին ու աղջիկ առևանգում։

Դավիթ հեռու սարերում ընկած էր որսի ետևեն։

Ծառայվա մեռ նետահարից մի վերու ոչխար. անցկացրեց նիզակի ծերը, առավ ուսին. ճանապարհ ընկավ դեպի քաղաք։ Ճանապարհին մտավ Սասնա Պառավի բոստան։ Դավիթ շաղգամ շատ էր սիրում։ Էդոր համար կանչում էին «Սասնա ծուռ շաղգամակեր»։ Մտավ բոստան, որսը վար դրեց. նիզակի ծերով շաղգամ էր հանում, ուտում էր։

Սասնա Պառավը Դավթին որոնելով եկավ իր բոստան. տեսավ, Դավիթն էնտեղ իր համար շաղգամ է ուտում։ Պառավը լաց եղավ, ասաց.

— Դյու՛խդ հողեմ, լա՛ո, դու՞ պիտի լինես էն հոր տղան։ Պառա՛նքդ կարեմ, գրո՛ղը քեզ տանի։ Սասնա ծուռ շաղգամակեր։

Դավիթն ասաց.— Նանե՛, երկու գլուխ շաղգամի համար ինչո՞ւ ես ինձ անիծում։

Սասնա Պառավ ասաց.— Բա ի՞նչ անեմ, որ չանիծեմ. անառակ որդի։ Դու էստեղ քեզ համար շաղգամ ես ուտում, էնտեղ Սասուն ձեռնեն գնաց։ Մըսրա Մելիք զորք է ուղարկել, որ յոթ տարվա հարկը տանեն։ Հրեն հրողբերներդ քաղքի մեջ ընկած՝ կին ու աղջիկ չեն թողել, հավաքել են, լցրել մարագը, որ ուղարկեն Մըսըր։

Դավիթ ասաց.— Յա՞հ։

Պառավն ասաց.— Բա՛ Հայ, քանդվի՛ Սասուն, ինչ քանդվեց։ Մեկ մինուճար աղջիկ ունեի. էն էլ ինձնեն խլեցին, տարան գերի։

— Նանե՛, էդ ի՞նչ ես ասում։

— Ճամն ու չոր քո ոտինչն եմ ասում։ Հրեն Կոզբադին իր զորապետներով մեկտեղ մտած է քո հոր մեծ մառան. քո հրողբերներ՝ Ցռան Վերգոն ու Ձենով Օհան կոտով չափում են Սասնա ոսկին, լցնում են Մըսրա ջվալները։ Իսկ դու էստեղ քեզ համար շաղգամ ես ուտում։ Աստծու կրա՛կն ուտես։ Դու՞ պիտի լինես Առյուծ Մհերի տղան։

Սասնա Պառավը, ասում են, Առյուծ Մհերի սիրածն է եղել. խոսքով անիծում էր Դավթին, բայց իր սրտի մեջ էնոր սիրում էր, խրատում էր, որ Դավիթ իր Սասնա սիրով թեժանա, զարկի թշնամուն, Սասուն ազատի, իր հոր տեղը բռնի, տեր լինի երկրին։

Դավիթ իր որսը նիզակի ծերն առավ ու Պառավի հետ մտավ քաղաք։ Յա՞հ, էս ի՞նչ էր։ Ամեն օր, երբ Դավիթ որսեն գալիս անցնում էր քաղաքով, լսում էր մարդկանց խոսքն ու ծիծաղը, նվագն ու երգը, տեսնում էր էնոնց պարն ու քեֆը։ Էսօր քաղքին ձենց որ հող մաղեն. լաց ու կոծ, վայ ու վայնասուն, ծեծ ու թալան, մերը մանուկն է ուրացել։ Դավթին էլ սասնեցիք անիծում են, ասում.

— Դավի՛թ, ոտդ կոտրվեր, չգայիր Սասուն, շատ բանես, քիչ ուտես, քիչ բանես, խելքի չուտես։

Դավիթ ասաց.— Յա՜, էս ի՞նչ է, Պառա՛վ, էսոնք ինչո՞ւ են ինձ անիծում։

Պառավն ասաց.— Բա՛, Դու որ Ծովասարի պարսպը քանդեցիր, Մարութա

քարձր Աստվածածին շինեցիր, Մըսրա Մելիք բարկացավ, զորք ուղարկեց մեր Սասուն։ Հրեն Կոզբադին իր զորապետներով մտել է քաղաք, հարկ է հավաքում։ Զորքն էլ թալան է անում, կին ու աղջիկ է խլում։

Դավիթ հարցրեց.— Նանե՛, Մըսրա Մելիք մեզմեն ի՞նչ հարկ է ուզում։

Պառավն ասաց.

— Քառասուն բեռ ոսկի. հարկը յոթ տարվան,
Քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան,
Քառասունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Քառասուն կույս աղջիկ, սիրուն արմաղան,
Քառասուն սանտա ձի, մի ռանգ, մի հասակ,
Քառասուն խամ երինջ, մի ռանգ, մի հասակ,
Քառասուն եզ-լծկան, քառասուն կով-կըթան,
Սասնա ծուռ Դավթի գլուխն էլ վրան։

Քո հրողբերներն էգ ամենը հավաքել, մարագ են լցրել, դուռը կողպել։ Իմ մեկ միհուճար աղջիկն էլ էնտեղ է։

Դավիթ ասաց.— Նանե՛, դու ցույց տուր ինձ մարագները, ես չեմ թողնի, որ տանեն ոչ քո աղջկան, ոչ էլ Սասնա երկրեն մի մազ։

Սասնա Պառավը Դավթին տարավ կանգնեցրեց մարագի դռանը։ Ներսեն լսվում էր սուգ ու շիվան։ Դռանը պահակ էին կանգնած Մըսրա տաս փահլևան։ Դավիթ նիզակով տասին էլ սպանեց, մարագի դուռը կոտրեց, կնիկ ու աղջիկ ազատ արձակեց, ասաց.

— Տո՛ւն գնացեք, իմ մերե՛ր, իմ քուրե՛ր, գնացե՛ք, ձեզ համար աղա՛տ ապրեցեք, ինձ համար աղո՛թք արեք, ես կերթամ, ձեր բոլորի չարը տանեմ։

Սասնա կանայք ու աղջիկները մարագեն դուրս ելան, ամեն մեկն իր տուն գնաց, իրենց ազատարարին օրհնելով.

— Դավի՛թ, լա՛ո, շատ բանես, շատ ուտես, քիչ բանես, շատ ուտես։

Դավիթ գնաց էն մեկել մարագները, դռները բաց արեց, ասաց.

— Դու՛րս եկեք, Սասնա՛ անասուններ, գնացե՛ք, մտե՛ք ամեն մեկ ձեր տիրու գոմ։

Դավիթ իր Սասնա կանանց, իր Սասնա ապրանքը գերությունեն երբ ազատեց, գնաց իր հոր մեծ մառանը, դռներու մեջ կանգնեց, հրողբերներուն ձեն տվեց, ասաց.

— Ոչ դուք լինեք, ոչ էլ ձեր երկիր պահելը։ Ես մեկ մարդ եմ, հազիվ իմ փիգն առնեմ մեկ մարդու մեղք։ Դուք իմ գլխու համար բոլորակ Սասու՞նն եք տալիս, որ տանեն Մըսըր։

Դավիթ էսպես խոսելով մտավ ներս, որ ինչ տեսներ. Կոզբադին, Չարխադին, Բադին ու Սուդին ծալապատիկ բազմած են գորգի վրա, Ձենով Օհան ջվալն է բռնել, Ցռան Վերգոն կոտով չափում է Սասնա ոսկին, լցնում է Մըսրա ջվալները։ Դավիթ բոռաց.

— Հրողբերնե՛ր, էդ ի՞նչ եք անում։

Ձենով Օհան ասաց.— Քո մեղքերն ենք սրբում, Սասնա ծու՛ռ։

Դավիթ մոտեցավ, Ցռան Վերգոյի ձեռքը բռնեց, ասաց.

—Հրողբե՛ր Վերգո, դու շատ ես հալվոր, դու վե՛ր կաց։ Մեր Սասնա ոսկին ես պիտի չափեմ ու լցնեմ Մըսրա բեռները։

Ցռան Վերգոն անուշ չալվարը լավոթեց։

Կոզբադին ասաց.— Ջանըմ, էդ խելառ ձմուն դու՛րս արեք, դու՛ք չափեք ոսկին։

Դավիթ ասաց.— Վալլա՛, ես պիտի չափեմ։

Ձենով Օհան ասաց.— Դավի՛թ, գնա քո բանին, էս գործին մի՛ խառնվի։

Դավիթ ասաց.— Չէ, իմ հոր ոսկին է, ես պիտի չափեմ։ Տու՛ր կոտը, հրողրե՛ք։

Ցռան Վերգոյի ձեռեն կոտը խլեց, կործեց բերանքս իվար, ոսկին թիակով լցրեց ոտքի վրա, փետով կոտի ոտքը մաքուր սրբեց ու դատարկված կոտը կործեց Մըսրա ցվալը.

— Էս մեկ... էս էրկու...

Կոզբադին բռռաց.

— Հո, հո, հո՜, Ձենո՛վ Օհան. դու էս ծուռ լակոտը բերել ես, որ մեզ մասխարա՞ քցի։ Հեռացրու՛ էդոր էստեղեն, թե չէ կելնեմ. գլուխը կթռցնեմ։

Դավիթ աչքը խոլորեց Կոզբադնի վրա, ասաց.

— Հայ-հա՜յ, հենց էդպե՞ս, կելնես ու գլուխս կթռցնե՞ս։

Կոզբադին վախեցավ, ասաց.

— Էյ, Ձենո՛վ Օհան, Մըսրա հարկը տալիս ես. տու՛ր. թե չէ, կերթամ կասեմ Մըսրա Մելիքին, կգա ձեր Սասուն կավերի, Սասնա հողը տոպրակներով կբառնա ձեր ձիերուն, Սասնա քարերը կբառնա ձեր հղի կանանց, կտանի Մըսըր։

— Հացն ու գինին, տեր կենդանի՛ն.— զայրացավ Դավիթ, կոտն առավ, զարկեց Կոզբադնու գլխին, Կոզբադին գլուխը կռեց. կոտը պատին դիպավ, պատը ճեղքեց, գնաց յոթ օրվա ճամփա։

Կոզբադին լեղապատառ վեր կացավ, որ փախնի, Դավիթ հասավ ետևեն, օձիքը բռնեց, գլուխը յոթ անգամ պատին զարկեց, ասաց.

— Գնա Մը՛սըր, Մելիքին բարե՛ տար, ասա՛. Առյուծ Մհեր մի տղա ունի. անունը Դավիթ։ Ասա՝ մեկ էլ զորք չուղարկի Սասուն, որ մեր երկիրն ավերեն, Սասնա կնիկն ու աղջիկը տանեն։ Սասնա հարկը մոռացե՛ք։ Դավիթ, Առյուծ Մհերի որդին, հրեղեն Սանասարի թոռը, Դավիթ ասում է. «Մըսըր Մըսրա Մելիքին, Սասուն՝ Սասնա ժողովրդին։ Թող ինքն ապրի իր համար, մենք էլ ապրենք մեզ համար»։ Գնա՛. էլ ետ չնայես։

Կոզբադին, Չարխադին, Բադին ու Մուզին Սասնա ոսկու մառանեն լեղապատառ դուրս փախան, շունչ առան Լերա դաշտում, իրենց վրաններու տակ։

Կոզբադին, երբ շունչը տեղն եկավ, իր զորապետներուն խորհրդի կանչեց, ասաց.

— Մենք մեր թագավորին խաբեցինք։ Ասինք. թե կերթանք Սասուն, յոթ տարվա հարկը բերենք, կնիկ, աղջիկ բերենք, Դավթի գլուխը բերենք։ Ո՞ւր է Սասնա հարկը, ու՞ր է Դավթի գլուխը։ Մենք ի՞նչ երեսով կանգնենք Մըսրա Մելիքի առաջ։

Չարխադին ասաց.— Ի՞նչ խորհուրդ ունես։

Կոզբադին ասաց.— Գնանք Սովասար, քանդենք Մարութա բարձր Աստվածածին, վանքը թալանենք, տանենք Մըսըր, ասենք՝ էս է Սասնա հարկը։

Բադին ասաց.— Բա որ Դավիթն իմանա՞։

Կոզբադին ասաց.— Գաղտնի կերթանք։ Մինչև Դավիթ ակհի, մենք վանքի թալանը կառնենք, շուտ կհասնենք Մըսըր։

Ուզին ասաց.— Բա որ Մըսրա Մելիք հարցնի, ո՞ւր է Դավթի գլուխը. ի՞նչ ասենք։

Կոզբադին ասաց.— Կասենք Դավիթ փախավ սարերը, չկարցանք բռնել։

Կոզբադին իր զորքն առավ, գիշերով բարձրացավ Սովասար, պաշարեց Մարութա բարձր Աստվածածին։

Չարբահար Քամին ու Բաթմանա Բուղան աչքեցին, տեսան Մըսրա զորքը. իրար ասին.

— Էսոնք ուխտավոր չեն։ Ուխտավորներն ամեն ժամանակ չեն գնում. կեսը ձիավոր է գնում, կեսը՝ ոտավոր։ Էսոնք վայ թե ավերիչ ավազակներ են։ Ելնենք դարպասը փակենք, մեջքներս տանք դարպասի դեմ։ Ուխտավոր եղան, դուռը բաց կանենք. ավազակ եղան, դուռը չենք բանա։ Թո՛ղ իրենց համար գնան, կորչեն։

Կոզբադին ու իր հազար փահլևանն ինչ արին, չարին, չկարցան պարսպի դուռը բացեն։ Զարխադին ասաց.

— Բերենք դարկենք մի նապաստակ, Դավթի շորերու տեսակ մի շոր հագնենք, արնոտենք, նիզակի ծերով թալենք պարսպից ներս, ասենք. «Փահլևաններ, ձեր տիրոջը մենք սպանեցինք, դուք էստեղ մենակ ի՞նչ պիտի անեք»։ Դավթի շորերը որ տեսնեն, դուռը բաց կանեն։

Մըսրա զորականներն էդպես էլ արին։

Զարբահար Քամին ու Բաթմանա Բուղան ուժից հարուստ էին, խելքից՝ աղքատ։ Նապաստակի արնով ներկված հագուստը որ տեսան, իրար ասին.

— Էսիկ Դավթի հագուստն է։

Մոխիր ցանեցին իրենց գլխուն, իրենց երեսները ճանկռեցին, լաց եղան, լացով վանքի դռները փակ պահեցին Մըսրա զորքի դեմ։

Էն ատեն Կոզբադին բարձրացավ պարսպի վրա, վանքի միաբաններու ձեն տվեց, ասաց.

— Եպիսկոպոսնե՛ր, վարդապետնե՛ր, քահանաներ, ինչու՞ եք դուռը փակ պահում։ Անխելքնե՛ր,— ասաց,— մենք Դավթի գլուխը կտրել ենք, որ տանենք Մըսրա Մելիքին. էլ ու՞մ վրա եք ձեր հույսը դրել։ Դուռը բա՛ց արեք։ Թե որ դուռը ձեր ձեռքով չբանաք, մենք դուռը կոտրելով ներս կմտնենք, ձեզ բոլորիդ էլ կկոտորենք. Թե որ դուռը ձեր ձեռքով բանաք, ձեր մեկ մազին էլ չենք դիպչի։

Կոզբադին էսպես ահ ու խոստում տվեց, բայց միաբաններն իրար ասին. «Դուռը չենք բանա, թո՛ղ Կոզբադին բռալով տրաքվի»։

Էնտեղ կար Ծռան Վերգոյի ցեղեն մի վախլուկ վարդապետ։ Գիշերը, երբ որ պահակ փահլևանները քնած էին, թաքուն մոտեցավ, պարսպի դուռը բաց արեց։ Մըսրա զորքը հեղեղի պես խուժեց ներս։ Պահակները քնեն արթնացան, տեսան, բանը-բանից անցել է, գլուխները առնելով փախան սարերը։

Մըսրա զորքերը ներս մտան, քանդեցին վանքի խորանը, կոտորեցին քառասուն եպիսկոպոս, քառասուն վարդապետ, քառասուն քահանա, քառասուն սարկավա՛գ մեկը պակաս. վանքը տակն ու վրա թալանեցին, հավաքեցին շատ ոսկի, արծաթ, գոհարեղեն, լցրին Մըսրա բեռները, առան, գնացին։

Քառասուն սարկավագից մեկը թաքնված էր դիակներու տակ, պրծավ կոտորածեն։ Մըսրա զորքերը երբ գնացին, էդ սարկավագը դիակներու տակեն ելավ, առավ արնաթաթախ մի փարաջա, վազեց, հավարը տարավ Սասուն։

Դավիթ էնօրվանեն, երբ իր հոր ոսկին խլեց Մըսրա հարկահաններուց, ուրախացել էր. իր հասակի ջահիլներու, աղար լաճ-աղջիկներու հետ ամեն օր քեֆ էր անում, եղնիկի միս էր ուտում, յոթ տարվա նռան գինի էր խմում, սազ ածում։

Էնիկ շատ գինով էր, երբ որ Մարութա վանքի սարկավագը լեղաճաք ներս մտավ. կանչեց.

— Դավի՛թ, էնտեղ Մարութա վանքը թալանեցին, դու էստեղ քեզ համար քե՞ֆ ես անում։

Դավիթ ասաց.— Մո՛տ արի. սարկավա՛գ, մոտ արի՝ տեսնենք, ի՞նչն է պակասել վանքին, մո՞մն է պակասել, խո՞ւնկն է պակասել, ձե՞թն է պակասել. շուտ ա՛ռ, գնա հասի՛ր քո ժամուն։

Սարկավագն ասաց.— Դավի՛թ, ի՞նչ մոմ, ի՞նչ խունկ ու ձեթ, վանքն է պակասել։ Մըսրա զորքերը եկան, վանքն այրեցին, ավրեցին. թալանեցին տարան։

Դավիթ ասաց.— Էէէէ՜... Հեքիաթ ես ասում.— դարձավ Ձենով Օհանին.— Հորեղբե՛ր. մի տե՛ս, թե ինչու է սարկավագը եկել. մոմն է պակաս, խունկն է պակաս, ձեթն է պակաս, տո՛ւր, թող գնա հասնի իր ժամուն։

Սարկավագը տեսավ, Դավիթ գինով է. չի հասկանում. արնոտ Փարաջան տվեց էնոր առջև։ Դավիթ որ տեսավ արնոտ Փարաջան, զարմացավ, ասաց.

— Յա՜, էս ի՞նչ է, տղա՛, էս ի՞նչ է եղել։

Սարկավագ ասաց.— Դավի՛թ. մեռնեմ քեզ. ախպե՛ր։ Մըսրա զորքերն եկան, վանքն ավրեցին, սպանեցին քառասուն եպիսկոպոս, քառասուն վարդապետ, քառասուն քահանա, քառասուն սարկավագ, վանքը թալանեցին, լցրին Մըսրա բեռները, տարան։

Դավիթ գինովությունից անհալ, ասաց.

— Վո՜ւյ... Մարութա վանքը թալնվա՜ծ... Միաբանները բոլոր սպանվա՜ծ... Դու էդպե՞ս ասիր, սարկավա՛գ... Ո՞վ էր Մըսրա զորքի զորապետը։

Սարկավագն ասաց.— Կոզբադինն էր, հետը՝ հազար փահլևան։

— Էնոնք շո՞ւտ են գնացել, թե նո՛ր։

— Էնոնք էն կողմ գնացին, ես էս կողմը եկա։

Դավիթ ելավ կանգնեց, ասաց.

— Էհ, իմ թասընկերնե՛ր, աղար տղե՛ր, ջահե՛լ աղջկերք, դուք էստեղ հանգիստ կերեք-խմեք, ձեր քե՛ֆն արեք։ Ես կերթամ ձեր չարը տանեմ։

Դավիթ վազեվազ հասավ Սասնա Պառավի մոտ, վանքի պատմությունն արեց, ասաց.

— Նանե՛, միա ես ո՞ր տեղով գնամ, որ էդ Կոզբադնի առաջը կտրեմ։

Սասնա Պառավն ասաց.— Գնա կանգնի՛ր Բաթմանա կամուրջի մոտ։ Կոզբադին ուր էլ որ գնա, պիտի գա էդ կամրջով անցնի։

Դավիթ ելավ, թոքմահան քաշեց մի բարդի ծառ, ուսն առավ, գնաց։

Գնաց հասավ Բաթմանա կամուրջ. կանգնեց մի կարկառ քարի հետև, նայեց, նայեց, նայեց, Կոզբադին չէր գալիս։ Դավիթ ասաց. «Վա՜յ, թե եկել, անցել է, ես չեմ հասել էնոր ետևեն»։

Մեկ էլ ձիերու դոփյուն լսեց։

Կոզբադին բարձր խնդում էր ու բոռբռալով խոսում.— Դավթի հերն անիծեցինք, ինչքան միաբան կար կոտորեցինք, վանքն ավրեցինք, թալանեցինք, Դավիթ օգնու-

թյան չեկավ։ Ահու սարերն է փախել։ Մի գա դեմս ելնի, բռնեմ, վիզը ճոլտեմ. տանեմ Մըսրա Մելիքին։

Դավիթ քարի տակից էլավ, կանչեց.

— Հայ-հա՜յ, Կոզբադի՛ն, հենց էնպե՞ս, դեմդ ելնեմ, վիզս կճոլտե՞ս։ Դե, ճոլտի՛ր։

Ասաց, բարդի ծառը ձախ տարավ, աջ բերեց, Մըսրա զորքը որին կոտորեց, որին գետը լցրեց, մեկ մարդ էլ կենդանի չթողեց։

Կոզբադին, իր վեցտանին հեծած, ուզում էր փախնի։ Դավիթ հասավ հետևեն, բռնեց, գետին թալեց, դոմփով զարկեց, վիզը ծռեց, պռոշները կտրեց, ատամները հանեց, իր ճակտին շարեց, ասաց.

— Ախ, դու Մըսրա ճռռթա՛ծ բերան. ու՞ր էիր փախնում։ Ես քեզ իմ հոր մառանում չպահեցի, որ դու գնայիր ավրեիր Մարութա վա՞նքը, որ դու սպանեիր իմ սուրբ հայրերո՞ւն։

Կոզբադին կռացավ, Դավթի ոտք պագեց, ասաց.

— Ամա՜ն, Դավի՛թ, քո բախտն եմ ընկել. ինձ մի՛ սպանի, կլինեմ քո ծառան։

Դավիթ ասաց.— Չէ, դու Մըսրա Մելիքի ծառան ես, էնոր ծառան էլ կաց։ Քեզ չեմ սպանի։ Գնա Մը՛սրր, պատմի՛ր, թե ինչ է Սասուն։ Ասա՝ Մըսրա Մելիք թո՛ղ գա, կռվենք, թե որ չեկավ, իմ ձին էնոր կնկան էրիկ։

Դավիթ Կոզբադնին վեր ցրեց ու դրեց էնոր վեցտանի ձիու վրա, ոտները կապեց փորի տակ, մի գոմփ զարկեց գավակին, ասաց.

— Տա՛ր քո տիրոջը մինչև Մըսրր։

Մըսրա կանայք մեծ առվի մոտ բուրդ էին լվանում։ Կոզբադնին որ տեսան, ճկան, առաջը կտրեցին, կալմից արին, ասին.

Յա՜, Կոզբադին, ճռռթած բերան,
Ո՞ւր ես գալիս լերան, լերան.
Ատամներդ ո՞վ է քաշել.
Քո ճակատը ո՞վ է նախշել։
Դու չասացի՞ր, կերթամ Սասուն,
Թալան բերեմ բյուրուն-բյուրուն,
Բերեմ քառսուն կով ու կըթան,
Որ դուք չինեք եզ ու չորթան։
Գնում էիր զորքով, կռվով,
Եզ ես գալիս փետրած պոչով։
Ո՞ւր ես թողել մեր լաճերուն,
Մեր փահլևան էրիկներուն։

Կոզբադին շատ նեղացավ, շատ վշտացավ, շատ բարկացավ, ասաց.

Մի՛ ճվճվաք, անզգամնե՛ր,
Խելքներդ կարճ, երկար-ծամե՛ր,
Նախ տո՛ւն մտեք, արեք շիվա՛ն,
Նոր դո՛ւրս եկեք, արեք դիվա՛ն։
Ես գիտեի դաշտ էր, տափան։
Չէ, դուրս եկավ կիրճ ու կապան,
Ես գիտեի Սասուն հասանք,
Համ կռիվ է, համ զրռանք։

Չէ, սասնեցիք գև են, բոռան,
Նեռեր ունեն՝ բարդու գերան,
Թրեր ունեն կեծակնահան,
Վերք են բացում, քանց պատուհան,
Խոտերն էնտեղ՝ տեղ ու մական,
Զորք չարդեցին հազարական։
Կեցե՛ք, անձրև կգա նորեն,
Հեղեղ կգա Սասնա սարեն,
Ձեր մարգերու ինչ կա-չկան
Բերի, կանեք եղ ու չորթան։

## 12. ՄԸՍՐԱ ՄԵԼԻՔ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԱՐՇԱՎԵԼ ՍԱՍՈՒՆ

Լաց ու շիվանն ընկավ Մըսրա մեջ։

Որն իր էրկանն էր ողբում, որն իր լաճուն, որն իր աղբորը։

Մըսրա քաղքցիք ելան գնացին Մըսրա Մելիքի դուռ, գանգատ արին.

— Թագավո՛րն ապրած կենա,— ասին,— Կոզբադին Մըսրա զորքը տարավ Սասուն, զորքը թողեց էնտեղ, ինքը փախավ եկավ Մըսըր։ Կանչի՛ր դիվան, թո՛ղ պատասխան տա մեր էրիկներու, մեր լաճերու, մեր աղբերներու համար։

Մըսրա Մելիք մեծ վազիրին հարցրեց.

— Ո՞ւր է Կոզբադին։ Ինչու՞ չի գալիս իմ դիվան։

Մեծ վազիրն ասաց.— Թագավորն ապրած կենա, Կոզբադին էս մեկ շաբաթ է, ինչ եկել պառկել է իր տանը, ամոթու չի գալիս քո դիվան։

Մըսրա Մելիք ասաց.— Չորս փահլևա՛ն ճամփիր էնոր ետև։ Ասեն՝ թագավորը կանչում է, թո՛ղ գա։ Որ չեկավ՝ թո՛ղ տփելով բերեն։

Չորս փահլևան գնացին Կոզբադնի տուն, տեսան գլուխը կապել, պառկել է, ասին.

— Զորապե՛տ, Մըսրա Մելիք հրամայել է, որ գաս իր դիվան, որ չգաս, քեզ տփելով պիտի տանենք։

Կոզբադին եկավ, կանգնեց իր թագավորի առաջ։

Մըսրա Մելիք տեսավ, իր զորապետի վիզը ծուռ է, ատամները շարած են ճակտին, բարկացավ, ասաց.

— Կոզբադի՛ն, էդ ի՞նչ օրի ես ընկել։ Ո՞ւր է իմ հարկը, ո՞ւր է Սասնա թալանը, ո՞ւր է Դավթի գլուխը, ո՞ւր է իմ զորքը։ Պատասխա՛ն տուր։

Կոզբադին կարկամել էր, լեզուն կապն էր ընկել, հազիվ կակազելով ասաց.

Մըսրա Մելի՛ք, ապրած կենաս,
Չըլնի, դու էլ Սասուն գնաս,
Սասնա տներն են գև-բոռան,
Նեռեր ունեն բարդու գերան,
Թրեր ունեն կեծակնահան,
Փոր կճղեն, քանց պատուհան։
Խոտերն էնտեղ տեղ ու մական,
Զորք չարդեցին հազարական...

Մըսրա Մելիք հարցրեց.

— Դավթին տեսա՞ր։ Դավիթն ի՞նչ ասաց։



Կողբացին պատասխանեց.

— Դավիթը երկու ձեռով բռնեց երկու ծառ, իմ զորքը ջարդեց, ինձ էսպես հաշմեց, ասաց.— Գնա՛, Մըսրա Մելիքին պատմի՛ր, թե ինչ է Սասունը։ Ասաց՝ «Մըսրա Մելիք թո՛ղ գա՝ կռվենք, որ չեկավ, իմ ձին՝ էնոր կնկան էրիկ»։

— Ուու՜ու՜ու՜.— կատաղեց Մըսրա Մելիք, փրփուր հանեց բերնեն, աչքերն արուն կոխեց. ելավ էկավ տուն, Իսմիլ խաթունին ասաց.

— Ախխ, ա՜խխխ, մարե՛, ես էն թլոլ Դավթին պիտի սպանեի, դու չթողիր։ Տեսա՞ր ինչ արեց. ինչպես ինձ անպատվեց։ Ես էն ի՞նչ հող տամ գլխիս, որ քո ասածն արի։

Իսմիլ խաթուն ասաց.— Չէ, մորթու՛ն, դու իմ ասածը չարիր, դու էն ճռռթած բերան Կոզբադնի ասածն արիր։ Դու որ ինձ լսեիր, Դավթին հյուր կեբթայիր տարին երկու հեղ, Դավթին էլ քեզ մոտ հյուր կկանչեիր, կուրախանար, կասեր՝ ես աղբեր ունեմ, կռնեիք իրար թիկունք, իրար կօգնեիք, էլ ո՞վ աշխարհում կիշխեներ ասել՝ ձեր աչքի վերև հոնք է։

Մըսրա Մելիք ասաց.— Մարե՛, ախար ես արաբ եմ, էնիկ՝ հայ։ Հայն ու արաբը կպրեբրանա՞ն։

Իսմիլ խաթուն ասաց.— Մելի՛ք, մորթու՛ն, ու՞ր է քո խելքը։ Բա քի՞չ է եղել, որ արաբ ու հայ աղբերացել են, մեկ-մեկու հյուր են գնացել, իրար օգնել են, պաշտպանել։ Դավիթը մեր շահած-պահած մանուկն էր, դու որ էնոր հետ լեզու գտնեիր, Դավիթը քո ասածը կաներ, չէր ըռըկի քեզմեն։

Մըսրա Մելիք ասաց.— Էհ՜, մարե՛, ասում ես, էլի՛։ Ես ո՞նց հյուր գնայի գյավուրի տուն։

Իսմիլ խաթուն ասաց.— Հա՛լ, դու էնոր տուն հյուր չգնացիր, Դավթին քո տուն հյուր չկանչեցիր. էլ ինչո՞ւ զորք համփեցիր Սասուն, Դավթի շինած վանքն ավերեցիր։ Դավիթն էլ ըռըկավ, տեղը հանեց։

Մըսրա Մելիք մռնչաց.— Ա՜խխխ... էդ Սասնա ծուռն ինձ էնպես անպատիվ արեց, որ ամոթու Մըսրա մեջ գլուխս չեմ կարնա դուրս հանեմ։ Չէ, ես պիտի գնամ քարուքանդ անեմ Սասուն, Դավթի արունը խմեմ, որ սիրտս հովանա։

Իսմիլ խաթուն տագնապեց.— Մելի՛ք, դու Սասնա հետ գործ չունենա։ Ինչ որ ցանեցիր, էն հնձեցիր։ Դու քո տեղը հանգի՛ստ կաց։ Ես մի թուղթ կուղարկեմ Դավթին, էնոր քեզ հետ կհաշտեցնեմ։ Դու Սասնա հետ գործ չունենա։

— Չէ,— ասաց,— մարե՛, ես քո ասածն արի, վնաս տեսա։ Ես պիտի գնամ Դավթի վրա կռվի։ Կամ ես Դավթին կսպանեմ, կամ Դավիթն ինձ կսպանի։

Մերն ասաց.— Մելիք, իմ խոսքը լսիր, դու չես կարնա սպանել Դավթին։

— Ես չեմ կարնա սպանել Դավթի՞ն։— Մըսրա Մելիք ելավ կանգնեց, ոնց որ օձի խայթած։ — Չէ, մարե՛, դու իմ չարն ես ուզում։

Ասաց. մորը թողեց լաց ու շիվանի մեջ, գնաց։

Մըսրա Մելիք մեջլիս կանչեց։

Եկան Մըսրա վազիր-նազիր, Մըսրա բոլոր իմաստուն մարդիկ։ Մըսրա Մելիք էնոնց հետ խորհուրդ արեց, ասաց.

— Ես, Մըսրա Մելիք, Մըսրա Մելիքի որդին, Մըսրա թագավոր, աշխարհի տեր,

*ես ո՞նց կթողնեմ, որ Սասնա ծուռ շաղգամակեր Դավիթ իմ հարկն ուրանա, իմ զորքը ջարդի, իմ զորապետին անպատվի, ինձ ամոթական խոսք ուղարկի Սասունից Մըսըր։ Չէ, ես պիտի գնամ Սասուն, կոտորեմ, քարուքանդ անեմ, Դավթի արունը խմեմ, որ սիրտս հովանա։ Ի՞նչ խորհուրդ եք տալիս։*

*Մեջլիսում կային խելոք վեզիրներ, իմաստուն մարդիկ, որ չէին ուզում ոչ կռիվ, ոչ կոտորած, ոչ ավերմունք։ Էդ մարդիկ վեր կացան, ասին.*

*— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթ քեզ ի՞նչ է արել։ Ինչ որ արել ես, դու ես Դավթին արել։ Դավիթ միամիտ նստած իր տանը, դու զորք ուղարկեցիր Սասուն։ Դավիթ իր երկիրը պաշտպանեց, մհա դու՞ ես բողոքավոր։ Մեր խորհուրդը մեկ է. մի՛ գնա Սասուն։ Աշխարհի երեք մասը քոնն է, թո՛ղ մեկ մասն էլ մնա Դավթին։*

*Մըսրա Մելիք բոռաց.— Ջհեններդ կորե՛ք։ Ո՞ր էդպես եք ասում, վե՛ր կացեք, կառեղից գնացե՛ք, էլ չերևաք իմ աչքին։ Գյավուրի որդի գյավուրնե՛ր։*

*Խորհրդականները վեր կացան, մեջլիսեն հեռացան, իրար կամացուկ ասին.*

*— Ինքն է գյավուրի լաճ, մեզ է ասում...*

*Մըսրա Մելիք մեջլիսը ցրիվ տվեց, իր մոտ կանչեց իր մոտիկ զորապետներուն, էնոնց հետ խորհուրդ արեց.*

*— Ի՞նչ կասեք, Սասնա Դավթի հետ կռիվ անե՞նք, թե չանենք։*

*Դավիթ Մըսրա մեջ գուրզ խաղալու ժամանակ սպանել էր Կական ու Աոլան փահլևաններուն։ Էնոնց հերերը Դավթի վրա ոխ ունեին. պահած, ելան. ասին.*

*— Թագավո՛րն ապրած կենա, դու Դավթի հետ պիտի կռվես կամ էսօր, կամ երբեք։ Դավիթ էսօր պստիկ է, քսան տարեկան է, պատերազմ անել չգիտի. դու էսօր պիտի կռվես Դավթի հետ, էսօ՛ր պիտի սպանես էդ ծուռ գյավուրին։ Թե չէ, որ ջոջացավ, էլավ երեսուն տարեկան, էլ Դավթին հաղթելու հնար չի լինի։ Դավիթ կգա քեզ վրա կռիվ, քեզ կսպանի, Մըսըր կղավթի։ Լավն էն է, դու մհա քո բոլոր զորքը հավաքես, գնաս գյավուրի վրա, երկիրն ավերես, Դավթի գլուխը կտրես, որ չմնա քեզ մշտական վտանգ։ Դու Դավթի հետ պիտի պատերազմես կամ էսօր, կամ երբեք։*

*— Ուա՞խ,— մռնչաց Մըսրա Մելիք,— դուք ուղորդ եք ասում. կամ էսօր, կամ երբեք։*

*Զորապետները թրերը մերկացրին, կանչեցին.*

*— Թո՛ղ ապրի Մըսրա Մելիք, թո՛ղ մեռնի գյավուր Դավիթ։*

*Մըսրա Մելիք բոռաց, մի պղնձի տաշտ բերին դրին իր առջև, Մըսրա Մելիք ածելին զարկեց իր ճակատին. արունը թափեց տաշտի մեջ, թուղթ առավ, իր արնով գրեց.*

*Թուղթ եմ գրում Հարավային,*
*Թուղթ եմ գրում Հյուսիսային,*
*Թուղթ եմ գրում Արևելյան,*
*Թուղթ եմ գրում Արևմտյան*
*Իմ զորապետներուն, իմ զորքին.*
*Եկե՛ք, եկե՛ք,*
*Ամեն կողմեն եկե՛ք.*
*Պատերազմ է։*
*Եկե՛ք, խույծ՝ պարոններ,*
*Եկե՛ք, սակրի՝ գլուխներ,*

Ելե՛ք, լուսնակ ախանչներ,
Ելե՛ք, մեյդա՛ն ճակատներ,
Ելե՛ք, թիակ-չեղվըներ...
Թող գա՜ն, թո՛ղ գան, գյավուրի դեմ
Պատերազմ է, որ պատերազմ։
Կանչում եմ, թո՛ղ գա իմ զորքը բոլոր.
Հազար ու հազար անմորուք զինվոր,
Ա՜խ, անմորուք զինվոր.
Հազար ու հազար թուխ մորուքավոր,
Ա՜խ, թուխ մորուքավոր.
Հազար ու հազար սիպտակ ալեոր,
Ա՜խ, սիպտակ ալեոր,
Կանչում եմ, թո՛ղ գա իմ զորքը բոլոր.
Հազար ու հազար սիպտակ ձիավոր,
Հազար ու հազար կարմիր ձիավոր,
Հազար ու հազար սև ձիավոր,
Ա՜խ, հազար ու հազար ձիավոր։
Կանչում եմ, թո՛ղ գա իմ զորքը բոլոր.
Հազար ու հազար թմբկահար,
Հազար ու հազար փողահար,
Հազար ու հազար ու հազար...
Թող գա՜ն, թող գա՜ն, գյավուրի դեմ
Պատերազմ է, որ պատերազմ։

Մըսրա մելիք էսպես գրեց, կանչեց։
Եկավ անթիվ անհամար ձիավոր,
Եկավ անթիվ անհամար ոտավոր։

Եկան, հասան մինչև Մըսրա գետը։ Առաջուց եկողները ջրի կեսը խմեցին։ Մեջտեղեն եկողները ջրի մնացած կեսը խմեցին, նոևեն եկողները քարերը լիզեցին, մնացին ծարավ։

Եկան հասան Մըսրա դաշտ, վրան զարկեցին, մարդ ուղարկեցին Մըսրա Մելիքի մոտ, հարցրին.

— Մեր թշնամին ո՞վ է։ Ո՞ւմ հետ պիտի կռվենք։

Մըսրա Մելիք ասաց.

— Մեր թշնամին Սասնա Դավիթն է։ Էնոր հետ պիտի կռվենք։

Ասացին.— Թագավորն ապրած կենա, Մըսրա գետը խմեցինք, պրծավ, մեր զորքը ծարավ է, ի՞նչ անենք։

Մըսրա Մելիք ասաց.

— Մըսրա ջրհորներեն ջո՛ւր տարեք զորապետներուն, զինվորները ծարավ էլ կկռվեն։

Իսմիլ խանում գիշերը երազ տեսավ, ելավ գնաց Մըսրա Մելիքի մոտ, ասաց.

— Մելի՛ք, որդի՛, կռիվ մի՛ գնա Սասուն։

Մելիք արթնացավ, քնաթաթախ հարցրեց.— Ինչո՞ւ, մարե՛։

— Ես էս գիշեր երազ տեսա. Սասնա տան աստղը պայծառ էր, Մըսրա տան աստղը՝ խավար։ Վատ երազ էր, որդի՛, կռիվ մի՛ գնա։

Մըսրա Մելիք հորանջեց.— Էհ՜է՜, մարե՛, քեզ համար քնում ես, ուրիշի համար՝ երազ տեսնում։ Գնա՛, գնա՛ քո սենյակ, իմ քունը տանում է։

Իսմիլ խաթուն գնաց իր սենյակ, նորեն քնեց, նորեն երազ տեսավ, ելավ.

— Մելի՛ք, նորեն երազ տեսա. Մըսրա ձին փախեփախ էր. Սասնա ձին՝ հասե-հասե։ Դավիթ քո աղբերն է, կռիվ մի՛ գնա էնոր դեմ, Դավիթ քեզ կսպանի։

Մելիք բարկացավ.— Բավ է դու ինձ վախեցնես, մարե՛։ Չթողիր, որ ես էն շան լակոտին սպանեի, քանի պստիկ էր, մկա երազ ես տեսնում։ Ես էսքան զորք չեմ հավաքել, որ գուրզ խաղամ, հավաքել եմ, որ կռիվ գնամ։

Իսմիլ խաթուն գնաց իր սենյակ։ Լուսադեմին դարձյալ եկավ Մըսրա Մելիքի մոտ, ասաց.

— Մելի՛ք, նորեն երազ տեսա. Սասնա երկիրն արև էր, Մըսրա երկիրը՝ մութ։ Սասուն մի՛ գնա, որդի՛, Սասուն պստիկ է, իր թափն ահագին։

Մըսրա Մելիք ասաց.— Մարե՛, ես կանչել եմ հազար ու հազար անմորուք զինվոր։

Մերն ասաց.— Մելի՛ք, ծիծ եմ տվել քեզ. իմ կաթի՛ն ականջ արա, կռիվ մի՛ գնա։

— Մարե՛, ես կանչել եմ հազար ու հազար թուխ մորուքավոր։

— Մելի՛ք, իմ սիրտը վատն է վկայում։ Մորդ սրտի՛ն լսիր, մի՛ գնա կռիվ։

— Մարե՛, ես կանչել եմ հազար ու հազար սիպտակ ալևոր։

— Մելի՛ք, Դավիթ ունի Քուռկիկ Ջալալին, Դավիթ ունի Թուր Կեծակին, Դավիթ հրեղեն է, քեզ կսպանի, կռիվ մի՛ գնա։

Մըսրա Մելիք էստեղ վախեցավ, ասաց.

— Մարե՛, ինչու՞ էդ ամենը չասիր առաջուց։ Մկա ինքս էլ չեմ ուզում կռիվ գնալ։ Բայց պիտի գնամ, զորք եմ հավաքել։

Իսմիլ խաթուն միտք արեց, ասաց.

— Մելի՛ք, մորթու՛ն, դու զորապետներ քի՞չ ունես. ուրի՜շ մարդ բռնիր քո տեղ, թո՛ղ զորքն առնի, գնա Սասու՛ն։ Ինքդ մի՛ գնա։

Մըսրա Մելիք ասաց.— Հայ-հա՜յ, զորքս տամ ուրիշ մարդու ձեռ, տանի կոտորե՞լ տա։ Տեսա՞ր, Կոզբադին ինչ արեց։ Չէ, մարե՛, ինքս եմ զորք հավաքել, ինքս էլ պիտի գնամ կռիվ։ Ուրիշ հնար չկա։

Իսմիլ խաթուն էստեղ լաց ու կոծ արեց, ասաց.

— Մելի՛ք, ես քեզ մենակ չեմ թողնի։ Դու որ գնում ես, ես էլ կգամ քեզ հետ։

Մելիք ասաց.— Մարե՛, դու կնիկ ես, դու ի՞նչ գործ ունես կռվի դաշտում։ Դու մի՛ գա։

Մերն ասաց.— Կգամ։ Ես չեմ կարնա տանը հանգիստ նստել, երբ դու պիտի գնաս կռիվ։

Իսմիլ խաթունը ելավ, հավաքեց քառսուն տղամարդ, որ վրան զարկեն, խորոված անեն, զուռնա փչեն. քառսուն կնիկ, որ տախտ ավլեն, սուփրա գցեն, ոտ մաժեն. քառսուն աղջիկ, որ դափ զարկեն, քյամանչա քաշեն, խաղան. էդ բոլորին առավ իր հետ, Մըսրա զորքի ետևեն ճանապարհ ընկավ դեպի Սասուն.

Մըսրա Մելիք իր զորքը բերավ մինչև Սասնա սահման, Լերա դաշտի մեջ վրաններ զարկեց ու թուղթ գրեց, ուղարկեց Սասնա քաղաքը։

«Դավիթ, կռիվներս կռիվ է, արի՛ կռվենք։ Թե չէ զորքս կթափեմ քաղքիդ վրա, ինչքան որձ կա Սասնա մեջ, կսպանեմ, Սասուն քարուքանդ կանեմ, քար քաղեմ

ավազ մաղեմ, Սասնա հողը բառնամ ձեր ձիերուն, Սասնա քարերը բառնամ ձեր ձիի կանանց, քաշեմ տանեմ Մըսըր։

## 13. ՁԵՆՈՎ ՕՀԱՆ

*Մըսրա Մելիքի թուղթը բերին Սասուն, Դավիթ որսի էր գնացել, տվին Ձենով Օհանի ձեռը։*

*Ձենով Օհան կարդաց, լաց եղավ, անձրևի պես արցունք թափեց մորուքից վար. ասաց. Էս ի՞նչ է, ո՛վ աստված, հայոց գլխին փորձանք ու աղետ միշտ անպակա՞ս պիտի մնան։ Մենք մեր տան մեջ անմեղ նստած ենք, Մըսրա Մելիք մեզնից ի՞նչ է ուզում։ Ինչո՞ւ է էդքան զորք առել եկել։ Դու՛ էլ մեզ օգնություն, ո՛վ Մարութա բարձր Աստվածածին։*

*Ձենով Օհան իր սրտի մեջ էսպես գանգատվեց, Մըսրա Մելիքի կռվակոչն առավ, գնաց Վերգոյի մոտ, կանչեց Քեռի Թորոսին, էնոնց հետ խորհուրդ արավ, ասաց.*

*— Հիմա մենք ի՞նչ անենք։ Դավիթ Մըսրա զորքը որ տեսավ, կռիվ կանի, ինքն էլ կզոհվի, մեր գլխին եկած փորձանքն էլ կավելացնի։*

*Ծռան Վերգոն ասաց.— Կռիվ անել մեր բանը չի, ջանը՛մ։ Բերենք մի սուտ կերուխում սարքենք, Դավթին ամուր խմացնենք, որ չարթնի, ինքներս էլնենք արծաթ ու ոսկի տանենք, աղջիկ ու կնիկ տանենք Մըսրա Մելիքին, ոտներն ընկնենք, աղաչենք, իր թրի տակով անց կենանք, որ մեզ խղճա, չկոտորի։ Էս բոլորը շուտ անենք, որ Դավիթ բան չիմանա։*

*Քեռի Թորոս ասաց.— Հա, ջանը՛մ, Դավիթ անահ ծուռ տղա է, որ իմացավ՝ կնետվի կռիվ, կսպանեն։ Սասնա տան լույսը կմարի։ Բերենք էդ խելառին խմացնենք, թող իր համար գինովցած քնի։ Հիմա դուք ելեք, ինչ ուզում եք տարեք Մըսրա Մելիքին. Էնոր կատաղությունը կոտրեք, ժամանակ շահեք, մինչև ես իմ զորքը հավաքեմ, տանեմ սար։ Որ կռիվ եղավ, պիտի կռվենք, չասեն շատ, քչեն՝ քիչ։*

*Ձենով Օհան ելավ սուտ կերուխում սարքեց, Քեռի Թորոս Դավթին կանչեց, ասաց.*

*— Դավի՛թ, քեզ մի բան ասեմ, չե՞ս բռկի։*

*— Ինչո՞ւ պիտի բռկեմ, քեռի՛, ասա՛։*

*Թե որ էս պղինձը լիքը գինի խմես, կասեմ դու Առյուծ Մհերի տղան ես, թե որ չխմես, քիչ ես։*

*Դավիթ ասաց.— Լից՛, Քեռի՛ Թորոս, լի՛ց, մի տեսնե՞նք էդ պղինձը։*

*Քեռի Թորոս յոթկանթանի պղինձը գինի լցրեց բերնեբերան. Դավիթ առավ դրեց բերնին, խմեց, խմեց, խմեց, մինչև տակը դատարկեց, պղինձը թալեց գետին, ճմացրեց, ինքը հարբած պառկեց գորգի վրա, քնեց։*

*Դավիթ որ քնեց, Քեռի Թորոս ելավ գնաց քաղքի մեջ, ասաց՝ փող փչեն, թմբուկ զարկեն, իր տոհմի քաջերուն հավաքեց, էսպես խոսեց.*

*— Ակա՛նջ արեք, իմ որդինե՛ր, իմ Սասնա տան քաջե՛ր. Անո՛ւշ Քոթոթ. Վժի՛կ Մխո, Ճնճղափորի՛կ, Պարոն Աստղի՛կ, Ճռո-Վիրա՛բ, Խոռ-Մանու՛կ, Խոռ-Գուսա՛ն. ակա՛նջ արեք իմ խոսքերուն. Մըսրա Մելիք զորք է բերել մեր Սասնա տան վրա, որ տանի մեր դառը դատած ոսկին, մեր կնիկը, մեր աղջիկը, մեր պատիվը։ Ձենք տա։ Կռիվ է ուզում, կկռվենք։ Մի օր ծնվել ենք, մի օր կմեռնենք։*

Քեռի Թորոս էսպես խոսեց. առավ իր գուրզը, բարձրացավ, վրաններ զարկեց Լերա սարի գլխին։

Լույսը որ բացվեց, մերոնք տեսան Մըսրա Մելիքի զորքը Լերա դաշտի մեջ։ Երկնքի աստղերուն հաշիվ կար, սիպտակ վրաններուն հաշիվ չկար։ Ոնց որ սարում ամառ լիներ, դաշտում՝ ձմեռ։

Քեռի Թորոսի կնիկը, Սանդուխտ խաթունը սրտի մեջ կսկիծ արավ, ասաց. «Հեյ-վա՜խ, Մըսրա զորքերը Թորոսին կսպանեն, մեր տղերքներուն կսպանեն, կգան Սասուն կկոտորեն, մեր ազգը երկրի երեսեն կվերացնեն։ Իսկ Սասնա կռվանը հարբել, քնել է իր համար»։

Սանդուխտ խաթունը ելավ եկավ Դավթի մոտ, նստեց էնոր գլխավերև, լաց եղավ։ Արտասուքը որ ընկավ Դավթի երեսին, Դավիթ քնուց արթնացավ, ասաց.

— Յա՜, քեռակի՛ն։ Ինչո՞ւ ես լալիս։ Փա՜ռք աստծո, ես կենդանի եմ դեռ։

Սանդուխտ խաթուն ասաց.

— Ախ, Դավի՛թ, ախ, լա՛ո, գրո՛ղը քեզ տանի. զարկեցիր, կոտորեցիր Մըսրա հարկահաններուն. Մըսրա Մելիք բարկացավ. անհաշիվ զորք հավաքեց, եկել է մեզ վրա։ Քեզ հարբեցրին, քնացրին էստեղ, քեռիդ մի պստիկ խումբ առավ գնաց կռիվ։ Քեռուդ ու՞մն ուր, Մըսրա Մելիքի ու՞մն ուր։ Կզարկեն քեռուդ կսպանեն, մեր տղերքներուն կսպանեն, կգան, Սասուն կավերեն, մեր ազգը երկրի երեսեն կվերացնեն։ Դու էստեղ հարբել, քնել ես քեզ համար։

Դավիթ հերսոտած ելավ նստեց, էնոր քունն անցավ, գինովությունն անցավ, առավ իր նետ աղեղը, ասաց.

— Քեռակի՛ն, դու մի՛ վախենա։ Ես կերթամ պատասխան կտամ էն շուն Մելիքին։ Ես իմ գլուխը կտամ, չեմ թողնի, որ Մըսրա զորքերը մեր մեկ հոտաղի մազին էլ կպնեն։

Դավիթ ելավ գնաց իր հրողբոր մոտ, ասաց.

— Հրողբե՛ր Օհան, Մըսրա Մելիք զորքով եկել է ինձ վրա կռիվ։ Ինչո՞ւ եք պահել ինձմեն։

Ձենով Օհան ասաց.— Լա՛ո, ախար դու ափսոս ես, դու չահել ես, ո՞նց պիտի կռվես Մըսրա Մելիքի դեմ։

Դավիթ բռռաց.— Յա՜, աստված քո տունը շավլի. բա որ ես չկռվեմ, ո՞վ պիտի կռվի։ Շուտ մի զե՛նք տուր ինձ։

Ձենով Օհան խեղճացավ.— Լավ, որ էդպես է, գնա՛ հողեն, էնտեղ հինավուր թրեր կան, մեկը վերցրու՛։

Ցռան Վերգոն Դավթին ծաղրեց, ասաց.

— Դավի՛թ, Մըսրա Մելիքին երբ կսպանես, էնոր ձուն, թե որ կարցար շալկել, բեր ինձ հիշատակ։

Դավիթ մազ մնաց մի գոմր զարկեր Ցռան Վերգոյի գլխուն, բայց մտքում ասաց. «Հրողբերս է, չոչ մարդ է, թո՛ղ իր համար խոսի»։

Դավիթ գնաց իր հրողբոր հողեն, առավ ժանգոտած մի թուր, ավազակներեն խլած քուռակը հեծավ, քշեց, որ գնար։ Ճանապարհին Սասնա Պառավը ելավ Դավթի առաջ, հարցրեց.

— Դավի՛թ, լա՛ո, էդ ո՞ւր ես գնում:

Դավիթ ասաց.— Գնում եմ Մսրա Մելիքի վրա կռիվ:

Պառավը խնդաց.— Ախ, Դավի՛թ, դո՛ւ ըլ քեզ տանիս: Ափսոս չէ՞, որ դու ես Առյուծ Մհերի որդին: Ես էդիկ ձի՞ է, որ դու հեծել ես, քա էդիկ լո՞ւր է, որ դու բռնել ես: Էդանցմո՞վ կռիվ կերթաս Մսրա Մելիքի դեմ:

Դավիթ նեղացավ.— Ես ինչո՞վ կերթամ, պառա՛վ: Տանը անթվոց կա՞, շամփուր կա՞, տո՛ւր, էդանցմով գնամ կռվի:

Սասնա Պառավն ասաց.— Մի՛ նեղանա, Դավի՛թ, մեռնեմ քու արևուն: Քո հորեղբեր Օհան ինչո՞ւ է ընդմեն պահել քո հոր զգեստներն ու զենքերը.

Քո հոր չանե՞ր Կարան-Կադիֆին,
Քո հոր չանե՞ր Քամարբո-Թաշին,
Քո հոր չանե՞ր Գդակ-Պողպատին,
Քո հոր չանե՞ր Կոշիկ-Երկաթին,
Քո հոր չանե՞ր Սանձըն-Արծաթին,
Քո հոր չանե՞ր Թամբըն-Մարգարտին,
Քո հոր չանե՞ր Քուռկիկ Ջալալին,
Քո հոր չանե՞ր Թուրը Կեծակին,
Քո հոր չանե՞ր Խաչ-պատերազմին,
Որ իջներ, կենար Դավթի աջ թևին:

Դավիթ հարցրեց.— Նանե՛, էդ ամենը ո՞րտեղ է մնա:

Սասնա Պառավն ասաց.— Լա՛ո, քո հորեղբեր Օհան անհետ է արել էն մարդուն, ով քեզ չանց կտա քո հոր զգեստներն ու զենքերը: Տեղն ասեմ, կրնկնեմ անէծքի տակ: Դու գնա՛, հորեղբո՛րդ հարցրու, բայց էնիկ էդ բաները հոժար կամքով լուս-աշխարհ չի հանի: Գնա՛, հորեղբորդ ածիքը բռնի, քո հոր զգեստն ու զենքը վերցրու զոռով:

Դավիթ եկավ, ձեռ թալեց բռնեց հորեղբոր ածիքը, բարձրացրեց, տանիքը հողեն կարեց, ասաց.

— Հորեղբե՛ր Օհան, էլ չեմ ու չում չանես.

Իմ հոր զգեստերը ո՞րտեղ են, տո՛ւր,
Իմ հոր զենքերը ո՞րտեղ են, տո՛ւր,
Տո՛ւր ինձ իմ հոր Քուռկիկ Ջալալին,
Տո՛ւր ինձ իմ հոր Թուր Կեծակին,
Տո՛ւր ինձ իմ հոր Խաչ-պատերազմին,
Որ իջնի, կենա իմ աջ թևին:

Տալի՞ս ես, տո՛ւր հոժար կամքով, չե՞ս տա, զոռով կզարկեմ, կերթաս անդունդը, զոռով կառնեմ:

Ձենով Օհան լաց եղավ, ասաց.

— Էդ ամենը քո գիտնալու բանը չէր: Կտրվի՛ էն բերանը, որ էդ ամենը սովորեցրել է քեզ: Էն տարին, երբ Առյուծ Մհեր մեռավ, էնոր զգեստներն ու զենքերը ես թաքցրի ներքնատան մեջ: Գնանք, հանեմ տամ:

Իջան նկուղ: Մհերի զգեստներն էնտեղ կախած էին: Դավիթ վերցրեց, հագավ: Կարան-Կադիֆին յոթ փութ եկավ Դավթի վրա, Քամարբո-Թաշին յոթ փութ եկավ մեջքի բոլոր, Գդակ-Պողպատին, յոթ փութ բամբակ դրին մեջը, նոր Դավթի գլխին եկավ, Կոշիկ-Երկաթին, յոթ փութ բամբակ դրին մեջը, նոր Դավթի ոտքին եկավ:

Ձենով Օհան ասաց.— Մնանեմ քեզի, Դավի՛թ, քո հոր գուրզը հրեն պուճարում դրած է, թե ուժդ պատեց, վերցրու՛, թե որ չպատեց, կռիվ մի գնա, քեզ կսպանեն։

Դավիթ մի ձեռով հոր գուրզը վերցրեց, մյուս ձեռով հորեղբոր թևը բռնեց, քառասուն աստիճան նկուղեն դուրս հանեց։ Էնտեղ Ձենով Օհան ուրախացավ, ասաց.
«Ասածով Դավիթ իր հոր տեղը կբռնի։ Ես Մհերի յոթ աղբերն եմ, էնոր գուրզը գետնեն կարել չեմ կարնա, Դավիթ Մհերի գուրզը վերցրեց, քառասուն աստիճան նկուղեն դուրս հանեց»։

Երբ նկուղեն դուրս էկան, Դավիթ հարցրեց.

— Հորեղբա՛յր, ո՞րտեղ է Քուռկիկ Ջալալին։

Ձենով Օհան ասաց.— Ախ, լա՛օ, էն օրվանեն, ինչ քո հերը մեռավ, ես էնոր ձին փակել եմ ախոռի մեջ, վրան դուռը շարել եմ, երդիկեն եմ տալիս խոտ ու ջուր։ Մսրա Մելիքի ահու չեմ իշխենում Քուռկիկ Ջալալին դուրս բերել, որ օդ առնի, արև առնի։ Արի քեզ տանեմ յոթ ախոռ։

Գնացին, կանգ առան յոթ ախոռի մոտ։ Ամեն կողմեն պատ էր, դուռ չկար։ Դավիթ գուրզով զարկեց, պատը ծակեց, ներս մտավ։ Քուռկիկ Ջալալին կապած էր էնտեղ։ Տիրոջ գետերի հոտը որ առավ, ուրախ վրնջաց։ Դավիթ մոտեցավ, ձեռքը դրեց գավակին։ Քուռկիկ Ջալալին հերսեն քացի տվեց, Դավիթ լղզվեց պատին, ուշքն անցավ։ Մի քիչ անց, երբ ուշքի եկավ, հոնքուր-հոնքուր լաց եղավ, ասաց.

— Հեյ-վա՜խ, Քուռկի՛կ Ջալալին, ես էն մտածմունքն ունեի, որ իմ հոր ձին ինձ կտաներ կռիվ Մսրա Մելիքի դեմ, ինձ կօգներ, որ թշնամուն հաղթեմ, իսկ դու զարկեցիր ինձ։

Քուռկիկ Ջալալին լեզու առավ, ասաց.

— Քեզ ո՞նց կռիվ տանեմ, Դավի՛թ։ Նայի՛ր իմ վիճակին, տես իմ դրությունը։ Էն օրվանեն, ինչ քո հերը մահացավ, քո անգութ հորեղբայրներն ինձ կապել են մութ ախոռի մեջ, մի անգամ էլ չեն մաքրել, ես մոռացել եմ, թե ինչ է քերոց։

Դավիթ հասավ գրկեց Քուռկիկ Ջալալուն վիզը, ճակատը պաչեց, լոթկանթանի պղնձով ջուր տաքացրեց, առավ մի փութ օճառ, Քուռկիկ Ջալալուն լվաց, մաքրեց, մի արարի թիմար տվեց, առաջը յոթ փութ գարի դրեց, ասաց.

— Քուռկի՛կ Ջալալի, մինչև էսօր քեզ տեր չկար, ես քո տերն եմ, մինչև էսօր քեզ թիմարող չկար, ես քո թիմարողն եմ, քեզ գարի տվող չկար, ես քո գարի տվողն եմ։

Դավիթ իր հոր ձիու պախուրցը բռնած ախոռեն դուրս հանեց, ապա դարձավ դիմեց հորեղբորը.

— Հորեղբա՛յր Օհան, մյա բե՛ր իմ հոր Թամբ-Սաղաֆին։

Ձենով Օհան Թամբ-Սաղաֆին բերավ, ասաց.

— Դավի՛թ, քո հերը, երբ թամբը դներ ձիու վրա, փոկերն ամրացներ, ձիու առաջին ոտները կտրում էր հողեն։ Մյա դու էլ թե որ ձիու առաջին ոտները հողեն կտրես, գնա կռիվ, թե չկարենաս, մի՛ գնա։

Դավիթ առավ Թամբ-Սաղաֆին, դրեց Քուռկիկ Ջալալու վրա, փոկերը ձգեց ու ձիու չորս ոտն էլ հողեն կտրեց, ասաց.

— Հորեղբա՛յր, մյա բեր ինձ իմ հոր Թուր Կեծակին։

Ձենով Օհան ասաց.

— Թուր Կեծակին հրեն խրած է կալի կարասի մեջ։ Մհեր երեք անգամ զոռ էր տալիս, նոր դուրս էր քաշում։ Թե որ դու կարեցար Թուր Կեծակին կալրեն դուրս հանել, գնա՛ կռիվ, թե չկարցար, մի՛ գնա։

Դավիթ բռնեց իր հոր Թրի գաստակը, մի անգամ քաշեց, կալրեն հանեց, կապեց իր մեջքին։ Թուրն էնքան մեծ էր, որ Դավթի կողեն իջավ հասավ գետին, հեսն էլ քարշ եկավ գետնի վրա։ Դավիթ ասաց.

— Հրողբե՛ր, մյա բեր ինձ իմ հոր Խաչ-պատերազմին։

Ձենով Օհան ասաց.— Ես չեմ կարնա բերել Խաչ-պատերազմին։ Թե որ արժանի եղար, ինքնիրեն կգա, կիջնի քո թևին, թե որ արժանի չեղար ու չեկավ, կռիվ մի՛ գնա։

Աստծու կամքով խաչն եկավ իջավ Դավթի աջ թևին։

Դավիթ հեծավ Քուռկիկ Ջալալին, փչեց իր հոր գալարափողը, մի քանի փաթ գնաց-եկավ իր հոր տան առաջ։ Սասնա ժողովուրդն ամեն հավաքվեց մեյդան։ Ձենով Օհան աչքեց, աչքեց, աչքեց, սիրտը մղկտաց, լաց եղավ.

Հեյ-վա՜խ, հեյ-վա՜խ, հազար ու հազա՜ր ափսոս,
Սասնա հինավուրց գետերին ամեն ափսոս,
Ափսո՜ս, որ գնաց Քուռկիկ Ջալալին.
    Հեյ-վա՜խ, Քուռկիկ Ջալալին.
Ափսո՜ս, որ գնաց մեր Թուր Կեծակին.
    Հեյ-վա՜խ, մեր Թուր Կեծակին.
Ափսո՜ս, որ գնաց Խաչ-պատերազմին,
    Վա՜խ, մեր Խաչ-պատերազմին։

Դավիթ մտքում ասաց.— էս ի՞նչ է, իմ հրողբերը Սասնա գետերին ու զենքերին ափսոսում է, Սասնա ջահելին չի՞ ափսոսում... Դավիթ միամիտ էր, չէր կռահում, որ Ձենով Օհան իր ամենամեծ ափսոսը պահել էր, որ վերջում ասի.

Հազար ու հազար ափսոս մեր մանուկ Դավթին.
Սասնա տան հրաշք, աղավնե մեր ջահել Դավթին։

Դավիթ ամաչեց, ասաց.

— Հերանե՛ս հրողբեր, ինձ մի նախատիր. երբ դու իմ անունը տվիր ամենեն վերջը, սիրտս նեղացավ, մազ մնաց, որ Թուր Կեծակին բարձրացնեի քեզ վրա։ Բայց մեկա ես գիտեմ, որ քեզ համար Սասնա տան գետերն ու զենքերն ավելի թանկ է Դավիթ։

Էսպես խոսեց, իջավ ձիուց, հրողբոր ձեռը պագեց, հրողբերն էլ էնոր ճակատը պագեց, օրհնեց։ Դավիթ փչեց իր հոր մեծ գալարափողը, բոլոր սասնեցիք եկան, ահել, ջահել, աղջիկ, տղա, եկան շարվեցին Դավթի չորս բոլոր, խաղ կանչեցին, ասին.

Դավի՛թ, քեզ գնալ չլինի, քեզ գալ՝ թող լինի.
Դուշման, քո դիմաց բերենք սուրբ հաց ու գինի։
Քեզ մենք հարսնություն չենք արել, նոր պիտի անենք,
Քո ձեռքին մենք ջուր չենք առել, նոր պիտի առնենք.
Նո՛ր պիտի քո առիբին գենենք սուրբ հաց ու գինի.
Դավի՛թ, քեզ գնալ չլինի, քեզ գա՛լ թող լինի։

Դավիթ հեծավ Քուռկիկ Ջալալին, ոհացն ու գինին կանչեց, դարձավ դիմեց իր Սասնա ժողովրդին.

— Սասնա մեծե՛ր, մնաք բարո՛վ,
Ինձ մեծություն եք արել.

Սասնա քուրեր, մնաք բարո՜վ,
Ինձ քուրություն եք արել։
Դուք ու դրներ, բարո՜վ մնաք,
Ձեր ծուռ Դավթին չմոռանա՛ք.
Ձեր երեսն եմ թողել մեկ-մեկ,
Ներո՛ղ եղեք, մոռացե՛ք։
Սասնա ծերեր ու ջահելներ,
Եղել էք ինձ աղբեր ու հեր.
Որտեղ արդար քեֆի նստեք,
Սասնա Դավթին հիշեցե՛ք։

Դառնանք հիշենք Գընձե քաղքի էն խորոտ աղջկան, որ հրեղեն Սանասարին կնիկ եղավ. Առյուծ Մհերին մեր եղավ. Մանուկ Դավթին՝ խաթմամիկ։

Հայ-հա՜յ, Սասնա Դեղձուն-Ծա՛մ թագուհի. ո՞րտեղ ես միա, ինչո՞ւ էլ չես երևում Սասնա տան դրուցներու մեջ։ Դու մի ասի՝ Դեղձուն-Ծամ, էն օրվանեն, ինչ Առյուծ Մհեր ու իր կնիկ մեռան, մտել էր իր սենյակը, ուխտ էր արել, ասել էր. «Մինչև չմեծանա մեր Նորամանուկ Դավիթ, մինչև չբռնի իմ Առյուծ Մհերի տեղ, մինչև չառնի էնոր գեսամրն ու զենքերը, մինչև չհեծնի Քուռկիկ Ջալալին, ես իմ սենյակեն արևլուս չեմ գա, չէ...

Էն օրը, երբ Դավիթ երգ ու փողով հրամեշտ էր տալիս իր Սասնա ժողովրդին, չաղել մի աղջիկ հաց բերավ Սասնա մեծ մամուն։ Դեղձուն-Ծամ աղջկան հարցրեց.

— Խորո՛տ աղջիկ, դրսում գալարափող փչեցին. Մհերի փողն էր. ի՞նչ կա, ի՞նչ է եղել։

Աղջիկն ասաց.— Բա դու չե՞ս իմացել, մե՛ծ խաթուն. Դավիթ հագել է իր հոր զեստերը, կապել է Թուր Կեծակին, հեծել է Քուռկիկ Ջալալին. իր հոր գալարափողն է փչում, որ կռիվ գնա Մըսրա Մելիքի դեմ։

Դեղձուն-Ծամ ուրախացավ, ելավ կանգնեց։ Էնոր ատլասե հագուստը փտել էր, ցրվեց. մնաց իր թախտին։

Դավթի ճամփան անցնում էր մեծ մամու պատուհանի տակով։ Դեղձուն-Ծամ պատուհանին ներքև նայեց, տեսավ Դավիթ հեծել է Քուռկիկ Ջալալին, կանգնել է պատուհանի տակ։ Դեղձուն-Ծամ պատուհանեն գլուխը դուրս հանեց, կանչեց.

— Քուռկի՛կ Ջալալի, մեռնեմ քեզի, Քուռկի՛կ Ջալալի. իմ Դավիթ հեր չունի, հերություն անես, իմ Դավիթ մեր չունի, մերություն անես։ Դու Սանասարի ախպերն ես եղել, էնոր թոռանն էլ ախպերություն անես, դու Մհերիս օգնականն ես եղել, էնոր որդուն էլ օգնական լինես։ Իմ Դավթին տանես Կաթնաղբյուր, կանգնես, որ Դավիթ իջնի, ջուր խմի, զորեղանա։ Իմ Դավթին տանես Փորձաքար, որ Դավիթ իր թրով զարկի, երկթե սունը կտրի. կարեց, կռիվ գնա, չկարեց. ետ գա ու նորեն գնա։

Քուռկիկ Ջալալին լեզու առավ, ասաց.

— Մե՛ծ մամիկ, դու հանգի՛ստ կաց։ Ես կանեմ էնպես, ինչ որ դու կամեցար։

## 14. ԴԱՎԹԻ ԿՌԻՎՆ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Քուռկիկ Ջալալին Մհերի որդուն առավ թռավ Ծովասար, կանգնեց Կաթնաղբյուրի գլխին, երբ տեսավ. հեծվորը չի կառնում իջնել, չորս զարկեց գետին։

Դավիթ իմացավ. թե ձին հոգնել է, ասաց.

— Ախ, վի՛զդ կոտրվի. Քուռկի՛կ, ես էն մտածմունքն ունեի, որ դու ինձ արտանգներեն կանցկացնեիր. մկա դու էս պուտ մի ջրեն վախեցա՞ր։

Դավիթ ապտանգակով զարկեց կոտրեց Քուռկիկ Ջալալու կողաշարը։ Ձին բորկավ.

— Էս ի՞նչ արիր, Սասնա՛ ծուռ։ Կողս կոտրեցիր։ Մկա քեզ կթացնեմ, կտամ արնին, կերվես։

Դավիթն ասաց.— Հայ-հա՛յ, ջրեղեն եմ, կխաղամ քո փորի տակ։

— Կիջնեմ երկիր, քեզ քարերուն կտամ, կջարդվես։

— Հայ-հայ, հրեղեն եմ, կխաղամ քո մեջքին։

Քուռկիկ Ջալալին հաշտվեց.— Ախ, Սասնա ծու՛ռ, քո հանգուցյալ հոր արևուն քեզ կխնայեմ։ Դու քո խաթմամու հրասար մոռցա՞ր։ Ձե՞ն անսում, ես կանգնած եմ Կաթնաղբրի մոտ։ Իջի՛ր, ջու՛ր խմիր, պուտ մի՛ ջու՛ր քսիր իմ կողաշարին։

Դավիթ իր սխալը հասկացավ, իջավ. ձիու աչքերը պաչեց, Կաթնաղբրի ջրով կողաշարը լվաց, արձակեց, որ արածի։ Կաթնաղբրի ջուրը անմահական էր. ձիու կողաշարն իսկույն լավացրեց։ Դավիթն էլ ջուր խմեց, պառկեց Կաթնաղբրի մոտ, որ հանգստանա, քունը տարավ։

Քուռկիկ Ջալալին կանգնեց արևի դեմ, հով արեց իր ծուռ հեծվորին։

Դավիթ երկու ժամ քնելեն վերջ արթնացավ, ինչ տեսավ. մարմնով էնքան զորացել է, էնքան պնտացել, որ Գդակ-Պողպատին գլխեն թռել է մի կողմ, Կոշիկ-Երկաթին ոտքերեն սահել, ընկել է դուրս, Քամարն-Արծաթին արձակվել փռվել է գետնին, Կաբան-Կազիֆին վրան էնքան է նեղացել, որ ծծիրները հազիվ իրար են գալիս։

Դավիթ վեր կացավ, Գդակ-Պողպատին, մեջեն հանեց յոթ փութ բամբակը, նոր հագավ, գլխովն էր, Կոշիկ-Երկաթին, մեջեն բամբակը հանեց, նոր հագավ, ոտքովն էր. Քամարն-Արծաթին վերցրեց, նորեն կապեց մեջքին, մեջքովն էր, Թուր Կեծակին կապեց վրան, հասավ հազիվ մինչև ծունկը։

Դավիթ փետուրի պես վերցրեց հոր զուրզը, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց գնաց մինչև փորձասուն, քաշեց Թուր Կեծակին, զարկեց երկաթեն փորձասունը կտրեց անցավ։ Դավիթ ետ նայեց. փորձասունը մնացել էր կանգնած կոտր կոտրի վրա։ Դավիթ ինքնիրմեն բորկավ, իրեն անիծեց.

— Ոտի՛կ, թուլնայի՞ր, չգայի՞ր մինչև Ծովասար.
Թեի՛կ, թուլնայի՞ր ու քո զարկը ո՞չ զարկեիր.
Որ դու մի զարկով չկարցար կտրել փորձաքար.
Աչի՛կ, խամրեի՞ր, որ էս բանը դու չտեսնեի՞ր։
Երկաթի սունը մի զարկով թե որ չկտրեմ,
Ես էլ ո՞նց կդնամ կռիվ Մըսրա զորքի դեմ։

Մեկել էն կողմեն, ինքն իր պոչի վրա պտտվելով, եկավ մի զորեղ վիշապահողմ, փորձաքարը շուռ տվեց անցավ։ Դավիթ նայեց ու տեսավ, Թուր Կեծակին երկաթե սունը մեջտեղեն կիսել անցել էր։ Դավիթ ուրախացավ, ինքնիրեն օրհնեց.

— Ոտի՛կ, դու զորե՛ղ մնաս,
Որ եկար մինչև Ծովասար.
Թեի՛կ, դու կանա՛չ մնաս,

Մի զարկ նորից փորձարար.
Աչքի՛կ, դու յուռա՞վ մինաս,
Որ էսօր էս բանը անես։

Դավիթ լսելս ինքնիրեն օրհնեց, ինքնիրեն սրտապնդեց, ապա ձին քշեց գնաց կռվի դաշտ, կանգնեց մի բլուրի գլխին, աչք ածեց՝ Երկնքի աստղերուն հաշիվ կար, դաշտի խոտերուն հաշիվ կար, Մըսրա Մելիքի զորքին հաշիվ չկար։ Էնոր վրաններըը սպիտակին էին տալիս Սովասարի ստորոտէն մինչև Բաթմանա կամուրջ։

Դավիթը քաջ էր, բայց քաջն էլ սրտում ահ ունի։ Էնիկ Մըսրա անհաշիվ զորքեն վախեցավ, երկմտեց, ասաց. «Հայ-հա՜յ, ես ո՞նց պիտի կռվեմ էսոնց հետ։ Էսոնք լինեն արտ մի կորեկան, ես լինեմ գերանդով հնձվոր, չեմ կարենա քաղել։ Էսոնք լինեն դեզ մի գզած բամբակ, ես լինեմ թեժիկ բոց-կրակ, չեմ կարենա վառել։ Էսոնք լինեն աշնան չոր կանգնաթառուկ, ես լինեմ Քամին-Հարավին, չեմ կարենա քշել տանել ձոր։ Էսոնք լինեն գարնան նորածին գառներ, ես լինեմ գելն-անոթին, չեմ կարենա կտրել։ Տեր աստված, ես ո՞նց պիտի կռվեմ էս անհաշիվ զորքի հետ։

Քուռկիկ Ջալալին իմացավ Դավթի երկմտանքը, լեզու առավ, ասաց.

— Մի՛ երկմտիր, Դավի՛թ, մի՛ վախենա։ Ինչքան որ դու սպանես քո թրով, էնքան էլ ես իմ պոչով կսպանեմ, ինչքան որ դու կտորես գուրզով, էնքան էլ ես կճխլեմ իմ ոտքերու տակ, ինչքան որ դու վառես քո թրի կրակով, էնքան էլ ես կէրեմ ռնչերուս բոցով, ինչքան որ պատուհասի քո նաչ-պատերազմին, էնքան էլ կտապալի իմ վազքի քամին... Մի՛ վախենա, Դավի՛թ. հենց որ դու շոգես, հենց որ դու հոգնես, ես քեզ կառնեմ, կբարձրանամ Սովասար, էնտեղ Կաթնաղբյուրէն պաղ ջուր կխմես, կհանգստանաս, նոր ուժ կառնես, ապա նորէն քեզ կիջեցնեմ կռվի դաշտ։

Դավիթ իր ձիու խոսքերեն սրտապնդվեց, նոր ուժ ստացավ, պատրաստ էր նետվել կռվի դաշտ։ Բայց իր սրտի մեջ ասաց. «Մի հեգ էլ նայեմ Սասնա սարերուն, նոր գնամ կռվի»։ Ձին քշեց, բարձրացավ Մարութա բարձր Աստվածածնի մոտ, նայեց իր Սասնա սարերուն, զմրզմբան ձորերուն, Սովասարի ծառերուն ու ծաղիկներուն, սիրտը թունդ ելավ, կանչեց.

— Հե՜յ, Սովասարի անո՜ւշ աղբյուրներ,
Մնացեք բարո՜վ, խաղա՜ղ մնացեք,
Ես կռիվ կերթամ, ես կծարավեմ,
Դուք էստեղ զուլալ ու պա՜ղ մնացեք։
Հե՜յ, Սովասարի սիրո՜ւն ծաղիկներ,
Զգզգուն՝ հավքեր, բարո՜վ մնացեք,
Ես կռիվ կերթամ, կռվում կշոգեմ,
Դուք անուշ հոտով, դուք հո՜վ մնացեք։
Հայ-հա՜յ, իմ սարե՛ր, իմ Սասնա սարե՜ր,
Ես կռիվ կերթամ, դուք տո՜ւն մնացեք,
Ես կռիվ կերթամ, ձեզ համար կընկնեմ,
Դուք հար-հավիտյան կանգու՜ն մնացեք։

Դավիթ իր Սասնա սարերուն մնաք բարով ասաց սրտով, պատրաստ էր զարկել թշնամուն։ Բայց, ինչպես որ Սասնա տան հինավուրց ավանդն էր, վերից առաջուց իմաց տալ, նոր զարկել։ Ձին քշեց կանգնեց մի մոտիկ բլրի վրա, Մըսրա զորքերուն ձեն տվեց.

— Ով ընկած է, թո՛ղ շուտով արթնանա,
Ով արթուն է, թո՛ղ տեղէն բարձրանա,
Ով վեր է կացել, զենք-զրա՛հ կապի,
Ով զենքն է կապել, թո՛ղ իր ձին թամքի.
Ով թամքել է ձին, թո՛ղ շուտով հեծնի.
Ես հո չե՞մ ելել մենմենակներու դեմ,
Ելե՛ք, ես ահա՜ կռվողներ կուզեմ։
Ելե՛ք, որ չասեք. ինչպես ընկած՝
Դավիթը գող-գող եկավ ու գնաց։

Դավիթ իր թշնամուն էսպես ականջացրեց, ապա մտքում ասաց. «Ով երկինքն ու գետինն ստեղծող, կամար կապող ու պտուղ տվո՛ղ աստված, ինչպես պտուղին տալըն ուժ տվիր, որ էն վարար գետը կտրի, անց կենա, էնպես էլ ուժ տուր ինձ, որ Մըսրա Մելիքի խումանը կտրեմ-անցնեմ»։

Դավիթ էսպես կանչելով, իր ձին ասպանդակեց, թռավ, ու ոնց որ մթնած ամպերեն կեծակն է զարկում, զարկեց Մըսրա զորքի մեջ... գնաց էն գլուխ, եկավ էս գլուխ. աջ շուռ եկավ, ձախ շուռ եկավ, պտտվեց զորքի մեջտեղը, ինչպես ավազի մեջ Վիշապ-Քամին է պտտվում, և կտրեց, կոտորեց, կոտորեց, կոտորեց մինչև կեսօր։

Ինչքան որ Դավիթ կոտորեց, էնքան էլ՝ Քուռկիկ Ջալալին։

Կռվի փոշին բարձրացավ, բռնեց երկինքը։ Արևը չէր երևում, Դավթի թուրն էր միայն կեծակին տալիս։

Կեսօրին արունը դարձավ հեղեղ, Մըսրա զորքի դիակները քշեց մինչև Բաթմանա կամուրջը, լցրեց գետը։

Մըսրա զորքի կեսը կոտորվել էր, կեսն էր մնացել։ Էդոնց մեջ կար մի սիպտակ մորուս հալվոր։ Ուզում էր կոտորանքի առաջն առնել. Նիզակով իր համար ճամփա էր բացում, գնում էր դեպի Դավիթ՝ ասելով.

— Փու՛շտ, փու՛շտ, փու՛շտ,
Թողե՛ք, հասնեմ Դավթի կուշտ։

Դավիթ լսեց, բարկացավ ու ձին կանգնեցրեց.

— Հալվո՛ր, ինչո՞ւ ես ինձ «փուշտ» ասում։ Ես անմեղ չահել տղա եմ։

Մըսրա հալվորն ասաց.— Գլխիդ-արևուդ մեռնեմ, Դավի՛թ. ես քեզ խոսք չեմ ասում։ «Փուշտ» մեր լեզվով ասել է ճամփա։ Ասում եմ՝ ճամփա տվեք, որ գնամ խոսեմ Դավթի հետ։

— Ի՞նչ ես ուզում ասել, հալվո՛ր։

— Ի սեր աստծու, Դավի՛թ, ինչու՞ ես մեզ կոտորում։ Քեզ ի՞նչ ենք արել։

— Է՜, ես ինքս էլ չեմ ուզում ձեզ կոտորել։ Մըսրա Մելիք ինձ կանչեց կռիվ, ես էլ եկա. բա ո՞ւմ հետ կռվեմ։

Մըսրա հալվորն ասաց.— Աստված քո տուն շենի՛, Մըսրա Մելիքն է քեզ կանչել կռիվ, դու մե՞զ ես կոտորում։ Էս խեղճ ու կրակ մարդիկ ի՞նչ մեղք ունեն։ Ամեն մեկը մի տան հրագ է, ամեն մեկը՝ մի տան մինուճար։ Որը տանն է թողել պառավ հեր ու մեր, որը՝ չահել հարսնացու, որը՝ մի տուն լիքը ճիժ։ Մըսրա Մելիք բոլորին զոռով է բերել կռիվ, էնիկ է Սասնա թշնամին. դու կռիվ ունես, կռվիր էնոր հետ։

Դավիթ ասաց.— Յա՛, հալվո՛ր, դու արդար ես խոսում։ Բայց ո՞ւր է Մըսրա 

Մելիքը։ Մի տեսնեմ՝ էդքան զորք ինչո՞ւ է բերել. ի՞նչ է ուզում ինձմեն, ի՞նչ է ուզում ձեզմեն։

Հովվորն ասաց.— Մըսրա Մելիք իր վրանի մեջ քնած էր։ Աա՜ա՜յ, էնոր վրանը էն կանաչն ու մեծը։

Դավիթ նայեց.— Հովվոր, ինչո՞ւ Մըսրա Մելիքի վրանը մեկ բարձրանում է, մեկ՝ իջնում։

Պատասխանեց.— Էնոր վրանի առջևն կախած է յոթ փութ արճիճ. երբ որ Մըսրա Մելիք շունչը դուրս է հանում, արճիճը բարձրանում է, վրանն էլ՝ հետը. երբ որ էնիկ շունչը ներս է տանում, արճիճն առջևն իջնում է գետնին։

Դավիթ քշեց գնաց մինչև կանաչ վրանը. ձին ծառս արավ դռան մոտ, կանգնեց։ Վրանի մուտքը պահպանում էին երկու զորեղ փահլևան։ Յոթ աղջիկ, շարված Մըսրա Մելիքի չորս բոլորը, հովհար էին քշում, յոթ աղջիկ էնոր ոտներն էին մածում, գլխավերևում նստած էր Իսմիլ խաթունը։ Վրանի դռան առաջ ներսէն փռված էր մի նախշուն գորգ։ Դավիթ ասաց.

— Վե՛ր կացրեք Մըսրա Մելիքին, թող դու՛րս գա։

Ասացին.— Մենք չենք իշխենա էնոր վեր կացնել. քնած է։ Յոթ օր պետք է քնի։ Երեք օր անցել է, մնացել է չորս օր, որ քունն առնի, արթնանա։

— Քնել-մնել չգիտեմ,— բռռաց Դավիթը։— Ես չեմ կանգնի, մինչև Մելիքն իր քնեն կշտանա։ Խեղճ ու կրակ մարդկանց համար ելել քաշել է կռիվ, ինքը պառկել քնել է։ Վե՛ր կացրեք. թե որ մահ չունի, ես էնոր մահն եմ բերել. թե որ գրող չունի, ես էնոր գրողն եմ։ Էնպես քնացնեմ, որ հուր-հավիտյան չարթնանա։

Ելան շամփուր շիկացրին, դրին Մըսրա Մելիքի ոտներուն։ Մելիք ծմրկաց.

— Օո՜օ՜ֆ, մարե՛, էս աղջիկներն իմ տեղը լավ չեն շինել։ Լվերն ինձ կծեցին։

Ասաց ու նորեն քնեց։ Էս անգամ գութնի խոփ շիկացրին, դրին ոտքի տակ։ Մելիք շուռ եկավ.

— Օո՜օ՜ֆ, մարե՛, էս աղջիկներն իմ տեղը լավ չեն շինել։ Ճլոռ կա, ինձ կծեց։

Դավիթ ամպի պես որոտաց.

— Հայ-հա՜յ, ի՞նչ լու, ի՞նչ ճլոռ։ Վե՛ր կաց, Մըսրա Մելի՛ք։ Ես եմ եկել։ Վե՛ր կաց, որ կռվենք։

Մըսրա Մելիք փնչալէն վեր կացավ, ծանր ծմրկաց. մի ձեռով աջ աչքը բացեց, մի ձեռով ձախ աչքը բացեց, վրանէն դուրս նայեց, տեսավ. Դավիթ ոտից-գլուխ արնախաթախ, կանգնած է էնտեղ։ Մըսրա Մելիք էլի թե զարմացավ. հարցրեց.

— Դու ո՞վ ես։

— Դավիթն եմ, Առյուծ Մհերի որդին։ Դու ինձ կանչել ես կռիվ. եկել եմ։ Վե՛ր կաց։

Մըսրա Մելիք փառ-փառ ծիծաղեց.

— Հա՛, հա՛, հա՜... էդ դու՞ ես, Թլո՛ւ Դավիթը։ Էդ ե՞րբ դու եղար ձիավոր։ Ետ դառ, գնա, շա՛ն լակոտ։ Էն էլ պատիվ է քեզ, որ գնաս պարծենաս, թե ես ձիով հասա Մըսրա Մելիքի վրանը, էնիկ վախեցավ. չելավ դուրս։

Դավիթ ասաց.— Մելիք, ծիծաղողն էնիկ է, որ վերջում կծիծաղի։ Մկա դու վե՛ր կաց, կռվենք։

Մելիք նորեն փառ-փառ ծիծաղեց.

— Այ Թլոլ, դու ո՞վ ես, որ կռվես ինձ հետ։ Քեզ նախաճաշ անեմ, ճաշին չես մնա. քեզ ճաշ անեմ, ընթրիքին չես մնա։

Դավիթ ասաց.— Էլ, էս քո ակռատն էլ կամ, ընթրիքն էլ կամ, մեռելահացն էլ վրան։

Մըսրա Մելիք փչեց, որ Դավթին թռցներ, ինչպես կանգառթուկը՝ էնոր չնչին վրանը յոթ տեղով պատռվեց, խոտերն արմատեն ելան, խառնվեցին փոշուն, ծառերը կոտրվեցին, քարերը գլորվեցին, միայն Դավիթն էր աներեր նստած իր ձիու վրա։ Մըսրա Մելիք էստեղ վախեցավ, եղանակը փոխեց.

— Դավի՛թ,— ասաց,— ի՞նչ ես վռազում։ Ձիուց իջի՛ր, արի նե՛րս, հաց ուտենք, հանգստանանք, նո՛ր դուրս գանք մեյդանեն, կռվենք։

Դավիթ ասաց.— Չէ, չեմ իջնի ձիուց։ Էն խեղճ ու կրակ մարդկանց բերել ես կռիվ, էնոնք էնտեղ ջարդվում են, մենք էստեղ հանգստանա՞նք։ Չէ, դու՛րս արի կռվենք. աստված կամ ինձ կտա, կամ՝ քեզ։

Իսմիլ խաթուն առաջ եկավ, ասաց.

— Դավի՛թ, մորատե՛ն, էսօր դու կռիվ շատ ես արել, հոգնել ես։ Եկ, ձիուց իջի՛ր, հա՛ց կեր, հանգստացի՛ր, էլի ձեր կռիվը կռիվ է։

Շատ որ գեմն ընկան, Դավիթ ուզում էր ձիուց իջնել։ Քուռկիկ Ջալալին ծառս էր լինում, փախնում էր գետ ու գետ, չէր թողնում, որ Դավիթ իր թամբեն իջնի։

Դու մի ասի՝ Մըսրա Մելիք ու իր մերը վրանի չեմքի մոտ քառսուն գազ հոր էին փորել, բերանը ծածկել էին նախշուն գորգով, էնպես էին արել, որ Դավիթ գար՝ հորն ընկներ։ Իսմիլ խաթուն շատ լեզու թափեց, աղաչեց, համոզեց ու Դավթին ձիուց վար բերեց։ Քուռկիկ Ջալալին բռնկավ, փախավ մինչև Սովասար։

Դավիթ հենց որ ներս մտավ, հենց որ ձախ ոտը կոխեց կակուղ գորգին.— Թրը՞մմփ... ընկավ հորը։

— Հող էիր, հո՛ղ դարձիր.— մռչաց Մըսրա Մելիք ու նորեն պառկեց, մտավ քուն։

Ձենով Օհան էդ գիշեր երազ տեսավ։ Մըսրա աստղը վառվռում էր, Սասնա աստղը՝ մարմրում։ Ձենով Օհան զարթնեց.

— Վե՛ր կաց, կնի՛կ, վե՛ր կաց։ Երազ տեսա, Մըսրա աստղը վառվռում էր, Սասնա աստղը՝ մարմրում։ Կա չկա, մեր Դավիթ փորձանքի մեջ է։

Սառյա խանումը Դավթի վրա ոխ ուներ, ասաց.

— Աստված քո տու՛նը չավրի, մա՛րդ. քեզ համար քնում, ուրիշի երազն ես տեսնում։ Քունս խանգարեցիր։

Ձենով Օհան պառկեց, նորեն երազ տեսավ ու զարթնեց.

— Վե՛ր կաց, կնիկ, նորեն երազ տեսա. Մըսրա աստղը պայծառ էր, Սասնա աստղը՝ խավար։ Կա չկա, մեր Դավիթ մահու բերանն է։

Սառյա խանումը նեղսրտեց.— Աստված քո տու՛նն ավրի, մա՛րդ։ Ինչո՞ւ չես քնում։ Դավիթ մկա ով գիտի որ կնկա ծոցը մտած՝ իր քեֆն է անում, դու էստեղ չես թողնում, որ ես քնեմ։

Ձենով Օհան նորեն պառկեց, նորեն արթնացավ.

— Վե՛ր կաց, կնի՛կ, նորեն երազ տեսա. Մըսրա աստղը եկավ, Սասնա աստղին կուլ տվեց։ Կա չկա, Դավիթ սպանված է։ Էլ, ճրա՛գ վառիր։

Սառյան հերսոտեց.— Հերի՛ք է, երազ պատմես, հալվո՛ր։ Թո՛ղ հանգիստ քնենք։

Ձենով Օհան բոլկավ, քացով զարկեց կնկա կողին.

— Օտարի աղջիկ ես, քո սիրտը չի ցավում Սասնա տան համար։ Եյ, հրա՛գ վառիր, թե չէ…

Սառյան փնթփնթալով ելավ, հրագ վառեց, բերեց մարդու գեստերն ու զենք-զրահը, դրեց էնոր առջև։

Ձենով Օհան ելավ, իրեն փաթթեց յոթ գոմշու կաշի, յոթ գութնի շղթա, որ քոռալեն չպատռվի, գնաց գոմ, ձեռը դրեց սիպտակ ձիու մեջքին.

— Սիպտակ, ինձ ե՞րբ կհասցնես Դավթի կոլին։

Սիպտակը տզզեց, փորը տվեց գետին, ասաց.

— Մինչև կեսօր։

— Քթեդ դուրս գա իմ տված կերը,— ասաց Օհան։— Մինչև կեսօր ես Դավթի ահի՞ն հասնեմ, թե մահին։

Ձենով Օհան ձեռը դրեց կարմիր ձիու մեջքին.

— Կարմի՛ր, ինձ ե՞րբ կհասցնես Դավթի կոլին։

Կարմիրը տզզեց, փորը տվեց գետին, ասաց.

— Լուսադեմին։

— Քթեդ դուրս գա իմ տված կերը,— ասաց Օհան։— Լուսադեմին ես Դավթի հա՞յը տեսնեմ, թե վայը։

Ձենով Օհան ձեռը դրեց սև ձիու մեջքին.

— Սևու՛կ, մինչև ե՞րբ ինձ կհասցնես Ծովասար։

Սև ձին չտզզեց, փորը չտվեց գետին, ասաց.

— Թե կարենաս քեզ իմ թամքի վրա պահել, ձախ ոտը քցես իմ ասպանդակը, մինչև աջ ոտը քցես մեկել ասպանդակը, քեզ կհասցնեմ Ծովասար։

Ձենով Օհան հեծավ Սևուկը, մի ակնթարթում հասավ Ծովասար, կանգնեց լեռան կատարին, աչքեց իր չորս բոլորը։ Քուռկիկ Ջալալին հեռվեն Դավթի հրոզբորը տեսավ, խրխնջալով մոտեցավ։ Ձիու աչքերն արցունքոտ էին։ Ձենով Օհան երկմտեց. «Վախ, չլինի՞ Դավիթ սպանված է, ձին փախել եկել է Ծովասար»… Ձենով Օհան ձիուց իջավ, իրեն մի հաստ պարանով կապեց կաղնի ծառին, որ քոռալու ձենն իրեն չտանի, քոռաց.

— Այ տղա՜, Դավի՜ի՜թ…
Դավի՛թ-Դավի՛թ-Դավի՛թ, հե՜ե՜ե՜յ…
Ո՞րտեղ ես, հիշի՛ր
Հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին,
Հիշի՛ր քո խաչ-պատերազմին,
Որ կա քո աջ թևին.
Հիշի՛ր, կանչի՛ր ու թա՛փ տուր ելի…
Դավի՛թ-Դավի՛թ-Դավի՛թ, հե՜ե՜ե՜յ…

Ձենով Օհանի ձենն ընկավ սար ու ձոր, զըմբզըմբալով գնաց հասավ Դավթի ականջը։ Դավիթ քառսուն գազ հորի մեջ կապկպված, խճճված էր երկաթե շղթաներու ցանցով։ «Հայ-հա՜յ,— ասաց,— հորեղբորս ձենն է։— Ասաց. ինքն էլ կանչեց.

— Հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին,

*Կանչում եմ՝ խաչ-պատերազմին,*
*Որ կաս իմ աջ թևին....*

*Կանչեց, իրեն թափ տվեց, երկաթե շղթաները կտրատեց, հորեն դուրս թռավ, կանգնեց Մըսրա Մելիքի առաջ, ասաց.*

*— Է՛, Մըսրա Մելի՛ք, մկա՞ ինչ կասես. լուսուն աղբոր պես պիտի կռվե՞նք, թե չէ։*

*Մըսրա Մելիքի լեզուն անու կապվեց։ Էնիկ էլ չիշխեցավ Դավթին մոտենալ։*

*Դավիթ վրանեն դուրս եկավ, դես աչքեց, դեն աչքեց, Քուռկիկ Ջալալին չկար։ Դավիթ վազեց եկավ Տովլասար, որ իր ձին փնտրեր։ Ձենով Օհան էնոր հեռվեն տեսավ, կանչեց.*

*— Արի՛, տո ծու՛ռ Դավիթ, ե՛կ էստեղ. Քուռկիկ Ջալալին էստեղ է։*

*Դավիթ գնաց հրողբոր մոտ, էնոր ձեռը պագեց ու շնորհակալ եղավ, Բայց Քուռկիկ Ջալալին բորկել էր. չէր մոտենում։ Դավիթ հեռվեն աղաչեց, պաղատեց, նոր ձին մեղմացավ, թողեց, որ մոտենա։ Դավիթ Քուռկիկ Ջալալին հեծավ, ասաց.*

*— Է՛, հրողբե՛ր, մկա դու գնա Սասու՛ն, ես գնամ կռիվ։*

*Դավիթ իր ձին քշեց Կաթնաղբյուր, էնտեղ վերու ոչխար մի զարկեց, խորովեց, կերավ, ջուր խմեց, պառկեց քնեց մինչև լուս. լուսուն քշեց գնաց Մըսրա Մելիքի վրա, էն ծառս արեց էնոր վրանի մոտ ու ձեն տվեց.*

*— Վե՛ր կաց, Մելի՛ք։ Մեկ անգամ ինձ խաբեցիր, թաղեցիր հոր։ Մկա՞ ինչ կանես։*

*Դավթի ձենը մաժքի պես որոտաց, Քուռկիկ Ջալալին պնչերեն բոց հանեց, Թուր Կեծակին արնի տակ բոցկլտաց։ Մըսրա Մելիք վրանեն դուրս ելավ, ասաց.*

*— Դավի՛թ, արի հաշտվենք։ Արի՝ քեզ հարկ տամ, քեզ հպատակ լինեմ, կռիվ չանենք։*

*Դավիթ ասաց.— Թորա թե հաշտվենք։ Մեր կռիվը կռիվ է, պիտի կռվենք։*

*Մըսրա Մելիք տեսավ ճար չկա, հարցրեց.*

*— Դավիթ, իրար խա՞ռն զարկենք, թե հերթով։*

*Դավիթ պատասխանեց.*

*— Ուզում ես՝ խառն, ուզում ես՝ հերթով։*

*— Հերթով զարկենք,— ասաց Մըսրա Մելիք։*

*— Թո՛ղ հերթով լինի։*

*— Դավի՛թ... առաջին զարկը ի՞մն է, թե քոնն է։*

*— Քոնն է, Մելի՛ք,— պատասխանեց Դավիթ։— Առաջին երեք զարկը թող քոնը լինի։ Ես որբ եմ, վրաս լացող չունեմ։ Դու կնիկ ունես, մեր ունես, քուր ունես, թե որ ես քեզ. սատկած տամ, սպանեմ, վրադ լաց կլինեն։ Դու իմ ջոջ աղբերն ես, ինձմեն առաջ ես ծնվել, առաջին զարկը դու պիտի զարկես։*

*Դավիթ գնաց կանգնեց էնրա դաշտի մեջտեղ։*

*Մըսրա Մելիք առավ իր վաթսուն փթանոց գուրզը, հեծավ իր վեցոտանի Սևազդըր ձին, քշեց գնաց մինչև Բաթմանա կամուրջ, էնտեղեն թափ առած եկավ ու զարկեց — գը՛մփ...*

*Գետինը պատռվեց, փոշին բարձրացավ բռնեց երկինքը, արևը չէր երևում։ Մըսրա Մելիք ասաց.*

— Հող էր, հող դարձավ Դավիթ։ Ափսո՜ս, պահեցինք, շահեցինք, մի զարկով սպանեցինք։

Դավիթ փոշեմուժի մեջեն կանչեց.

— Մելի՛ք, ես կենդանի եմ։ Մեկ զարկդ զարկեցի՞ր, մեկ է՛լ զարկ։

Փոշին փարատվեց։ Մըսրա Մելիք տեսավ Դավիթ իր ձիու վրա հանդիստ կանգնած է դաշտի մեջ, մոտեցավ, ասաց.

— Դավի՛թ, արի հաշտվենք։ Քեզ հարկ տամ, լինեմ քեզ հպատակ, հաշտվենք։

Դավիթ ասաց.

— Թոքա՛ թե քեզ հավատամ։ Մեր կռիվը հին է, դու զա՛րկ։

Մըսրա Մելիք ասաց.— Հայ-հա՛յ, էս անգամ ես մոտիկ տեղեն եկա, հիմի քիչ առա։

Էս անգամ քշեց գնաց մինչև Դիարբեքիր. էնտեղեն թափ առած՝ եկավ, եկավ ու զարկեց — գը՛մմմփ… Էնոր գուրզի թափեն երկիրը երերաց, գետինը յոթ տեղով պատռվեց, փոշին բուլա-բուլա բարձրացավ ծածկեց երկինքը։ Գիշերով լուսինը չէր երևում, ցերեկով՝ արևը։ Դավիթ երկու օր ու գիշեր կորավ էդ փոշեղեն ամպի տակ։ Մըսրա Մելիք ասաց.

— Հող էր, հող դարձավ Դավիթ։ Հազա՜ր ափսոս. պահեցինք, շահեցինք, տեսանք որ ծուռ է, զարկեցինք ու սպանեցինք։

Դավիթ փոշու մառախուղեն կանչեց.

— Մելի՛ք, ես կենդանի եմ, դու վերջին զա՛րկդ զարկ։

Փոշու մառախուղը ցրվեց, Դավիթ իր ձիու վրա անվնաս կանգնած էր էնտեղ։ Մըսրա Մելիք խեղճացավ, ասաց.

— Դավիթ, արի հաշտվենք։ Քեզ հարկ տամ, լինեմ քո ծառան։

Դավիթ պատասխանեց.

— Թոքա՛… Դու ես ինձ կանչել կռիվ. զա՛րկ։

Մըսրա Մելիք անհելուց կատաղեց, ասաց.

— Ախմ՜խ, ես անգամ էլ մոտիկեն եկա, թափս քիչ էր։ Էս անգամ դու կոտենես, Դավիթ։

Ջին քշեց հասավ մինչև Մըսրա հող, էնտեղեն դարձավ, իր երեք հարյուր փթանոց գուրզը թափ տալով եկավ, եկավ, եկավ ու զարկեց — գը՛մմմմփ… Գմփոցը հասավ քառասուն օրվա ճամփա, երկիրը երերաց, գետինը քառասուն տեղով պատռվեց. մարդիկ Մըսրա մեջ ասացին. ժաժք եղավ։ Փոշու ամպերը բարձրացան մինչ-յոթն երկինքը։ Երեք օր ու գիշեր ոչ արև էր երևում, ոչ լուսին։ Երեք օր ու գիշեր Դավիթ մնաց փոշու խավարի մեջ։ Մըսրա Մելիք ասաց.

— Հող էր, հող դարձավ Սասնա Դավիթ։ Հազա՜ր ափսոս, պահեցինք, շահեցինք, տեսանք որ գոռոզ է, գուրզով զարկեցինք ու սպանեցինք։

Դավիթ փոշեբուլա ամպերու միջեն կանչեց.

— Մելի՛ք, ես կենդանի եմ։ Զարկելու հերթը հասավ ինձ։ Հայ-հա՜յ….

Փոշու մառախուղը փարատվեց։ Մըսրա Մելիք տեսավ, Դավիթ իր Քուռկիկ Ջալալին հեծած, ամրոցի պես կանգնած է էնրա դաշտի մեջ։

Մըսրա Մելիքի երեսն ահու դեղնեց, պռոշները դողացին, ոտները թուլացան. Խամիլ լաթուն չոքեչոք մոտեցավ Դավիթին.

— Դավի՛թ, Մելիքս քո աղբերն է. աղբերասպան չլինե՛ս։

Դավիթը ասաց.— Իսմի՛լ խաթուն, երբ որ քո Մելիքն էր զարկում ինձ, ինչո՞ւ չասացիր. «Մելի՛ք, Դավիթը քո աղբերն է», մեղա, երբ նա ուխտի զարկեմ, Մելիքդ եղավ ինձ աղբե՞ր։ Չէ, վերն աստված կա, ներքև՝ օրենք։ Երեք զարկ Մելիքն է զարկել ինձ, երեք զարկ էլ ես պիտի զարկեմ էնոր։

Մըսրա Մելիք ասաց.— Դավի՛թ, քեզմեն աղաչանք. յոթ ժամ ժամանակ տաս ինձ. գնամ. վրանս տակ պառկեմ, հանգստանամ, նոր դու քո զարկը զարկես։

Դավիթ ասաց.— Գնա՛։

Մըսրա Մելիք դարձավ գնաց իր վրան, մտավ Դավթի համար փորած քառասուն գազ հորը. բերանին քաշեց քառասուն գոմշու կաշի, քառասուն ջաղացքի քար. վրան՝ իր գեստերն ու անդաշորը. հորի մեջին քնաց.

— Դավի՛թ, հերթը քոնն է, զա՛րկ։

Դավիթ եկավ, նայեց Մըսրա Մելիքի հորին, ասաց.—«Վա՜յ, ա՜յ, մեր պապերը լավ են ասել. «Ուրիշին հոր փորողն ինքը մեջը կընկնի»։

Դավիթ հասկացավ Մըսրա Մելիքի խարդախությունը, բայց բանի տեղ չդրեց։ «Հացն ու գինին, տեր կենդանին» կանչեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց գնաց մինչև Մոխասար, քաշեց իր Թուր Կեծակին, թափ առավ եկավ, պիտի զարկեր... Իսմիլ խաթուն ծծերը հանեց, իրեն թալեց առաջ.

— Դավի՛թ, քեզ քաղցր ծիծ եմ տվել, էս մեկ զարկը բաշխիր ի՛նձ։

Դավիթ իր Թուրն իջեցրեց, համբուրեց, ասաց.

— Մարե՛, դու ինձ քաղցր ծիծ ես տվել, չես թողել, որ Մըսրա մեջ, երբ ես պստիկ էի, Մելիքն ինձ սպաներ... էս մի զարկը բաշխեցի քեզ։

Դավիթ նորեն ձին քշեց, հասավ Մոխասար, էնտեղեն թափ առավ, Թուր Կեծակին շողացնելով եկավ, պիտի զարկեր... Մըսրա Մելիքի քույր իրեն թալեց առաջ.

— Դավի՛թ, երբ դու պստիկ էիր, շատ եմ քեզ շալկել, խաղացրել, էս մեկ զարկն էլ բաշխիր ի՛նձ։

Դավիթ իր Թուրն իջեցրեց, համբուրեց, ասաց.

— Քուրի՛կ, էս մեկ զարկն էլ քեզ բաշխեցի։ Մնաց մի զարկ, մի աստված։

Դավիթ նորեն իր ձին քշեց մինչև Մոխասար, նոր թափ առավ, Թուր Կեծակին ամպերու մեջ խաղացնելով եկավ, եկավ, եկավ...

Իսմիլ խաթուն իր հետ բերած աղջիկներուն հրաման տվեց.

— Ելե՛ք, փո՛ղ փչեք, թմբու՛կ զարկեք, ելեք, թաշկինա՛կ բռնեք, խաղացե՛ք, խորո՛մ խաղացեք, որ Դավթի աչքն ընկնի ձեր վրա, աղար աղա է, ձեզնով տարվի, զարկը թուլացնի. Մելիքին սպանել չկարենա։

Մըսրա աղջիկները ելան, փող փչեցին, թմբուկ զարկեցին, խաղացին, խորոմ խաղացին... Դավիթ ասաց. «էգ ամենն ինձ համար է, որ շշկլվեմ, զարկս թուլանա»... ասաց, կանչեց.

— Հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ-պատերազմին, որ կա իմ աջ թևին...

Կանչեց ու զարկեց։

Կտրեց քառասուն ջաղացքարը, կտրե՛ց քառասուն գոմշի կաշին, կտրեց Մըսրա Մելիքին գլխեն մինչ ոտներ. Թուրը յոթ գազ էլ անցավ, գնաց անդունդը։

Մըսրա Մելիք հորի մեջեն բոռաց.

— Դավի՛թ, ես չստեղ եմ, մեկ է՛լ զարկ։

Դավիթ ասաց.— Չէ, կտրիճի զարկը մեկ է լինում, երկու չի լինի։ Ես գիտեմ, որ դու էդտեղ ես։ Մի շնո՛րհք արա, քեզի թա՛փ տուր, տեսնենք՝ էդտե՞ղ ես...

Մըսրա Մելիք իրեն թափ տվեց։

Կեսն ընկավ աջ, կեսն ընկավ ձախ։

Մըսրա Մելիք սատակեց։

Հորի բերանը բաց արին, դիակի երկու կտորն էլ դուրս հանեցին։ Դավիթ ասաց.

— Իսմի՛լ խաթուն, Մելիքի կեսն իմ հորեն է, ես տանեմ թաղեմ, կեսը քեզ-մեն է, դու տար թաղի։

Մըսրա Մելիքի մերն ու քույրը նստեցին լաց եղան իրենց մեռելի վրա, ողբացին, երեսները ճանկռեցին, կուց-կուց արտասուք թափեցին, վերջում Իսմիլ խաթուն աչ-քերը սրբեց, ասաց.

— Դավի՛թ, Մըսրա Մելիքին դու սպանեցիր... Բայց ախար դու էլ իմ որդին ես. եկ՝ էնոր կնիկն առ, Մըսրա թագավորությունն էլ քեզ լինի, Սասունն էլ։

Դավիթ ասաց.— Չէ, մարե՛, Մըսրա թագուհին ինձ կնիկ չի լինի, Մըսրա երկիրն ինձ հայրենիք չի լինի, ինչ որ Մըսրա Մելիքն ինձ աղբեր չեղավ։ Ուզո՞ւմ ես, արի՝ քեզ տանեմ Սասուն, մոր պես պահեմ։

Իսմիլ խաթուն ասաց.— Չէ, Դավի՛թ, ես չեմ գա Սասուն։

Դավիթ ասաց.— Դու գիտես, թե որ չես գա Սասուն, գնա Մը՛սըր։ Մըսրա հողը քոնն է, գնա էնտեղ հանգիստ ապրիր քեզ համար։

Դավիթ իր ձին քշեց մտավ Մըսրա զորքի մեջ, կանչեց, ինչքան որ մնացել էին, զորք ու զորապետ, հավաքեց իր չորս բոլոր, ասաց.

— Ձեզ հետ եմ, լսե՛ք, Մըսրա զորքե՛ր, Մըսրա զորապետնե՛ր։ Ամենքիդ իրավունք եմ տալիս, գնացեք էնտե՛ղ, որտեղեն եկել եք։ Գնացեք ձեր երկի՛ր, ձեր տները, հանգի՛ստ առեք, աղո՛թք արեք ինձ համար, իմ հորն ու մորը ողորմի՛ տվեք։

Մըսրա զորքերն էս ու էն կողմեն հարցրին.

— Դավի՛թ, Մըսրա Մելիք աղո՞րդ որ սպանված է։

Դավիթ ասաց.— Էլ Մըսրա Մելիք չկա։

Ասին.— Դավի՛թ, քո թևը թո՛ղ դալար մնա, քո թուրը՝ կտրուկ։

— Ուր գնաս, քո ճամփին կանաչ բուսնի։

— Աստված քեզ երկար կյանք տա։

— Աստված քո հորն ու մորն արքայություն տա։

Դավիթ ասաց.— Գնացե՛ք, խեղճ ու կրա՛կ մարդիկ, ռանչպար, գործավոր, զորք ու զորական։ Գնացե՛ք, ձեր տան մեջ հանգի՛ստ կացեք։ Խաղա՛ղ ապրեցեք, թողե՛ք, որ մենք էլ խաղաղ մնանք։ Ձեր երկիրը ձեզ լինի, մեր երկիրը՝ մեզ։ Դուք ձե՛ր հողը վարեք, մենք մե՛ր հողը վարենք, դուք ձե՛ր արտը հնձեք, մենք մե՛ր արտը հնձենք. դուք ձե՛ր հացը կերեք, մենք մե՛ր հացն ուտենք։ Իրար հետ հաշտ ապրենք։ Հաշտությենեն վնաս չի գա, կռվեն վնաս կգա։ Գնացեք բարո՛վ։ Բայց որ մեկն էլ ընկել եք մեկ ուրիշ Մելիքի հետև ու եկել մեր վրա կռիվ,— լա՛վ իմացեք. քառսուն գազ հորում լինենք, թէ քառսուն ջաղացքարի տակ, ձեր դեմ նորեն կելնենք Սասնա Դավիթ, Քուռկիկ Ջալալին ու Թուր Կեծակին։

Իսմիլ խաթուն իր զորքի մնացուկն առավ, դարձավ գնաց Մըսըր։

Մըսրա Մելիքի հետ եկած հարկատու թագավորներն ու զորապետները իրենց մարդկանց առան ու ցրվեցին աշխարհի չորս կողմը, ամեն տեղ Դավթի գովասանքն արին, ասին.

— Սասնա Դավիթ իր հոր ուխտը կատարեց, Մըսրա Մելիքին կռվում սպանեց. իր Սասունն ազատեց, աշխարհին խաղաղություն բերեց։

Քեռի Թորոս իր կավի տեղում լսեց, որ Դավիթ Մըսրա Մելիքին սպանել է։ Քեռին կռիվը դադարեցրեց, իր մարդկանց առավ, եկավ Լերա դաշտ։

Հեռվեն իրար տեսան, ձեն տվին, մոտեցան։

Քեռի Թորոս Դավթի գլուխը պագեց, Դավիթ իր քեռու ձեռք պագեց, ելան, եկան դեպի Սասուն։

Հետները չառան ոչ գերի, ոչ ավար։

Դավիթ Մըսրա Մելիքի կեսը թաղեց Լերա դաշտում, էնոր ձուն կտրեց, բարձեց մի սելի վրա, որ տաներ Սասուն՝ Ցռան Վերգոյին հիշատակ։

Սասունցիք ելան կտուրները, տեսան, զորք է մտնում քաղաք։ Վայ ու վայնասուն ընկավ Սասնա մեջ։ Իմացան, թե Մըսրա զորքերն են գալիս, որ Սասուն ավրեն, աղջիկ ու հարս առևանգեն, տանեն։

Բայց երկու սուրհանդակ մտան Սասուն, բարձրացան բերդը, բոռացին.

— Հեյ-հե՜ե՜յ... ինչո՞ւ եք վայ ու վայնասուն գցել։ Դավիթն է գալիս։ Մըսրա զորքը ջարդել է. Մըսրա Մելիքին սպանել է, գալիս է տուն։

Սասնեցիք խմբով եկան Դավթի առաջ, էնոր համփին ծաղիկներ շաղ տվին, գորգեր փռեցին, երգով, պարով, ցնծությունով տարան քաղաքամեջ, Քուռկիկ Ջալալու արնոտ պնչերը պագեցին, Դավթի արնոտ գեստերն ու զենքերը պագեցին, լաց եղան, խնդացին, էլի պագեցին, էլի պագեցին ու բոռացին.

— Դավի՜թ, մեր Սասնա զավակն ես...

— Դավի՜թ, Առյուծ Մհերի որդին ես...

— Դավի՜թ, մեր ազատարարն ես...

— Դավի՜թ, շա՛տ ապրես, յա՛ռ...

— Հազար ու հազա՜ր տարի ապրես...

— Շատ դատես, շա՛տ ուտես, քիչ դատես, շա՛տ ուտես...

Սասնա մեջ հազար ու բյուր բերան կար, մի Դավիթ։

Դավիթ Նիզակի ծերով Մըսրա Մելիքի ձուն սելի վրայեն վերցրեց ու թալեց իր հորեղբեր Վերգոյի առաջ.

— Հորեղբե՛ր Վերգո, դու ինձ ասիր, որ Մըսրա Մելիքի ձուն բերեմ քեզ հիշատակ։ Էս է, բերել եմ. Թե կարենաս գետնեն վերցնել, տա՛ր քեզ հիշատակ։

Ժողովուրդը փառ-փառ ծիծաղեց։

Սասնեցիք յոթ պղնձով ջուր տաքացրին, Դավիթ լողացավ, Քուռկիկ Ջալալուն լողացրեց, կավի արուն-ցեխերեն մաքրեց, արարի թիմար տվեց ու տարավ դոմ, յոթ փութ գարի լցրեց առաջ։

Ապա գնաց իր Սասնա Պառավի տուն, մի տակառ գինի խմեց, պառկեց ու քնեց երեք օր։ Երբ քնուց ելավ, Սասնա Պառավը նստած էր էնոր գլխի վերև, ասաց.

— Բարի լու՜ս, Դավի՛թ, բարո՛վ կռվեն դարձար տուն։ Քեֆդ ո՞նց է, մկա։

*Դավիթ ասաց.— Նանե՛, ես մեր չունեի, դու ինձ մերություն արիր։ Էսօրվանեն ինչ որ ասես, կերթամ քո խոսքով։*

*Սասնա Պառավն ասաց.*

*— Դավի՛թ, գլխիդ, արևո՛ւդ մեռնեմ. դու մինչև մկա պստիկ էիր, մկա մեծացար, բռնեցիր Առյուծ Մհերի տեղ։ Ել, գնա՛ հրողբորդ մոտ, ասա , որ քո հոր գահասենյակը բաց անի, մեջը նստես։*

*Դավիթ գնաց հրողբոր մոտ, ասաց.*

*— Հրողբե՛ր Օհան, իմ հոր գահասենյակը բանաս, մեջը նստեմ։*

*Ձենով Օհան ասաց.*

*— Կբանամ, արևու՛դ մեռնեմ, կբանամ։ Դու որ չնստես քո հոր տեղ, ո՞վ պետք է նստի։ Սասնա ճրագը մինչև մկա հանգած էր, դու վառեցիր։ Քեզ հալա՛լ քո հոր գեստերն ու զենքերը, քո հոր Քուռկիկ Ջալալին, քո հոր գահասենյակը, քո հոր անունը։*

# ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

## ԴԱՎԻԹ ԵՎ ԽԱՆԴՈՒԹ

### 15. ԴԱՎԻԹ ՓԵՍԱՑՈՒ

*Դավիթը քսան տարեկան էր։*

*Անվանի հուր-հրեղեն ազատ տղա։*

*Անունը երեսն էր զարդարում, երեսը անունն էր զարդարում։*

*Երբ տնեն ելնում անցնում էր Սասնա քաղաքի միջով, աղջիկները հալվում էին, մերերը ախ էին քաշում։*

*Դավթի համար ամենեն շատ հալումաշ էր լինում Ձենով Օհանի կնիկը, Սառյան։*

*Օրերեն մեկ օր, երբ Ձենով Օհան քնած էր, Սառյան ելավ, առավ թխվածքեղեն, տապակած հավ, մեղր ու կարագ, մի կուժ յոթ տարվա գինի, հագավ իր խորոտ պահուճի շորերը, հյուսքերը սանրեց, աչքերը ղեղեց, մոմ վառեց, եկավ Դավթին տեսության։*

*Դավիթ իր սենյակի դուռը փակել քնել էր։*

*Սառյան ասաց.— Դավի՛թ, ել դուռը բա՛ց արա։*

*Դավիթ հարցրեց.— էդ ո՞վ է։*

*Ասաց.— Քո հորղբոր կնիկն եմ, Սառյան։*

*Դավիթ ելավ դուռը բաց արեց, հորղբոր կնիկը ներս եկավ, նստեց, ասաց.*

*— Դավիթ, ես քեզ կարոտել էի... Ժամանակ չկար, որ քեզ համար շինեի համով բաներ։ Ինչ որ պատրաստ էր, բերել եմ, անու՛շ արա։*

*Իր բերած ուտելիքները Դավթի առաջ դրեց, յոթ տարվա գինին լցրեց կթխան, ասաց.— Խմի՛ր։*

*Դավիթ մտածեց.— «Ինչ կա որ, հորղբորս կնիկը մորս տեղն է, ինձ հիշել, եկել է տեսության»։ Դարձավ շնորհակալ եղավ, ասաց.*

*— Ինչ կա որ, դու մորս տեղն ես...*

*Սառյան ասաց.— Գլխից-արևու՛դ մեռնեմ, Դավի՛թ, մեր Սասնա մեջ քո պես խորոտ կտրիճ ոչ եղել է, ոչ կլինի։ Հա՛ց անուշ արա, գինի՛ խմիր։*

*Դավիթ հաց կերավ, գինի խմեց, գինովցավ, էլի խմեց, ասաց.*

*— Խմե՞նք, հորղբորս կնիկ ինձ պատիվ է անում։*

Էլի խմեց, քառսուն գավաթ խմեց. է, խմածը յոթ տարվա գինի էր... գլուխը դրեց բարձին, խռը՛մփ... քնեց։ Էլ չկարցավ Սառյայի հետ առել-խոսել։

Սառյան կռացավ, Դավթի ճակատը պագեց, երեսը պագեց, ականջները պաչեց ու տեսավ, խորն է քնել, ինքն իրմեն ական չի։ Սառյան ճարահատյալ դարձավ գնաց իր սենյակ։

Մի շաբաթ էսպես գնաց-եկավ, բան դուրս չէր գալիս։ Դավիթ էնոր բերած հավն ու գաթան ուտում էր, մի կուժ յոթ տարվա գինին խմում էր ու, խռըմփ, քնում։ Սառյան մի օր էլ միտք արեց. «Յա՜, ես ինչո՞ւ եմ էդոր յոթ տարվա գինի տալիս, որ գինովնա քնի, ես իրմեն բան չհասկանամ»...

Ելավ, էս անգամ տարավ կես կուժ մեկ տարվա գինի։ Դավիթ հաց կերավ, խմեց մեկ տարվա գինին, չգինովցավ։ Սառյան թռավ էնոր գոգը, վիզը գրկեց, ուզում էր պագնել։ Դավիթ ըռըկավ։

— Հրողբո՛ր կնիկ,— ասաց,— վա՛ր իջիր, նստի՛ր էն բարձի վրա, զրուց անենք։ Դու մորս տեղն ես։

— Դավի՛թ, ինչո՞ւ եմ ես քո մոր տեղը։ Ես օտար աղջիկ եմ, քո հրողբոր կնիկը։

— Մեր ու հրողբոր կնիկ մեկ է։ Հրողբերս իմ հերն է, դու իմ մերն ես։ Դու սուրբ ես ինձ համար։

— Ախ, Դավի՛թ, էդպես չէ, որ ասում ես։

— Բա ո՞նց է։

— Ես օտար աղջիկ եմ, էսքան ժամանակ տանջվում եմ քո հրողբոր ձեռին, երեխա չունեմ։ Մկա ես քո հրողբորը չեմ ուզում, քեզ եմ ուզում։ Դու պիտի գաս ինձ հետ, ես քեզմեն մի խորոտ աղնավուր լաճ ունենամ։

Ասում է ու Դավթի վիզը գրկած պահում։

Դավիթ մտքում ասաց. «Մկա ես էսոր զարկեմ սպանեմ, հրողբերս կասի՝ Դավիթ իմ կնկան սպանեց, որ չսպանեմ, կպել է, պոկ չի գալիս։ Էս ի՞նչ պատիժ է ...» Դավիթ անուշի կապեց.

— Հրողբորկի՛ն, հիմի դու վեր կաց գնա՛, քունս տանում է։ Ինչ որ ուզում ես... էգուց։

Սառյա խանում իջավ Դավթի գոգեն, մի կուժ արտասուք թափեց, ելավ գնաց։

Դավիթ մեկ ուզում էր սպանել հրողբոր կնոջը, մեկ էլ խղճում էր էնոր...

Դավիթ լուսուն գնաց իր Սասնա Պառավի տուն, պատմեց հրողբոր կնոջ արարմունքը։ Սասնա Պառավն ասաց.

— Դավի՛թ, մեռնե՛մ արևուդ, ես էդ կնկան մեղ չեմ դնում։ Էսօրվա օրը դու քառսուն տարեկան հուր-հրեղեն փերիզ տղա ես։ Քո տեսնողը խելքահան կլինի, կուզենա գալ պառկել քո ծոցը։ Քո հրողբոր կնիկն էլ, ինչ ասեմ... կնիկ է։

— Յա՜, բա ի՞նչ անեմ, նանե՛։

— Պսակվի՛ր,— ասաց Պառավը,— մի սիրուն կնիկ բեր քեզ համար, որ ուրիշ կնիկները քեզ նեղություն չտան։ Ախար՝ ով էլ որ մտիկ տա քո բոց-կրակ աչերուն, քո բուրջի հասակին, սիրուց կծռի։

 Դավիթ ասաց.— Նանե՛, բա ես ո՞նց պսակվեմ. ախար... ամաչում եմ։

— Ինչո՞ւ պիտի ամաչես։ Գնա՛ հրողբորդ մոտ, ասա, որ մի խորոտ աղնավուր աղջիկ ճարի, քեզ պսակի։ Էսօրվան օրը դու Սասնա տերն ես, մի՛ ամաչի։

Դավիթ ելավ գնաց հրողբոր մոտ, էնոր դուռը թակեց, դուրս կանչեց, տարավ իր սենյակ, քեֆը հարցրեց, խոսքը դեն տարավ, դես բերեց, բայց պսակվելու վրա բան չխոսեց։ Ամաչում էր։

Էսպես անցավ մի տարի։

— Մի օր Ձենով Օհան ասաց.

— Դավի՛թ, դու մեզ ազատեցիր Մըսրա գերութենեն, դու Սասնա տան ճրագը վառեցիր։ Հիմա դու մեր Սասնա տերն ես։ Ես պիտի գնամ քեզ համար մի խորոտ կնիկ ճարեմ, քեզ պսակեմ։

Դավիթ Արտամետա խնձորի պես կարմրեց.

— Հա, հրողբե՛ր, իմ միտքս էլ էդ է։

Ձենով Օհան ելավ գնաց Խլաթա քաղաք։ Էդ քաղքի թագուհին Չմշկիկ Սուլթանն էր. Սիպտակ դևի աղջիկը, շատ խորոտ, փահլևան աղջիկ։ Ձենով Օհան էդոր ուզեց իր Դավթի համար։ Աղջիկը Դավթի համբավն առել էր, խոսք տվեց։

Դավիթ ու Չմշկիկ Սուլթան իրար հետ մատնիք փոխեցին։

Էն օրվանեն, ինչ Մհեր սպանել էր Սիպտակ դևին, թշնամություն կար էնոր ցեղի ու Սասնա տան միջև։ Ձենով Օհան մտքում ասաց. «Որ Դավիթ էնոնց աղջկան առնի, ոխը մեջտեղեն կվերանա»։

Դավթի համբավը թռավ երկրե-երկիր։ Ամենքն իրար ասում էին.

— Դավիթ Մըսրա Մելիքին սպանեց, իր Սասուն ազատեց, Մըսրա երկիրը դարձրեց հարկատու։

Համբավը հասավ Կապուտկող՝ Խանդութ խաթունին։

Խանդութ Կապուտկողի թագավոր Վաչո-Մարջոյի աղջիկն էր։ Իր խորոտության համբավը հասել էր չորս կողմն աշխարհի։ Շատուհ թագավորը Խանդութի հոր մոտ ուզընկան էր ուղարկել, թե աղջիկդ կտաս ինձ։ Հիսուն քաջ փահլևան աշխարհի չորս կողմեն հավաքվել եկել էին՝ Խանդութին կնիկ առնելու։ Էնոր հոր պալատում ուտում խմում էին ու սպասում, որ Խանդութ էնոնցմեն մեկին հավանություն տա։

Բայց Խանդութ առել էր Սասնա Դավթի համբավը, մտքում ասում էր. «Իմը որ կա, Դավիթն է. չկա, Դավիթն է։ Էսոնք ինչ մարդ են, որ ես իրենց առնեմ»։

Մեկ օր Խանդութ իր պալատի պատուհանում նստած միտք էր անում Սասնա Դավթի վրա. պատուհանի տակով գուսաններ անցան։ Երեք հոգի էին. մեկը սիպտակ-մորուս էր, մեկը թուխմորուս, մեկը՝ անմորուս։ Խանդութ գուսաններուն կանչեց վերև, ասաց.

— Գուսաններ, դուք օրական ի՞նչ եք վաստակում։

Ասին.— Խանում, գուսանություն է, ինչ ասենք, օր կա, վաստակում ենք մեկ արծաթ, օր կա՝ երկու։

— Գուսաններ, ես ձեզ կտամ օրական երեք արծաթ, գնացեք Սասու՛ն։

— Գնանք Սասուն ի՞նչ անենք։

— Սասնա թագավորը Դավիթն է. հարցրե՛ք, որտեղ է նստում, գնացե՛ք էնոր սենյակ, իմ գո՛վքն արեք. ինձ էնպե՛ս գովեք, որ Դավիթ ինձ հավնի, գա ինձ առնի կնության։ Կերթա՞ք։

Գուսաններն ասին.— Խանդութ խաթուն, աշխարհի մեջ քեզ գովելուց արդար բան չկա։ Քեզ գովելու համար Սասուն էլ կերթանք, Ցրանգստան էլ՝ Չրի կերթանք։

— Չէ,— ասաց Խանդութ խաթուն.— թե որ ինձ էնպես գովեք, որ Դավիթ ինձ մոտ գա, ձեզ կտամ օրական երեք ոսկի։ Գնացե՛ք, աստվա՛ծ օգնական։

Գուսանները ելան եկան Սասուն, տեսան ճժերը փողոցի մեջ խաղ էին անում. հարցրին.

— Սասնա Դավթի տունը ո՞րն է։

Ճժերն իրար առաջ կտրելով ճլվլացին.

— Եկե՛ք, ձեզ տանենք Դավթի տուն։

Տեսան, ամեն մեկի թևեն մի պոչավոր տաշտ է կախած, հարցրին.

— Էդ ի՞նչ տեսակ տաշտեր են, պոչ ունեն։

— Էտոնք մեր սազերն են.— ասին գուսանները։

— Սազն ի՞նչ է...

Սասնա ճժերը ձեռ տվին սազերուն. ծնկոց ելավ։

— Յա՜,— զարմացան ճժերը։— Տաշտերեն ծնկոց ելավ։ Եկեք էս տաշտերն իրենցմեն խլենք, ծնկացնենք։

Թափվեցին գուսաններու վրա։ Քեռի Թորոս պատուհանեն տեսավ, բոռաց.

— Էյ, է՜յ, է՜յ, իմկնի Սասնա ծռեր, գուսաններուն թողեք հանգի՛ստ։ Եկել են, որ մեզ համար սազ ածեն ու երգեն։

Ճժերը ճվճվալով փախան։ Գուսանները Քեռի Թորոսին շնորհակալ եղան, հարցրին.

— Սասնա Դավթի տունը ո՞րն է։

— Սասնա Դավթի հետ ի՞նչ գործ ունեք։

— Մեր թագավորի աղջիկը մեզ ուղարկել է, որ Դավթի համար էնոր գովքն անենք. Դավիթ գա մեր թագավորի աղջկան առնի։

— Դուք ո՞րտեղացի եք։

— Կապուտկողցի ենք։

— Հաաա՜,— ասաց, Քեռի Թորոս...— Դավիթ որ կա, ես եմ։ Եկե՛ք ինձ մոտ, գովե՛ք ձեր թագավորի աղջկան։

Գուսաններն իրար աչքով արին, ասին.

— Յա՜, էսիկ սիպտակ մորուս հալվոր է, էսիկ ի՞նչ է, որ Խանդութ խաթունն էսոր առնի։

Բարձրացան վերև, կերան, խմեցին, հանգստացան։

Քեռի Թորոս կանչեց իր գերդաստանը, Սասնա ջահելներուն, սենյակն էնպես լցրեց, որ ասեղ քցելու տեղ չկար, դարձավ, ասաց.

— Գուսաննե՛ր, մկա երգեցե՛ք, տեսնենք ի՞նչ է ուզում ձեր թագավորի աղջիկը։

Գուսանները սազերն ուսերեն վար բերին, դրին ծնկներու վրա։ Սիպտակ մորուս գուսանը երգեց.

Աչք ածեմ Խանդութ խաթունին,
Ձեռ ու ոտ կալամով քաշած,
Ախ, ասեմ, կալամով քաշած։

Այր ածեմ, եղունգն իր մատին
Հալածրա ռանդայով տաշած,
    Ախ, ասեմ, ռանդայով տաշած։
Այր ածեմ, ծամերը մեջքին
Փառասուն հուզ բլած մանեման,
    Ախ, ասեմ, բլած մանեման։
Այր ածեմ Ֆերիզ Հասանէին,
Բաղդադու բուրջին զուգական,
    Ախ, ասեմ, բուրջին զուգական,
Այր ածեմ, աչքերն երեսին
Կթխա են ռեհով ծարուրած,
    Ախ, ասեմ, ռեհով ծարուրած։
Այր ածեմ երեսի ռանգին,
Խաս նռան գինուց փոխ առած,
    Ախ, ասեմ, գինուց փոխ առած։

— Թունդ էր,— ձեն տվին Սասնա ջահելներն էն ու էն կողմեն։
— Ձեննե՛րդ,— բարկացավ Քեռի Թորոս։— Թո՛ղ երգեն։
Թուխմորուս գուսանը զարկեց իր սազին, երգեց.

Դավի՛թ, քեզ համար գովեմ Խանդութ խաթունին.
Մեջք ունի ծովու եղեգին նման,
Դավի՛թ, քեզ համար գովեմ Խանդութ խաթունին.
Լանջ ունի Փուռեկին Ջալալու մեյդան։
Դավի՛թ, քեզ համար գովեմ Խանդութ խաթունին.
Բերանն է ծաղրոց մեղրով բաց արած,
Դավի՛թ, քեզ համար գովեմ Խանդութ խաթունին.
Ատամներ ունի — մարգրիտ են շարած։
Դավի՛թ, քեզ համար գովեմ Խանդութ խաթունին.
Ծոցիկն է սիպտակ բամբակի քուլա,
Դավի՛թ, քեզ համար գովեմ Խանդութ խաթունին.
Աչքդ որ տեսավ, սրտիկդ կուլա։

— Հայ-հա՜յ,— ձեն տվին Սասնա ջահելներն էն ու էն կողմեն...— էդ Խանդութ խաթունին չտեսած էլ մարդու սիրտը կուլա։
— Ջեռեն գնաց մեր Դավիթ։
— Ձեննե՛րդ,— բոռաց Քեռի Թորոս ու դարձավ ջահել գուսանին.— Դու՛ էլ երգիր, տեսնեմ։
Անմորուս գուսանը սազն առավ երգեց.

Թե բերանն ասեմ, անուշ դրախտի դուռ,
Դու ասա՝ մի չափ առավել,
Թարթիչներն ասեմ կռունկի փետուր,
Դու ասա՝ մի չափ առավել։
Թե հասակն ասեմ յոթ կանգուն ու կես,
Դու ասա՝ մի չափ առավել,
Սիպտակ է սարի սերուցի ձյունի պես,
Դու ասա՝ մի չափ առավել։
Թե բուրմունքն ասեմ Վանա աշղետան,
Դու ասա՝ մի չափ առավել։
Թե իր ույժն ասեմ յոթ գոմշի ղութան,
Դու ասա՝ մի չափ առավել։

— Խորոտ է, ես իմ աստված,— ձեն տվին Սասնա ջահելներն էս ու էն կողմեն։

— էդ աղջիկը սազական է Դավթին։

— Ձեննե՛րդ,— բռռաց Քեռի Թորոսը։— էդիկ աղջիկ չի, կախարդ է։ էնոր գուսանները եկել են Սասուն, որ մեր Դավթին խաբեն տանեն էն հմայության աշխարհը, գլուխն ուտեն, Սասնա հրացը մարեն։ Զարկե՛ք էս խարդախ գուսաններուն, սազերը ջարդե՛ք։

Սասնա ջահելները եկան տփեցին գուսաններուն, սազերը ջարդեցին, դուրս արին քաղքեն։

Գուսանները գլխապատառ փախան, գնացին քաղքեն դուրս, կանգ առան կամրջի վրա, իրար ասին.

— Ջանը՛մ, որ ասում էին սասնեցիք ծուռ են, չէինք հավատում։

— Մենք էգոնց ի՞նչ վնաս տվինք, որ մեզ տփեցին։

— Մենք Խանդութ խաթունի գովքն արինք Դավթի համար, ոնց որ ինքն էր ասել։

— Դավիթն էլ Դավիթ լինե՜ր։ Մի սիպտակ մորուս խև հալվոր էր։

էն ժամանակ Դավիթ իր ընկերներով մեկտեղ, որսը թևին, դառնում էր Ծովասարեն։ Գուսաններուն կամրջի վրա տեսավ, ասաց.

— Բարո՛վ, աղբե՛ր մարդիկ։ Ի՞նչ եք անում էս կամրջի վրա։ Ի՞նչ մարդիկ եք։

Ասին.— Կապուտկողա գուսաններն ենք։

Ասաց.— Ըղկած եք երևում։

Հալվոր գուսանն ասաց.— Սասնա ծռերը մեզ տփեցին, մեր սազերը ջարդեցին, մեզ դուրս արին քաղքեն։

— Ինչո՞ւ,— զարմացավ Դավիթ։

Թուխմորուս գուսանն ասաց.

— Մեր թագավորի աղջիկ Խանդութ մեզ ուղարկել էր Սասուն, որ Սասնա Դավթի համար էնոր գովքն անենք, Դավիթ Խանդութին հավներ, գնար Կապուտկող, էնոր հետ պսակվեր։ Սասնեցիք մեր գովքը լսեցին, մեզ տփեցին, մեր սազերը ջարդեցին։

Անմորուս գուսանն ասաց.

— էդ ամենը Սասնա Դավթի հրամանով արին։ Առանց մեր սազերի մկա մենք ո՞նց ապրենք։

Դավիթ հարցրեց.— է, Դավթին տեսա՞ք։

Ասին.— Բա չտեսա՞նք։ Դավիթն էլ Դավիթ լինե՜ր։

— Չհավնեցի՞ք։

— Հավնելու բա՞ն էր, որ հավնեինք։ Սիպտակմորուս փլխուկ ծուռ հալվոր էր։ Մեր թագավորի աղջիկն ափսոս չէ՞, որ առնի էդ փլխուկ հալվորին։

Դավիթ ընկերներուն աչքով արեց, փառ-փառ ծիծաղեցին, հարցրեց.

— Ու՞ր կերթաք էս ուշ գիշերով։

Ասին.— Կերթանք մեր Կապուտկող, մեր թագավորի աղջկան ասենք, որ էդ փլխուկ հալվոր Դավթին չառնի։ Դավի՛թ ուր, Խանդու՞թ ուր։

Դավիթ էլի փառ-փառ ծիծաղեց.

— Գուսաններ, Սասնա Դավիթ որ կա, ես եմ։ էն ձեզ տփողն իմ քեռին է եղել։

Գուսաններն իրար նայեցին, դարձան ասին.



— Վայլա, դու կլնես Դավիթ։ էն մեզի տփողն ի՞նչ էր, որ Դավիթ չլներ։

*Դավիթ ասաց.— Գուսաննե՛ր, առե՛ք էս մի բուռ արծաթը, դարձեք Սասու՛ն, ձեր սազերը սարքե՛լ տվեք, եկե՛ք ինձ համար գովեք ձեր Խանդութ խաթունին։*

*Գուսանները մի բուռ արծաթն առան, դարձան քաղաք, սազերը սարքել տվին, եկան Դավթի սենյակ, երեքն էլ չոկ-չոկ Խանդութ աղջկա գովքն արին, ասին էն երգերը, որ Քեռի Թորոսի մոտ ասել ու ծեծ էին կերել։*

*Դավիթ Խանդութ խաթունի գովքը լսեց, լսեց, լսեց, ինքն էլ անմորուս գուսանի սազն առավ, լարեց, ասաց.*

> *— Գուսաննե՛ր, դուք բարո՛վ եկաք.*
> *Երգեցիք, իմ աչքը բացվեց.*
> *Իմ սիրտն անարատ էր քանց կաթ.*
> *Մերան թալեցիք, մակարդվեց։*
> *Իմ սիրտը ամրոցն էր Սասնա.*
> *Փլունգ զարկեցիք ու խախտվեց.*
> *Իմ սիրտը պարզ գետ էր աշնան,*
> *Դարձան հեղեղով պղտորվեց։*
> *Իմ սիրտն էր դրան-պողպատին.*
> *Հալեցիք տարաք Խանդութին։*

*Ապա դարձավ, սազը վար դրեց, ասաց.*

*— Կերթաք ձեր Կապուտկող, Խանդութ խաթունին կասեք. թո՛ղ վեց օր սպասի. յոթ ավուր վրա ես էնոր հյուրն եմ։ Ճաշը կուտեմ Ճաժվլանում, խրամեցին կհասնեմ Բանդիմահու, ընթրիքս կանեմ ձեր խաթունի տանը։*

*Դավիթ հանեց մի բուռ ոսկի պարգևեց գուսաններուն, գնաք բարով ասաց ու ճամփու դրեց իրանց երկիր։*

*Դավիթ գուսաններուն ճամփու դրեց, եկավ տուն, ընկավ մտածմունքի մեջ։ Խանդութ խաթունը կենդանի կանգնած էր աչքի առաչ։*

*Անցնում էր օր ավուր եռևեն։ Դավիթ Խանդութի համար հալվում էր ու մաշվում, հացուջրից կտրվել էր։ Մի օր Քեռի Թորոս ասաց.*

*— Դավի՛թ, լա՛ո, աստված քեզի սոեղծեց, որ դու կռվո՞վ չոչանաս։ Քեզ ի՞նչ է եղել։ Էն ժամանակ, երբ կռվում էիր, օր-ավուր պեռտացար, գիրացար, զորեղացար։ Էսօր կռիվ չկա, օր-ավուր մաշվում ես։ Քեզ ի՞նչ է եղել։*

*Դավիթ ասաց.— Քեռի Թորո՛ս, իմ ցավը մեծ է, դու չես իմանում։*

*— Ո՞րն է քո ցավը, լա՛ո։*

*— Եսիմ։*

*— Ինչպես թե՝ եսիմ։ Եսիմը ո՞րն է։ Ցավ ունես՝ ասա՛, քո ցավին ճար անենք։*

*Դավիթ ասաց.— Իմ ցավի ճարը որ կա, Կապուտկողի Խանդութ խաթունն է։*

*Քեռի Թորոս բարկացավ.— Ի՞նչ։ Ի՛նչ Խանդութ խաթուն, ի՛նչ բան։*

*Դավիթ ասաց.— Էն օրվանեն, ինչ Կապուտկողի գուսանները եկան Սասուն, Խանդութի գովքն արին, էնոր սերն ընկավ իմ սիրտ, էրում-վառում է, ես կտրվել եմ հացուջրեն։ Պիտի գնամ Կապուտկող, էդ աղջկան բերեմ։ Որ չբերթամ, ինձ հաշվի՛ր մեռած։*

*Քեռի Թորոս ասաց.— Դավի՛թ, լա՛ո, եկ ինձ ակա՛նջ արա, էդ քարը քո փեշեն թափի՛ր։ Կապուտկող գնացողն էլ ետ չի գա։ Կապուտկող ուժի տեղ չէ, կռվի տեղ չէ, կախարդության երկիր է, էնոնք հմայող են, հեռնեքը գլուխ գնել չի լինի։ Եկ ինձ*

լսի՛ր, Կապուտկող մի՛ գնա։ Արի՝ քեզ տանեմ, աշխարհը ման տամ, ո՛ր թագավորի աղջիկը հավնեցիր, կուզեմ քեզ կնիկ։

Դավիթ ասաց.— Չէ, քեռի՛ Թորոս։ Իմը որ կա, խանդութն է, չկա, խանդութն է։ Սրտիս մեջ ուխտ եմ արել, պիտի գնամ էնոր ետևեն։ Որ չգնամ, ինձ հաշվի՛ր մեռած։

Քեռի Թորոս ասաց.— Բայց ախար դու նշանված ես խլաթա Չմշկիկ Սուլթանի հետ։

Դավիթ ասաց.— Ես Չմշկիկ Սուլթանին չեմ ուզում։ Իմ սիրտը կպել է խանդութ խաթունին։ Պիտի գնամ Կապուտկող։

Քեռի Թորոս գիտեր, որ Դավթի խոսքը խոսք է, որ ասաց՝ կանի։ Քեռին ուսերը թոթվեց.

— Դու՛ գիտես, լա՛ո։

## 16. ԽԱՆԴՈՒԹ ԽԱԹՈՒՆ

Սասունեն Ճաժվան յոթ օրվա ճամփա էր, Ճաժվանեն Բանդիմահու գետ — յոթ օրվա ճամփա, Բանդիմահու կամրջեն Կապուտկող՝ էլի յոթ օրվա ճամփա։

Դավիթ Քուռկիկ Ջալալին քշեց, մինչև ճաշ հասավ Ճաժվան։ Էնտեղ հաց կերավ, հեծավ, քշեց, իրիկնացին հասավ Բանդիմահու։ Էն կողմերում Գործոթ անունով մի գեղ կար։ Էդ գեղի յոթ գութան եկել լին զուբարա[1]. Չմշկիկ Սուլթանի արտն էին վարում։ Գութնվորները նստել էին հացի։ Դավիթ իր ձին քշեց, մոտեցավ, ասաց.

— Բարո՛վ, գութնվորնե՛ր։

— Աստծու՛ բարին,— ասին գութնվորները։

— Աստված աջողությու՛ն տա։

— Հազա՛ր բարով,— ասին։— Արի՛, ճամփո՛րդ աղբեր, արի՝ նստի՛ր, հա՛ց անուշ արա։

Դավիթ ասաց.— Շեն կենաք։ Ես վռազն եմ։ Հաց որ ուտեմ, ձեզ բան չի մնա։ Թողե՛ք, ձմերն ուտեն։

Տարեց մաճկալն ասաց.— Տնաշե՛ն, աշխարհը գութնով է լիանում, դու գութնի մոտով անց կենաս անօթի՞։ Արի նստի՛ր, տեսնենք, ինչքան պիտի ուտես, որ մեզ բան չմնա։

Դավիթ իջավ ձիուց, բերանեն սանձը հանեց, որ ձին արածա, ինքը նստեց, մեջք դեմ տվավ սելին, ասաց.

— Հրամանքը ձերն է։

Գութնվորներն իրենց յոթ օրվա փլավը յոթկանթանի պղնձով բերին դրին Դավթի առաջ, յոթ օրվա հացը դրին փլավի մոտ, իրար աչքով արին, թե տեսնենք, էսիկ ինչքա՞ն կուտի։

Դավիթ երկու լավաշ երկու չերեփ փլավի հետ անում էր մի կոլոլ, երկու բերան զարկում, ծամում, կուլ էր տալիս։ Գութնվորներն իրար թաքուն բոթում էին ու խընդ-

---

[1] Զուբարա — Հայ գյուղերում հին սովորույթ էր, երբ գյուղացիները միասին ձրի վա[illegible] հնձում էին գյուղական տանուտերին (ռեսին), տերտերին կամ համայնքին պատկանող [illegible]

մընդում։ Մեկ էլ տեսան, Դավիթ էնոնց յոթ օրվա պաշարը կերավ, պրծավ. յոթ օրվա ջուրը վրան խմեց, ելավ հեծավ ձին, որ գնար։

Գութնվորներն իրար ասին.

— Յա՜, էսիկ ի՞նչ արեց։ Մեր յոթ օրվա պաշարը կերավ։ Մենք էստեղ յոթ օր էլ պիտի բանենք, էլ ո՞վ մեզ հաց ու ջուր կտա։ Գեղը գնանք՝ պիտի ասեն, գել հո չէի՞ք, որ յոթ օրվա հացը մի օրում կերաք։ Ասենք՝ մի ճամփորդ եկավ, կերավ, չեն հավատա։ Մկա մենք ի՞նչ անենք։

Դավիթ ասաց.— Դուք էստեղ նստե՛ք, հանգստացե՛ք, ես ձեր յոթ ավուր վարը մեկ ժամվա մեջ անեմ, պրծնեմ։

— Էդ ո՞նց կանես,— հարցրին գութնվորները։

— Ոնց որ ձեր յոթ օրվա պաշարը մի անգամով կերա, էնպես էլ ձեր յոթ օրվա վարը մի անգամով կանեմ։

Դավիթ յոթ գութան իրար կապեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, գութանները քաշեց. կես ժամ գնաց-եկավ, դաշտի կեսը շուռ տվեց, ասաց.

— Տեսա՞ք։

Գութնվորները շշմած իրար նայեցին։ Մի հորիկվար ասաց.— Էդ քո շնորհքը չի, քո ձիու շնորհքն է։

Դավիթ իջավ ձիուց, գութնի բռնածն ձեռքն առավ, կես ժամ էլ ոտով գնաց-եկավ. արտը լման վարեց, ասաց.— Մկա՞ ինչ կասեք։

Գութնվորների բերանը զարմանքին բաց էր մնացել.

— Յա՜... ա՛յ մարդ,— ասին,— դու էս ինչ ուժի տեր ես։ Սասնա Դավիթ հո չե՞ս։

Դավիթ խնդաց։— Բա ո՞վ եմ, որ չեմ Սասնա Դավիթ։

Գութնվորներն աչքները չռեցին.

— Ուղո՞րդ, Սասնա Դավիթն ես։

— Վալլա՛, Սասնա Դավիթ ես եմ, որ կամ։ Էսիկ էլ Քուռկիկ Ջալալին է։

Գութնվորներն ուրախացան, Դավթի բոլորը հավաքվեցին, ասին.

— Դավի՛թ, անունդ լսել էինք, բայց քեզ չէինք տեսել։ Մեր յոթ օրվա պաշարը քեզ հալա՛լ։ Ուր էլ գնաս, ոտդ քարին չառնի, ճամփիդ կանաչ ու ծաղի՛կ բուսնի. քո վատ օրը էսօր լինի, աստված քո սրտի ուզածը կատարի։

Երբ Դավիթ գութնվորների յոթ օրվա պաշարն ուտում պրծնում էր, մի հոտաղ ձին հեծավ, թռավ Ձմշկիկ Սուլթանի մոտ, պատմեց էդ հրաշքը։ Ձմշկիկ Սուլթան կռահեց. «Վա՜-չիա. էդիկ Դավիթն է եղել, եկել է իմ գութնի հացը կերել, որ գնա Խանդութ խաթունի մոտ։ Խանդութ ինչ է որ... իմ ճկութը չարժե...»։

Էդ ժամանակ Դավիթ անցնում էր պատուհանի տակով։ Ձմշկիկ Սուլթան էնոր ձեն տվեց, կանգնեցրեց, իր սենյակեն իջավ. եկավ ձիու սանձը բռնեց, ասաց.

— Ո՞ւր ես գնում, Դավի՛թ։

— Գնում եմ Կապուտկող։

— Գիտեմ, ում համար ես գնում։ Դուռաններն ինձ ասին։ Բայց իջի՛ր, ձիուց եկ վերև՛, հա՛ց կեր, հանգստացի՛ր, նո՛ր գնա։ Կապուտկող իր տեղն է, չի փախնի։

Ձմշկիկ Սուլթան էնքան խորոտ էր, լեզուն էնքան անուշ, որ Դավիթ էնոր

հմայքին չկարցավ դիմանալ, ձիուց իջավ, գնաց վերև, հաց կերավ, յոթ տարվա նաև գինի խմեց, գինովցավ, Չմշկիկ Սուլթանի հետ պառկեց-քնեց...

Լուսուն քնեն ելավ շատ փոշմանած, շատ բորկած ինքն իր վրա. «էս ի՞նչ արի։ Մեր ազգը ուխտի չխաբվեր, ես ինչո՞ւ խաբվեցի մի կնկա անուշ խոսքենա»

Չմշկիկ Սուլթան ասաց.

— Դավի՛թ, մի օր էլ կաց ինձ մոտ։

Դավիթ ասաց.

— Չէ, մի անգամ խաբեցիր, հերիք է։

Չմշկիկ Սուլթան ասաց.

— Դավի՛թ, ես ու դու իրար հետ մատնիք ենք փոխել։

Դավիթ ասաց.— Մեր մատնիքները փոխել են իմ հրողբերն ու քո մերը։ Ես քո մատնին յոթ օր առաջ ետ եմ ուղարկել։

Դավիթ հեծավ ձին, գնաց։

Չմշկիկ Սուլթան էնոր ետևեն ասաց.

— Կեցի՛ր, Թլո՛ւ Դավիթ... Եկար ինձ խաբեցիր. քո վրա սիրուտեր արիր, մեկա գնում ես, որ Խանդութի՞ն առնես։ Ես քեզ ցույց կտամ Խանդութ խաթունն։ Էնիկ ի՞նչ է որ, իմ ճկութը չարժե։

Չմշկիկ Սուլթան Դավթին հակառ ընկավ, դառավ թշնամի։

Խանդութ խաթուն, երեք օր գիշեր-ցերեկ նստած պատուհան, Դավթի ճամփան էր պահում։

Արևը մի նիզակ բարձրացել էր, Խանդութ խաթունը տեսավ, երկնքի ու գետնի մեջ կրակ տալով, գալիս է մի ձիավոր։ «Կա-չկա, Դավիթն է»,— ասաց ու դարձավ դռնապանին։

— Համդո՛լ, շու՛տ արա, դուռը փակի՛ր։ Շուտով մի ձիավոր կհասնի մեր տուն։

Համդոլի ձեռը դռանն էր, Դավիթ վրա հասավ։ Ասես բերդ էր նստած բերդի վրա։ Ձին քշեց, կանգնեց պատուհանի տակ։

Խանդութ խաթուն Դավթին որ տեսավ, սիրտը վրան չափաց, խնձոր նետեց։ Դավիթ խնձորն առավ, հոտ քաշեց, նայեց վերև, տեսավ Խանդութ խաթուն արևին ասում է. դու մեր մտիր, ես դուրս գամ։ Գուսաններն էնոր կեսն էլ չէին գովել։

Խանդութ խաթուն պատուհանը փակեց, քաշվեց իր սենյակի խորքը։ Դավիթ իր ձին քշեց գնաց, որ ներս մտնի դարպասեն, տեսավ, աժդահա մի փահլևան, ծանր դուրզը ձեռին, կանգնած է դռան ետևում։ Դավիթ անուշ բարև տվեց։ Համդոլ բարևն առավ, ասաց.

— Հայ-հա՜յ, քառասուն տարի է, էստեղ դռնապան եմ, մարդու բարև չեմ առել։ Էսօր Սասնա Դավթին տեսա, ահեն իր բարևն առա։

Դավիթ ասաց.— Փառք աստծու, չէ՞ դու էլ անուց իմ բարևն առար, չհանդամը, թե ես էլ անուց քեզ բարև տվի։ Թե որ դու իմ բարևը չառնեիր, ցավ կլիներ, կընկներ իմ սիրտը, ինձ կսպաներ։

Համդոլ հարցրեց.— Աղբեր ջան, դու ո՞վ ես։

— Ես Սասնա Դավիթն եմ։

— Այ դու բարո՛վ ես եկել, աղբե՛ր Դավիթ, հազա՜ր բարով։ Ի՞նչն է քո նպատակը։

— Եկել եմ Խանդութ խաթունին տեսնելու։ Ես էնոր ի՞նչպես տեսնեմ։

— Խանդութ խաթուն ուրբաթ օրերը քառսուն նաժիշտով գնում է խաս բաղչեն։ Էսօր ուրբաթ է, գնա էնտեղ, կտեսնես։

Դավիթ ասաց.— Անունդ ի՞նչ է։

— Համտոլ, քեզ ծառա։

— Համտո՛լ, դու ինձ ասիր աղբեր Դավիթս։ Արի՝ աղբերանանք։

Համտոլ ասաց.— Քեզմեն լավ աղբեր հո չե՞մ ճարի։ Որ Խանդութ խաթունի հետ պսակվես, ինձ կանե՞ս քավոր։

— Քեզմեն լավ քավոր հո չե՞մ ճարի։ Կլինենք սանհեր Դավիթ, քավոր Համտոլ։

Դավիթ քշեց, գնաց խաս բաղչեն, ձին թողեց, որ վարդ ու ռեհաններու մեջ արածի, ինքը պառկեց Անմահական աղբրի վրա։

Խանդութ քառսուն նաժիշտով եկավ, տեսավ, Դավիթ պառկել քնել է Անմահական աղբրի վրա, ձին թողել է վարդ ու ռեհաններու մեջ։ Խանդութ խաթուն բարկացավ, ասաց.

— Էդ ի՞նչ հիմար մարդ է Սասնա Դավիթ։ Իմ խաս բաղչեն էնոր հոր արո՞տն է, որ ինքը էնտեղ պառկի, էնոր ձին էլ իմ վարդն ու ռեհանը տրորի։ Օձն իր պորտով, հավքն իր թևով իմ խաս բաղչեն մտնել չեն իշխենում, Դավիթ քանի՞ գլխանի է, որ մտնի իմ խաս բաղչեն։ Գնացե՛ք, ասե՛ք էդ հիմարին, թո՛ղ վեր կենա, կորչի։ Թե չէ փահլևաններս կգան, էնոր ջոջ բրդուճն ականջը կթողնեն, ափսոս է։ Հա՛ց տարեք, թո՛ղ ուտի, նո՛ր ասեք։ Անոթի չմնա, ափսոս է։

Սպասուհիները հաց տարան. Դավիթ Անմահական աղբրի մեջ լվացվեց, հաց կերավ, ջուր խմեց, կշտացավ, ասաց.

— Ի՞նչպես է ձեր Խանդութ խաթունը։

Ասին.— Մեր Խանդութ խաթունն ասում է. դու ո՞վ ես, որ գաս իմ խաս բաղչեն, տրորես իմ վարդն ու ռեհանը։ Խանդութ խաթունի հրամանն է, որ վեր կենաս, գնաս էստեղեն։ Թե չէ…

Դավիթ ասաց.— Թե որ ձեր խաթունն ուզում է, որ էստեղեն գնամ, ինչո՞ւ ինձ հաց ուղարկեց։ Չէ, ես էստեղեն գնացողը չեմ։ Գնացե՛ք, ասե՛ք ձեր խաթունին, ինչ որ ձեռնեն կգա, թող՝ անի։

Սպասուհիները գնացին։

Դավիթ Համտոլին կանչեց, ասաց.

— Քավո՛ր Համտոլ, իմ ձին ո՞րտեղ տանեմ։

Ասաց.— Սանհեր Դավի՛թ, հիսուն փահլևանի ձիերը հրեն գոմումն են։ Դու էլ քո ձին տար էնտե՛ղ։

Դավիթ գոմի դուռը բաց արավ, Քուռկիկ Ջալալու բերնեն սանձը հանեց, ձին ներս քշեց, ասաց.

— Գնա՛, թե որ դու էդ բոլոր ձիերուն հաղթես, ես էլ էնոնց հեծվորներուն կհաղթեմ։

Քուռկիկ Ջալալին որ զորեղ վրնջոցով ներս չմտավ, գոմում եղած հիսուն ձին խրտնեցին, փախան մտան իրար ետև, կպան պատին։ Քուռկիկ Ջալալին էնոնց խոտը

իր դնչով քաշեց, մոտեցրեց իրեն, կուրծքը դեմ արավ, մենակ ինքը բոլորը կերավ, պրծավ։ Ծառաները լուր տարան Խանդութ խաթունին, թե՝

— Ձին իր շնորհքը ցույց տվեց, մնաց իր տերը։

Երբ Խանդութ խաթուն Դավթին խնձոր թալեց, Հիսուն փահլևանը շատ նեղացան, ասին.

— Մենք էս յոթ տարի էնոր սիրուն էստեղ հալումաշ եղանք, էնիկ մեզ դեռ մի նշան չի տվել։ Սասնա շաղգամակեր Դավիթ նոր եկավ, դեռ չէր իջել ձիուց, Խանդութ աղջիկն էնոր խնձոր թալեց։ Ինչո՞ւ թողնենք, որ էս անարդար չոկողությունը Թ՛լոլ Դավիթ մարսի։

Դավիթ մտավ ճաշասրահ, տեսավ Հիսուն փահլևան սուֆրի բոլոր նստած՝ գինի են խմում։ Էնոնք Դավթի առաջ պստիկ ջմեր երևացին։ Դավթին որ տեսան, ամենքի սիրտն էլ դող ընկավ, խոսքերը մեկ արին, ասին.

— Բերենք սրան հարբեցնենք, զարկենք, սպանենք։ Թե չէ մեր բանը բուրդ է։ Խանդութ խաթուն էսոր թողած՝ մե՞զ կառնի։ Թոքա՜ թե։

Դավթին տարան նստեցրին իրենց մեջ, յոթ տարվա նռան գինի լցրին կթխաները, մեկ-մեկ պարզեցին դեպի Դավիթ.

— Բարո՛վ ես եկել, Դավիթ։ Առ, խմի՛ր Խանդութ խաթունի կենացը։

Դավիթ խոլոր նայեց, ասաց.

— Ես հո ճնճղո՞ւկ չեմ, որ ինձ մատնոցով ջուր տաք։ Գինու մեծ կարասն ո՞ւր է. բերեք, խմե՛մ, որ սիրտս հովանա։

Գինու մեծ կարասը բերին դրին Դավթի մոտ, մի մեծ պղնձի սափոր, որպես կթխա, տվին ձեռը, Դավիթ յոթ պղնձի սափոր գինի խմեց, գինովցավ, թմրեց, գլուխը կախեց պորտին։

Փահլևաններն էդ որ տեսան, վեր կացան, թրերը մերկացրին, որ զարկեն, Դավթի վիզը կտրեն։ Համդոլ դռներու մեջեն տեսավ, ձեն տվեց.

— Սանձե՛ր Դավի՛թ, ա՛յ սանձեր Դավիթ, գլխիդ վերևը ճանճ է պտտվում, քշի՛ր։

Դավիթ գլուխը բարձրացրեց։ Փահլևանները թրերը թաքցրին սուֆրի տակ։

Դավիթ իրմեն ակահ չէր, նորեն գլուխը կախեց։ Հիսուն փահլևան թրերը նորեն սուֆրի տակեն դուրս հանեցին։

Խանդութ խաթունը, ճաշասրահի տանիքը ելած, երդիկեն տեսնում էր ուզընկանների նենգ խաղը։ Բերել էր տվել մի կոզով կաղին, դրել երդիկի մոտ։ Էն պահին, երբ Դավիթ գլուխը կախում էր, ու փահլևանները թրերը սուֆրի տակեն հանում էին, որ Դավթին զարկեն, Խանդութ վերևեն կաղին էր թալում, կաղինը դիպչում էր պղնձե սկուտեղին, զնգոց էր հանում, Դավիթ ակհում էր, գլուխը բարձրացնում, փահլևանները թրերը նորեն թաքցնում էին, նորեն գույները թոցնում էին ու դողում։ Խանդութ խաթուն էդ մի կոզով կաղինը մեկ-մեկ ներքև թալեց, մինչև Դավիթ իր գինովությունեն ակհավ, ծառային ասաց.

— Եկ, էս սուֆրան վերցրու՛, տա՛ր, նորեն հա՛ց բեր ուտենք։ Հացի փշրանքները չթափես, որ ճժերը կոխկրտեն, մեղք է։

Ծառան ուզում էր սուֆրան վերցնել, փահլևանները չթողին.— Սուֆրան թո՛ղ իր տեղը մնա,— ասին,— դու գնա հա՛ց բեր։

Դավիթ ասաց.— Սուֆրա՞ն կերթա հացի ետևեն, թե հացը կերթա սուֆրի ետևեն։

Դավիթ իր ձեռով սուփրան հավաքեց ու տեսավ ամեն փահլևանի առջև մի մեկ թուր։

— Յա՞, էգոնք ի՞նչ են ձեր առաջ։

— Մեր թրերն են։

— Լավ կանգրահան կլինեն։ Սասնա աղջիկներն էգոնցմով զարնան կանգառ են հանում։ Տվե՛ք, տեսնեմ։

Փահլևանները թրերը հավաքեցին տվին Դավթին։ Էսիկ էդ բոլոր թրերը փընջեց, ծնկանը զարկեց, կոտրեց ու տվեց Համդոլին.

— Քավո՛ր, էսոնք տար դիր իմ ձիու խուրջին։ Լավ պողպատ է, կանեմ ձիուս համար պայտ ու բևեռ։

Փահլևանները լեղաճաք եղան, փախան դուրս։

Դավիթ ասաց.— Քավո՛ր Համդոլ, նե՛րս արի, տունը մեզ մնաց, բակը՝ հավերուն։

Խանդութ խաթուն իր բոլոր ուզընկաններու մեջ հավնեց մենակ Դավթին, իր աղախնուհուն ասաց.

— Գնա Դավթին կանչի՛ր վերև, ինձ մոտ։ Մնացած հիսունին թո՛ղ հաց ուղարկեն ներքև։

Դավիթ ելավ գնաց Խանդութ խաթունի սենյակը։ Աչքը որ ընկավ աղջկա երեսին, ջահել տղա էր, չդիմացավ, ձեռ թալեց, գրկեց ու ճակատը պագեց։ Սիրտը չհովացավ, երեսը պագեց, սիրտը չհովացավ, կուրծքը պագեց...

Խանդութ խաթունը տարավ բերեց, մի գոմփ իջավ Դավթի քիթուբերնին, քթեն արուն թալեց։

Դավիթ ասաց.— Ինչո՞ւ զարկեցիր։

Խանդութ ասաց.— Լավ արի։ Դու քո հոր տղան ես, ես էլ իմ հոր աղջիկն եմ։ Առյուծն առյուծ է, որձ լինի, թե էգ։ Դու իմ ճակատը պագեցիր, ես ասի. «Էս մեկը էնոր համփու սիրունա»։ Դու իմ երեսը պագեցիր, ասի. «Էս մեկն էլ էնոր ջահելության սիրունա»։ Դու ինչո՞ւ իմ կուրծքն էլ պագեցիր։ Շապուհ արքան ու Բաբը Զռենգին իմ հոր մոտ ուզընկաններ են ուղարկել։ Էսօր ես իմ օձիքը տամ քո ձեռ, էգուց էնոնք որ գան, քեզ հաղթեն, ինձ հետ պսակվեն, չե՞ն ասի. «Անառակ էծ, Սասնա քաղքեն մի լակոտ էր եկել, դու ինչո՞ւ քո օձիքը տվիր էնոր ձեռը...»

Էս խոսքի վրա Դավիթ բռնկավ, Խանդութի սենյակեն դուրս եկավ, ասաց.

— Համդո՛լ աղբեր, իմ ձին բե՛ր։

Համդոլ էնոր ձին բերեց։

Դավիթ հեծավ, ուզում էր հեռանալ։ Խանդութ իր սենյակեն վազեց ներքև, ձիու սանձը բռնեց, ասաց.

— Դավի՛թ, մի՛ գնա։

Դավիթ իր ձիու սանձը էնոր ձեռնեն պոկեց, ձին քշեց, գնաց։ Խանդութ ընկավ էնոր ետևեն, լաց եղավ, աղաչեց, որ Դավիթ ետ դառնա։

Դավիթ ետ չդարձավ։

Խանդութ էնոր ետևեն գնաց ոտավոր, էնքան գնաց, որ կոշիկները մաշվեցին, կտրտվեցին, ոտեն դուրս ընկան։ Խանդութ խաթուն Դավթի ետևեն գնաց գուլպաներով։ Էնքան գնաց, որ գուլպաներն էլ քրքրվեցին, ոտեն դուրս ընկան։ Խանդութ խա-

*Թուն Դավթի ետևեն գնացս տարօրինակ։ Էնքան գնաց, մինչև իր ոտները հարճրեցին, վերքերեն արուն ծորաց, ներկեց քարերն ու փշերը։ Դավիթը գնում էր, հա գնում, ետև չէր նայում։ Խանդութ տոր բցում էր ձիու ոտնատեղը, ոտնատեղն արնով էր լցվում։ Խանդութ խաթուն բոբիկ, արնաթաթախ ոտներով գնում էր Դավթի ետևեն ու կանչում.*

*— Դավի՛թ, կանգնի՛ր, աստծու՛ սիրուն։ Կանգնի՛ր, մինչև գամ հասնեմ, ետև՛ նայիր. իմ վիճակը տե՛ս, նո՛ր գնա։*

*Դավիթ կանգ առավ, նայեց ետև. տեսավ, աղջիկը տարօրինակ վազում է իր ետևեն։ Դավիթը մտքում ասաց.—«Հայ-հա՜յ, Խանդութ խաթուն ծնված օրեն տոր բոբիկ չէր դրել գետին. մկա իմ ետևեն բոբիկ վազում է, իմ ձիու ոտնատեղը լցնում իր տոտ արնով»...*

*Խանդութ խաթուն հասավ, Քուռկիկ Ջալալու սանձը բռնեց, ասաց.*

*— Դավի՛թ, մեղքիս տակ մի՛ ընկնի։ Տեսնու՞մ ես իմ վիճակը։ Ինձ խղճա՛, դարձի՛ր գնանք։ Տնաշեն, ինչու՞ էդքան շուտ նեղացար։*

*Դավիթ ասաց.— Ինչու՞ չնեղանամ։ Սասնա երկրեն եկել հասել եմ Կապուտկող քեզ համար։ Էնքան ճամփա կտրել եկել եմ քեզ մոտ։ Մի հեղ քեզ պագեցի, դու տարար բերիր մի զոմփ խփար քիթուբերնիս, քիթս արուն թափեց։ Ես որ չնեղանամ, բա ո՞վ նեղանա։*

*Խանդութ ասաց.— Դավի՛թ, արևու՞դ մեռնեմ, դու ինձ մեղ մի՛ դնի։ Հիսուն փահլևան յոթ տարի տանս նստած են, էնոնցմեն մեկն էլ իմ երեսը չի տեսել։ Դու գալուդ պես, բարև էլ չտված, հասար, զոռով ինձ պագեցիր, ինձ անպատիվ արիր։ Չէր կարելի էդպես։ Ես քեզ կանչեցի իմ սենյակ, որ դու նստեիր, զրույց անեինք, ես քո ձենը լսեի, դու իմ ձենը լսեիր, իրար փորձեինք, մեր բնութքը մեկ-մեկու դուր գար, խոսքը մեկ անեինք, նոր...*

*Դավիթ ամաչեց, ասաց.— Խանդու՛թ... մկա ինձ ի՞նչ պատիժ պիտի տաս։*

*Խանդութ ասաց.— Դավի՛թ, ուխտ եմ արել. քանի որ իմ բերանում շունչ կա, քո ետևեն էսպես տարօրինակ պիտի գամ չուր Սասուն, չուր Մըսըր, չուր ծերն աշխարհի։*

*Դավիթ աղջկան առավ իր ձիու գավակ, դարձան եկան Կապուտկող։*

## 17. ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ԽԱՆԴՈՒԹԻ ՈՒԶԸՆԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

*Արևելքի Շապուհ արքան թուղթ գրեց Արևմուտքի Բարը Յունեկի թագավորին, ասաց.*

*«Սասնա Դավիթ Մըսրա Մելիքին հաղթել, զոռացել է, եկել է Կապուտկող, որ Խանդութ խաթունին առնի։ Դու ինձ պիտի օգնես, էդոր մի լավ դաս տանք»։*

*Բարը Յունեկին Շապուհի թուղթը կարդաց, ինքն էլ Դավթին գրեց.*

*«Դավի՛թ Սասնեցի, դու, որ էդքան զորեղ մարդ ես, արի՝ կռիվ անենք։ Որ չգաս, ես իմ զորքով կարշավեմ Արևելք, Սասուն բարուքանդ կանեմ, Կապուտկող քարուքանդ կանեմ, փոշին քամուն կտամ»։*

*Թուղթը բերին Սասուն, իմացան, որ Դավիթ գնացել է Կապուտկող, տարան էնտեղ։*

145 *Դավիթ քնած էր. թուղթը Խանդութ խաթուն կարդաց. մտքում ասաց. «Իմ*

Դավիթ կռիվ շատ է արել, հոգնել է, թո՛ղ հանգստանա։ Ես էս նոր կռիվը պետք է խափանեմ։ Էնպես մտածեց, իր կողմին թուղթ գրեց Բաքը Ցռնենկուն.

«Բաքը Ցռնենկի, էս թուղթը գրում է քեզ Խանդութ խաթունը, Կապուտկողա թագավորի աղջիկը, Սասնա Դավթի հարսնացուն։ Դավիթ քեզ վնաս չի տվել, քեզ չի տեսել, քո անունը չի լսել. դու ի՞նչ ես ուզում էնորմեն, ինչու՞ ես կանչում կռիվ։ Դավիթ կռիվ չի գա։ Կռվող ես, ի՛նքդ արի։ Բայց մենակ չգաս, մեղք ես։ Մըսրա Մելիքի վերջը հիշի՛ր, քեզ հետ ուրիշ թագավո՛ր էլ բեր, քեզ օգնի, որ Սասնա Դավթին հաղթիր... թե որ Դավթին հաղթվել կա»։

Սուրհանդակներն էս թուղթն առան, տարան իրենց Ցռնենկի թագավորին։ Էսիկ վազիր-վեքիլ ժողովեց, խորհուրդ արավ, թուղթը կարդացին, ասին.

— Ի՞նչ անենք։

Վազիրն ասաց.— Կռիվ չգնանք։

Բաքը Ցռնենկին ասաց.— Ո՞նց. իմ աղբեր Շապուհին մենա՞կ թողնենք։ Չէ, պետք է գնանք։

Մեծ վեքիլն ասաց.— Որ էդպես է, թուղթ գրենք Վաչո-Մարջոյին հակառ բոլոր թագավորներուն, որ գան, մեզ օգնեն։

Սլան թուղթ գրեցին, ճամփեցին վեց երկիր։ Էդ վեց երկրի թագավորն էլ Խանդութի վրա աչք ունեին. զորքերն առան, եկան։

Բաքը Ցռնենկին զորքն առավ եկավ Կապուտկող, որ կռվի զոռով Խանդութ խաթունին տիրանա։

Արևելքի Շապուհ արքան, Օղան-Տողանի թագավորները, Լանդրանդի թագավորը, Հալաբա թագավորը, Սև թագավորը — վեց երկրի թագավոր զորքերն առան եկան, Կապուտկողը պաշարեցին, որ կռվի զոռով Խանդութ խաթունին տիրանան։

Էդոնցմե ամեն մեկը թաքուն միտք ուներ, որ Վաչո-Մարջոյի հուր-հրեղեն աղջիկն իրեն կհասնի։

Դավիթ պատուհանեն նայեց, յոթ թագավորի զորքերը տեսավ, ասաց.

— Խանդու՛թ, էն ժամանակ, երբ դու գոմրով ղարկեցիր իմ քիթ-բերնին, ես մտքումս աստված կանչեցի, որ հորդ բոլոր թշնամիները գան, Կապուտկող պաշարեն։ Աստված իմ ձենը լսել է։ Աչքի՛ր։

Խանդութ խաթուն աչքեց, ասաց.

— Հա... չեն վախեցել, եկել են։

— Ինչու՞ պիտի վախնային։

Խանդութ էստեղ իր թղթի պատմությունն արեց, ասաց.— Ես էն մտածմունքն ունեի, որ իմ թուղթն առնեն, կվախենան, չեն գա քեզ վրա կռիվ։ Չեն վախեցել, եկել են։

Լուսուն Վաչո-Մարջոն էն հիսուն փահլևանին կանչեց, ասաց.

— Յոթ թագավոր կռիվ են եկել ինձ վրա Խանդութ խաթունի համար։ Ձեզմեն ո՞վ կերթա կռիվ։

Հիսուն փահլևանն ասին.

— Էս յոթ տարի է, եկել նստել ենք էստեղ, քո աղջկա երեսը չենք տեսել։ Սասնա Դավիթ երեկ եկավ, քո աղջիկն էնոր խնձոր թալեց, կանչեց իր սենյակ, հետը սեր արեց...

Վաչո-Մարջոն ասաց.— Անել է՝ կռիվ չե՞ք երթա։

Պատասխանեցին.— Խանդութ խաթուն ում խնձոր է տվել ու հետը քեֆ արել, թող էնիկ էլ երթա կռիվ։ Աղջկադ համար մեզ խոսք տուր, մենք երթանք։

Դավիթ էդ խոսքերը լսեց, ասաց.

— Էդ կռիվն իմ կռիվն է։ Դուք ձեր տեղ հանգիստ քնե՛ք։ Որտեղ կռիվ կա, էնտեղ էլ՝ Սասնա Դավիթ։

Խանդութ ասաց.— Դավի՛թ, կռիվ դու շատ ես արել, հոգնել ես...

Դավիթ ասաց.— Խանդո՛ւթ, ես քո սիրուն հոժար եմ կռվելու ամբողջ աշխարհի դեմ։ Մկա ես քո կամքն եմ ուզում, որ գնամ կռիվ։ Երեք օր լրացավ, կգամ։ Որ չեկա, ասել է սպանված եմ։ Իմ խնդիրքն է, դու գաս, կռվի դաշտեն իմ մարմինը վերցնես, քո ձեռքով թաղես։ Իմ նշանն է խաչ-պատերազմին, որ կա իմ աջ թևին։ Դու էդ խաչով ինձ կճանաչես։

Դավիթ իջավ գնաց ախոռ, որ Քուռկիկ Ջալալին դուրս հանի։ Խանդութ էնոր ետևեն, վազեց, ասաց.

— Դավի՛թ, կա՛ց։ Մեր պապերու օրենքով՝ մարդը երբ կռիվ կերթա, էնոր ձին կնիկը պետք է դուրս հանի։ Կա՛ց, ես դուրս հանեմ քո ձին։

Դավիթ կանգ առավ։ Խանդութ խաթուն մտավ ախոռ, տեսավ էն հիսուն ձին փախել, կծկվել են վերի քունջը, չեն իշխենում դուրս փախնեն։ Քուռկիկ Ջալալին բերդի պես կանգնած է էնոնց առաջ։

Խանդութ խաթուն ձեռ թալեց Քուռկիկ Ջալալու վզին, որ բռնեց ու դուրս հանի։ Ձին էնոր չճանաչեց. վիզն էնոր շռվեց, գլուխն էնպես թալեց, որ Խանդութ ետ ընկավ. թըրըմփ, կպավ գետնին։

— Վա՜խ, Դավի՛թ.— ասաց,— քո ձին ինձ սպանեց։

Դավիթ վազեց Խանդութին գրկեց, գետնից բարձրացրեց ու դարձավ ձիուն.

— Հայ-հա՜յ, Քուռկիկ՝ Ջալալի, աստված քեզ մի շնո՛րհք տա. դու իմ կնկան զարկեցիր։ Բա դու չտեսա՞ր, որ կնիկ է։ Մարդ կնկան էլ կզարկի՞։

Քուռկիկ Ջալալին ամաչեց, գլուխը կախեց։

Դավիթ Խանդութին ասաց.

— Մկա ձե՛ռ տուր, դուրս քաշի՛ր։

Խանդութ վախեցել էր, ասաց.

— Ուզում ես քո ձիով ինձ սպանե՞ս։

— Չէ, Խանդու՛թ, էնիկ իմացել էր, որ դու օտար ես։ Մկա էլ քեզ չի զարկի, դու մո՛տ գնա։

Խանդութ մոտեցավ, ձեռ տվեց։ Էս անգամ ձին հնազանդ էր։ Խանդութ էնոր դուրս հանեց, Թամբ-Սադաֆին դրեց վրան։

Դավիթ ինքը թամբը հարդարեց, փորքաշները կապեց, մոտեցավ ձիու ճակատը պագեց. հեծավ, հացն ու գինինը կանչեց, ասպանդակեց, թռավ անցավ պարսպեն, նետվեց կռիվ։

Դավիթ կանգնեց մի կարկառ բլրի վրա, տեսավ. ինչքան ծովի մեջ ավազ կա, էնքան էլ դաշտում զորք, ինչքան անտառում ծառ կա, էնքան էլ դաշտում՝ վրան։ Դավիթ ասաց. «Պապերուս օրենքով ես էսոնց պիտի ձեն տամ, նոր կռիվ անեմ»։

Ով քնած է,— թո՛ղ քնուց արթնանա,
Ախ, կանչում եմ, թո՛ղ քնուց արթնանա.

Ով արթուն է, ձեր ձիերը թամբե՛ք,
Ախ, կանչում եմ, ձեր ձիերը թամբե՛ք.
Ով թամբել է ձին, թո՛ղ շուտով հեծնի,
Ախ, կանչում եմ, ա՜խ, թո՛ղ շուտով հեծնի։
Ելե՛ք, որ չասեք. ինչներս քընած՝
Դավիթ գող եկավ, գողեգող գնաց։

Դավթի ձենը ոնց որ ամպի որոտմունք դըմբդըմբալով ընկավ սար ու ձոր, հասավ յոթ թագավորի զորքերուն։ Էսոնք արթնացան, ծովի պես ալիք տվին, իրար էկան, պատ արին, կիցան։

— Յա Լերա դաշտի Աստվա՜ծ,— կանչից Դավիթ ու զարկեց անցավ զորքերու միջով, ինչպես Վիշապ-քամին է զարկում աշնան կանգնաթըռուկներուն, գնաց էն գլուխ, եկավ էս գլուխ, ձախ զարկեց, աջ կտրեց, կոտորեց, կոտորեց, կոտորեց ու զորքը հնձած խոտի պես փռեց Կապուտկողա դաշտի մեջ։ Արյունն էլավ հեղեղ, մարմինները տարավ։

Շապուհ արքան հեռվեն տեսավ Դավթին, կատաղեց, ոռնաց ու երկու հարյուր փթանոց գուրզը թալեց, որ սպանի։ Դավիթ էնոր գուրզը բռնեց, օդի մեջ խաղացրեց ու հակառ թալեց։ Գուրզը գնաց առավ Շապուհին, ձիուց վար բերեց, գլուխը ջնջխեց ու յոթ կանգուն գնաց հողի մեջ։

Օղան-Տողան թագավորները կանգնած էին Շապուհի երկու կողմը. էս անհեյի հրաշքը տեսնելով, ձիերու գլուխը շուռ տվին, փախան։ Դավիթ ընկավ էնոնց ետևեն։ Զորքի մեջ ողջ մնացածները շունչը պահած նայում էին, թե ինչ կլինի։ Փոշին բարձրացել էր, երկինքը ծածկել։ Արևը չէր երևում։ Փոշու մեջ մենակ Դավթի թուրն էր կեծա՛յին տալիս ու մեկ էլ Քուռկիկ Ջալալու պայտերը բոց էին ցայտում։

Դավիթ հասավ փախնողներու ետևեն, երկուսի գլուխն էլ առավ, նիզակի ծերին անց կացրեց, բերավ նետեց լեղապատառ զորքին.

— Առե՛ք ձեր ավարը, գնացեք տո՛ւն։

Զորքերու կեսը ջարդվել էր, կեսն էր մնացել։
Դավիթ երեք թագավոր սպանել էր, մնացել էր հինգ։
Էսոնք իրար մեջ խորհուրդ արին, ասին.

— Մկա մենք ի՞նչ անենք։ Սասնա Դավթին հաղթվել չկա։

Բարը Ցոհննկին ասաց.

— Ես գրյանքի մեջ կարդացել եմ, որ Սասնա Դավթի մահն իր ցեղեն պիտի գա։ Բերեք մարդ ուղարկենք Սասուն, մի Սասնա փահլևան կանչենք, որ Դավթին սպանի։

Հալաբա թագավորը ելավ եկավ Սասուն, Ջենով Օհանի մոտ, ասաց.

— Աղեա՛նց Օհան, քո բախտն ենք ընկել, մեզ մի օգնությու՛ն արա։ Բուրանա կողմեն մի կտրիճ փահլևան է եկել, մեր զորքն ամեն կոտորեց։ Մենք իմացել ենք, որ Սասնա մեջ կտրիճներ շատ կան։ Մեկին ուղարկե՛ք, թո՛ղ մեր թշնամուն սպանի։ Փոխարեն ձեզ կբաշխենք յոթ մեծ քաղաք։

Հալաբա թագավորն իր թշնամուն դիտմամբ Բուրանա կողմեն դուրս բերեց, որ Ջենով Օհան ուրիշ բան չմտածեր։ Ջենով Օհան ուրիշ բան չմտածեց, ասաց.

— Վերգո՛, արի՝ Պարոն Աստղկան համփենք, թո՛ղ էնոնց օգնի, յոթ քաղաք առնենք, միացնենք Սասնա հողին։

Պարոն Աստղիկ Ցռան Վերգոյի տղան էր, մի զորեղ կտրիճ փահլևան, հեծավ իր հրեղեն ձին, Հավլունի Թուրն առավ, թռավ կռվի դաշտ։

Դավիթ հրողբոր տղուն ճանաչեց, եկավ տուն, ասաց. Խանդութ, լուսուն ես չեմ գնա կռիվ։

Խանդութ խաթուն ասաց.

— Դու հոգնել ես, Դավի՛թ։ Դու մի գնա կռիվ։ Ես կերթամ։

Դավիթ ընկավ երկու կրակի մեջ.

— Խանդու՛թ, ես չեմ թողնի, որ դու գնաս կռիվ։ Ես կերթամ։ Բայց երդվի՛ր, որ տնեն չես դուրս գա, դուռը չես բանա, պատուհանեն կռվին չես նայի։ Երդվի՛ր, նոր ես կերթամ կռիվ։

Խանդութ ասաց.

— Աղեկ, տնէն դուրս չեմ գա, կռվին չեմ նայի։ Դուռ ու պատուհան կփակեմ, կնստեմ տանը, ինձ համար ասեղնագործ կանեմ։

Լուսուն Դավիթ նորէն գնաց կռիվ։

Մինչև կեսօր կռվում էր Պարոն Աստղկան հետ։ Ինքը հրողբոր տղուն ճանաչում էր, հրողբոր տղէն էնոր չէր ճանաչում, ինքը խաղ էր անում, Պարոն Աստղիկ զարկում էր սրտով, ուզում էր սպանել։

Թրի փեյլը դիպավ Խանդութի պատուհանին, ընկավ սենյակի մեջ։ Խանդութ ասաց.

«Էս ի՞նչ է, չեմ հասկանում։ Գիշեր չէ, որ լուսնակը ներս ընկնի, ամպ չկա, որ կեծակ զարկի։ Էս ի՞նչ լույս է խաղում իմ սենյակի մեջը»

Խանդութ խաթուն չդիմացավ, ելավ պատուհանը բաց արավ, տեսավ, մի հըսկա փահլևան, հրեղէ ձին հեծած, Դավթի գլխին պտույտ է գալիս, Հավլունի Թուրը խաղացնում է, կրակ է թափում Դավթի վրա։ Խանդութ աղջիկ իմաստուն կարդացվոր էր, գրյանքից գիտեր, որ Դավթի մահն էնոր ցեղեն պիտի գա. կռահեց, որ Դավթի հետ կռվողն էնոր հրողբոր տղան է։ Տեսավ, Դավիթ խաղ է անում, Պարոն Աստղիկ սրտանց է զարկում, ուզում է սպանի։ Խանդութ խաթուն սազը ձեռն առավ երգեց.

Հրողբոր մա՛նչ, բարով ես եկել,
Ախ, հազա՛ր բարով ես եկել։
Կրակ ես թափում վեր Դավթին,
Ախ, ասեմ, կրակ ես մաղում,
Ողջ-ողջ ես թաղում Խանդութին,
Ախ, ասեմ, ողջ-ողջ ես թաղում։

Դավիթ Խանդութի ձենն առավ, ասաց.

— Հայ-հա՜յ, կնկա բախտը կտրվի։ Ես գիտեի, որ դու տանը չես նստի։

Դավիթ երբ տեսավ, հրողբոր տղէն իրեն պիտի սպանի, բարկացավ, Թուր Կեծակին զարկեց, Պարոն Աստղկան ու իր ձին մեջտեղէն կիսեց, վար թալեց։ Պարոն Աստղիկ ընկած տեղէն ասաց.

— Հեյ-վա՜խ, էս մեր ցեղի զարկն էր ինձ հասավ։

Դավիթ մղկտաց.— Ախ, աչքերս կուրնային. զարկեցի, սպանեցի իմ հրողբոր որդուն։ Սասնա հին սովորութքն է, ով մեր ազգեն մեռնի, գլուխը պետք է դնի ցեղակից մարդու ծնկանը, նոր հոգին տա աստծուն։

Դավիթ իջավ ձիուց. Պարոն Սատղկա գլուխը գրկեց, իր ծնկանը դրեց։ Էնիկ Դավթի գրկում խաղաղվեց, խռռաց, նոր հոգին տվեց աստծուն։

Դավիթ իր հրողբոր տղու մահը որ տեսավ, ուշը կորցրեց, ընկավ էնոր դիակի վրա։ Թշնամի զորքերը եկան, որ Դավթին բռնեն։ Քուռկիկ Ջալալին տիրոջ բոլոր պտույտ էր գալիս, չէր թողնում, որ թշնամիները Դավթին մոտենան։

Վերջը Դավիթ ուշքի եկավ, հեծավ Քուռկիկ Ջալալին, ընկավ զորքերու մեջ։ Էտոնք Դավթի առջևն լեղապատառ փախան։ Դավիթ ասաց.

— Մի՛ փախնեք, ձեր թագավորի տեղն ինձ ասե՛ք, ձեզ վնաս չեմ տա։

Զորքերը կանգ առան, ասին.

— Մեր թագավորը Բարը Ցռենկին է, փախել գնացել է քաղաք։

Դավիթ քշեց գնաց Բարը Ցռենկու քաղաք, մարդ ուղարկեց, ասաց.

— Թո՛ղ Բարը Ցռենկին գա, իրար հետ խոսենք։

Բարը Ցռենկին եկավ, տեսավ, Դավիթ ու Քուռկիկ Ջալալին ոնց որ բերդ նստած բերդի վրա։ Բարը Ցռենկին վախեցավ, փախավ։ Դավիթ ընկավ էնոր ետևեն, բռնեց, գլուխը կտրեց, քաղքի մեջ նոր թագավոր դրեց, քաղքի ժողովրդին ասաց.

— Էսուց ետև քանի կենդանի եք, էլ կռիվ չգաք մեզ վրա։ Թագավոր, վաղիր-վեքիլ որ ձեզ նեղություն տան, թուղթ գրեք, ես կհասնեմ։

Քաղքցիք միաբերան գոհանամք ասին.

— Դավի՛թ, մենք մինչև մահ քո խոսքով պիտի շարժվենք։

Դավիթ ելավ եկավ կռվի դաշտ ու զորքին ասաց.

— Ձեր թագավորին սպանեցի։ Դարձեք, տու՛ն գնացեք, ձեր համար խաղա՛ղ ապրեցեք ու մեկ էլ չգաք մեր աշխարհի վրա կռիվ։

Դավիթ Աչխիլքի թագավորին սպանեց, Արևմուտքի թագավորին սպանեց, Օղան-Տողան թագավորներուն սպանեց, մնացածներն էլ փախան գնացին իրենց երկրներ։ Դավթին ինչ էր մնում. Խանդու՞թ խաթուն, դուռդ բա՛ց, եկա։

Բայց բախտը Դավթի համար պահել էր նոր փորձանք։

Դու մի ասի՝ աշխարհի մեջ անուն հանած Համզա փահլևանը Խանդութ խաթունի հորը թուղթ էր գրել, թե՝

«Խանդութ խաթունը ինձ կտաս, տու՛ր, չես տա, դու գիտես»։

Վաչո-Մարջոն շվարել էր. «Մկա ես ի՞նչ անեմ։ Աղջիկս Համզա փահլևանին տամ. Սասնա Դավիթ կբարկանա, Դավթին տամ, Համզա փահլևանը կբարկանա։ Երկու կրակի մեջ եմ...

Կապուտկողա ջոջերուն խորհրդի կանչեց, ասաց.

— Համզա փահլևան թուղթ է համփել, Խանդութ խաթուն է ուզում. Սասնա Դավիթ կռիվ է արել, Խանդութ խաթուն է ուզում։ Մկա որու՞ն տանք։ Էսոր տանք, էնոր ձեռքն չենք պրծնի, էնոր տանք, էսոր ձեռքն չենք պրծնի։ Ի՞նչ անենք։ Ձեր խորհուրդն ի՞նչ է։

Ժողովրդի ջոջերն ասին.

— Մի թու՛ղթ ուղարկիր Սասնա Դավթին, թո՛ղ գնա Համզա փահլևանի վրա կռիվ։ Ով հաղթեց, Խանդութ խաթունն իրեն հալա՛լ։

Խանդութի պստիկ աղբերը, ձիու պինչը մտած, հասավ կռվի դաշտ, Վաչո-Մարջոյի պայմանաթուղթը բերավ Դավթին։ Էտիկ առավ կարդաց. ամեն բան իմացավ։ 

*Մեկել՝ էն կողմէն, Սասնա հրեղեն Ձիերը հեծած, եկան Քեռի Թորոս, Ձենով Օհան, Ցռան Վերգոն մի խումբ հեծվորներու հետ։*

*էգոնք լսել էին Պարոն Աստղկան մահը, եկել էին, որ մարմինը տանեն թաղեն Սասնա մեջ։*

*Բարով-հազար բարով ասին, իրար պագեցին. Դավիթ Վաչո-Մարջոյի թուղթը կարդաց էնոնց համար։ Քեռի Թորոս ասաց.*

*— Մհա ի՞նչ պիտի անես. խմինի ծուռ չաղգմակն՛ր։ Մեր Սասնա մեջ աղջիկ չկա՞ր, որ դու մեկ աղջկա համար ըէզ թալեցիր Կապուտկող։ Մհա ո՞նց պիտի կռվես Համզա փահլևանի հետ։ Գիտես էնիկ էլ Կոզբադի՞ն է, Մսրա Մելի՞ք է, Ճապուհ տղա՞ն է, Բարբ Ձենենկի՞ն է կամ՞ քո հորեղբոր տղա՞ն։ էգոր Համզա փահլևան կասեն. Ձիութի մասնին կլինի քեզ բլազուն։*

*Ցռան Վերգոն լաց էլավ, ասաց.*

*— Հորեղբորդ որդուն սպանեցիր, մասր ցեղից արունքի տակ։ էս արունը քեզ էման չի նստի։ Քո մահը քո սերմեն պիտի գա։*

*Ձենով Օհան ասաց. — Դավի՛թ, լա՛ո, դու Համզա փահլևանի հետ կռիվ մի՛ գնա։ Քեզ կսպանի։ Քեզ նշանել ենք Չմշկիկ Սուլթանի հետ։ Արի գնանք՝ էնոր առնենք տանենք Սասուն։ Խանդութ խաթուն թո՛ղ մնա Համզա փահլևանին։ Դու էնոր հետ կռիվ մի՛ գնա։*

*Դավիթ ասաց.*

*— Չէ, հորեղբա՛յր Օհան, չէ, Քեռի Թորոս, ինչ որ կա՝ Խանդութ խաթունն է, չկա, Խանդութ խաթունն է։ Ես Խանդութի սիրուն անհաշիվ զորք եմ ջարդել, չորս թագավոր եմ սպանել... Չէ՛ ես Խանդութ խաթունի համար նորեն կռիվ պիտի գնամ։ Աստված կամ Համզա փահլևանին կտա, կամ՝ ինձ։*

*Դավիթ իր Ձիու գլուխը շուռ տվեց Արևելք, աստանդակեց ու թռավ։*

*Շատ գնաց, քիչ գնաց, հասավ Համզա փահլևանի քաղաքը, հարցրեց.*

*— Համզա փահլևան ո՞րտեղ է նստում։*

*Ասին.— Իր տանը, իր պալատի մեջ։*

*Դավիթ քշեց, գնաց պալատ։*

*Համզա փահլևանը նստած տեղն էլ հինգ Հալաբա կանգուն բարձր էր։ Դավիթ բարև տվեց, էնիկ աչքի տակով բարևն առավ։*

*Դավիթ ասաց.*

*— Համզա փահլևան, եկել եմ, որ քեզմեն մի նշան տանեմ Խանդութ խաթունի համար։*

*— Դու ո՞վ ես, անունդ ի՞նչ է։*

*— Սասնա Դավիթ, քեզ ծառա։*

*Համզա փահլևանը Դավթին ոտն-գլուխ չափեց, հանեց իր ձիութի մատնին, ասաց.*

*— Յոթ հարյուր ոսկի է։ Առ տա՛ր Խանդութ խաթունին նշան։*

*Դավիթ ասաց.— Ես չեմ եկել քեզմեն մատնիք տանելու։ Ես եկել եմ, որ քո գլուխը տանեմ Խանդութ խաթունի համար։*

*— Ի՞նչ... ինչ աս՞ր։ Եկել ես, որ իմ գլու՞խը տանես...*

151 *— Վալլա՛, եկել եմ քո գլխին։ Աստված կամ քեզ կտա, կամ ինձ։*

— Փալնքո՛ւ։
— Կտեսնենք, թե ով է փալնքոտ։
Ելան հեծան ձիերը, իրար վրա եկան գուրզերով։ Չորս հինգ ժամ գնացին-եկան, գուրզերն իրար զարկեցին, մեկը մեկելին չհաղթեց։ Ձիուց իջան, կպան գոտեմարտ, իրար տարան-բերին, տարան-բերին, չկարցան հաղթել։
Դավիթ հիշեց.

— Հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ-պատերազմին,
Որ կա իմ աջ թևին...

հիշեց, Համզա փահլևանին վերցրեց ու զարկեց գետին, չոքեց վրան, Թուր Կեծակին քաշեց, որ վիզը կտրեր։ Համզա փահլևանը խնդրեց.
— Դավի՛թ, թո՛ղ մի խոսք ասեմ, նոր իմ վիզը կտրիր։
— Ասա։
Համզա փահլևանն ասաց.

Էսօր եկել է իմ վախճանը,
Եկել է իմ մահու ֆարմանը.
Իմ տունն ու բերդը, իմ վաթանը
Ետև մնացին։
Աշխարհը չմնաց ոչ քաջ Ռուստամ-Զալին,
Ոչ իմաստուն Սուլեյմանին,
Ոչ էլ Համզա փահլևանին։
Աշխարհ էսպես լուսացավ, էսպես էլ մթնեց.
Սասնա Դավիթ փահլևան մեր վիզը կտրեց։

Դավիթ Համզա փահլևանի գլուխը դրեց խուրջին, Քուռկիկ Ջալալին հեծավ, ճանապարհ ընկավ դեպի Խանդութ խաթուն։

## 18. ԴԱՎԹԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԽԱՆԴՈՒԹԻ ՀԵՏ ԵՎ ԵՐԴՈՒՄԸ ՉՄՇԿԻԿ ՍՈՒԼԹԱՆԻՆ

Դավիթ ամեն օր ցերեկով կռվում էր, իրիկվան դառնում, գալիս էր Խանդութի մոտ։ Էդ գիշեր չեկավ, Խանդութ խաթուն ասաց.
— Վա՜յ իմ արևուն, սպանված է Դավիթ։
Լուսուն ելավ, հագավ մարդանակ շորեր, զենք ու զրահ կապեց, հեծավ իր սիպտակ ձին, քշեց կռվի դաշտ, որ կամ Դավթին օգնության հասներ, կամ էնոր մարմինը վերցներ, վրան լար, հանձներ հողին։
Խանդութ ման էր գալիս մեռածներու մեջ, երբ տեսնում էր մի պետ մարմին, նիզակով բարձրացնում էր վեր, բռնում էր արևի դեմ, որ տեսներ՝ խաչ կա՞ թևին, թե չէ։
Դիմացից գալիս էր Դավիթ։
Հեռվեն տեսավ՝ Խանդութ մարմինները նիզակի ծերով բարձրացնում է, թևերն է աչքում, հերսոտում է ու վար թալում։ Դավիթ իր երեսը մի կարմիր լաթով ծածկեց, 

որ Խանդութ իրեն չճանաչեր, մոտեցավ ու ձեռը փոխած բարև տվեց։ Խանդութ բարևը չառավ։ Դավիթ ասաց.

— Այ տղա, ճամփորդ մարդ եմ, հանդիպեցինք, բարև տվի։ Ինչու՞ բարևս չառար։

Խանդութ ասաց.— Ոչ բարև կտամ, ոչ բարև կառնեմ, քո ի՞նչ բանն է։ Անց կաց ու ճամփո՛վդ գնա։

Դավիթ մտքում ծիծաղեց, ասաց.

— Աստվա՛ծ սիրող, ու՞ր կերթաս, ինչու՞ ես էդպես հերսոտ։

— Նորե՞ն դու ինձ խոսեցրիր,— բռնաց Խանդութ։— Քեզ ասինք՝ ճամփո՛վդ գնա։

Դավիթ փառ-փառ ծիծաղեց։

— Գիտեմ, դու ում ես փնտրում։ Քո փնտրածին ես, երեք օր կա, սպանել եմ։ Ջե՞ս հավատում, էնոր գլուխը հրես խուրջինիս մեջ է։

Խանդութ մտքում ասաց.— Էսիկ Դավթի ձին է, բայց հեծվորը նման չէ Դավթին։ Չլինի՞ Դավթին սպանել է, էնոր ձին հեծել... Էս մտքեն Խանդութ փշաքաղվեց.

— Շաղ մի՛ տա բերանդ։ Քո գլխեն վեր է սպանել էդ մարդուն։ Էնոր սպանողը մորեն դեռ չի ծնվել։

— Տո, վալլա, ես մորեն ծնվել ու սպանել եմ քո ասած մարդուն։ Էրիկ ես ուզում, ես՝ քեզ էրիկ։

— Թե որ սպանել ես դու Սասնա Դավթին, ի՛նձ էլ սպանիր, նոր գնա։ Ջեմ թողնի, որ անց կենաս։ Ես ու դու պիտի կռվենք։

— Հա՞... շատ լավ։

Դիպան իրար։ Ձիու սմբակներեն հողը հերկվեց, կռվի փոշին ելավ երկինքը բռնեց։ Գնում էին, գալիս, դուրգերով իրար զարկում էին, մեկն էլ չէր հաղթվում։ Դավիթ հանաքով էր զարկում, Խանդութ հերսով էր զարկում, որ սպանի։

Դավիթ կանգ առավ։

— Ձիերը մեղք են,— ասաց,— իջի՛ր գոտեկռիվ անենք։

Իջան, բռնեցին գոտեկռիվ։ Դավիթ աղջկան գետին զարկեց ու չոքեց վրան։ Խանդութ խաթուն ասաց.

— Վախ, կտրիճ, ինձ մի՛ սպանի, ես կնիկ եմ։

Դավիթ խնդաց.

— Ես էլ գիտեմ, դու կնիկ ես։ Էսիկ էնօրվա փոխ, երբ դու, մի՞տդ է, տարար-բերիր մի գոմբ իջար քիթուբերնիս, քթես արուն թափեց։

Խանդութ ասաց.

— Վա՞յ... Դավի՛թ, էդ դու՞ ես։

— Վալլա՛, ես եմ, որ կամ։

— Գլխուդ-արևուդ մեռնեմ, դու ո՞ղջ ես։

— Առավել, քան կռվեն առաջ։

Դավիթ Խանդութ խաթունին վեր բարձրացրեց, երեսը պագեց, հեծան ձիերը. քշեցին տուն։ Ճանապարհին Խանդութ խաթուն իր պատմությունն արեց.

— Դավի՛թ, մի նեղանա, որ քեզ հետ ես կռիվ արի։ Իմ կռիվը միտք ուներ։ Երեք տարի առաջ ինձի տարան Սև Թագավորի որդուն։ Տարան, դրին մի սենյակի մեջ։ Իրիկուն մարդս եկավ, նստեց իմ քով. իրար հետ հանաք արինք։ Ձեռս հանաքով թալեցի թևը, թևը տեղեն պոկվեց։ Վա՞յ,— ասի,— էս ի՞նչ եղավ, մարդուս թևը

պոկվեց... Բան չկա, ասի. Թագավորի տղա է, հո չի՞ գնա դաշտ՝ վարուցանքի, անթեն էլ հերիք է ինձ։ Էս անգամ ձեռս թալեցի մեջքին, մեջքն էլ կոտրվեց, էրկիս ընկավ. մեռավ։ Իմ ուժը ես էն որ իմացա։ Սև Թագավորն ու իր կնիկը լաց եղան, ասին. «Յա՜, էսիկ հա՞րս է, թե մարդասպան»։ Ելան ինձ ուղարկեցին հորս տուն։ Էն օրվանեն ես ուխտ եմ արել. ով ինձմեն զորեղ կլինի թե խելքով, թե ձեռքով, ես էնոր կառնեմ։ Միա դու ինձմեն զորեղ ես, Դավիթ։ Ես քեզ կնիկ, դու՝ ինձ էրիկ։

Էսպես քաղցր զրույց անելով, խնդալով, հասան տուն։ Դավիթ Համզա փահլևանի գլուխը հանեց խուրջինեն, դրեց Խանդութ խաթունի առաջ։

Խանդութ կանչեց իր հորն ու մորը, իր աղբերներուն, ասաց.

— Էս մարդը որ կա, Սասնա Դավիթն է։ Էսիկ սպանեց Մըսրա Մելիքին, Սասուն ազատեց։ Էսիկ մեր թշնամի զորքերը ջարդեց, Արևելքի թագավորին սպանեց. Արևմուտքի թագավորին սպանեց, Օղան-Տողան թագավորներուն սպանեց, Համզա փահլևանին սպանեց, Կապուտկող ազատեց։ Էսիկ էդ ամենն արեց ինձ համար։ Մկա, էդ ամենուն փոխ, ի՞նչ կտաք էս մարդուն։

Աղջկա հերը, մերը, աղբերներն ասին.

— Դու մեր աղջիկն ես, քեզ տվինք էս մարդուն, Սրանա մինչև Բանդիմահուն էլ՝ քեզ բաժինք։

Դավիթ ու Խանդութ պատրաստություն տեսան, որ գնային Սասուն։ Հարսի ջորերն ու զուգանքները բարձելու համար Վաչո-Մարջոն տվեց վաթսուն ձի։

Դավիթ հեծավ Քուռկիկ Ջալալին, Խանդութն՝ իր հրեղենը, ճանապարհ ընկան։

Հասան Խլաթ. քաղքի միջով անցնում էին, Ջմշկիկ Սուլթան եկավ. Դավթի դեմ կտրեց, ասաց.

— Էդ ու՞ր ես գնում. Թյո՛լ Դավիթ։ Դու նշանված ես ինձ վրա. մենք մեր մատնիններն իրար հետ փոխել ենք. դու ինձի թողիր, գնացիր Կապուտկողա Խանդութին բերիր քեզ կնիկ։ Ինչու՞, ես պակա՞ս խորոտ եմ, որ դու ինձի չհավնեցիր, ինձ անպատիվ արիր։ Որ էդպես է, պիտի գաս. կռվենք ես ու դու։ Կամ ես քեզ կսպանեմ, ես էլ, Խանդութն էլ կմնանք որբևերի, կամ դու ինձ կսպանես, նոր կերթաս, կպառկես Խանդութ խաթունի հետ։ Քանի ես ողջ եմ, դու չես պառկի ուրիշ կնկա ծոց։ էս մեկը լա՛վ իմանաս։

Դավիթ մտածեց. «Էսիկ ի՞նչ է ասում, ես էսոր հետ կռվեմ, զարկեմ սպանեմ. ձենն աշխարհ ընկնի, թե Սասնա Դավիթ կնի՞կ է սպանել։ Խանդութ խաթունի մոտ ես ո՞նց մի կնկա հետ կռվեմ....»

Ջմշկիկ Սուլթանին Դավիթ մի կողմ տարավ, ասաց.

— Քեզ մի խնդրանք. հետս կնիկարմատ ունեմ, էնոր մոտ կռվենք, վայ թե մեջն ընկնի, վախենա։ Թո՛ղ, ես գնամ տուն, կնկանս տանեմ տամ հորեղբորս խնամքին. յոթ օր լրանա, գամ քեզ հետ կռիվ։

— Ջմշկիկ Սուլթան ասաց.

— Երդվի՛ր Մարութա բարձր Աստվածածին ու Խաչ-պատերազմին, որ յոթ օր լրանա, գաս ինձ հետ կռիվ։ Երդվի՛ր, նո՛ր քեզ ճանապարհ կտամ։

Դավիթ երդվեց.

— Հացն ու գինին. տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին.

Խաչ-պատերազմին.
Որ կա իմ աջ թևին.

յոթ օր երբ լրանա, ես կդառնամ կգամ Խլաթ, որ իրար հետ կռվենք։

Չմշկիկ Սուլթան ճանապարհ տվեց, ասաց.

— Գնա՛։

Դավիթ Խանդութին առավ եկավ Սասուն։

Ազնանց իշխաններն ու քաղքցիք հավաքվեցին, Դավթին ու Խանդութին տարան ժամ, իրար հետ պսակեցին, եկան յոթնասուն վերու եզ ու վերու ոչխար մորթեցին, բերին յոթ կարաս գինի. կանչեցին յոթ խումբ գուսան, յոթ օր, յոթ գիշեր հարսնիք արին, կերան, խմեցին, ջոջ ու պստիկ ուրախացան։

Դավիթ հենց որ պառկեց Խանդութ խաթունի ծոցը, Չմշկիկ Սուլթանին տված իր երդումը յոթ տարով մոռացավ։

## 19. ՄՀԵՐԻ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ԴԱՎԹԻ ՄԱՀԸ

Դավիթ էլ գինի չէր խմում։
Խանդութի սիրուց էր գինով։
Օրերին մի օր ակհավ, ասաց.

— Խանդո՛ւթ, ես քեզ Կապուտկողեն բերի, էն հիսուն փահլևանի ձեռին խլեցի. էնոնց մեղքի տակ ընկա։ Մկա իմ խիղճը տանջում է ինձ։ Լսել եմ՝ Վրաստանում խորոտ աղջիկ շատ կա։ Պիտի գնամ, գտնեմ էդ հիսուն փահլևաններուն, տանեմ Վրաստան, իրենց ուզած հիսուն աղջիկ ճարեմ, էնոնց պսակեմ, խիղճս հանգստանա, նոր էլնեմ գամ Սասուն։

Խանդութ խաթուն ասաց.

— Դավի՛թ, դու ինձ հորե-մորե հանեցիր. բերիր էս քաղաք. մեղքիս տակ ընկար։ Մկա ինձ կթողնես, կերթա՞ս։

Դավիթ ասաց.

— Խանդո՛ւթ, հազար տարի էլ որ կողքիդ նստեմ, քեզմեն չեմ կշտանա։ Բայց պիտի գնամ, որ չգնամ, խիղճս ինձ կտանջի, կմեռնեմ։

Խանդութ գիտեր, Դավթի ասածն ասած է, կանի։ Կնիկն էլ կնիկ էր. բախտի հետ հաշտվեց.

— Դավիթ... ես քեզմե երկավոր եմ։ Որ քեզ տղա ծնվի, անունն ի՞նչ դնեմ։

Դավիթ ասաց.— Խանդո՛ւթ, ինձ որ տղա ծնվի, անունը դիր Մհե՛ր. թո՛ղ իմ հոր անունը թափուր չմնա։— Հանեց Խանդութին տվեց մի ոսկե բազպանդ, մեջն անգին քարեր, ասաց.— Ինձ որ տղա ծնվի, էս բազպանդը կապի՛ր աջ թևին, թե որ աղջիկ ծնվի, կտաս իրեն բաժինք։ Ես որ շատ ուշանամ, որդուս կուղարկես իմ ետևեն։ Բազպանդը որ տեսնեմ, կճանաչեմ։

Դավիթ հեծավ Քուռկիկ Ջալալին, հացն ու գինին կանչեց, ընկավ ճանապարհ։

Քշեց գնաց հիսուն երկիր, էդ փահլևաններուն գտավ մեկ-մեկ, տարավ իր հետ Վրաստան։ Էնտեղ ինչ խորոտ աղջիկ որ տեսավ, ասաց.

— Ձեր աղջիկը տա՞ք իմ աղբորը։

է, Դավթին ո՞վ աղջիկ պիտի մերժեր։

Հիսուն խորոտ աղջիկ ճարեց, հիսուն փահլևաններում պսակեց ամեն մեկին իր ուզած աղջկա հետ։

Էնտեղ մի հուր-հրեղեն աղջիկ էլ կար։ Դավիթ էդ աղջկան շատ հավանեց, ասաց.

— Էսոր էլ տանենք Խանդութ խաթունի համար նաժիշտ։

— Հալա՛լ է,— ասին փահլևանները։

Դավիթ ասաց.

— Էհ, աղբերնե՛ր, մկա թո՛ղ ամեն մարդ իր առտված կանչի, տուն գնա։ Ես էլ երթամ դեպի Սասուն։ Ամենուս էլ բարի ճամփա՛։

Իրար գլուխ տվին, իրար պագեցին, ամեն մեկն իր աղջկան ձիու գավակն առավ, ասին.

— Քեզմեն շնորհակալ ենք, Դավի՛թ, որ մեզ հասցրիր մեր նպատակին։ Գնաս բարո՛վ։ Հաջողությունը չվարդ լինի, փորձանքը՝ ձիուդ հանած փոշին։ Թշնամիդ մեռած լինի, բարեկամդ՝ ողջ։ Գնաս հազա՛ր բարով։

Փահլևանները գնացին։

Դավիթ աղջկան դրեց գավակ, ճանապարհ ընկավ դեպի Սասուն։

Մկա համբավ տանք Խանդութ խաթունի մոտեն։

Դավիթ երբ գնաց Վրաստան, Վաչո-Մարջոն մարդ ուղարկեց, իր աղջկան տարավ Կապուտկող, հորանց։

Խանդութ էն ժամանակ երկվոր էր, հոր տանը պառկեց, մի տղա բերեց։

Լուր տվին, Քեռի Թորոս եկավ, ասաց.

— Թե որ էս տղան Դավթենն է, ցույց կտա մի նշան, մի զորություն։

Եղան հիմը բարուրեցին, վրան բինտի տեղ փաթթեցին գութնի շղթաներ։ Մանուկն էր, երբ լաց եղավ ու ճմլկտաց, գութնի շղթաները կտրտվեցին, թռան էս ու էն կողմ, սենյակի պատուհաններն ու ջահերը փշրեցին։ Դե, Դավթենն ու Խանդութենն մեկ հո չէ՞ր ծնվի... Քեռի Թորոս գրկեց բարուրը, ծանր ու թեթև արավ, ասաց.

— Աղնանցորդի է, Դավթի տղան։

Բերին տղուն լողացրին, տեսան, մեկ ձեռը պինդ փակած է։ Ինչ արին-չարին, չկարցան բանալ։ Վաչո-Մարջոն դարձավ Քեռի Թորոսին, ասաց.

— Մեր աչքը լու՛ս, ձեր աչքը լու՛ս, բայց ափսոս, որ էս տղու մի ձեռը հաշմ է։

Քեռի Թորոս կռացավ բարուրի վրա, էրեխի ձեռը մաժեց, մաժեց, մաժեց, բաց արավ. տեսան՝ ափի մեջ մի պուտ արուն։

— Հա՜յ-հա՜յ,— ասաց Քեռի Թորոս,— աշխարհն արել է մի պուտ արուն, առել իր ափի մեջ։ Թե որ ողջ մնաց, էսոր մոտեն զարմանալի բաներ դուրս կգան։ Հողն էս տղուն պահել չի կարենա, թե քարը տեղ տվեց, տվեց։

Երբ անցավ երկու-երեք օր, Խանդութ խաթուն իր տղուն կնքեց, անունը դրեց Մհեր։

Ուրիշ տղեք թե տարով էին մեծանում, Մհեր ամսով էր մեծանում, էնոնք թե ամսով էին մեծանում, Մհեր՝ ժամով։

Մի ժամանակ անց Խանդութ խաթունն ու իր տղան Քեռի Թորոսի հետ մեկտեղ ելան եկան Սասուն։

Մհեր, երբ երկու տարին լրացավ, քսան տարեկան փահլևանի հասակ ուներ։ Գնում էր քաղաքամեջ, ման էր գալիս իր համար, ճժերու հետ խաղ անում։

Սասնա քաղքի մոտով անցնում էր մի մեծ գետ։ Մհեր էդ գետի վրա մի քարե կամուրջ կապեց։ Մարդիկ երբ գալիս անցնում էին էնոր կամրջով, Մհեր էնոնց առաջը կտրում էր, տփում էր մարդկանց, ասում.

— Շա՛ն որդիք, ես կամուրջ եմ կապել, ձեզ համա՞ր եմ կապել. ինչո՞ւ եք անցնում իմ կամրջով։

Մարդիկ ղառնում էին. որ մտնեն ջուրը, Մհեր էնոնց առաջ կտրում. տփում էր, ասում.

— Շա՛ն որդիք, ես կամուրջ եմ կապել. ձեզ համար եմ կապել. ինչու՞ եք մտնում ջուրը, որ խեղդվեք, մեղքն իմ վի՞զն ընկնի։

Քաղքցիք եկան Քեռի Թորոսի մոտ գանգատ։ Քեռի Թորոս Մհերին կանչեց, խրատեց, բայց երբ տեսավ՝ չի օգնում, վերցրեց մոր հետ մեկտեղ ճամփեց Կապուտկող, ասաց. «Մկա էլ թո՛ղ Վաչո-Մարջոն քաշի թռան հոգսը»։

Մհեր ու Խանդութ խաթուն ապրում էին մեկ տարի Սասնա մեջ, մեկ տարի՝ Կապուտկողում։ Երկու տեղն էլ Մհեր Մհեր էր։ Տփում ու հաշմում էր ճժերուն, ծառերն անում էր քոքահան, կարկառն էր մաղլցում, որ արծվի ձվերը վար բերի։

Ձենով Օհան ուրախանում, ասում էր.

— Դավթի մանկությունն է։ Մհեր իր հորն է քաշել։

Ցռան Վերգոն գանգատվում էր.

— Դավիթ իր ազրայիլին թողել է մեր վիզը, գնացել է Վրաստան, քեֆ է քաշում։

Քեռի Թորոս հոգոց էր հանում, ասում.

— Էս տղան մեր հոգին կերավ, բերեք ճամփենք նորեն Կապուտկող։

Կապուտկողում Մհեր ուներ երկու քեռի։ Էդոնք ամեն օր գնում էին սար՝ որս անելու։ Խանդութ խաթունը մի օր ասաց.

— Տղե՛ք, ինչ կլինի, Մհերին ձեզ հետ որսի տանեք, չմնա տանը, մարդկանց վնաս տա։

Լուսուն քեռիները Մհերին իրենց հետ առան, տարան սար։ Էդ օր իրենք բան որսալ չկարեցան։ Մհեր լարեց մի վերու ոչխարի ետևեն, բռնեց, վիզը ոլորեց ու տվեց քեռիներուն։ Էսոնք որսը Մհերի շալակը դրած՝ բերին քաղաք, տարան իրենց աղբեր-տղերքի հետ մինչև լուս քեֆ արին։

Երկու շաբաթ էսպես գնում-գալիս էին։

Մի օր Խանդութ խաթունն ասաց.

— Մհե՛ր, դու էլ ըսկի որս անու՞մ ես, թե չէ։

— Հա՛, մարե՛,— ասաց,— վերու ոչխարները ես եմ զարկում, ես եմ շալկում բերում չուր քաղքի մոտ, էնտեղ քեռիներս ինձմեն առնում տանում են, որ իրենց ընկեր-տղերքի հետ քեֆ անեն։

Մերն ասաց.— Մհե՛ր, վաղը դու որսը քեռիներուդ մի՛ տա։ Բեր մեզ համա՛ր։

Ասաց.— Աղե՛կ, մարե՛։



Լուսուն քեռիները նորեն Մհերին առան, գնացին որսի։ Մհեր սպանեց մի ահա-

ցին այծյամ։ Քեռիներր զարմանքին չչմեցին։ Որսը տվին Մհերի շալակը, իրենք առաջ ընկան, եկան հասան քաղաքի ծերը, կանգ առան, ասին.

— Մհե՛ր, մկա դու որսը դիր գետի՛ն, գնա տու՛ն։

— Չէ,— ասաց,— ես իմ այծյամը ձեզ չեմ տա։

— Չե՞ս տա,— ասին,— ի՞նչպես թե չես տա։

— Վալլա՛, չեմ տա։ Իմ որսն է, կտանեմ տուն, մորս համար։

Չոչ քեռին ասաց.— Որ ասում էին սասունցիք ծուռ են, չէինք հավատում։ Մկա մեր աչքով տեսանք։

Պստիկն ասաց.— Բռնենք տփենք էս շաղզմակերի տղուն, որսը մոտեն առնենք։

Ամեն մեկը մի ապտակ զարկեց Մհերին։

Մհերը մեկ ձեռը խփեց մի քեռուն, մեկ ձեռը՝ մեկել քեռուն, երկսին մեկտեղ վերցրեց ու զարկեց գետին։ Երկուսն էլ մեռան. ատամները մնացին բաց։

— Յա՜, դեռ վրաս էլ ծիծաղում են,— ասաց Մհերը, որսը վերցրեց, եկավ տուն։

Խանդութ խաթուն հարցրեց.

— Մհե՛ր, քո քեռիներդ ու՞ր են։ Էնոնք էլ որս խփեցի՞ն։

— Չէ, վալլա՛, չխփեցին,— ասաց Մհերը։— Ուզեցան իմ որսը խլել, ես բորկա, վերցրի երկուսին մեկտեղ գետին զարկեցի։ Հլեն էնանց ծիծաղում են վրաս։

Խանդութ խաթուն ձեռը ծնկանը զարկեց.

— Վա՜խ, Մհե՛ր, դու սպանել ես քեռիներուդ։

Գնացին, տեսան, Մհեր քեռիներուն էնպես է գետին զարկել, որ մինչև մեջքը խրվել են հողի մեջ, ատամները մնացել են բաց։

Վաչո-Մարջոն իր տղոց բերավ, սուգ ու շիվանով թաղեց. ապա դարձավ Խանդութ խաթունին, ասաց.

— Տղուդ առ գնա Սասու՛ն, աչքիս թո՛ղ չերեա։

Մերը Մհերին առավ եկավ Սասուն։

Յոթ տարին լրացել էր. Դավթեն խոսք ու համբավ չկար։ Մհեր մի օր ասաց.

— Մարե, ես հեր չունե՞մ։

Ասաց.— Ինչու՞ չունես, մորտու՛ն։ Քո հերը Սասնա Դավիթն է, Սասնա պաշտպանը, աշխարհի ամենազորեղ մարդը։

— Բա ինչու՞ մեծերն ասում են. դու հեր չունես, դու բիճ ես։ Իմ հերն ու՞ր է գնացել։

— Քո հերը գնացել է Վրաստան, որ փահլևաններուն սպանի։ Ինձ մի ոսկե բազբանդ է թողել, որ երբ իրեն տղա ծնվի, կապեմ թևին, համփեմ հոր ետևեն։ Կերթա՞ս։

— Բա չե՞մ գնա։ Հերիք չեղա՞վ մեծերն ինձ բիճ ասեն։

Խանդութ ոսկե բազբանդը կապեց որդու թևին։ Մհեր գնաց ախոռ, դուրս հանեց մի հրեղեն ձի. զենք ու զրահ կապեց, հեծավ, ընկավ ճանապարհ։

Շատ գնաց, քիչ գնաց, առաջը բացվեց մի դաշտ։

Հեռվեն գալիս էր մի հեծվոր, մի խորոտ աղջիկ ձիու գավակին։ Մհեր մոտեցավ, ձեն ավեց.

— Էյ իծմորուք, էդ խորոտ աղջիկ վայե՞լ է քեզ, որ առել, տանում ես։ Էդիկ ինձ է վայել, պիտի տաս ինձ։

Դավիթ ասաց.— Լածիրա՛կ, բերնեդ կաթնահոտ է գալիս. խորոտը քեզ վայել է, ինձ վայել չէ՞։

Դավիթ ուզում էր տնց կենալ, Մհերը ձեռը թալեց աղջկան, ասաց.

— Չեմ թողնի տանես։

— Դավիթ էտեղ սրտմտեց, ասաց.

— Հոյ-հա՜յ, աշխարհի՛ն նայեցէք.
Էս կաթնակերի՛ն նայեցէք.
Կռվեր իմ անցել աշխարհում,
Իմ ձիու սանձն էլ չի թացվել.
Մեջս էս բարալիկ տատն
Չի թողնում, իր մտով անցնեմ։
Անցել եմ սարեր ու կապան,
Իմ գիմաց կանգնող չի եղել.
Տեսել եմ բարակ մի բառան,
Բառ եմ իր մոտեն վախեցել։

Մհեր խեթ նայեց, ասաց.

— Ասել է՝ կաթնակերը ես եմ, ասել է՝ բարալիկ տատուն ես եմ, ասել է՝ բարակ բառանը ես եմ։ Ձիուց իջի՛ր, կռվով կզննենք, տեսնենք ով է կաթնակեր, ով է բարալիկ տատը, ով է բարակ բառանը։

Դավիթ իջավ ձիուց, ասաց.

— Կեցիր, ես աղջիկը տանեմ, գնեմ էն սարի գլուխ, մի անվնաս տեղ, նո՛ր գամ, կռիվ անենք։

— Տա՛ր,— ասաց Մհեր։

Դավիթ աղջիկը տարավ սարի գլուխ, դարձավ եկավ, ինքն ու Մհեր կպան գոտեկռիվ։

Էնանց ոտների տակ հողը հերկվեց, պատառ-պատառ եղավ, փոշին բարձրացավ, երկնքի երեսը բռնեց. բան չէր երևում փոշու մեջ, մենակ լսվում էր հոր ու որդու գոռոց փնչոցը։ Երեսներին քրտինքն իջավ, գետինը ցեխ շինեց։

Իրար թողին, գուրզերն առան, գուրզերով էին իրար զարկում։ Գուրզի զորությունեն քամին սաստկացավ, Դավթի թաշկինակը խլեց, տարավ, տարավ, տարավ թալեց Խանդութ խաթունի դռան մոտ։

Խանդութ էրկան թաշկինակը ճանաչեց, ելավ տանիք, տեսավ փոշին բռնել է աշխարհը, ասաց. «Էսիկ Դավթի թաշկինակն է. կա-չկա, հեր ու որդի իրար հանդիպել են, չեն ճանաչել իրար, կռվում են։»

Խանդութ խաթուն հեծավ իր ձին, քշեց, հասավ կռվի դաշտ։ Գոգռոցն ու դըմփ-դըմփոցն ընկել էր սար ու ձոր։ Փոշու ամպի տակ երկու թերդ գնում գալիս իրար էին զարկվում։ Մարդիկ հավարվել, հեռվեն մտիկ էին տալիս, բայց մոտ գնալ չէին իշխնում։ Խանդութ խաթուն կանչեց.

—Դավի՛թ, լսի՛ր ինձ, լսի՛ր.
Քեզ կանչում է Խանդութ խաթուն.
Մի՛ զարկիր, Դավի՛թ, մի՛ սպանիր
Մեր Մհեր մորամեկ որդուն։

 Հեր ու որդի էնպես էին տաքացել, որ կա՞նչ կլսեին։

*Արնախում աչքերով, իրար զարկում էին, որ սպանեն։ Խանդութ մոտեցավ, տեսավ, հոր թափը նվազում է, Մհերի թափը՝ շատանում։ Խանդութ խաթուն կանչեց.*

*— Մհե՛ր, դու լսի՛ր ինձ, լսի՛ր,*
*Ակա՛նջ դիր քո մոր խնդրանքին,*
*Մի՛ զարկիր, Մհե՛ր, մի՛ սպանիր,*
*Քո ծնող թուխմորուս Դավթին։*

*Ոչ հերը լսեց, ոչ էլ տղան։ Կռվում էին ոնց որ գարնանը գոմեն նոր դուրս եկած գոմեշներ, զարկում էին, որ սպանեն իրար։ Խանդութ խաթուն ձեռները պարզեց աջ ու ձախ, կուց-կուց արցունք թափելով կանչեց.*

*— Սարե՛ր, իմա՛ց արեք Թորոս Քեռուն,*
*Թո՛ղ գա, հասնի իր փահլևաններուն։*

*Է, հեր ու որդի, որ իրենց հարազատի ձենը չէին լսում, սարերը կլսեի՞ն։ Խանդութ խաթուն չգիտեր ինչ աներ։ Մատները կոտրատեց, մազերը փետտեց ու նորեն կանչեց.*

*— Քամի՛, թևավո՛ր քամի,*
*Ռա՛հմ արա, մի լո՛ւր տար Քեռուն,*
*Թո՛ղ գա, իրարմեն բաժանի*
*Սասնա ծռերուն։*

*Մհեր ծունկը գեմ արավ, հորը վերցրեց գետին զարկեց ու չոքեց վրան։ Դավիթ ասաց.*

*— Հայ-հա՜յ, տղա, դու ինձ պիտի սպանե՞ս։ Ի՞նչ պատասխան կտաս իմ կտրիճին։*

*— Քո կտրիճն ո՞վ է։*

*— Մհերն է, թևին ոսկե բազպանդ կա։*

*— Վա՜խ,— ասաց Մհեր,— ձեռս թուլանա՜ր, ես իմ հորը պիտի սպանեի։— Լաց եղավ, ընկավ հոր ոտները, ձեռը պագեց, ասաց.— Հերի՛կ, ես քեզ մեղա, ես քեզ չէի ճանաչում։*

*Դավիթ շատ էր խոցվել, իր ցասումը պահել չկարողացավ, ասաց.*

*— Մհե՛ր, դու ինձ հետ կռիվ մտար, ինձ գետին զարկեցիր, ամոթով արիր։ Կանչել եմ քաղցրիկ աստված, որ դու մնաս անմահ, անժառանգ։*

*Մհեր, էս անեծքը որ լսեց, հեծավ իր ձին, քշեց դեպի Կապուտկող։ Ճանապարհին ականջի մեջ էր հոր ձենը.«Մնաս անմահ, անժառանգ»։ Կապուտկող հասնելու պես Մհեր հավաքեց քառասուն ազապ տղա, քառասուն ազապ աղջիկ, նստեց էնոնց հետ, յոթ տարվա նռան գինի խմեց, հարբեց, որ հոր տված անեծքի մրմուռը մոռանար։*

*Դավիթ էն կռվախնձոր աղջկան ու Խանդութ խաթունին առավ, եկավ տուն։ Ոտից-գլուխ արնոտվել էր, ասաց.*

*— Խանդո՛ւթ, եկ, ջու՛ր տաքացրու, լողանամ։*

*Շորերը հանեց, որ լողանար, Խանդութ խաթուն աչքեց էնոր աջ թևը, տեսավ խաչ-պատերազմին սևացել է, դառել մուր։ Խանդութ ախ քաշեց, հոնքուր-հոնքուր լաց եղավ։ Դավիթ հարցրեց.*

*— Խանդո՛ւթ, ինչու՞ ախ քաշեցիր։*

Ասաց.— Դավիթ, խաչ-պատերազմին քո աջ թևին սևացել է, դառել մուր։

Դավիթ հիշեց իր երդումը Չմշկիկ Սուլթանին, ձեռը ճակատին խփեց.

— Ախ,— ասաց,— երդմնակոտոր եմ եղել, էդոր համար Մհեր ինձ հաղթեց։ Խանդու՛թ. ես պիտի գնամ Չմշկիկ Սուլթանի հետ կռիվ։ Երդվել էի, որ յոթ օրեն գնամ, անցավ յոթ տարի։

Խանդութ ասաց.— Դավի՛թ, մի գնա։ Քո մուխն առավ քարին. դու երդմնազանց եղար, քո ուժը պակասեց։ Էլ դու կռիվ անել չես կարնա։

Դավիթ ասաց.— Չէ, պիտի գնամ։ Իմ երդումը երդում է։

Թուր Կեծակին կապեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց մինչև Խլաթ, կանգ առավ պալատի առաջ։

Չմշկիկ Սուլթան պատուհանեն գլուխ դուրս հանեց, ասաց.

— Դավի՛թ, դու երդում էիր կերել յոթ օրվա համար, անցել է յոթ տարի։ Էդքան ժամանակ ես մնացել եմ անմարդ, քո ճամփին եմ նայում։

Դավիթ ասաց.— Երդումս մոռացել էի, էսօր հիշեցի։ Մկա դու՛րս արի, կռվենք։

Ասաց.— Մեկ ժամ ժամանա՛կ տուր, զեստերս հագնեմ, զենքերս կապեմ, գամ։

Դավիթ իր ձին կապեց Չմշկիկ Սուլթանի դռան մոտ, ասաց.

— Իմ ձին էստեղ թո՛ղ մնա, ես գնամ գետը, լողանամ, մինչև դու պատրաստվես։

Դավիթ հագուստը հանեց, մտավ գետ։

Ափին եղեգնուտ կար։ Չմշկիկ Սուլթանի աղջիկը թաքնված էր էնտեղ։ Մինչև մերը կպատրաստվեր, կգար, աղջիկը լարեց իր աղեղը, նշան առավ ու նետն արձակեց։ Թունավոր նետը սլացավ դիպավ Դավթի մեջքին, ծակեց ու դուրս եկավ սրտեն։

Դավիթ բոռաց յոթնասուն գոմշի ուժով, ձենը հասավ Սասուն, Քեռի Թորոս ասաց.

— Հեյ-վա՜խ, տղե՛ք, Դավիթ սպանվեց. մեր Սասնա տունը մնաց անտեր։

Ձենով Օհան Սասնա կողմեն բոռաց.

— Դավի՜ի՜ի՜թ... մի՛ վախենա, հրես եկանք։

Քեռի Թորոս, Ձենով Օհան, Ճնճղափորիկ, Խոր Մանուկ, Խոր Գուսան, եկան ձիերը նստեցին, քշեցին հասան Խլաթա գետի եղեգնուտը. Քեռի Թորոս հարցրեց.

— Դավի՛թ... քեզ ո՞վ զարկեց, լաո՛։

— Չիմացա։ Եղեգնուտեն մեկը դուրս եկավ, զարկեց։

Գնացին եղեգնուտի մեջ, փնտրեցին գտան էնտեղ ընկած մի հուր-հրեղեն աղջիկ։ Դավթի բոռալուց լեղաճաք էր եղել ու մեռել։ Չմշկիկ Սուլթանի աղջիկն էր։ Դավիթ էդ բանը իմացավ, ասաց.

— Իմ սերմից էր։ Երդմնազանց եղա, իմ սերմը ինձ սպանեց։

Դավիթ իր խոսքն ասաց ու մեռավ։

Արևը ձեզ տվեց ու ձեր որդիներուն...

Քուռկիկ Ջալալին ծռավ, ծառս եղավ — ծռակապը կտրեց, ընկավ դուրս, ինչքան մարդ պատահեց, կոտորեց, ինչքան ձի, տավար, կոտորեց, գնաց, հասավ Սասուն, կանգնեց Խանդութ խաթունի դռան առջև։

Խանդութ խաթուն դուրս եկավ, տեսավ ձին եկել է, տերը չկա։

Քեռի Թորոս ասաց.

— Բերե՛ք Դավթի մարմինը քոթակ նստեցնենք ձիու վրա, կապենք, որ վար չընկնի, մենք էլ ձի խաղացնելով, երգելով գնանք Սասուն, որ Խանդութ խաթուն չիմանա, թե մեռել է Դավիթ։

Խանդութ խաթուն ելավ տանիք, նայեց ամեն կողմ, որ տեսներ, Դավիթ ո՞ղջ կգա, թե մեռած։

Տեսավ, մարդիկ ձիերը խաղացնելով են գալիս, Դավիթ անշարժ նստած է թամքին, չի թեքվում դես ու դեն, խաղին չի մասնակցում։ Խանդութ կռահեց, որ Դավիթ մեռած է, հառաչեց.

— Արժանին էկավ,  
Անարժանն էկավ,  
Իմ կանաչ կորին  
Դավիթն էր, չէկավ։

Ցռան Վերգոն էնտեղ տանիքին կանգնած էր, մոտեցավ, ասաց.

— Խանդու՛թ խաթուն, մի՛ լար։ Դավիթ մեռավ, ես քեզ անուշ։ Քեզ կորին Դավիթ կպահի, պարոն էրիկ չի պահի։

Խանդութ խաթուն էդ պիղծ խոսքերը երբ լսեց, ելավ բերդի գլուխ, ասաց.

— Դավիթ մեռավ, ինձ համար արևը խավար է։ Ես էս աշխարհքում էլ բան չունեմ։

Ասաց, իրեն բերդի գլխեն վար թալեց։

Գլուխն առավ քարին, քարը փոս ընկավ, դառավ սանդ։

Սասնա բերդի տակ Խանդութ խաթունի ծծերու տեղ մինչև էսօր էլ երկու ակն աղբյուր է թալում։

Խանդութ խաթունի յոթ ճյուղ ծամը մինչև էսօր էլ երևում է Սասնա բերդի մոտ, քանց յոթ սյուն սևին է տալիս։

Խանդութ խաթունի սանդը մինչև էսօր էլ էնտեղ է, Սասնա բերդի առաջ։ Սասնեցիք մինչև էսօր էլ էդ սանդի մեջ կորեկ են ծեծում։

Սասնա ջոջերն ու ժողովուրդը բերին Դավթին ու Խանդութ խաթունին դրին պատանք, երկսի նաշերը քառսուն տերտերով, քառսուն սարկավագով, քառսուն վարդապետով, լալով, ողբալով տարան Ծովասար, թաղեցին Մարութա վանքի բակում։

Սասուն յոթ օր սուգ մտավ։

Դավիթ ու Խանդութը մեռան, արևը ձեզ թողին ու ձեր որդիներուն։

Ճյուղ Հորրորդ

# Մեր փոքր



Ողորմի՛ տանենք, ողորմի՛ Փոքըր Մհերին,
Ողորմի՛ տանենք էն խորոտ Գոհար խանումին,
Ու դառնանք տանենք ողորմի՛ Քեռի Թորոսին,
Ու դառնանք տանենք ողորմի՛ Ձենով Օհանին,
Ողորմի՛ տանենք Փոքր Մհեր պարմողին.
Ծուղեծուղ անցանք, նստեցինք Մհերի ծուղին:



## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### I. ՄՀԵՐԸ ՈՂԲՈՒՄ Է ՀՈՐ ՄԱՀԸ

Էն օր, երբ Դավիթ ու Խանդութ մեռան, արևը ձեզ տվին, էնոնց որդին՝ Մհեր Կապուտկողումն էր։

Էնիկ իր ծնողներու մահը չիմացավ։ Առել էր քառսուն աղաբ տղա, քառսուն աղաբ աղջիկ, յոթ տարվա գինին դրել՝ քեֆ էր անում, որ իր հոր տված անեծքի մրրմուռը մոռանար։

Վաչո-Մարչոն Մհերին պահում էր հոր ու մոր մահին անտեղյակ։ Մտքում ասում էր. «Թո՛ղ Մհեր մտքեն հանի իր հորը, իր Սասուն, մնա մեր մոտ, մեր երկրին զորեղ պաշտպան»։

Մի ժամանակ անց Խլաթա Ջմշկիկ Սուլթան թուղթ գրեց Քեռի Թորոսին, ասաց.

«Իմացած լինեն Սասնա ծռերը, որ իմ կռիվը կռիվ է։ Ձեր Դավիթ ինձ հետ նշանվեց, ինձ հետ մատնիք փոխեց, ինձ խաբեց, գնաց ուրիշին առավ։ Դավթի երդմնազանցության համար ես էնոր սպանեցի, Սասուն դարձրի հարկատու։ Մկա իմ հարկը տալիս եք, տվե՛ք. չեք տա, կգամ Սասուն, ձեր հողն ու քարը կողողեմ, կտանեմ»։

Քեռի Թորոս էս թուղթը կարդաց, երկրի ջոջերուն կանչեց, խորհուրդ արեց.

— Ջմշկիկ Սուլթան կգա Սասուն, մեր հողն ու քարը կողողի, կտանի։ Ելեք՝ մարդ ուղարկենք Դավթի աներոջ մոտ, Մհերին վերցնենք բերենք Սասուն, որ իր հոր վրեժն առնի, երկրին տեր կանգնի. Սասուն անպաշտպան չմնա։

Քեռի Թորոս ու Ձենով Օհան ելան, հետներն առան յոթ դոմշու կաշի, գնացին Կապուտկող, Վաչո-Մարչոյի մոտ, ասին.

— Մեր աղբոր տղան ու հարսը էստեղ մի լաճ ունեին։ Ո՞ւր է։

— Մեռել է,— ասաց Վաչո-Մարչոն։

Սուտ ասաց։ Էնիկ Մհերին տարել պահել էր յոթ դարպասով ներս, վրան պահապան էր դրել, փանդիռ ու թմբուկ էր զարկել տալիս, որ Մհեր իր ազգի ձենը չլսեր, դուրս չգար։ Ախար Մհեր բերդի պես կանգնած էր Կապուտկողի թիկունքին, չէր թողնում, որ թշնամի թագավորները մոտ գան։

— Մեռա՞լ է,— հարցրեց Քեռի Թորոս։
— Վալլա՛, մեռել է,— երդվեց Վաչոն։
Քեռի Թորոս ասաց.
— Նշան կա մեր Սասնա մեռելներում։ Սասնա տան մարդը որ մեկ տարեկան մեռնի, գերեզմանը տաս հալարա կանգուն է, երկու տարեկան մեռնի, գերեզմանը քսան հալարա կանգուն է, քանի տարեկան որ մեռնի, գերեզմանը տաս-տաս կանգուն կավելնա։ Մենք մեր ցեղի գերեզմանը կճանաչենք։
Ելան գնացին գերեզմանները, տեսան, որ Կապուտկողում Սասնա ցեղի չափով գերեզման չկա։ Ձենով Օհան ասաց.
— Վաչո՛-Մարջո, իմ աղբոր թոռան տեղն ասում ես, սա՛, չես ասի. էս է, կբռամ, ձեր Կապուտկողա հղի կնիկներն անցուց կանեն, ձեր կովերը կհորթատեն, ձեր մատակները կձագտեն, ձեր հղի ձիերը կքուռկտեն. ինչքան հավկթոր ու պառավ կան, ա՛ու կմեռնեն։ Դու եկ՝ էնոնց մեղքի տակ մի՛ մտնիր, մեր թոռը տո՛ւր, տանենք։
Չէ որ չէ։ Վաչո-Մարջոն Մհերի տեղը չասաց։ Ձենով Օհան յոթ գոմշու կաշին փաթթեց իրեն, որ բռռալիս իր փորը չպատռվի, իրեն շղթայով կապեց կաղնի ծառին, որ ձենն իրեն չտանի, կանչեց.

— Տո տղա, Մհե՛ր, դու խմի՛ր,
Տո տղա, Մհե՛ր, դու խմի՛ր
Յոթ տարվա գինին։
Քո հորն ու մորն սպանել,
Սասնա տունն են կործանել,
Անցել է տարին...

Ձենը եկավ, ընկավ Մհերի ականջը։ Մհեր ասաց.
— Սու՛ս կացեք, էդ փանդիռներն ու դափերը դադարեցրե՛ք, ես իմ ցեղի ձենն առա։
Դուշմանները փանդիռ ու դափ ավելի զլեցին։
Մհերի վրա հսկող պահակապետն ասաց.
— Մհե՛ր, մատա՛ղ, քո ցեղի ձենն ու՞ր է, որ դու առնես։ Քո ցեղն էստեղեն քառսուն օրվա ճանապարհ հեռու է։
Ձենով Օհան էլի կանչեց.
— Տո տղա՛, Մհե՛ր, Մհե՛ր, Մհե՛ր, հեե՜ե՜յ...
— Դադարեցրե՛ք ձեր փանդիռներն ու դափերը,— սաստեց Մհեր,— իմ ցեղի ձենն է գալիս.

Ես մի ձեն առա, հարազատ մի ձեն,
Արծվինն էր, թե՛ Արամազդենն։
Իմ հորեղբորն է ինձ կանչում, չգիտեմ՝
Հորաքրոջն է կանչում, թե՛ Հորուխենն։

Կապուտկողա դուշմանները փանդիռներն ու դափերն ավելի սաստկացրին, պահակապետն ասաց.
— Մհե՛ր, լա՛ո, քո հորեղբայրն ո՞րտեղ է, որ քեզ կանչի։ Դրսում քամիներն են իրար հետ տալիս։ Դու քո քե՛ֆն արա։
Ձենով Օհան էլի կանչեց.

— Տո տղա, Մհե՜ր, Մհե՛ր, Մհե՜ր...
Կանչում եմ քեզ Արևելքի՜ն,
Կանչում եմ քեզ Արևմուտքի՜ն,
Տո հարավի՜ն, տո հյուսիսի՜ն.
Զմչկին Սուլթան քո հորն սպանել,
Մեր տունն է քանդել, մեր հոգին հանել.
Քո հոր վրեժը մնացել է գետին.
Դու չե՞ս գա, հանես քո հոր վրեժին։
Սասնա տան խոյը դու ես մնացել.
Դո՛ւրս եկ, տո Մհե՜ր-Մհե՛ր, Մհե՜ր-հեե՜ե՜յ...

Կապուտկողցիք ամեն կողմեն հավաքվեցին, եկան Վաչո-Մարջոյի մոտ գանգատ.

— Թագավո՛րն ապրած կենա, դու էս ի՞նչ հանեցիր մեր գլխին. ինչու՞ Սասնա ծուռ որբը չես տալիս իրենց, որ Ձենով Օհանն էլ չբռռա։ Մեր քաղքի մեջ ինչքան հղի կնիկ որ կար, ճիժ թալեց, մեր կովերը հորթատեցին, մեր մատակները ձագտեցին, մեր ձիերը քուռկտեցին, ինչքան հավկիթ ու պառավ կային, մեռան։

Ձենով Օհան ասաց.

— Գանգատվեք, թե չգանգատվեք, ես մի բերան էլ պիտի բռռամ։ Տո, տղա, Մհեր-Մհեր, Մհեր-հ է՜է՜է՜յ...

— Վալլա՛, էսիկ մեր ցեղի ձենն է,— ասաց Մհեր ու վեր թռավ. դափհարին վերցրեց ու զարկեց փանդուռհարի գլխին, երկուսին էլ սպանեց, հասակակիցներուն, որ մեկը դեմն եկավ, ճանկեց ու տփեց պատին, ավաղ շինեց. քացով զարկեց, կոտրեց առաջին դարպասը, հասավ մեկելին, մեկել մեկելին, յոթն էլ ջարդեց, ելավ դուրս, փնչաց ու դեռուղին աչքեց, ինչպես գարնան գոմեն նոր դուրս ելած գոմշացուլ։ Մհեր էնքան էր պետացել, աչքերեսով էնքան էր փոխվել, որ սասնեցիք էնոր չճանաչեցին։

Քեռի Թորոս ասաց.

— Օհա՛ն, կա՛ց՝ ես էսօր փորձեմ, թե որ մեր Դավթի տղան է, կտանենք Սասուն, թե որ Դավթինը չէ, զարկենք, թողնենք, երթանք։— Քեռի Թորոս Մհերի դեմը կտրեց.— էյ, տղա՛, ու՞ր ես գնում էդպես հպարտ-հպարտ։

Մհեր ասաց.

— Ինձ մի մարդ էր կանչում, ու՞ր է։

— Դու ինչ մարդ ես, որ քեզ կանչեն։

— Յա՞, դու մարդ ես, ես մարդ չե՞մ։

— Չէ, դու ճիժ ես։

— Ճ՞ս եմ ճիժ,— ըռըկավ Մհեր, Քեռի Թորոսին գրկեց. հուպ տվեց, կողերը կպցրեց իրար։

Քեռի Թորոսի լեզուն լալկվեց, ուշքն անցավ։ Ջուր զարկեցին երեսին, պորտը ոլորեցին, նոր ուշքի եկավ, հարցրեց.

— Յա՞, տղա՛, դու ու՞մ տղան ես։ Քո հերակա՛նն ասա. քո մերակա՛նն ասա, թե չէ կասեմ՝ դու բիճ ես։

— Բիճը դու ես,— բռռաց Մհեր։— Իմ հերն է Սասնա Դավիթ, իմ մերը՝ Սասնա Խանդութ։

Էստեղ իրար ճանաչեցին, իրար վզով ընկան. Մհեր ուզում էր Քեռի Թորոսին գրկի, քեռին ետ քաշվեց.

 — Վու՛յ, լաո՛, մի հեղ կողերս կոտրեցիր. հերիք է։

— Բա ո՞նց իմ երկու լաճուն սպանեց,— ասաց Վաչո-Մարջոն։

— Է, ի՞նչ անենք,— ասաց Քեռի Թորոս,— քո թոռն է։

— Հա, իմ թոռն է,— ասաց Վաչո-Մարջոն։— Իմ երկու տղայի փոխանակ էգոր ինձ են տվել, մկա դուք եկել՝ տանում եք։ Մհե՛ր, լա՛ո, դու Սասու՞ն կերթաս, թե կմնաս Կապուտկող։

— Ոնց կմնա Կապուտկող,— բարկացավ Ձենով Օհան։— Մհե՛ր, գնանք Սասուն։

Մհեր տեսավ, քեռին եկել է, հորեղբայրը եկել է, հերը չկա, հարցրեց.

— Բա իմ հերն ու՞ր է, ինչու՞ չի եկել։

Ձենով Օհան լալով ասաց.

— Ախ, Մհե՛ր, Ջմշկիկ Սուլթան քո հորն սպանեց, քո մերը վշտեն մեռավ։ Ջմշկիկ Սուլթան շուտով կգա, Սասուն կավերի, մեր հողն ու քարը կողողի, կտանի Խլաթ։

— Իմ հորն սպանե՞լ են, իմ մերը մեռե՞լ է,— մռնչաց Մհեր, ընկավ քիթ-բերնին, լաց եղավ։

Քեռի Թորոս ու Ձենով Օհան վրան թափվեցին, ինչ արին, չարին, չկարցան ջուռ տալ։ Երեք օր ու գիշեր Մհեր լաց եղավ, արտասուքը հողն ակոսեց, առվի պես գնաց։ Երեք օր անց Մհեր ելավ նստեց, գլուխն առավ ափերու մեջ, ողբ ասաց.

Այրե՛ր, կուրացե՛ք, որ տղա-տղա որբացաք,
Զանեաք ձեր հորը՝ Գողթանի Դղյակն իր գլխին.
Այրե՛ր, կուրացե՛ք, որ տղա-տղա որբացաք,
Զանեաք ձեր հորը՝ Արծաթի-Գասին իր մեջքին.
Այրե՛ր, կուրացե՛ք, որ տղա-տղա որբացաք,
Զանեաք ձեր հորը՝ Զրեհի Շապիկն իր հագին.
Այրե՛ր, կուրացե՛ք, որ տղա-տղա որբացաք,
Զանեաք ձեր հորը՝ Գողթանու-Կոշիկն իր ոտին.
Այրե՛ր, կուրացե՛ք, որ տղա-տղա որբացաք,
Զանեաք ձեր հորը՝ Ձեռքի մեջ իր Թուր Կեծակին.
Այրե՛ր, կուրացե՛ք, որ տղա-տղա որբացաք,
Զանեաք ձեր հորը՝ Հեծած իր Քուռկիկ Ջալալին։

Մհեր էս ողբն ասաց, վեր կացավ, հեծավ իր ձին ու Քեռի Թորոսի հետ, հորեղբեր Օհանի հետ մեկտեղ ճանապարհ ընկավ դեպի Սասուն։

## 2. ՄՀԵՐՆ ԱՌՆՈՒՄ Է ՀՈՐ ՎՐԵԺԸ

Սասնա ճամփին կար մի վանք։ Անունը Մատղավանք էր։

Ջմշկիկ Սուլթան ու Դավթին թշնամի թագավորները գիտեին. Մհեր Մատղավանքի մոտով կանցնի, որ գնա Սասուն։ Մարդ ուղարկեցին վանահոր մոտ, ոսկի խոստացան, ասին.

— Երբ Սասնա Մհեր կգա, որ անցնի Մատղավանքի մոտով, մեզ իմաց կտաս։

Էնոնց միտքն էր՝ ճամփան կտրեն, Մհերին թակարդ քցեն, սպանեն։

Երբ որ սասնեցիք եկան մոտեցան Մատղավանքին, իրիկնամուտ էր։ Քեռի Թորոս գնում էր առջևեն, Մհեր ու Ձենով Օհան՝ ետևեն։ Քեռի Թորոս կանգ առավ.

— Ինչո՞ւ կանգ առար,— հարցրեց Մհեր։

— Տե՛ս,— ասաց Քեռի Թորոս,— պետ-պետ կաղնիները կտրատել գցել են մեր ճամփի վրա…

Ձենով Օհան ասաց.

— Էսիկ թշնամու գործ է։

Չգիտեին, որ էգիկ վանահոր սարքածն էր։ Էնպես էր արել, որ սասնեցիք ծառերը դեն թալելուց բեզրեն, մոնեն վանք, որ հանգստանան, թշնամինները վրա տան, կոտորեն։

— Քեռի՛, Հրողբե՛ր,— ասաց Մհեր,— դուք երկուսով ծառերը վերցրե՛ք, տվեք ի՛նձ, ես էլ տանեմ թալեմ ձորի մեջ։

Էդպես էլ եղավ։ Երկուսով ծառերը վերցնում տալիս էին Մհերին, էսիկ էլ ծառը գրկում տանում թալում էր ձոր։ Էնպես քանդեցին մինչև իրիկուն, ձորը ծառերով լցրին, ճամփան բաց արին, երեքն էլ շատ հոգնեցին։

Մի քիչ էլ որ առաջ գնացին, մթան մեջ վանքը երևաց։ Մոտեցան, դուռը թակեցին, վանահայրը դուրս եկավ.

— Ի՞նչ եք ուզում։

— Հոգնած մարդիկ ենք,— ասին,— մի տեղ տու՛ր, քնենք հանգստանանք. լուսուն էլի բռնենք մեր ճամփան։

Վանահայրը էնոնց առաջն ընկավ, տարավ ներս, ճոխ սուփրա բաց արեց. հյուրերուն բարի ախորժակ ասաց, ինքը դուրս գնաց, գաղտնի լուր ուղարկեց, որ թշնամինները գան։

Հոգնած ուղևորներն իրիկնահացը կերան, քնեցին։

Քեռի Թորոս լուսուն շուտ արթնացավ ու պատուհանեն դուրս նայեց։ Անհաշիվ զորք էր եկել ու փաթթել վանքի չորս բոլորը։ Քեռի Թորոս բոռաց.

— Մհե՛ր, վե՛ր կաց, նայի՛ր դու՛րս։ Յոթ թագավորի զորք է եկել մեզ վրա։

Մհեր ու Ձենով Օհան ելան, մոտեցան լուսամուտին, տեսան՝ դաշտի խոտերուն թիվ կա, թշնամու զորքին թիվ չկա։

Վանահերն էլ կանգնած էր զորքի մեջ ու մատով ցույց էր տալիս էն սենյակը, որտեղ քնած էին սասնեցիք։ Մհեր ակնթարթի մեջ զենքերը հագավ, ասաց.

— Հացն ու գինին, տեր կենդանին, ես գնացի, դուք էլ իմ ետևեն եկե՛ք։ Չվախենաք, հա՞։

Մհեր հեծավ իր ձին, գուրզն առավ, քշեց։

Քեռին ու Հրողբերն էլ ձիերը հեծան, քշեցին։

Մհեր խոյացավ զորքի վրա, գնաց էն գլուխ, եկավ էս գլուխ, աջ ու ձախ զարկեց, կոտորեց, կոտորեց, կոտորեց ու քշեց, ինչպես Վիշապ-քամին մժղուկի երամն է քշում։

Քեռին ու Հրողբերը սիրտ առան, մեկ-մեկ բարդի ծառ բռքահան արին, իրենք էլ ընկան զորքի մեջ։ Մհեր տեսավ, հարցրեց.

— Յա՛, ծառերով էդ ի՞նչ եք անում։

— Բան չենք անում,— ասին,— լա՛ո, տեսանք, դու կայծի հաշանը ցրիվ ես տալիս, մենք էլ, ասինք, եղերը վրա տանք։

Թշնամի թագավորները, զորքի ջարդվելը երբ տեսան, ամեն մեկը թռավ իր ձիու թամքը, ծլկեց իր երկիր։

Ամենէն առաջ փախել էր Չմշկիկ Սուլթան։

Մհեր վանահորը բռնեց բերեց վանք, մի ձեռքով բարձրացրեց վանքի սանդ-քարը, մեկնելով բռնեց վանահոր մազերը, գլուխը զարկեց գետին, սանդքարը կոխեց վրան, ասաց.

— Քանի որ վանահերը մատնություն արեց, էսօրվանից էս վանքի անունը ոչ թե Մառղավանք է, այլ Մատնավանք։

Երբ եկան Սասուն, Ձենով Օհան Սասնա տան զգեստերն ու զենքերը բերեց, Քուռկիկ Ջալալին դուրս քաշեց, ասաց.

— Մհե՛ր, լա՛ո, առ՝ հագիր քո հոր զգեստը, առ՝ կապիր քո հոր զենքերը, առ՝ հեծիր քո հոր ձին։ Մեր Սասնա տան խոյը դու ես մնացել, էլ ու՞մ համար խնայեմ։

Մհեր հագավ իր հոր Ճապիկ-Զրեհին,
Մեջքին կապեց իր հոր Գոտիկ-Արծաթին,
Գլխին դրեց իր հոր Դաղ-Սղաթին,
Ոտքին քաշեց իր հոր Կոշիկ-Մոզդաղին,
Ձեռքին բռնեց իր հոր Նիզակին ուռուցին,
Թևին առավ իր հոր Գուրզ-Ծանրկանին,
Գոտուց կախեց իր հոր Թուրքն Կեծակին,
Հեծավ կանգնած իր հոր Քուռկիկ Ջալալին,
Վրան դրեց իր հոր Թամբիկ-Սադաֆին,
Բերնին դրեց իր հոր Սանձիկ-Պողպատին,

ուզում էր հեծնի, ձին լեզու առավ, ասաց.

— Հայ-հա՜յ, անիրա՛վ, դու ո՞վ ես, որ ինձ հեծնես։ Դու քանի՞ գլուխ ունես, որ հեծնես Քուռկիկ Ջալալին։

Մհեր աղաչանք արեց.

— Քուռկի՛կ Ջալալի, ամոթո՛վ մի անի դու ինձ։ Ես էլ Սասնա տան խոյերեն եմ, քո տիրոջ որդին։

Քուռկիկ Ջալալին ասաց.

— էդ խոսքիդ վրա իմ սիրտը չափաց։ Հորդ խաթրին քեզ բան չեմ անի։ Հեծի՛ր։

Մհեր հեծավ, Ձենով Օհանին ու Քեռի Թորոսին ետևը գցեց, գնաց Խլաթա քաղաք, Ձմշկիկ Սուլթանի վրա, որ իր հոր վրեժն առներ։

Ճանապարհին Ձենով Օհան ասաց.

— Մհե՛ր, լա՛ո, մկա ես ի՞նչ անեմ։ Դու պստիկ տղա ես, բան չես հասկանում, ես ու Քեռի Թորոս հալվորցեր ենք, մեր մեջ կռվո՞ղ է մնացել։ Խլաթա քաղաքն էլ անառիկ ամրոց է, Ձմշկիկ՝ անհաղթ փահլևան...

— Հորեղբե՛ր,— Մհեր էնոր միտքը հասկացավ, ասաց.— մենք Սասնա տան զավակները չե՞նք։ Մենք Սասնա տան զավակներն ենք։ Մեռած էլ որ լինենք, թագավորները չեն իշխենա մոտ գալ մեր գերեզմանին։ Քշե՛, գնանք, մեր կռիվն անենք։

Քուռկիկ Ջալալին լեզու առավ, ասաց.

— Գնանք։ Մի՛ վախեք։ Թե որ ձեր թրերը հերիք չանեն, իմ պնչերու կրակը՝ ձեզի թուր, թե որ ձեր նիզակները հերիք չանեն, իմ պոչի մազերը ձեզ նիզակ, թե որ ձեր գուրզերը հերիք չանեն, իմ ոտի սմբակները՝ ձեզ գուրզեր, թե որ դուք զորք չունեք, իմ վազքի քամին ձեր զորքն է։

Մհեր իր հորեղբոր ու քեռու հետ քշեց հասավ Խլաթա մոտ, ասաց.

— Դուք պիտի գնաք զորքի՞, թե ամրոցի վրա։

Հավորները միտք արին, ասին.

— Գնանք զորքի վրա, զորքը շատ է. գնանք ամրոցի վրա՝ ամրոցն ամուր է...

Մհեր ծիծաղեց, ասաց.

— Հայ-հա՜յ, տնաշեննե՛ր, ամեն մեկդ ինձ երկու հեղ կկչեք, ես մի կողմ ուղարկում եմ երկուսիդ, մի կողմ գնում եմ ինքս մենակ։ Հոժար չե՞ք։

Ձենով Օհան ու Քեռի Թորոս ամոթով էլան, ասին.

— Աղեկ, մենք երկուսով կերթանք ամրոցի վրա։

Գնացին։

Մհեր Թուր Կեծակին քաշեց, խոյացավ զորքի մեջ, գուռթանի պես գնաց, եկավ. գնաց, եկավ, աջ ու ձախ զարկեց, կոտրեց, կոտորեց, փռեց ամեն կողմ, ինչպես հնձվորն է խոտերը շարք-շարք փռում։ Մհեր Ջմշկիկ Սուլթանի զորքեն ամեն շարքը փռելիս ասում էր.

— Էս իմ հոր փոխ, էս իմ հոր փոխ...

Ջմշկիկ Սուլթան ձիու սինչը մտած փախնում էր։ Մհեր հասավ ետևեն, նիզակը զարկեց, վար բերեց, մազերը կապեց Քուռկիկ Ջալալու պոչին, ձին քշեց, կախարդուհու ամեն ոսկոռ մի երկիր թալեց, միայն մազերը մնացին պոչին կապած։

Իր հոր Թշնամուն էղպես պատժելուց հետո, Մհեր ասաց. «Գնամ տեսնեմ, Քեռի Թորոս ու հորեղբեր Օհան ինչ են անում»։

Ձին քշեց, գնաց մտավ Խլաթա քաղաք։

Քեռին ու հորեղբերը քաղաքն ավերել էին, մարդկանց կոտորել, մնացել էր մի կատու, էն էլ թռել կանգնել էր մինարեթի ծերին, շվարած նայում էր չորս բոլոր։ Մհեր բոքահան արեց մի մեծ քարքի ծառ, զարկեց, վար բերեց էդ կատվին։ Էնոր վրեժի ծարավն էնքան զորեղ էր, որ չկարցավ տեսնել իր հոր սպանողի երկրում կենդանի մի շունչ։

Մհեր առավ հորեղբորն ու քեռուն, բարձրացավ Նեմրութա սարի գլուխ, որ տեսնի, հո մի շեն գեղ չի՞ մնացել Խլաթա երկրում։ Տեսավ, Խլաթա մեջեն ծուխ է բարձրանում։ Սրեքով իջան քաղաք։ Մի ջագու պառավ ավերակներու մեջ կրակ էր վառել, փչում, ծուխ էր անում։

Սասնեցիք մոտեցան, հարցրին.

— Ինչո՞ւ ես ծուխ հանում։

Պառավն ասաց.

— Որ Սասնա ծռերը չասեն, թե Խլաթա ծուխը կտրեցին։

Մհեր հարցրեց.

— Բա էդ ի՞նչ է չխկանում կրակիդ մեջ։

— Թունավոր նետ է,— ասաց։— Էս նետով ես պիտի սպանեմ Սասնա Մհերին, ինչպես էնոր հորն սպանեցինք։

Մհեր աչքով արեց հորեղբորն ու քեռուն, ասաց.

— Պառա՛վ, ես եմ Սասնա Մհեր։ Մկա ոնց ես, էս ծառերը կոռեմ, ամեն ոտք մի ծառի կապեմ, ծառերը թողնեմ, քեզ մեջտեղեն ճղեն։ Բայց պառավ կնիկ ես, կասեն Սասնա Մհեր պառավ կնիկ սպանեց, մեղք ես. գնա՛, քեզ համար ապրի, քո ծռ՛ւլն արա։ Ես իմ հոր վրեժն առել, պրծել եմ։

Մհեր պառավին թողեց իր ծխի մոտ, հորողբոր ու քեռու հետ անցավ գնաց։

*Խլաթա պառավն էնոր հետևեն անիծեց, ասաց.*

*— Հողը քո ոտի տակ փու՛լ գա, Մհե՛ր։ Քարը մտնես, չհանգստանա՛ս։*

*Էդ անեծքը թունավոր նետի պես թռավ գիպավ Մհերի սրտին։ Մհեր ասաց.*

*— Քեռի՛ Թորոս, ես էդ պառավի կյանքը խնայեցի, էնոր լավություն արի, ինչու՞ ինձ անիծեց։*

*Քեռի Թորոս ասաց.*

*— Էդպես է, լա՛ո, աշխարհը։ Լավություն անողի գլուխը ծակ է։*

*Մհեր հարցրեց.*

*— Քեռի Թորոս, աշխարհն ինչու՞ է ծուռ շինած։*

*— Չգիտեմ, լա՛ո,— ասաց Քեռի Թորոս։— Աշխարհի վրա հարյուր տարի ապրեցի, աշխարհի բանը չհասկացա։*

## Մ Ա Ս Ն   Ե Ր Կ Ր Ո Ր Դ

### 3. ԳՈՀԱՐ ԽԱԹՈՒՆ

*Անցավ միառժամանակ, մի օր Մհեր Ջհնով Օհանին ասաց.*

*— Հրողբե՛ր, սիրտս նեղվում է, չեմ կարնա նստեմ տանը։ Ուզում եմ գնամ, աշխարհը ման գամ։*

*— Ինչ ասեմ, լա՛ո,— ասաց հրողբերը,— որ ուզում ես՝ գնա՛։*

*Մհեր ելավ, հագավ իր զեստերն ու զենքերը, հեծավ Քուռկիկ Ջալալին, Սասնա ցոց ու պստիկին մնաս բարով ասաց, ընկավ ճանապարհ։*

*Շատ գնաց, քիչ գնաց, հասավ մի բարձր քարափի։ Մհեր ճամփի կեսեն ետ դարձողը չէր։ Բայց քարափը կտրել էր ճամփան։ Մեկել՝ քարափի տակով մի աղվես փախավ։ Մհեր ընկավ եռևեն, գնաց, գնաց, ելավ քարափի գլուխ։ Նայեց էս կողմ, նայեց էն կողմ, տեսավ հեռվում պսպղում էր Թագավորական մի քաղաք։ Ջիու գլուխը ջուռ տվեց էն կողմ։*

*Քշեց, հասավ առհաջին մի քարանձավի, նստեց, որ հանգստանա։ Մեկ էլ մի խոշոր եղնիկ, լեզուն դուրս հանած, վազում էր դեպի քարանձավ։ Մհեր նետաղեղով զարկեց. էդ եղնիկին սպանեց։ Էդ միջոցին մի խումբ ձիավոր վրա հասավ։ Հայհոյում էին, ասում.*

*— Էս ի՞նչ է, դու ո՞վ ես, որ սպանեցիր մեր Թագավորի որսը։*

*Մհեր մռնչաց ու վեր կացավ։ Ձիավորները երբ լսեցին Մհերի ձենը, երբ տեսան էնոր բերդ-կերպարանքը, իմացան, որ Սասնա Մհերն է, ձիերը ջուռ տվին, փախան։*

*Մհեր էնոնց եռևեն քշեց հասավ Բաղդադ, Պածիկ Թագավորի քաղաքը։ Ջիուց իջավ, քաղքի մոտ վրան զարկեց։ Լուր տարան Թագավորին, թե Սասնա Մհեր եկել վրան է զարկել քաղքի մոտ։*

*Պածիկ Թագավորն առավ իր վազիր-վաքիլը, իր համհարզը, եկավ Մհերի առաջ, ասաց.*

*— Բարո՛վ տեսանք, Մհե՛ր։*

*Ասաց.— Աստծու՛ բարին։*

*Ասաց.— Քո հերը երբ կռվում էր Մըսրա Մելիքի հետ, ես ու քո հերը ուխտ արինք։*

Ասաց.— Հաղա՛ր բարով։ Ի՞նչ ուխտ եք արել։

— Ուխտ ենք արել,— ասաց,— որ թե ինձ աղջիկ ծնվի, քո հորը՝ տղա, իմ աղջիկը տամ էնոր տղին. թե քո հորն աղջիկ ծնվի, ինձի՝ տղա, քո հերն իր աղջիկը տա իմ տղին։ Հիմա աստված քո հորը տղա է տվել, ինձ՝ աղջիկ։ Տեսնենք՝ դու իմ աղջկան կառնե՞ս։

— Որ հավնեցի՝ կառնեմ։ Աղջկադ անունն ի՞նչ է։

— Գոհար է։

Ելան գնացին Գոհարի տեսության։

Աղջիկ մի՛ ասի, մի հուր-հրեղեն հրեշտա՛կ ասա։ Գիշեր-ցերեկ չուտես, չխմես, մտիկ տաս էնոր երեսին։

Մհեր ու Գոհար իրար հավնեցին, խոսեցին, խոսկապ արին, Մհեր դարձավ եկավ իր վրանը։

Լուսուն Գոհար նայեց պատուհանեն, տեսավ Մհեր վրանի մեջ քնած է, ոտները մինչև չոքեր դուրս են մնացել։ Աղջկա սիրտը ցավեց. «Արևը չզարկի՞ Մհերին»։

Ասաց, ելավ հեծավ մի սև ձի, մարդանակ շորեր հագավ, քշեց գնաց վրանի մոտ, մարդանակ ձեն տվեց.

— Մհեր, էդ ո՞նց ես մեկնված, արևը քեզ կզարկի։

— Ինչ անեմ,— ասաց Մհեր,— վրանս պստիկ է։

— Վրանդ պստիկ չէ,— ծիծաղեց Գոհար։— Ինքդ ես երկար. ազնավուրի հասակ ունես։

— Հասակն աստված է տալիս։ Թո՛ղ քնեմ։

— Չեմ թողնի,— ասաց Գոհար։— Ես Պաճիկ Թագավորի տղան եմ. եկել եմ, քեզ փորձեմ։ Դու պետք է ինձ հետ կռիվ անես. դու հաղթեցիր, քուրս քեզ կտամ, ես հաղթեցի, վիզդ պիտի կտրեմ։

Մհեր զեստերը հագավ, ձին հեծավ, եկավ դուրս։

Գոհար դաշտում պատրաստ կանգնած էր արդեն։

Գնացին, եկան, իրար գուրզ նետեցին, իրարու գուրզ բռնեցին, իրար հաղթել չկարցան։ Մհեր գուրզը կամաց էր խփում, որ Գոհարի աղբորը չսպանի, Գոհար գուրզը կամաց էր խփում, որ իր նշանածին չսպանի։

Էսպես երկու ժամ կռվախաղ տալուց հետո Գոհար ասաց.

— Հերի՛ք է, Մհե՛ր, էս անասուններն սպանենք։ Վրա՛նդ գնա, հանգստացի՛ր։ Ես քեզ հաց կուղարկեմ։

Գնաց խորովեց մի ոչխար, մի տաշտ հաց, մի տիկ նռան գինու հետ մեկտեղ տվեց իր ծառաներուն, ասաց.

— Կտանեք Սասնա Մհերի վրանը։

Մհեր հաց կերավ, գինի խմեց, պառկեց քնեց մինչև լուս։

Լուսուն Գոհար հագավ կարմիր զեստեր, հեծավ կարմիր ձին։ Քշեց եկավ ու վրանի դռնեն ձեն տվեց.

— Էյ, Սասնա Մհեր դու՞ ես։

Մհեր ներսեն պատասխանեց.

— Առաջ հաց, ետև հարց։

Գոհար ծառաներուն հրամայեց, բերին երկու տաշտ հաց, մի խորոված երինջ, մի տակառ գինի։ Մհեր կերավ, խմեց, ասաց.

— Հա, Սասնա Մհեր ես եմ, որ կամ։

— Էնիկ, որ եկել է՝ իմ քուր Գոհարի հետ պսակվի, դու՞ ես։

— Հա, ես եմ, որ կամ։

— Ես,— ասաց Գոհար,— Պածիկ Թագավորի փոքր տղան եմ։ Եկ՝ պայման կապենք. թե որ դու տարար, իմ քուր Գոհարը քոնն է, լուսուն կառնես, կերթաս, թե ես տարա, վիզդ պիտի կտրեմ։

— Ի՞նչ է քո պայմանը,— հարցրեց Մհեր։

— Պայմանս էս է. դու քո մատնին կդնես էն քարի գլխին, նշան բռնենք, նետը միջով անց կացնենք։ Ով չկարցավ նետը մատնու միջով անց կացնի, տարված է։

Մհեր իր մատնիքը դրեց քարի գլխին։ Գոհար նետ-աղեղն առավ, զարկեց, նետն էնպես անց կացրեց, որ մատնին խսկի ժաժ էլ չեկավ։

Հերթը Մհերինն էր։ Էնիկ չոքեց, որ նշան բռնի. Գոհար եկավ կանգնեց աչքի առաջ։ Էնքան խորոտ էր, որ Մհեր մեկ աչքով նայեց աղջկան, մեկելով նշան բռնեց, նետն արձակեց ու մատնին տեղեն թռցրեց։ Չկարցավ նետը մատնու միջով անց կացնել։

Գոհար թուրը քաշեց, ասաց.

— Պայմանը պայման է. վիզդ պիտի կտրեմ։

— Քո հոր խելացի տղան դու՞ ես,— ասաց Մհեր։— Պայմանը դու ես խախտել։ Եկար կանգնեցիր աչքիս առաջ, ես էլ ասի. աղջիկը որ էսքան խորոտ է, քուրն ինչքան խորոտ կլինի։ Աչքս քո երեսին էր, իմ նետը ծուռ գնաց։ Բեր մատնին մեկ էլ իր տեղը դնենք։

Գոհար մատնին վերցրեց ու դրեց իր տեղը։ Մհեր նշան բռնեց, նետն անցկացրեց ուղիղ մատնու միջով։ Գոհար փառ-փառ ծիծաղեց. ասաց.

— Ապրե՛ս, Մհե՛ր, մկա դու արժանի ես Գոհար խաթունին։

Էնտեղ Մհեր գլխի ընկավ, որ էդիկ Թագավորի տղան չէր, աղջիկն էր, Գոհարն էր, որ կար։

Մեկել օր էնոնց պսակեցին։ Յոթ օր, յոթ գիշեր հարսնիք արին, ուրախացան։

Էն գիշեր, երբ որ Մհեր պառկեց Գոհարի մոտ, աղջիկը թուրն առավ, դրեց իր ու Մհերի միջև, ասաց.

— Մհե՛ր, Մըսրա Թագավորն իմ հորմեն հարկ է առնում, իմ ձեռքն էլ ուզում է հարկի տեղ։ Մըսրա Թագավորին որ հաղթես, իմ հորը հարկեն ազատես, նոր ես քեզ կնիկ, դու ինձ էրիկ։

— Հայ-հա՜յ, ասաց Մհեր,— էս աշխարհի կռվին ոչ վերջ կա, ոչ հաշիվ։ Աշխարհը ծուռ է շինած։

Լուսուն վեր կացավ, տեսավ, Մըսրա զորքը եկել, պատել է քաղքի չորս բոլոր։

Մհերը զեստերը հագավ, զենքերը կապեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց Մըսրա զորքի դեմ։ Ինչ որ մի սար տեղահան լիներ, քար ու թուփ առներ ոտքի տակ, էնպես էլ Մհեր Մըսրա զորքը տրորում, անցնում էր էս գլխեն էն գլուխ։

Կռվեց մինչև կեսօր։

Կեսօրին, Մհերն էլ մարդ էր, իջավ ձիուց, որ բնական պետքը հոգա։ Իր զենքերն

ու Թուր Կեծակին ձիու թամքին կապեց, ինքը հարյուր կանգուն հեռացավ։ Մըսրա զորքի սերասկյարը Կոզբադինի թոռն էր, էնիկ իր զորապետներուն ասաց.

— Ջանը՛մ, էդոր մեկա որ չհաղթենք, էլ ե՞րբ կհաղթենք։ Էդիկ Սասնա ծուռ Դավթի տղան է, որ նորեն ձի նստեց, կորած ենք։

Սերասկյարը նշան արեց, Մըսրա զորքերը հասան, լցվեցին Մհերի և իր ձիու միջև, երկաթե օղափոկեր նետեցին, կապկպեցին Մհերի ձեռն ու ոտը, տարան թագավորի մոտ։

— Թագավորն ապրած կենա,— ասին,— Սասնա Մհերի պատիժն ի՞նչ է։

Մըսրա թագավորն ասաց.

— Մհեր թագավորի ցեղ է, աստծուն հակառակ է էնոր միջը կտրելը։ Տանենք Մըսրը. թալենք էն քառսուն-գազանոց հորը. թո՛ղ էնտեղ մնա մինչև հուր-հավիտյան։ Մեկա դուք էնոր ձի՛ն բռնեք, ձի՛ն, էնոր Քուռկիկ Ջալալի՛ն որ ես հեծնեմ, Դոհար խաթունին թարքս առնեմ, տանեմ։

Է. Քուռկիկ Ջալալին կբռնվե՞ր։ Իր տիրոջ գերվելը երբ տեսավ, ծառս եղավ, ծովի պես ալեկոծվեց, փրփուր տվեց, աջ ու ձախ ղարկեց, հաշմեց կամ սպանեց հազար մարդ ու փախավ գնաց մինչև Սովասար։

Դոհար խաթունը պատուհանեն տեսավ Մըսրա զորքի ենենգությունը, Մհերի բռնվելը, սիրտը ցիրուցան եղավ, ասաց.

— Չէ, Մըսրա՛ թագավոր, դու ծոծրակդ կտեսնես, իմ երեսը չես տեսնի։

Դոհար խաթունը ելավ, մարդանակ հագնվեց, հեծավ իր սև ձին. բշեց, բարձրացավ սարերը, թաքնվեց իր հոր անառիկ բերդի մեջ։

Պաճիկ թագավորի աղջկան տաս օր փնտրեցին, ոչ մի տեղ չերևաց։

Մըսրա թագավորն իր հարկը հավաքեց, Մհերին շղթայակապ դրեց ուղտի վրա, տարավ Մըսրա քաղաք, թալեց քառսուն գազ հորը, ասաց.

— Թո՛ղ էս հորի մեջ մնա յոթ օր, յոթ օրեն ետ պիտի գանք. հորը քարկոծ անենք։ Թե չէ Մհեր որ դուրս եկավ, աշխարհը կավերի։

## 4. ՄՀԵՐՆ ՈՒՏՈՒՄ Է ԻՐ ՀՈԳԵՀԱՑԸ

Մըսրա քաղքի մեջ կար մի հայ պառավ։

Ուներ քառսուն էծ, մի աքլոր։

Էնիկ էն պառավն էր, որ Կոզբադինին ծաղր ու ծանակ արեց, երբ Կոզբադին արշավում էր Սասուն։

Էդ պառավը, երբ իմացավ Սասնա Մհերին բերել հորն են քցել, ասաց.

— Մեր Սասնա տան ճրագն էնտեղ անհաց, անջուր կմեռնի։ Ելնեմ, էնոր հաց ու ջուր տանեմ, աղջիկս էլ իջեցնեմ իր մոտ, որ Սասնա ցեղեն մի թոռ ունենամ։

Պառավն ամեն օր մի էծ էր մորթում, մի կապոց հացի հետ առնում տանում թալում էր հորը, որ Մհերն ուտեր։ Յոթ օրն անցավ։ Պառավը գիտեր, որ էդ օր Մհերին քարկոծ կանեն։ Կռացավ հորի բերնեն, ձեն տվեց.

— Մհե՛ր, էսօր կգան, որ քեզ քարկոծ անեն։ Քո վրա հալած արճիճ կլցնեն։ Դու մի՛ վախենա։ Էդ հորի կողքին կա ուրիշ մի հոր. տեղը մեկ ինձ է հայտնի, մեկ՝



աստծուն։ Առ էս խաչերկաթը, հորից աջ պատը ծակիր, դուռ բաց արա կողքից հորի մեջ։ Երկու փութ էլ անլվա բուրդ եմ բերել, որ դուռը խցկես։ Մըսրա թագավորի ծառաները երբ կգան, քեզ ձեն կտան. «Սասնա Մհեր, դու ո՞ղջ ես», դու կասես՝ «ողջ եմ» ու կանցնես կողքից հորը, դուռը բրդով կխցկես։

Պառավը էս խրատները տվեց ու գնաց։

Մի ժամ հետո Մըսրա թագավորի մարդիկ ձեն տվին.

— Սասնա ծուռ Մհեր՝ դու ո՞ղջ ես։

Մհեր հորի մեջեն մռնչաց.

— Աստծու առաջ ես ողջ եմ, իմ թշնամին՝ մեռած։

Ասաց, անցավ կողքի հորը, ծակը բրդով խցկեց։

Հորը քարկոծ արին, քարը լցվեց, բարձրացավ մինչև հորի պռունկները։ Բերին արճիճ հալեցին, լցրին քարերու վրա, արանքները բռնեց, քարերն իրար կպցրեց, ամրացավ, հորի բերանը գմռեց։

Մհեր կողքի հորում խանձահոտ առավ, ասաց.

— Հայ-հա՜յ, մաղ մնաց մնայի արձնի մեջ։ Մահ որ ունենայի, կմեռնեի. կվերջանայի։ Ես մահ չունեմ, արձնի մեջ պիտի տանջվեի հուր-հավիտյան։ Չէ, էս աշխարհը չար է։ Պետք է քանդվի, նորեն շինվի։

Անցավ քառսուն օր։ Պառավն իր քառսուն էծն էլ մորթել, բերել էր Մհերին։ Ծեր Մհեր պառավի վերջին էծն էլ կերավ, պրծավ, պառավը կռացավ հորին, ձեն տվեց.

— Մհե՛ր, քո սիրտը կնիկ չի՞ ուզում։

— Ինչո՞ւ ես հարցնում,— ասաց Մհեր։

— Մի աղջիկ ունեմ, ասում եմ՝ գա քո մոտ, որ Սասնա ցեղեն ես մի թոռ ունենամ։

Մհեր միտք արեց, ասաց.

— Գնա բե՛ր։

Պառավն իր աղջկան բերեց, պարանով իջեցրեց Մհերի մոտ։ Մհեր աչքի ծոթով էլ չնայեց աղջկա երեսին։ Մեկ-երկու ժամ հետո ասաց.

— Քու՛րս, մորդ ասա՛, թո՛ղ քեզ վեր քաշի։

— Մարե՛, ինձ վե՛ր քաշի։

Մհեր պարանը կապեց իր մեջքին, պառավը քաշեց, քաշեց ու տեսավ, շատ է ծանր։ Ոտները տալիս էր թմբերին, ճկռում էր, հևում էր, քաշում։ Մհեր բռնում էր էս քիվեն, էն փոսեն, ոտքերն ակռկացնում էր պատերուն, որ պառվի գործը հեշտացնի։ Պառավը հևալով քաշում էր ու մտածում. «Փառքդ շա՜տ լինի, աստվա՛ծ, աղջիկս նոր իջավ Մհերի մոտ, երկավոր է մնացել»։

Պառավը քաշեց, քաշեց, քաշեց, դուրս հանեց, տեսավ՝ իր աղջիկը չէ, ասաց.

— Մհե՛ր, դու ինձ խաբեցիր, իմ աղջկան թողիր հորի մեջ։ Ես քառսուն էծս մորթել եմ, քեզ պահել, որ անոթի չմեռնես ու դառնաս ինձ փեսա։ Է՞դ էր իմ արած լավության վարձը։

— Մարե՛,— ասաց Մհեր,— ես քեզմեն աղջիկ չեմ ուզել։ Ինքդ ես աղջիկդ բերել, իջեցրել հորը։ Բայց ես ապերախտություն չեմ անի։ Մեր ազգի մեջ էդ բանը չկա։— Պարանը կախեց հոր ու ձեն տվեց.— Աղջի՛, պարանը կապիր մեջքի՛դ— Աղջիկը պարանը կապեց իր մեջքին, Մհեր քաշեց վեր հանեց, ասաց.— Մարե՛, աղջիկդ իմ քույրն է, դու էլ իմ խանդութ խաթուն մերը։ Ես նշանած ունեմ, աչքը ճամփիս։ Դու քո արած լավությունն ինձ հալա՛լ արա։

Պառավը լաց եղավ, ասաց.

— Գնաս բարո՛վ, Մհե՛ր, դու մեր ազգի ճրագն ես, իմ հացը քեզ հալա՛լ։

Մհեր հոգնած էր, սրտում դառնություն կար, ասաց.

— Մարե՛, մկա ես ու՞ր գնամ։ Քաղաքն ինձ օտար, զենք չունեմ ձեռքիս, ձի չունեմ տակիս, անոթի, ծարավ ու՞ր գնամ։

— Մհե՛ր,— ասաց պառավը,— ես իմ քառսուն էծը մորթեցի, պրծա։ Արի՛ քեզ մի տուն տանեմ, քեզ կուշտ կուտացնեն, զենք էլ կտան, ձի էլ։

— Էդ ի՞նչ մարդիկ են, մարե՛։

Պառավը պատմեց։ Դու մի ասի՝ Մըսրա՝ քաղքի մեջ ապրում էին երկու հարյուր տուն հայեր։ Էնոնց մեջ կար մեկ ազգասեր իշխան՝ անունը Դարբին Մարկոս։ Էս իշխանը, իմանալով Մհերի կորուստը, իր տան մեջ էնոր հիշատակին հոգեհաց էր տալիս։ Սենյակի վերևում սարքել էր մի գահաթոռ, վրան դրել էր Սասնա տարազով սարքած զգեստներ ու զենքեր, ճաշասեղան էր բաց արել։ Էնտեղ եկողը կուշտ փորով հաց էր ուտում, գինի խմում, թասը ձեռին կանգնում էր գահաթոռի առաջ, երեք հեղ գլուխ էր տալիս, ասում էր. «Հանգի՛ստ քո հոգուն, մեր անմա՛հ Մհեր, մեր հայոց ազգի ճրա՛գ»։

Պառավը Մհերին տարավ մինչև Մարկոս իշխանի դուռը, ասաց.

— Էստեղ են տալիս քո հոգեհացը։

Մհեր ներս մտավ, տեսավ սեղանի մոտ նստած են մի խումբ հայեր, մեջները՝ և չորերով թավարեղ հսկա մի տղամարդ։ Էդիկ Դարբին Մարկոսն էր։ Մհեր գլուխ տվեց, ասաց.

— Բարև՛ ձեզ, հայե՛ր։

Մհերի ձենն էնքան զորեղ էր, որ առիքից հող թափվեց հատակին։ Մարկոս Դարբին պատասխանեց.

— Աստծու՛ բարին։ Ո՞վ ես։ Ի՞նչ մարդ ես։

— Անոթի ճամփորդ եմ,— ասաց Մհերը։— Ձեր հանգուցյալի հոգուն տվե՛ք ինձ փշուր մի հաց, ուտեմ ու ճամփովս գնամ։

Տանտերն իր ծառաներուն ասաց.

— Հաց, կերակուր, գինի՛ տվեք էս մարդուն։

Ծառաները մոտեցան Մհերին.

— Կտրի՛ճ, քեզ առաջ գինի՞ տանք, թե ճաշ։

— Գինի,— ասաց Մհերը։

Մատռվակն ահագին սափորը թաթխեց գինու տակառի մեջ, մեկնեց Մհերին։ Էսիկ սափորը գեն հրեց, ասաց.

— Սափորն ինչ է, որ մարդ կշտացնի։ Տվեք, ես տակառո՛վ խմեմ։

Ամենքը զարմացած իրար նայեցին։ Տանտերը ծառաներուն հրամայեց.

— Տվե՛ք։

Մհեր վաթսուն լտրանոց գինու տակառը կճուճի պես վերցրեց, բերնին դեմ արավ, մինչև տակը խմեց, պարապ տակառ գեն թալեց, ասաց.

— Հա՛ց բերեք, ուտեմ։

Բերին տապակած երինջի կեսը, մի պղինձ փլավ, մի տաշտ հաց ու դրին Մհերի առաջ։ Մհեր երինջի ոտը պոկեց, փաթթեց հինգ լավաշի մեջ. մսի հետ մեկտեղ ոսկորն էլ, խը՛ռ, խը՛ռ, խը՛ռ, ծամեց ու կուլ տվեց։

Տանտերը մտքի մեջ ասաց. «Էս մարդը կամ Սասնա ցեղեն է, կամ ուրիշ ազգ փահլևան, որ ոչ լսած կանք, ոչ տեսած»։

Մհեր, երբ կերել, կշտացել էր, ելավ նստեց իր գահաթոռի վրա։ Տանտերն ու մեկել հայերը համ վախեցան, համ էլ խիստ բարկացան, ասին.

— Էդ մեկը չեղավ, աղբե՛ր։ Դու տանակոխ արիր մեր սրբությունը։ Կերար, խմեցիր, խոնարհությու՛ն արա Սասնա գահին, ընա՛ քո ճամփան։

Մհեր ծիծաղեց, ասաց.

— Դրսում կանգնած է մի պառավ, կանչեք նե՛րս։

Պառավը ներս եկավ։ Մհեր Մարկոս իշխանին հարցրեց.

— Աղբե՛ր, էսոնք բոլորը մեր ազգի՞ն են, թե մեջները օտար կա։

— Օտարներ չկան,— պատասխանեց Մարկոս,— ասածդ ի՞նչ է։

Մհեր իր աղատարար պառավին կանչեց դահի մոտ, ասաց.

— Մայրե՛, էս պատմական հայերուն պատմիր, ով եմ ես, իմ գահաթոռի վրա նստելու իրավունք ունե՞մ, թե չունեմ։

Պառավը պատմեց եղելությունը։

Մրցա հայերու բերկրանքին չափ չկար։ Իրար ետևեն եկան, Մհերի առաջ խոնարհություն արին, ձեռն ու ոտը պագեցին, գոհանամք տվին աստծուն։

Էդոնք էստեղ թող ուրախանան, յոթ օր, յոթ գիշեր խնջույք տնեն, պատիվներ տան Մհերին. մենք համբավ բերենք Սասնա երկրին։

Քեռի Թորոս երազ տեսավ. Մըսրա բերդը կանգուն էր, Սասնա բերդը փուլ էր եկել։

Քեռի Թորոս վեր թռավ, ասաց.

— Կնի՛կ, վերցուտանիս դու՛րս քաշիր։ Մեր Մհեր կորած է։ Գնամ, գտնեմ կամ չգտնեմ։

Ապա կանչեց իր ցեղի փահլևաններուն.

— Ձենո՛վ Օհան,
Ցռա՛ն Վերգո,
Հոթոթ-Մոթո՛թ,
Ականջ Քոթոթ,
Հե՜յ, հո՛ր Սանասէ,
Հե՜յ, հո՛ր Կոռան
Ճնճղաթափորի՛կ,
Հուրան Թոռնի՛կ,
Ելե՛ք, Սասնա
Հասած է մարդ,
Ելե՛ք, եկ թա՛ռբ,
Մհեր կորել է,
Էր կորել է։

Եկան, պատրաստություն տեսան. Հաց-պանրաը վերցրին, բեռնեցին ձիերուն, հեծան. ընկան ճանապարհ, Բաղդադ, ո՞րտեղ ես, եկանք։

Եկան. վրաններ զարկեցին Բաղդադու մոտ։

Էս կողմ են հարցնում, էն կողմ են հարցնում, որ Մհերեն մի համբավ առնեն։

 Համբավ տվող չկա, որ չկա։ Ով էլ մի բան գիտե, ասում է.

— Վայլա՛, Մհերին տարել են Մըսրա քաղաք, հորն են քցել, քարկոծ արել։

Յոթ օր, յոթ գիշեր կերուխում անելուց ետ Մհեր Մըսրա հայերուն գոհություն ասաց ու բռնեց Բաղդադու ճամփան, դեպի Գոհար խաթունը։

Մըսրա քաղքին մեկ ժամվա երթ էր հեռացել, տեսավ, դիմացեն գալիս է հայտնի գիժ փահլևան Ավդալը, մազերն աչքերու վրա թողած, շորերը մաշված, մի մեծ քար շալակին։

— Ավդա՛լ,— հարցրեց Մհեր,— էդ ի՞նչ քար է։

Ավդալ կանգ առավ։

— Էսիկ Սասնա Մհերի քարն է։ Լսեցի, Մհերին բռնել, քցել են հորը, քարկոծ են արել։ Ես էնտեղ չեմ եղել, որ քար մ՚էլ ինքս քցեի։ Մկա էս քարը տանում եմ՝ քցեմ ծուռ Մհերի վրա, վրեժս առնեմ։ Մհեր իմ թշնամին է։ Էնոր հերը Սասնա կռվին իմ հորն է սպանել, ինքն էլ Բաղդադու կռվին իմ աղբորն է սպանել։ Բա՞։

Մհեր ծիծաղեց.

— Ավդա՛լ, վայլա՛, էդ քարը Մհերին համար չի գա։ Քե՛զ է համար։

Ավդալի շալկեն քարն առավ, էնոր վիզը կտրեց, փոս փորեց. Ավդալին թաղեց, քարը վրան դրեց, ասաց. «Տեսա՞ր, ինչ համար էր։

Էդուց ետև Ավդալի շորերը հագավ, Ավդալի պես մազերն իջեցրեց աչքերուն, գնաց, մտավ Մըսրա զորքի մեջ։ Էս ու էն կողմեն հարցրին.

— Ավդա՛լ, քաղքեն ի՞նչ համբավ կա։

Մհեր Ավդալի նման ծռանակ ծիծաղեց, ասաց.

— Առաջ հաց, ետև հարց։

Հաց բերին։ Մհեր մի վաշտի բաժին կերավ, ասաց.

— Հացն ու գինին, տեր կենդանին. էս ձեռովս քար եմ քցել Մհերի գլխուն։ Մհերին քարկոծ ենք արել, Մհեր չկա։

— Ապրե՛ս, Ավդա՛լ,— ուրախացան Մըսրա զորապետները։— Մկա ու՞ր ես գնում։

— Գնում եմ,— ասաց,— Գոհար խաթունին առնեմ, բերեմ ինձ կնիկ։

Զորականները փառ-փառ ծիծաղեցին։ Իրենք էին գնում, Գոհարին բերեն Մըսրա թագավորի համար, բայց գիտեին, որ Ավդալ ծուռ է, էնոր ասածը բանի տեղ չէին դնում։

Մհեր Մըսրա զորքին կաց բարև ասաց, քշեց գնաց Բաղդադ, կանգ առավ պալատի առաջ։

Գոհար, սև շորերը հագին, դուշը երեսեն բաղված, նստած էր պատուհան, միտք էր անում։ Ավդալին ճանաչեց, ասաց.

— Ավդա՛լ, քո աստծու սիրուն, պատմի՛ր, ի՞նչ համբավ ունես Մհերեն։

Մհեր ձենը փոխեց, ասաց.

— Առաջ հաց, ետև հարց։

Գոհար Ավդալին վերև կանչեց, հրամայեց հաց բերեն։ Երբ Ավդալ հաց կերավ, պրծավ, Գոհար աղաչեց.

— Պատմի՛ր, Ավդա՛լ։

— Հացն ու գինին, տեր կենդանին,— Ավդալի նման ծռանակ ասաց Մհեր.— էս ձեռովս հաց եմ դրել Մհերի բերան, եկել եմ, քեզ ականջկլա տամ։

Գոհարն ուրախությունեն ճչաց.

— Բա ո՞րտեղ է մկա։ Ինչու՞ չի գալիս։

— Շուտով, շուտով,— փառ-փառ ծիծաղեց Մհեր,— հաշվի՛ր, թե Մհեր կանգնած է քո առաջ։

Ուրախությունեն Գոհարի ծնկները թուլացան. ընկավ թախտի վրա, Մհեր մազ էր մնում բռնա. «Գոհար, չե՞ս ճանաչում», բայց մտքում ասաց. «Գնամ, տեսնեմ, Քեռի Թորոս ու մեր սասնեցիք ի՞նչ են անում»։

## 5. ՄՀԵՐ ԿԵՂԾ ԿԱՇԻՆ ԹԱԼԵՑ

Մհեր Բաղդադու միջով անցնելուս իմացել էր, որ Քեռի Թորոս իր Սասնա ծռերով եկել է Բաղդադ, իրեն է հարցնում։

Կեղծ Ավդալը Գոհարի մոտեն դուրս եկավ, գնաց ուղիղ Քեռի Թորոսի վրանը։ Ներս մտավ, տեսավ, սասնեցիք էլ, Դարբին Մարկոսի նման, վրանի մեջ դահաթոռ են դրել, սուփրա են բաց արել։ Մհերի հոգեհացն են տալիս։ Քեռի Թորոս թափառ փահլևանին երբ տեսավ, ասաց.

— Ավդա՛լ, քո աստծու՛ սիրուն, ասա, ի՞նչ համբավ ունես Մհերեն։

Էսօր էլ խոսք է դարձել. մեկը երբ գալիս է հեռվեն, հարցնում ենք. «Ավդալ, քաղքեն ի՞նչ համբավ ունես»։ Մհեր ասաց.

— Առաջ հաց, նոր հարց։

Մհեր Գոհարի մոտ հաց էր կերել, բայց անոթի էր։ Մհերի տունը չքանդվի, էնոր կշտանա՞լ կար։ Մարդ հո չէր, ամբոդ էր։

Սասնեցիք հաց ու գինի դրին կեղծ Ավդալի առաջ։ Կերավ, խմեց, ավդալանակ ասաց.

— Հացն ու գինին, տեր կենդանին, էս ձեռովս բրդուճ եմ դրել Մհերի բերանը, եկել եմ էստեղ։

Սասնեցիք ընկան մտածմունքի մեջ, հավատա՞ն, թե չհավատան։ Ցռան Վերգոն բարկացավ.

— Սուտ ես ասում։

— Սուտը Ցռան Վերգոն կասի,— ասաց Մհեր։— Մկա մի բան կանեմ, կհավատաք, որ Մհեր կենդանի է։

— Ի՞նչ պիտի անես,— հարցրին ամեն կողմեն։

— Քեռի Թորոս,— ասաց,— մարդ կարնա՞ մեկ շնչով էս մի պղինձ գինին խմել։

Քեռի Թորոս խոր հոգոց հանեց։

— Ա՜խ,— ասաց,— Ավդա՛լ, էս պղնձով գինի մեկ Մեծ Մհեր խմեց, մե՛կ Դավիթ խմեց, Փոքր Մհերի խմելու հերթը նոր էր եկել, աչքերս կուրանան, Փոքր Մհեր չկա։

Կեղծ Ավդալ ասաց.

— Քեռի՛ Թորոս, քո Մհերի սիրուն, էդ պղինձը բերնե-բերան գինի լցնես, տաս խմեմ, որ սիրտս հովանա։

Որ ասաց. «Մհերի սիրուն», Քեռի Թորոս պղինձը բերնե-բերան գինի լցրեց,

ասաց.— Խմի՛ր։— Մհեր պղինձը դրեց բերնին, խմեց, խմեց, խմեց, պղինձը պարպեց ու թալեց գետին, ոտքը ծակվեց։

— Վալլա՛, խմեց,— ասին սասունցիք։

Մհեր ելավ նստեց իր գահաթոռի վրա։

— Է՛յ, է՛յ, է՛յ,— Վերգոն բռռաց ու մի ապտակ զարկեց Մհերին,— էդ քո տեղը չէ։

Մհեր բռնկավ, ձեռ թալեց Վերգոյին, պառկեցրեց գետին, բռնեց մեկելներուն— Պարոն Թոռնիկին, Ճնճղափորիկին, Խոր Մանուկին, Խոր Գուսանին, Քոթոթ-Մոթոթին, Անուշ Ձոթոթին, Ձենով Օհանին դրեց մեկմեկու վրա, Քեռի Թորոսին էլ դրեց ամենուց վերև, բարձակույտ արեց, ասաց.

— Մկա տեսա՞ք, Սասնա Մհերի տեղը որն է։

Յոան Վերգոն բարձակույտի տակեն ասաց.

— Թե որ դու Սասնա Մհերն ես, ասա՛. Սասնա երկրեն ի՞նչ գիտես։

— Ես էն գիտեմ,— պատասխանեց,— որ դու ես եղել մորս՝ Խանդութ խաթունի մունջան ոստանա։ Դու մորս մի անպատիվ խոսք ես ասել, մերս իրեն ցած է նետել բերդի գլխեն, իրեն սպանել է։ Մկա դու Սասնա տան համբավն իմացա՞ր։

Յոան Վերգոն անու վարտիքը լավոթեց։

Քեռի Թորոս, Ձենով Օհան, բարձակույտեն վար թռան, Մհերին իրենց գիրկն առան. երեսը պագեցին, լաց եղան, ասին.

— Վա՜յ, Մհե՛ր, գլխեդ-արևու՛դ մեռնենք, էս դու՞ էս։ Աչքներս կուրանա, էդ ի՞նչ օրի ես ընկել, որ քեզի չճանաչեցինք։

Էստեղ ամենքն էլ մեկ-մեկ մոտեցան, Մհերի երեսը պագեցին, իրենց կարոտն առան։

Երբ իրարմեն կարոտն առան, պրծան, Մհեր ասաց.

— Քեռի՛ Թորոս, ու՞ր է իմ Քուռկիկ Ջալալին։

— Քուռկիկ Ջալալի՞ն,— ասաց Քեռի Թորոս.— Փախել բարձրացել է Ծովասար։ Ինչ արինք. չարինք, չթողեց իրեն մարդ մոտենա։ Ըրկած է, զարկում, սպանում է մոտ գնացողին։

Մհեր թաշկինակը ծոցեն հանեց, ասաց.

— Էսիկ իմ թաշկինակն է, իմ քրտինքը վրան։ Տարե՛ք Ծովասար, հեռվեն ցու՛յց տվեք իմ ձիուն, էնիկ իմ հոտը կառնի, ինքնիրեն վազելով կգա։

Խոր Մանուկ ու Ճնճղափորիկ Մհերի թաշկինակն առան, ձիերը հեծան, քշեցին գնացին Ծովասար։ Երեք օր անց եկան, Քուռկիկ Ջալալին իրենց հետ։ Մհերի զենքերն ու Թուր Կեծակին, ինչպես որ կապած կային, էնպես էլ մնացել էին թամբի վրա։

Մհեր Քեռի Թորոսի մրանում լողացավ, սափրվեց, զենքերը հագավ, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց, գնաց Գոհարի մոտ։

Գոհար նստել էր պատուհան, ձեռքը ճակատին հով էր արել, Մհերի ճամփին էր նայում։

Մհեր Թուր Կեծակին բռնեց արևի դեմ, թրի փայլը դիպավ Գոհարի աչքին, Գոհար գլուխը բարձրացրեց, կանչեց.

— Վա՜յ, Մհե՛ր, արևուդ մեռնեմ, էդ դու՞ ես։

— Վալլա՛, ես եմ։

Ձիուց իջավ, թռավ, բարձրացավ Գոհարի սենյակը, ամուր գրկից Գոհարին ու կեսօրվանից մինչև հրագվառոց պագում էր ճակատը, աչքերը, երեսը, պռոշները, վիզը, ձեռները, ոտները։ Պագում էր ու չէր կշտանում, պագում էր ու չէր կշտանում։ Գոհար նվաղել էր։ Երբ ուշքի եկավ, ասաց.

— Փառքդ շա՛տ լինի, աստվա՛ծ։ Ավգալ ասում էր, չէի հավատում։

— Ավգալ ի՞նչ էր ասում։

— Ասում էր Մհեր ողջ է։

— Ավգալ եկել էր քո մո՞տ։

— Հա, եկել էր։

— Դու օտար մա՞րդ ես առել քո սենյակ։ Ասում էին կինը հում կաթնակեր է, չէի հավատում։

Գոհար լալակթնեց.

— Մհե՛ր, արևու՛դ մեռնեմ, ես ուզում էի քեզմեն մեկ համբավ իմանալ։

Մհեր էնքան զորեղ ծիծաղեց, որ սենյակի ջահերն իրար դիպան, ղնգացին։ Պատմեց իր ու Ավգալի միջև անցածը։ Էստեղ Գոհարն անկեղծ ըղկավ, ասաց.

— Ամո՛թ քեզ, Մհե՛ր։ Մարդ իր սիրած կնկան կխաբե՞ր, էդքան էլ անխի՞ղճ։

— Ես քեզ փորձեցի,— ասաց Մհեր։— Ինչպես որ դու ինձ փորձեցիր էն ժամանակ, մի՞տդ է, մկա էլ ես քեզ փորձեցի։ Տեսա, դու սիրուդ մեջ պինդ ես, Գոհար, հավատարիմ ես, ինչպես իմ Թուր Կեծակին։

Գոհար նորեն փաթաթվեց իր էրկանը, ասաց.

— Մհե՛ր, դու բարո՛վ եկար։ Դու հազա՛ր բարով եկար։ Չէի հավատում, որ աչքս մեկ էլ կառնի քո երեսին։ Չէ՞ որ ես քեզ տեսա ողջ և առողջ, մկա թո՛ղ աստված իմ հոգին առնի։

Մըսրա սերասկերը երբ իմացավ Մհեր փախեր է Մըսրա գերութենեն ու նորեն հեծել է Քուռկիկ Ջալալին, սուսուփուս կես ճամփին իր զորքը դարձրեց, գնաց Մըսըր։

Քեռի Թորոս եկավ Պաճիկ թագավորի մոտ, ասաց.

— Թագավո՛րն ապրած կենա, ես լոռ շինող չեմ, որ եկել եմ, լոռ ծախեմ։ Տուր իմ հարսի ինչ կա-չկան, առնեմ տանեմ Սասուն։

Մհեր մեջ մտավ, ասաց.

— Չէ, Քեռի Թորոս, ես չեմ գա Սասուն։

— Ինչու՞ չես գա, լա՛ո,— ասաց Քեռի Թորոս։— Քո հոր տեղը թափուր է։ Արի՝ քո հոր տեղը բռնի։

— Չէ,— ասաց Մհեր։— Իմ հերն ինձ անիծել է, իմ հարազատ հորեղբայրն իմ մորը անպատիվ խոսք է ասել ու սպանել է։ Ես մահ չունեմ, ժառանգ չունեմ։ Աշխարհը ծուռ է շինած։ Մինչև աշխարհը չքանդվի ու նորեն շինվի, ես չեմ գա Սասուն։

Սասնեցիք վեր կացան, կես լալով, կես խնդալով գնացին իրենց երկիրը։



Պաճիկ թագավորը ծեր էր, մեկ տարի անց մեռավ, Մհեր նստեց էնոր թախտին։

## 6. ԿՈԶԲԱԴՆՈՒ ԹՈՌՆԵՐԸ

Ժամանակ անցավ։

Կոզբադնու թոռները երբ լսեցին, որ Սասուն անտեր է մնացել, զորք վերցրին, եկան, որ իրենց պապի վրեժն առնեն։

Ձենով Օհան թուղթ ուղարկեց Մհերին։

Թղթում գրած էր.

«Մհե՛ր, Կոզբադնու թոռները կոտրիճ են կտրել, եկել են Սասնա տան վրա, հարկ են ուզում, հարս ու աղջիկ են տանում, արուն-ավերանք անում։ Քեռի Թորոս մեռել է, հորեղբայր Վերգոն ինքդ գիտես ինչ է, ես մենակ եմ, հալվոր եմ, չեմ կարնա Սասուն պաշտպանել։ Էս թուղթն առնելու պես, կգաս, կհասնես»։

Մհեր էս թուղթը կարդաց, ասաց Գոհարին.

— Կնի՛կ, ես կերթամ Սասուն։ Իմ գուրզը դնում եմ դռան մոտ, փահլևանները կասեն. Մհեր տանը քնած է, գուրզը դրել է դռանը, չեն իշխենա քեզ նեղեն։

Մհեր Գոհար խաթունին կաց բարով ասաց, գեստերը հագավ, զենքերը կապեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց հասավ Սասուն։

Իրիկուն էր։ Ձենով Օհան դուռը փակել էր, մտել ներս։ Քաղաքը սարսափի տակ էր։ Մարդ-մուրդ չկար մեյդանում։ Մհերի սիրտը փուլ եկավ, կանչեց.

— Հերահո՛ռ հորեղբեր, արթնացի՛ր,
Եկել է Մհեր, արթնացի՛ր.
Հոգնած եմ, հոգնած է իմ ձին,
Թո անուշ քնեն արթնացի՛ր։

Հորեղբերը ձենն առավ, կես- քուն կես-արթուն ասաց.

— Կնի՛կ, մի քաղցր ձեն դիպավ իմ ականջին, ես անուշ քնես արթնացա։

— Քնի՛ր, ա՛յ մարդ,— ասաց կնիկը։— Սասնա դարպասները փակել ես, դուռդ կողպել ես, մտել ներս, էլի՞ կվախենաս։

Ձենով Օհան ասաց.

— Ինչու՞ չվախենամ։ Հալվորցել եմ, մեր թշնամին մոտ է, մեր պաշտպանը հեռու։

Մհերը տեսավ, դուռը չեն բացում, եկավ բարձրացավ կտուր, երդիքեն էլի կանչեց.

— Հորահո՛ռ հորեղբեր, դուռը բա՛ց,
Իմ տունը թողել եմ հեռու,
Իմ տանը գուրզըս պահ տված,
Եկել եմ Սասուն՝ կռվելու.
Հորահո՛ռ հորեղբեր, դուռը բա՛ց։

Ձենով Օհան վեր թռավ, հասավ դուռը բաց արեց։ Մհեր էնոր ձեռը պագեց, էնիկ Մհերի գլուխը պագեց, ասաց.

— Մհե՛ր, բարո՛վ ես եկել։ Տունդ ո՞նց ես թողել։

— Տունս պահ եմ տվել գուրզիս։

Ձենով Օհան զարմացավ։

— Դու որ չլինեա,— ասաց,— գուրզդ ի՞նչ ուժ կունենա։

— Գուրզս որ տեսնեն դռան մոտ, կասեն Մհեր տանն է, չեն իշխենա քշեն տան վրա։

— Գուրզիդ նշանն ի՞նչ է։

— Գուրզիս գլխին ջավահիր քար է քաշած։ Արևը դիպնի, լուս կտա, թշնամին չի մոտենա իմ շեմքին։ Իրիկուն մոմ կվառեն, ջավահիրն էլի լուս կտա, կասեն՝ տանն է Մհեր։

Ձենով Օհան ուրախացավ, ասաց.

— Մհե՛ր, դու հազա՛ր բարով եկար։ Սասուն մնացել է անտեր։ Դու եկար, տիրությու՛ն արա, քո հոր տեղը բռնի՛ր։

— Քեզ ո՞վ է նեղություն տալիս, հրողբե՛ր։

— Կոզբադնու թոռներն են,— ասաց հրողբերը։— Չորս հոգի են, չորսն էլ գազան։

— Լուսուն կերթամ, չորսին էլ կբռնեմ,— ասաց Մհեր։— Սպանե՞մ, թե ողջ-ողջ բերեմ։

Ձենով Օհան ասաց.

— Ուզում ես դու՛ սպանիր, ուզում ես բե՛ր, սասնեցիք պատժեն, սրտները հովանա։

Լուսուն Մհեր քշեց գնաց Լերա դաշտ։

Հեռվեն տեսավ, Կոզբադնու թոռներն էնտեղ վրան են զարկել։ Մհեր սրտում ասաց. «Էսոնք ի՞նչ կուզեն մեր աշխարհեն. ինչու՞ չեն թողնում, որ մարդ հանգիստ վարուցանք անի, իր հացն ուտի»...

Կոզբադնու թոռները տեսան, Մհեր գալիս է, նշան բռնեցին, մի նետ եկավ խըրվեց Քուռկիկ Ջալալու ոտը։ Մհեր Թուր Կեծակին զարկեց, նետի կեսը կտրեց, կեսը մնաց վերքի մեջ։

Կռիվը կարճ եղավ։ Մհեր Կոզբադնու չորս թոռանն էլ բռնեց, բերավ քաղաք։

Քուռկիկ Ջալալին թեթև կաղում էր։

— Էդ ի՞նչ է եղել քո ձիուն,— հարցրեց հրողբերը։

— Ոտքի մեջ նետ է խրվել,— ասաց Մհեր։

Ձենով Օհան ձիու վարպետ վիրաբույժ էր։ Եկավ, նետը ձիու ոտեն դուրս քաշեց, հակինթ ու զմրուխտ հալեց, լցրեց վերքի մեջ, ոտքը ծրեց, առավել աղեկ եղավ, քան առաջ էր։

Մհեր Կոզբադնու թոռներուն բերեց, բևեռեց քաղքի դարպասին, երկուսին էս կողմ, երկուսին՝ էն կողմ, որ Սասնա թշնամիները տեսնեն, խելոքանան, էլ մոտիկ չգան Սասնա սարերուն։

Մհեր քառասուն օր մնաց հրողբոր տանը, հանգստացավ, հայրենիքեն իր կարոտն առավ, ապա հեծավ Քուռկիկ Ջալալին, ճանապարհ ընկավ դեպի Գոհար խաթունը։

Շատ գնաց, քիչ գնաց, հանդիպեց քառասուն փահլևանի։ Էդոնք ձիու տեղ ուղտ էին հեծնում։ Բարև տվեց, բարև առավ, ասաց.

— Ի՞նչ երկրացի եք։ Ինչու՞ եք նեղացել։

Փահլևանները առ քաշեցին, ասին.

— Մենք,— ասին,— Հալաբա թագավորի տղաներն ենք։ Մի պառավ քուր ունենք, մեր հոր թախտը զավթել է, մեզ երկրեն դուրս է քշել, որ ինքը թագավորություն անի։

— Յա՞,— զարմացավ Մհերը,— էդ ի՞նչ քուր է, որ աղբերներուն զրկել է թախտեն, ինքն է նստել թագավոր։ Գնանք, տեսնեմ՝ էդ ինչ քուր է։

— Թե որ կհարցնես,— ասին փալևանները,— մեր քուրը մարդակեր է։ Ինչ մորեն էլավ, մարդու միս էր ուտում։ Մեր հորը կերավ, մեր մորը կերավ, քաղքի բոլոր ջոջերուն կերավ, մենք փախանք սրծանք։

Մհեր զարմացավ, ասաց.

— էս ի՛նչ անօրեն աշխարհ է։ Մարդը մարդ է ուտում։ Գնանք, ես էդ մարդակերին պետք է սպանեմ։

Փահլևան եղբայրները շատ ուրախացան, ասին.

— Դու մեր ջոջ աղբերն ես։ Քառասուն աղբեր ենք, թո՛ղ քառասունմեկ լինենք։

Մհեր քառասուն աղբոր գլուխն անցավ, գնաց Հալաբա քաղաք։ Մարդակեր պառավը էնոնց առաջ եկավ, ուրախացավ, ատամներն իրար զարկեց, ասաց.

— Ու՜ուխխխ... ի՛նչ առատ որս է գալիս։ Քառասունմեկ օրվա կերակուր։

Մհեր թրի մեկ զարկով պառավի գլուխը թռցրեց։ Մարդակերը գետին ընկնելիս էնքան զորեղ մի թրըմփոց հանեց, որ քաղքի նկուղներու մեջ թաքնված մարդիկ իրար աչքալուս տվին, դուրս եկան, շարվեցին Մհերի չորս բոլոր, գոհանամք ասին, օրհնեցին։

Թագավորի տղաները Մհերի ոտներն ընկան, էնոր ձեռները պագեցին, ասին.

— Մենք զորություն չունեինք էդ անկուշտ մարդակերի վրա։ Դու որ էդ վիշապին սպանեցիր, մեզ էնոր ձեռնեն ազատեցիր, ա՛ռ մեր երկրի թագավորությունը, դու մեզ թագավոր, մենք՝ հպատակ։ Երդում կուտենք, որ քեզ կծառայենք մինչև օր մահվան։

Մհեր մարդակերի ատլասե հագուստի վրա մաքրեց իր Թուր Կեծակին, ասաց.

— Չէ՛, աղբեր, ես բան չեմ ուզում ձեզնե, ոչ գանձ, ոչ էլ թագավորություն։ Ես Սասնա Մհերն եմ, Սասնա Դավթի որդին։ Ես մահ չունեմ, ժառանգ չունեմ, չեմ կարնա մի տեղ նստել։

Մհեր ձին քշեց հասավ Ջզիրու քաղաք։

էդ քաղքի միջով անցնում էր մի գետ, անունը Ջզիրու Շատ։ Հարուր քառասուն գետ խառնվում էին Ջզիրու Շատին։ էս գետը չուտ-չուտ ափերեն դուրս էր գալիս, քաղաքը հեղեղում, քարուքանդ անում։

Մհեր հայոց գրյանքի մեջ կարդացեր էր. «Լավություն արա՛, քցի՛ր. թող ջուրը տանի»։ Երբ Ջզիրու քաղքի աղետն իմացավ, ելավ բարձրացավ սար, էնտեղեն հսկա մի ապառաժ ուսին դրած բերեց, քցեց քաղքի եոն, գետի մեջ։ Գետը եղավ երկու ճյուղ, մեկ ճյուղը քաղքի էս կողմեն գնաց, մեկ ճյուղը՝ էն կողմեն։ Քաղաքը մնաց երկու թևի միջև, էլ չէր հեղեղվում։

Մհեր էդ ապառաժի վրա մի բերդ էլ շինեց, անունը դրեց Բրջա-Բալար. ասել է՝ խառուտիկ աշտարակ։ էդ բերդը մինչև էսօր էլ կանգնած է անսասան։ 

Մհեր յոթ տարի ման եկավ աշխարհի վրա, յոթ մարդակեր դև սպանեց, յոթ երկիր ազատեց, յոթ բերդ շինեց, վերջում կարոտեց իր Գոհար խաթունին, քշեց գնաց իր թագավորության քաղաքը։

Գուրզը, ինչպես որ դրել էր դռան մոտ, էնպես էլ կար։

Ներս մտավ, տեսավ Գոհար թախտի վրա մեռել է, ձեռքի մեջ մի թուղթ։

Մհեր չորեչոք մնացավ, թուղթն առավ կարդաց։ Գոհար գրել էր.

«Մհեր, ես քո կարոտն մեռա։ Երբ գաս, ինձի տեսնես, լսիր աղաչանքիս. ինձի տար Սասու՛ն, թաղի՛ր Խանդութ խաթունի մոտ»։

Մհեր եկավ, Գոհարի մարմինը կապեց իր ձիու գավակին, բերավ Սասուն, յոթ օր սուգ արեց, Խանդութ խաթունի մոտ գերեզման փորեց, Գոհարին թաղեց էնտեղ։

Ապա եկավ, քառասուն պատարագ անել տվեց իր Սասնա տան մեռելներուն՝ Սանասարի, Բաղդասարի, Ծովինարի, Մեծ Մհերի, Արմաղանի, Դավթի, Խանդութ խաթունի, Քեռի Թորոսի ու մեկելներու հոգուն։

Անցավ մի ժամանակ։

Մհեր սգեն դուրս եկավ։ Չէր ուզում դառնալ, գնալ իր թագավորության քաղաքը։

Երբ Գոհար չկա, ի՞նչ թագավորություն, ի՞նչ կյանք։

Թուղթ գրեց Պածիկ թագավորի որդուն, ասաց.

«Ես էլ չեմ գա։ Ի՛նքդ նստիր թագավոր»։

Մհեր մի առ ժամանակ ապրում էր հորեղբոր տանը։

Սառյա խանումը հասակն առել էր, բայց աշխարհեն չէր կշտացել։ Էնիկ մնացել էր Դավթի սիրուն կարոտ։ Մհեր Դավթի որդին էր, հոր պնչեն թափած։

Մի օր լուսուն Սառյան Ձենով Օհանին ճամփեց որսի, ինքը եկավ Մհերի սենյակ, ասաց.

— Մհե՛ր, դու Գոհար խաթունեն տղա չունեցա՞ր։

— Չէ, հորեղբո՛ր կին,— հոգոց հանեց Մհեր։— Իմ հերն ինձ անիծել է, որ ոչ մահ ունենամ, ոչ էլ ժառանգ։

— Է, Մհե՛ր,— ասաց,— էդիկ սուտ խոսք է։ Դու ժառանգ որ չունեցար, պատճառը Գոհարի մեջ էր։ Եկ՝ ինձ հետ պառկի՛ր, ես քեզ համար բերեմ քո նման խորոտ մի փահլևան։

Մհեր բորբկավ, ասաց.

— Հորեղբո՛ր կին, դու ո՞նց էդ պղծությունը մտքովդ անց կացրիր։ Դու իմ ջոջ մամու տեղն ես, իմ մոր տեղն ես։ Մկա մի գոմր ղարկեմ, գնաս անդունդ, հորեղբորս կասի՝ Մհեր իմ կնկան սպանեց։ Գնա քո սենյակը, մեկ էլ էդ մտքով չգա՛ս ինձ մոտ։

Մհեր վեր կացավ, նետ-աղեղ առավ, գնաց Որսասար։

Սառյան դարձավ եկավ իր սենյակը, շորերը վրան պատառեց, երեսը ճանկռեց, արնոտեց, նստեց էնտեղ։

Իրիկուն Ձենով Օհան որսեն եկավ, ասաց.

— Էդ ի՞նչ է եղել, կնի՛կ։ Ինչու՞ չես վեր կենում, որսը իմ ձեռնեն առնես։

Կնիկը ձեն չհանեց։

— Այ կնիկ,— ասաց Օհան,— ինչու՞ ձեն չես հանում։

Սառյա խանումը լաց եղավ, ասաց.

— Կամ քո թոռը կմնա էս տան մեջ, կամ ես։

— Ինչու՞, ա՛յ կնիկ։

— Քո թոռն ինձի ձեռ թալեց, հագուստս պատռեց, երեսս արնոտեց, հազիվ փախա, պրծա իր ձեռնեն։

Ձենով Օհան ոտը գետին զարկեց, ասաց.

— Կնի՛կ, որ ջոջության առակ մի՛ անի։ Դու սուտ ես ասում։ էդ ի՞նչ հնարեցիր։ Մհեր էդ բանը կանե՞ր։

Սառյան մազերը փետտեց, բոռաց.

— Որ չես հավատում, քո բանն է։ Ես քեզ ասում եմ. կամ ես կմնամ էս տան մեջ, կամ քո Մհեր։

Ձենով Օհան ասաց.

— Կնի՛կ, դու ես, քո աստված, էդ բանը մի՛ բեր իմ գլուխ, իմ թոռն իմ ձեռքեն մի՛ հանիր։ Տեսնում ես, որ Սասնա տնեն էդ մի գառն է մնացել, Սասնա խոյերու քոքը մի՛ կտրիր։ Ափսոս է, Սասնա խոյն ընկնի դռնեդուռ, Սասուն մնա անտեր։

— Որ էդպես է,— Սառյան վեր կացավ, իր հագուստը հավաքեց,— ես կելնեմ կերթամ հորս երկիր, դու քո Սասնա խոյը պահի՛ր քեզ համար։

Ձենով Օհան խեղճացավ, ասաց.

— Կեցի՛ր, ա՛յ կնիկ։ Չի լինի։ Հայու օրենքով պսակված կնիկ թողնել չկա։ Ես Աղնանց գերդաստանի ջոջն եմ, հալվոր մարդ եմ, ամոթով կմնամ աշխարհի առաջ... Դու քո աստված. վեր կա՛ց՝ դուռը շինի՛ր, Մհե՛ր թող տուն չգա։

Իրիկուն Մհեր որսեն եկավ, տեսավ դուռը շինել են, ձեն տվեց.

— Հրողբեր, ինչու՞ եք դուռը շինել վրաս։

Պատասխան չեղավ։ Մհեր լաց եղավ, ասաց.

— Հերահո՛ր հրողբեր, դուռը բա՛ց արա,
Հեր չունեմ, դու ինձ հերությո՛ւն արա,
Տուն չունեմ արար աշխարհի վրա,
Հերահո՛ր հրողբեր, դուռը բա՛ց արա։

Ձենով Օհանի սիրտը լցվեց։ Ելավ կանգնեց՝ պարսպի վրա, ասաց.

— Լա՛ո,— ասաց,— էն բանը, որ դու ես բռնել, մեր ազգի մեջ մեկն էլ չկա բռնած։ Մեր ազգը էդ արարքին սովոր չի։ Որտեղեն որ եկել ես, էնտեղ էլ գնա՛։

Մհեր բանը կռահեց, սիրտը լցվեց, արուն-արցունք թափեց, ասաց.

— Ախ, հերահո՛ր հրողբեր, հերահոր հրողբեր,
Դու էդ ինչ էր, արիր, հոգիդ մի՛ող բեր.
Թե ես էդ գործի մեջ մեղավոր լինեմ,
Ջույգ աչքով կուրանամ, արև չտեսնեմ.
Քո կնիկն ինձ համար սուրբ է, սրբություն,
Ջոջ մամ է, ջոջ մեր է, իմ խանդութ խաթուն։
Թե ես էդ գործի մեջ մի մեղք ունենամ,
Օձի պես հող լիզեմ, ծարավ չորանամ։
Հերահո՛ր հրողբեր, հերահո՛ր հրողբեր,
Դու կնկաց խաբածն ես, էհ, մնաս բարո՞վ,
Ինքդ կա՛ց, ես կերթամ մինչ հազար տարով,
Ես կերթամ, ինքդ կա՛ց, հոգիդ միա՛ղ բեր,
Հերահո՛ր հրողբեր...

Ձենով Օհանի սիրտը փուլ եկավ, պարսպեն իջավ, դուռը բաց արեց, որ ներս առնի Մհերին, ուշացել էր։ Մհեր երդում կերավ ու գնաց։ Հրողբերը շատ կանչեց, աղաչեց, պաղատեց. Մհերի երդումը երդում էր։

Մհեր ետ չեկավ։

## 7. ՄՀԵՐ ՄՏՆՈՒՄ Է ԱԳՌԱՎԱՔԱՐ

Մհեր գիշեր մինչև լույս ման եկավ սարեսար, լուսուն հոգնած, անոթի, մոտեցավ հովիվներուն։

— Էս ոչխարը ու՞մն է։

— Աղնանց Վերգոյինն է,— ասին։

— Անոթի համփորդ եմ,— ասաց Մհեր,— մի ոչխա՛ր մորթեք, ուտեմ, համփովս գնամ։

— Թաու՛,— ասին հովիվները,— ինքներս ենք անոթի, չենք իշխենում սուս մի կաթ կթենք, դու եկել, ոչխա՞ր ես ուզում։

— Ինչու՞ չեք իշխենում,— հարցրեց Մհեր։

Պատասխան տվին, ասին.

— Աղնանց Վերգոն ամեն իրիկուն ոչխարը հաշվում է, կաթը խաղփեռով չափում։ Մի քոսոտ ուլ որ պակսեց, պուլիկ մի կաթ որ պակսեց, վայ մեր օրին. ամեն մեկուս կզարկի հարուր ճիպոտ։

Մհեր մի ախ քաշեց աշխարհի դեմ, հեռացավ։

Գնաց, գնաց, հասավ հնձվորներուն.

— Բարև՛, ախպերտի՛ք, էս ու՞մ արտն է։

— Աղնանց Վերգոյի արտն է,— ասին։

— Անոթի համփորդ եմ,— ասաց Մհեր,— կտոր մի հա՛ց տվեք, ուտեմ, համփովս գնամ։

— Թաու՛, ասին— հնձվորները,— ինքներս ենք անոթի, հաց ո՞րտեղ է, որ քեզ տանք։

— Ինչու՞ եք անոթի,— ասաց Մհեր,— հաց հնձողն անոթի՞ կմնա։

Հնձվորները պատասխան տվին, ասին.

— Աղնանց Վերգոն ամեն մեկուս օրական տալիս է մի գարու պապաճիկ։ Չի թողնում, որ բալասուք էլ անենք։ Իր կտրանը կանգնած իրիշկում է՝ բալասուքի ծուխը որ տեսավ, ամեն մեկուս կզարկի հարուր ճիպոտ։

Մհեր երկու ախ քաշեց աշխարհի դեմ, հեռացավ։

Մհերի մարմինը ծանր էր, էդ գանգատները որ լսեց, հոգին էլ ծանրացավ։

Էնոր ծանրությանը երկիրն էլ չէր դիմանում։

Ձիու ոտները խրվում էին հողի մեջ։

Մհեր մինչև իրիկուն Սասնա սարերը չափչփեց, արևմտոցին դարձավ գնաց մոր գերեզմանի վրա, կանչեց.

Մերի՛կ, ելիր վե՛ր, մերի՛կ, ելիր վե՛ր,
Ես Սասնա տնեն անման եմ կացել։
Ինն ամիս ինձ քո սրտում պահեցիր.

Դու ինձ կաթ տվիր, ինձ փայփայեցիր.
Քո քաղցր կաթին կարոտ եմ կացել,
Մերի՛կ, ելիր վե՛ր, մերի՛կ, ելիր վե՛ր։

Մերը գերեզմանեն ձեն տվեց, ասաց.

Ի՞նչ անեմ, որդի՛, ի՞նչ անեմ,
Կարմիրն է թափվել երեսես,
Լույսն է կտրվել աչքերես.
Ի՞նչ անեմ, որդի, ի՞նչ անեմ։
Մի օձ է բուն դրել վրաս.
Ձեռքս է աշխարհին անհաս...
Հերիք է աշխարհին մահ գա.
Տեղ կա աշխարհում քեզ համար.
Գնա Ագռավաքա՛ր....

Մհեր շատ լաց եղավ, շատաղաչեց, մոր գերեզմանեն էլ ձեն չեկավ։ Մհեր էս հեղ ընկավ հոր գերեզմանի վրա, կանչեց.

Հերի՛կ, ելիր վե՛ր, հերի՛կ, ելիր վե՛ր,
Ես Սասնա տնեն մնացի անմաս,
Հերի՛կ, ելիր վե՛ր, հերի՛կ, ելիր վե՛ր,
Աշխարհն ամայել է, մթնել է վրաս։
Հերի՛կ, ելիր վե՛ր, հերի՛կ, ելիր վե՛ր,
Քո անուշ հացին կարոտ մնացի։
Աշխարհն ավար է, քո որդին՝ անտեր,
Քո սուրբ խրատին կարոտ մնացի։
Հերի՛կ, ելիր վե՛ր, աշունն է եկել,
Ես ցցախ չունեմ արար-աշխարհում.
Հերի՛կ, ելիր վե՛ր, պաղ ձմեռն է եկել,
Որդուց տները շատ են մրմռում։
Ձիուս ոտները խրվում են գետին,
Հերի՛կ, ո՞ւր գնա քո թափառ որդին։

Հոր գերեզմանեն ձեն եկավ, ասաց.

Ի՞նչ անեմ, որդի՛, ի՞նչ անեմ.
Երեսս կարմիրն է թափել,
Աչքերս խավարն է կապել.
Ի՞նչ անեմ, որդի՛, ի՞նչ անեմ։
Կարիճն է բուն դրել վրաս.
Ձեռքս է աշխարհին անհաս.
Ի՞նչ անեմ, որդի՛, ի՞նչ անեմ,
Հերի՞ք է աշխարհից մահ գա.
Քեզ տեղ է պահած, ել գնա՛.
Գնա՛ մտիր ի Քարն Ագռավի.
Մինչև էս աշխարհը քանդվի,
Մինչև էս աշխարհը շինվի.
Մինչև հողը քո տակ դիմանա,
Նո՞ր աշխարհը քեզ կմնա....

Մհեր շատ լաց եղավ, շատ աղաչեց, էլ ձեն չեկավ հոր գերեզմանեն։ 

*Մհեր վեր կացավ, հեծավ Քուռկիկ Ջալալին, ծանր-ծանր քշում էր դեպի Ոստանա Կապան։*

*Հողը թուլացել էր, չէր դիմանում էնոր ծանրության տակ։ Ձիու ոտները թաղվում էին հողի մեջ։ Մհեր ասաց.*

*— Հայ-հա՛յ, հողը ծերացել է։*

*Քշեց, քշեց, մինչև իրիկուն հասավ Տոսպա քաղաքին, էն որ ասում են՝ Վան։*

*Էնտեղ էր Ագռավաքար։*

*Մհեր ասաց.*

*— Կեցի՛ր, մի թուր զարկեմ էս քարին. թե որ չկտրեց, մեղավորցել եմ, թե որ կտրեց անցավ, չեմ մեղավորցել։*

*Թուրը զարկեց Քարին. Քարը փեղկվեց երկու կողմի վրա։ Մհեր ու իր ձին մեջ մտան, Քարը եկավ իրար, փակվեց։*

*Սասնեցիք Մհերի փակվելը երբ իմացան. յոթ օր, յոթ գիշեր սուգ արին։*
*Ձենով Օհան կսկծու մեռավ։*

## ՎԵՐՋԵՐԳ

*Ասում են՝ տարին երկու հեղ Ագռավաքար բացվում է. մի հեղ Վարդավառի օր, մի հեղ՝ Համբարձման գիշերը։*

*Մհեր դուրս է գալիս, քառասուն օրվա ճանապարհ գնում է մեկ օրում։ Քառասուն օր քարերու վրա գնում է, երբ հասնում է հողին, ձին խրվում է հողի մեջ, էլ չի կարենում քայլել, Մհեր ետ է դառնում, նորեն մտնում Ագռավաքար։*

*Ասում են՝ մի Համբարձման գիշեր մի հովիվ կանգնած է լինում Ագռավաքարի մոտ։ Քարը բացվում է, հովիվը ներս է մտնում, տեսնում է հսկա մի փահլևան, հեծած հսկա ձին, հոնքերը ինչպես երկու քարափ, կախած աչքերուն։ «Կա-չկա, էսիկ է Սասնա Մհերը»,— կռահում է հովիվն ու հարցնում է.*

*— Մհեր, դու ե՞րբ էստեղեն դուրս կելնես։*

*Մհեր պատասխան է տալիս, ասում.*

*— Թե որ ես էլնեմ էստեղեն, հողն ինձ պահել չի կարենա։ Աշխարհը ծուռ է շինած։ Երբ աշխարհը քանդվի ու նորեն շինվի, երբ գարին դառնա քանց ընկույզ, երբ ցորենը դառնա քանց մասուր, նոր էն ժամանակ հրաման կլինի, որ ես աշխարգամ։*

*Ասում են՝ ուրբաթե-ուրբաթ Ագռավաքարեն ջուր է ծլծլում։ Ասում են՝ էդիկ Մհերի ձիու ջուրն է։*

*Ասում են՝ ուրբաթ օրերը ամեն անցորդ լսում է Քուռկիկ Ջալալու խրխնջոցը Ագռավաքարեն։*

Վերջացավ Սասնա տան վեպը, հազար ողորմին:
Ողորմի՛ Սասնա մայրերու մայր Ծովինարին,
Ողորմի՛ Սասնա հիմնադիր մեծ Սանասարին,
Ու դառնանք ասենք ողորմի՛ Ծուռ Բաղդասարին,
Ու դառնանք ասենք ողորմի՛ հրեղեն Դեղձունին:
Ողորմի՛ ամենուն հանող Քեռի Թորոսին,
Ու Սասնա հերահար հրողբեր Ձենով Օհանին:
Ողորմի՛ ասենք Սասնա քեր Առյուծ Մհերին,
Ողորմի՛ մեր վաղամեռիկ լուս Արմաղանին:
Ողորմի՛, հազար ողորմի մեր Սասնա Դավթին,
Մեր ազգի քաղցիկ, մեր արդար, մեր անմահ Դավթին,
Թող նրա փոկին միշտ խաղա Քուռկիկ Ջալալին,
Թշնամու գլխին թող շողա իր Թուր Կեծակին:
Ողորմի՛ ասենք մեր խորոտ Խանդութ խաթունին,
Ողորմի՛ խելոք խնամքով Սասնա պառավին,
Դառնանք ու չասենք ողորմի Մըսրա Մելիքին,
Դառնանք ու չասենք ողորմի Յուռն Վերգոյին,
Դառնանք ու չասենք ողորմի Չմշկիկ Սուլթանին,
Դառնանք ու չասենք ողորմի Սարյա խանումին,
Ասենք, թե... ասենք ողորմի՛ Իսմիլ խաթունին:
Ողորմի՛, հազա՛ր ողորմի Պստիկ Մհերին,
Ողորմի կարոտեն մնած խորոտ Գոհարին:
Ողորմի ասենք Սասնա տան վեպն ասողներուն:
Հայոց քաջազարմ հայրերուն, հայոց պապերուն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան . . . . . 5

### Ճյուղ առաջին

### ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Մասն առաջին

1. Ծովինար . . . . . 12
2. Սանասարի և Բաղդասարի ծովային ծնունդը . . . . . 16
3. Փախուստ . . . . . 19
4. Սասուն . . . . . 23
5. Քուռկիկ Ջալալին ու Թուր Կեծակին . . . . . 25

Մասն երկրորդ

6. Դեղձուն-Ծամ . . . . . 31
7. Գզնեն քաղաք . . . . . 35
8. Եղբայրը հասնում է եղբորը . . . . . 39
9. Քեզ է վայել Դեղձուն-Ծամ . . . . . 44

### Ճյուղ երկրորդ

### ՄՀԵՐ ՄԵԾ

1. Քուռակը շալակին . . . . . 49
2. Առյուծաձև Մհեր . . . . . 53
3. Արմաղան . . . . . 55
4. Կոխվ Մսրա Մելիքի հետ . . . . . 58
5. Իսմիլ խաթուն . . . . . 62
6. Ծնվում է Դավիթը . . . . . 64

### Ճյուղ երրորդ

### ՍԱՍՆԱ ԴԱՎԻԹ

Մասն առաջին

1. Դավթին տանում են Մըսըր . . . . . 69
2. Մանկական խաղերը և արնի չոքը . . . . . 71
3. Դավիթը բռնում է Մըսրա Մելիքի ղուրզը . . . . . 72
4. Դավթին փորձում են ոսկով ու կրակով . . . . . 73
5. Դավիթը Մըսրա թրի տակով չանցավ . . . . . 77
6. Բաթմանա կամուրջը . . . . . 79

## Մասն երկրորդ


7. Դավթի հովվական արկածները . . . . . . . . . . 81
8. Հարիսան, ավազակ դևերը . . . . . . . . . . 87


## Մասն երրորդ


9. Սասնա պառավ, և Սարյա, և Դավթի որսորդ . . . . . . . . . . 93
10. Դավիթը վերաշինում է իր հոր տաճարը . . . . . . . . . . 97
11. Դավիթը պատժում է հարկահաններին . . . . . . . . . . 100
12. Մսրա Մելիք պատրաստվում է արշավել Սասուն . . . . . . . . . . 109
13. Ձենով Օհան . . . . . . . . . . 114
14. Դավթի կռիվն ու հաղթանակը . . . . . . . . . . 119


## Մասն չորրորդ — Դ ա վ ի թ և Խ ա ն դ ու թ


15. Դավիթը փեսացու . . . . . . . . . . 130
16. Խանդութ խաթուն . . . . . . . . . . 139
17. Դավթի կռիվը Խանդութի սիրահարների հետ . . . . . . . . . . 145
18. Դավթի ամուսնությունը Խանդութի հետ և երդումը Չմշկիկ Սուլթանին . . . . . . . . . . 152
19. Մհերի ծնունդը ու Դավթի մահը . . . . . . . . . . 155


Ճյուղ չորրորդ

# ՄՀԵՐ ՓՈՔՐ

## Մասն առաջին


1. Մհերը ողբում է հոր մահը . . . . . . . . . . 163
2. Մհերն առնում է հոր վրեժը . . . . . . . . . . 168


## Մասն երկրորդ


3. Գոհար խաթուն . . . . . . . . . . 173
4. Մհերն ուտում է իր հոգեհացը . . . . . . . . . . 176
5. Մհեր կեղծ կայքն [illegible] . . . . . . . . . . 181
6. [illegible] թառերը . . . . . . . . . . 184
7. Մհեր մտնում է Ագռավաքար . . . . . . . . . . 189
Վերջերգ . . . . . . . . . . 192

Նաիրի Զարյան

# ՍԱՍՆԱ ԴԱՎԻԹ

Հայ ժողովրդական դյուցազնավեպ

Խմբագիր՝ Ա. Թ. Հովյան
Նկ. խմբագիր՝ Վ. Փ. Մանդակունի
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հր. Հ. Ղազարյան

ՎՖ 07022 Պատվեր 2081 Տիրաժ 20000 Հանձնված է արտադրության 16/XI—1965 թ.
Ստորագրված է տպագրության 8/VI 1966 թ.: Տպագ. 12,25 մամ.=20,9 պայմ. մամ., հրատ. 13,5 մամ.×13 ներդիր: Գինը՝ 1 ռ. 30 կ. Թուղթ՝ օֆսեթ, $84 \times 108^{1}/_{16}$

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
Պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91:



